Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

14016

891.99
U-79

891.99
Ս-79
991

ԱՐԿԱԾՔ ԿԱՏԱՐԻՆԷԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԷՊ

ՀԱՅՐ ԵՌԲԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՏԷՏԷԵԱՆ

Հ. Աղուեան գրադարան
LIBRAIRIE S. AGOPIAN
Tophanemdjilar N. 29
ՍԱՐԳԻՍ ԱՂՈՒԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Զմիւռնիա
Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԷՏԷԵԱՆ
1887

6479
39
2003

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Վէպերը ընտանեկան կեանց նկարագիրներ են, հետեւաբար՝ նշանակիչ եւ կրթիչ : Եւրոպա դարերով յառաջ սկսաւ վէպեր յօրինել զանազան գոյներու ներքեւ, եւ ամուր՝ իբրեւ նախադուռն մը սկսաւ քալել դէպ ի յուրջ գիտութիւնս: Եւրոպա իւր ներկայ գիտական բարձր դրութեան մէջ անգամ տակաւին կը շարունակէ իւր վէպերը :

Ինչո՞ւ ուրեմն Հայն եւս իրեն յատուկ վէպերը չունենայ, քանի որ դէպ ի յառաջադիմութիւն կը նկրտի : Ինչպէս Եւրոպացւոց՝ նոյնպէս Հայուն համար եւս վէպերը նախադուռ պէտք է լինին մտնելու դէպ ի գիտական ասպարէզ :

Սակայն անհրաժեշտ է նոցա մէջ ընտրութեան պէտքն, զի ոչ այնչափ օգտակար կրնան լինել մեզ Եւրոպական վէպերն, որքան բուն ազգային կեանց երանգներով յօրինուած մի վէպ, յորում ընթերցող Հայն իւր՝ եւ իւր նախնեաց վարուց, բարուց, սովորութեանց, առանդութեանց տիպարներն կը տեսանէ, եւ ինքնին կը յօժարի անոնց մէջ ընտրել, սիրել եւ իւրացնել բարին, ճշմարիտն եւ օգտակարն :

Սոյն նպատակաւ յօրինուած է ԱՐԿԱԾՔԻԿԱՏԱՐԻՆԷԻ սրտաշարժ վէպը՝ Հայոց ցին եւ նոր կեանց գողտրիկ երանգներով դրուագուած. որոյ նիւթն է մի իրական դէպք որոյ եւ պատմութիւնն առանդութեամբ հասած է մինչ ցմեր տիս :

Քաղցր է անշուշտ յուսալ, զի մեր սիրելի ազգայինք, որ յօժարափոյթ կ՚ընթեռնուն օտար վէպերն, առաւել ախորժ պիտի զգան կարդալով սոյն ազգային վէպն, որ մինչեւ ցարդ հրատարակուած հայկական վէպերու փոքրիկ շարքին վրայ կը յաւելանայ :

3135

A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա. ՏԵՎԵՋԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ԲՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱՐԱՆ

Սաստիկ ձմեռ չէր, սակայն ամառ ալ չէր, այլ գարնան ամիսներու սկիզբն էր, յորում բնութիւնը իւր գեղեցիկ տեսարաններով կուսակար հոգիները զուարթացնելու։ Ծառերը իրենց ծաղիկները բացած հրաւէր կը կարդային (պանդխտութենէն վերադարձող նորեկ) զանազան թռչուններուն գալ և իրենց գեղեցիկ ոստերուն վրայ թռչտելով դեղեցիկ այն զմայլելի և անհասկանալի երգերը, որք անշուշտ Աստուծոյ պարգևած բարեաց փոխարէն փառաբանութիւններ լինիլը կը թուէին։

Լեռներու և պարտէզներու շուշաններն և մանիշակները ու անթիւ ծաղիկները բացուած, զանազան գոյներով զարդարուած, իրենց անուշահոտութեան բուրումներով կուսային ձմեռուան սաստկաշունչ հրդմերէն տխրագդեցեալ հոգիներուն վերակենդանութեան յոյսը պարարելու և տխուր սրտերուն զմայլման կայտառումներ տալու։

Տարագիր սոխակները թափառական վայրերէն իրենց բնադաւառը վերադարձած, վարդենիներու վրայ իրենց բոյները կը յօրինէին և քաղցրանուագ երգեր կ'երգէին։ Թէև ես անոնց լեզուն չէի հասկնար, սակայն նոցա զուարթագին ուրախութենէն և հրճուողական ձայներէն կրնայի հետևցուցնել թէ՝ նոքա մեծ հաճոյք կ'զգային իրենց վարդենիին վրայ հիւսած բոյներէն։ Այն յուսով թէ՝ այն բոյնէն պիտի տեսնեն օր մը որ բնութեան հրաշալի ձեռքը այն վարդերու փթթեալ կոկոններու երեսը պատող քողը վար առնելով, պիտի բանայ նոցա կարմիր երեսները, և ցոյց տայ այն անմեղ սոխակներուն որք խանդաղաթ սիրով կը սիրեն և կ'զմայլին նոցա գեղեցկութեան վրայ։

Բնութիւն պաշտօն ունէր իւր որդւոց ձմեռուան խստութենէն խօթացեալ մարմինները կազդուրելով զանոնք աշխատութեան

հրաւիրելու. զի նա յաջողած էր երկրի բարերեր և հաճելի երեսի վրայ ձմեռուան տարածած սպիտակ քողը բարերեր դարնան ջերմագին ձեռքով մինչև ովկիանոսներու խորերը հալածել։

Եւ ահա սոյն օրերու մէջն էր որ Ասիոյ Հայոց բնակած աշխարհի Տ.....քաղաքի մէջ արտաքոյ կարգի շքեղ երևոյթներով զարդարեալ փառաւոր տուն մը կուգար մեր դրչին առարկայ լինելու։

ՅՈՎՍԷՓ ԻՇԽԱՆԻ ՏԱՆԸ ՏԵՍԱՐԱՆԸ

Յովսէփ իշխանի տուն, որ քաղաքի արևմտեան բարձր բլրակի վրայ կը գտնուէր, խիստ շքեղ էր և փառաւոր, սոյն տունը թէպէտ պալատ մը չէր, բայց պալատէ մը աւելի շքեղերևոյթ մը ունէր և ամէն տեսնողներուն հիացումն կը պատճառէր։

Տան շէնքն էր կիսեայ քարերով. որու առաստաղները մարմարեայ սիւներու վրայ հաստատուած էր, և առաստաղներու ոսկեզօծ նկարներ պարսկական կիրթ ճաշակին կը համապատասխանէին. շէնքի արտաքին ձեւ կոթողանի պատկերը կը կրէր, սոյն ճարտարահիւս և վայելչակիրթ ապարանը իւր սքանչելարուեստ կերտուածներով և փորագրութիւններով հայեցողներուն սքանչացումն կուտար։

Տան առաջ շարուած կարգաւ ուռենիները շէնքի մէկ մասը կը ծածկէին, դուռներու վրայ յաջմէ և յահեկէ խիտ շարուած սիւներու վրայ զանազան ծաղիկներ փորագրուած էին, և պարտէզ տանող մեծ սրահի երկու կողմերն կոթողներ և հնութեան արձաններ կանգնած էին։

Տան աջակողմեան պարտէզը բնական անտառի ձեւն ունէր, ուր խիստ շատ ընտանի և վայրենի կենդանիներ կը գտնուէին։ Սոյն անտառի մէջ գտնուած փոքր լճակի սիրուն ձուկերը իրենց ուրախ կայտառութիւններով թէ կը զուարճանային, և թէ կը զուարճացուցանէին ծառերու վրայ թռչտող թռչունները։ Սակաւ բացառութեամբ շատ ընտանի էին. այնպէս որ պարտիզպանի նշաններէն կրնային գուշակել թէ՝ երգել պէտք էր թէ լռել. թռչտիլ պէտք էր թէ հանգստանալ։ Տան ձախ կողմի պարտէզն զարդարուած էր այլևայլ պտղատու ծառերով և անուշահոտ ծաղիկներով ու մշտաբոյ վարդենիներով։

Սոյն շէնքի արևմտեան կողմէն բարձրացած ծառախիտ բլրակի մը կատարը կը տեսնուէր, իսկ արևելեան կողմէն իւր առջև ընդարձակածաւալ դաշտի մը տարածութիւնն ունէր, որք ամբողջապէս իշխանին կը վերաբերէին. որոց մէջտեղէն սրընթաց գետեր և առուակներ կ'անցնէին։

Այն ընդարձակ և պտղատու հովիտ նոյն ընտանեաց կենաց հարկաւոր եղածը կը մատակարարէր և իշխանի տան զուարճութիւնները կը բազմապատկէր։

Իշխանի ապարանը արևելեան և արևմտեան կրկին դուռներ ունէր, որք դէպ ի տան սրահ կ'առաջնորդէին, ուրկէ երկու կողմի սանդուխներէն վեր ընդունելութեան մեծ սրահը կ'ելլէին, որու խաչաձև չորս սենեակներու չորս դուռները կը բացուէին այն ընդարձակ սրահի մէջ, սենեակներու բոլոր պատերու վերի մասը ոսկեզօծ ծաղիկներով զարդարուած էր. միջին մասը ասիական և եւրոպական վեհապետաց պատկերներով կը զարդարուէր. իսկ ստորին մասը խիստ ճարտարարուեստ յօրինուած պատուհաններ էին յամենայն կողմանց, որոց վարագոյրները արծաթեայ թելերով գործուած դամասկեայ կերպասներ էին ոսկի թելերով շրջապատեալ։

Սենեակները զարդարուած էին ոմանք ասիական ճաշակին համաձայն բարձերով և շարժական բազմոցներով, որոց սփռոցները հաղուագիւտ աղնիւ կերպասներ էին։ Իսկ ոմանք եւրոպական ճաշակաւ, աթոռներով և թիկնաթոռով։ Իւրաքանչիւր սենեկի և ընդունելութեան սրահի առաստաղներէն խիստ գեղեցիկ ջահեր կախուած էին մոմերով զարդարուած։ Ընդունելութեան սրահի պատուհաններու մէջ ոսկեզօծ ծաղկեամաններ դետեղուած էին։ Ասիոյ ձեռագործներէն թաւ գորգեր մէկ մէկ սենեկի յատակները ծածկելով կը զարդարէին։ Ասոնք բնաւ չէին նմանէր եւրոպացւոց գործարաններէն ելած գործերուն, որոց ամենէն աւելի կեանք հաղիւ հինգ տարի կ'երկարի. իսկ սոյն ասիական և աւելի պարսկաստանի գորգերը հայրերէն իրենց որդւոց, և որդիներէն իրենց զաւակաց ժառանգ մնալով երեք յաջորդական սերնդոց կրնան ծառայել։

ԿԱՏԱՐԻՆԷԻ ՄՐՄՈՒՆՋՆԵՐԸ

Գիշեր չէր և ոչ ցերեկ, այլ արշալոյս, որ իւր աղօտ լուսով երկիրը կը լուսաւորէր. սոյն միջոցին մշակը՝ իւր եզն առած կ'երթար երկիր մշակելու, քահանան եկեղեցի կ'երթար իւր նուիրական պարտք կատարելու և բարեպաշտ ժողովուրդ Աստուծոյ փառաբանութեան հրաւիրելու. մարդիկ առհասարակ դէպի աշխատութիւն կը դիմէին, կանայք իրենց առաւօտեան աղօթք կատարելէն վերջ առանին գործերուն կը ձեռնարկէին, խիստ ծեր մարդիկք և պառաւ կանայք եկեղեցի կ'երթային Աստուծոյ տաճարի մէջ խղճի միջոցաւ իրենց գործոց հաշիւը իրենց մրմունջներու հետ Աստուծոյ կուտային, և իրենց սխալանացը ներում կը խնդրէին, ու իրենց հոգին Աստուծոյ հետ կը հաշտեցունէին։ Ահա այս պահուս տասնևվեց տարեկան օրիորդ Կատարինէն իւր փոքր քրոջ հետ իրենց փոքր սենեկի մէջ փոքր պատուհանի առջև ծունկի վրայ գալով աղօթագիրքը ձեռք առած, իւր մրմունջները Աստուծոյ կը նուիրէր։ Կատարինէն իւր բնական գեղեցկութեան հետ համեստ բնաւորութիւն մը ունէր, նորա վառվռուն երևակայութիւն զինք բանաստեղծական բարձր ճաշակին կ'առաջնորդէր։ Սքանչելի էր ձեռարուեստի և դաշնակահարութեան մէջ. իւր դպրոցական շրջանի մէջ իւր ընկերուհեաց ամենէն յառաջադէմն էր, քաղցր խօսակցութիւն և մոգիչ հայեցուած մը ունէր. գիտէր խօսելու ձևը և եղանակ, նաև գիտէր ըսելու ժամը և ժամանակ։ Սակաւ կը խօսէր, բայց շատ կը խորհէր, սիրտ գրաւելու մեծ յատկութիւնն ունէր։ Տրամաբանի մը կիրթ ճաշակն ունէր. թէպէտ անհատները չէր քննադատէր, սակայն հանրական խնդիրներու վրայ սքանչելապէս կը խօսէր. մանաւորները իւր մտադրութեան առարկայ չէր ընէր, բայց դրութիւնները կը քննադատէր, կը լուսաբանէր, բանաւորներն կ'ընդունէր բանականութեան դէմ տեսածները կը մերժէր, ընդհանուր յատկութիւնները և մեծ երևոյթները կը քննէր և կը զննէր, բնութեան պատկերներուն այնպէս կերպարան կուտար. որ անոնց իսկական նախատիպը իւր ունկնդիրներու

առջև կը բերէր. ամէն վիճակի երջանկութեան և թշուառութեան պատկերները գաղափարած էր իւր պարզ և մաքուր սրտի մէջ։ Գիտէր կրից մղումը և կը ճանաչէր զանոնք հանդարտեցուցնելու ձևը և եղանակ, սիրով կը գրգռէր առաքինութեան տեսակները զզուանօք կը մերժէր մոլութիւնները և մոլները։ Կ'ըսէր նա. ոչ մանկութեան ժամանակ զուարճութեանց մէջ չափազանցելու է և ոչ զառամութեան մէջ վհատելու է։ Լաւ գիտէր որոշել իրաւն անիրաւէն, ճշմարիտն սուտէն։ Բնութիւնը այս ամէն յատկութիւնները իրրև բայաւիկ առանձնաշնորհութիւն տուած էր այն բարեսիրտ և յոյժ գեղեցիկ օրիորդ Կատարինէին. չեմ ուզեր սոյն օրիորդի դիմաց գեղեցկութիւն նկարագրել. բաւական կը համարիմ ըսել թէ՝ նա բարի և անհամեմատ գեղեցիկ հրեշտակի մը պատկեր կը կրէր։

Այս պահուս գարնան զեփիւռները ծաղկանց անուշահոտութիւն իրենց ուսերու վրայ առած կուգային հեշտալի զովութիւններ սփռել մեն մի վշտաբեկ սրտերու վրայ. Կատարինէն ալ թերևս իւր սրտի անձկութիւնն ունէր, ուստի չուզեց անմասն մնալ բնութեան սոյն բարիքէն, աղօթքը վերջացունելով գիրքը գոցելով համբուրեց և բարձին վրայ դրաւ, ու սկսաւ պատուհանի փեղկերը բանալ քիչ մը զովանալու համար։

Այս պահուս մարդու մը ստուերը կ'անցնէր պատուհանի առջէն, նշմարեց Կատարինէն թէ ով էր, և սարսուռ մը զգաց, սկսաւ սրտայուզութեան մէջ տառապիլ, զի իւր աչքին տղեղ երևցած էր այն ստուերի տիրող կեանք և շարժումները ու բնաւորութիւնը։

Խիստ տխուր էր Կատարինէն և հառաչանքներով լի, երբ Կատարինէի մայրը եկեղեցիէն վերադառնալով իւր աղջիկը տրրտում վիճակի մէջ գտաւ, հետաքրքիր եղաւ նորա վիշտն իմանալու, սակայն չ'յաջողեցաւ։

Կ'ըսէր Կատարինէն իւրովի, հարկ չ'կայ մօրս բան մը ըսելու, միայն թէ նորա աչքին անվրդով երևնալու համար գործով զբաղիլ ամենէն զօրաւոր միջոցն է. սկսաւ իւր ձեռագործներով զբաղիլ, որք իրենց գեղեցկութեամբ և վայելուչ հիւսուածքներով նշանակութեան արժանի բաներ էին։ Կատարինէն ձեռագործութեան արհեստի մէջ անման յաջողակութիւն մը ունէր, զոր

ձեռք բերած էր իւր եօթնամեայ դպրոցական շարունակութեամբ, ինքը իւր աշակերտուհիներու մէջ միշտ առաջին կընկատուէր։

ԵԿԵՂԵՑԻՈՑ ԶԱՆԳԱԿՆԵՐ ԵՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Երբ արշալոյս իւր բարի դալստեամբ արեգական ծագման աւետիսը կը բերէր, նմանը չ՝տեսնուած տարօրինակ կերպով մեծ եկեղեցւոյ զանգակներու հնչումը քաղաքը կը դղրդէր. և ամէն մարդ տարակուսութեան մէջ էր թէ՝ ի՞նչ նոր դէպք պատահած է։ Սակայն կասկածները շուտով փարատեցան. վասնզի անմիջապէս լուր տարածուեցաւ թէ վեհափառ Արքեպիսկոպոս Առաջնորդն այսօր քահանայի ձեռնադրութեան հանդէս պիտի կատարէ։ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին փառաւոր շքեղութեամբ զարդարուած էր։

Անթիւ մամեր զուգաչափ հեռաւորութեամբ Աստուծոյ տաճարին մէջ խորանի առջև կը վառէին։

Քաղցրանուագ երգեցիկ մանկունքն աղեղնաձև յօրինած ատեանը համախմբուած առաւօտեան ժամասացութեան սուրբ պաշտօն կը կատարէին ըստ Հայաստանեայց առաքելական կաթուղիկէ Ս. եկեղեցւոյ արարողութեան.

Քահանայք ղեսատաւորեալ եկեղեցւոյ արտաքին դրան յաջմէ և յահեկէ պարառեալ ակնպիշ կ՝սպասէին Սրբազանի դալստեան. որ հրաշափառ հանդիսիւ զայն յեկեղեցին տանէին։ Բարեպաշտ ժողովուրդ խուռն բազմութեամբ յեկեղեցի կը դիմէր ձեռնադրութեան հանդիսի և պատարագի սուրբ խորհրդեան հանդիսատես լինելու. մանաւանդ թէ Առաջնորդ Արքեպիսկոպոսի պատարագը տեսնելու և լսելու։

Ոսկեզօծ բարձր աստիճանաւոր աթոռ մը սեղանի վրայ հաստատուած իւր դահակալի դալստեան կ՝սպասէր. նուիրեալը եկեղեցւոյ խորանին մէկ անկիւնը քաշուած, սաղմոսարան ի ձեռին իւր անցեալ հաշիւները կը կարդադրէր Աստուծոյ հետ, և իւր

մարդկօրէն սխալանաց ներումն կը հայցէր. այն օրը հաւատացելոյ բազմութիւնը ամենօրեայ սովորականէն խիստ չափազանց էր։

Սոյն եկեղեցական բարեպաշտ մեծ հանդիսի մէջ իսկական սեռէն մինակ աղքատիկ և համեստ Կատարինէն չէր տեսնուէր. վասնզի նա իւր դպրոցական շրջանն աւարտած էր, անոր համար չէր ներուէր իրեն որ իւր աշակերտուհիներու հետ դար և վերնատան մէկ կողմը նստէր։

Այսպէս ևս ըստորում Կատարինէն ի շարս կանանց դասուած չէր, հետևաբար անոնց շարքի մէջ ևս տեղ չունէր, և ըստ տեղական սովորութեան այս տեսակ չափահաս օրիորդներ մեծ մասամբ եկեղեցական հանդէսներէն զուրկ, իրենց տուներու մէջ փակուած կը մնան. և զոհ կը լինին եկեղեցիներէն վերադարձողներու տուած կցկտուր պատմութեան տեղեկութիւնները լսելով։

Հաւատացելոյ բազմութիւն անհամբեր Սրբազանի դալստեան կ՝սպասէր. և ահա նա իւր եպիսկոպոսական զգեստով, խորհրդաւոր Հրաշափառ երգով եկեղեցի մուտք ակնածական յարգանօք և գլխիբաց յոտին կացեալ ժողովրդեան վրայ խաչակնքելով և զանոնք օրհնելով։

Երբ ժամերգութիւնն կ՝աւարտէր, եպիսկոպոսն սկսաւ սուրբ Պատարագի ահաւոր խորհուրդը կատարել սրտաշարժ ջերմեռանդութեամբ և հոգւոյ վեհ զգացմամբ։ Հասաւ այն հրաշալի ժամը, յորում նուիրեալը ի ծունր կուգար խորանի պատուանդաններէն վեր ելլել և Հոգւոյն սրբոյ շնորհաբաշխութեան մերձենալ և ընդունել ի ձեռն եպիսկոպոսական ձեռնադրութեան քահանայական սուրբ աստիճանը։ Եպիսկոպոսն սկսաւ քահանայական ձեռնադրութեան և սուրբ օծման խորհուրդը կատարել. և Աստուածային խորհրդաւոր խօսքերով քահանայացուի հետ նաև ջերմեռանդ ժողովուրդն մխիթարել։

Եպիսկոպոսն եկեղեցւոյ բեմէն բնաւ սովորականի պէս դժոխոց և արքայութեան վրայ չ՝խօսեցաւ. այլ տարօրինակ և անսովոր տաղանդովմը դիտես թէ ամբողջ ժողովուրդը դիւթելով, մագնիսացոյց նոցա ականջները իւր սքանչելի և հոգեկան խօսքեր լսելու։ Եւ ամենքն զմայլեցան ու սքանչացան նորա իմաստալի խօսքերուն վրայ։ Այս եպիսկոպոս մտքեր յուզող խնդիրներու վրայ կը ճառէր սքանչելի ճարտարամտութեամբ. թէև եղան մի

քանի քրիստոնեաներ, բայց նոքա յետագէմ դասուն կը վերաբերէին։ Նա իբրև հմտութեան անսպառ աղբիւր, առատապէս կը բղխէր մարդկային ընկերութեան յառաջադիմութեան քայլերուն դիւրութիւն տուողամէն միջոցները, ցոյց կուտար խորամանկութեան ծոցի մէջ պահուած այն գաղտնիքները, որք իբրև դարան կը լարուին յառաջադիմութեան քայլերուն առաջ, մատնանիշ կ'ընէր այն տպաւորութիւնները, որք զմարդիկ դիակնացուցանելով, նոցա կենաց վրայ կը տիրապետեն, և հոգւոյ զօրութիւնները չլատելով զանոնք անշարժութեան կը դատապարտեն։

Եպիսկոպոսն շնորհալի և վեհ սիրուն դեմք մը ունէր, նոցա յուսոյ և սիրոյ վրայ խօսած խօսքերը անբացատրելի քաղցրութիւն և անմոռանալի համակրութիւն կ'ազդէին ամենու սրտին։ Նորա մեն մի խօսքը ունկնդիրներու արեան մէջ Աստուածային սիրոյ մէկ մէկ հունտեր կը ցաներ։

Դիտես թէ նա յատկապէս Աստուածային իմաստութենէ օժտուած աշխարհ եկած էր, և մարդարէի ձեռք ունէր ապագայի քողը բանալու։ Նա այն ճշմարտութիւնները կը յայտնէր, որք ոմանց համար տխուր և դժուարալսելի էին, բայց իմաստնոց համար սքանչելի և հրաշալի։

Նորա խօսքերը ուղղակի կ'ազդէին փափուկ և պատրաստ սրտերուն որչափ արագ այնչափ ալ խորին տպաւորութիւններ կ'ընէրին։

Քարոզիչը սրտի և զգացմանց նշանաւոր յատկութիւններ ու հոգւոյ բարեմասնութիւններ ունէր, նորա խորհրդեան շնորհաբանէն բղխած խորհրդաւոր յայտնութիւնները լի էին կատարելութեամբ. և մեծ պատկառանք կ'ազդէին ակնկիշ ունկնդիրներուն. նոցա սրտերը անպատումուրախութեամբ կը լեցուցանէին։

Կ'ըսէր նա իւր առաջ ծունր դնող նուիրեալ նոր քահանային։ Դու զքեզ Աստուծոյ տաճարի պաշտաման կը նուիրես կամաց յօժարութեամբ, և կ'ուխտես Յիսուսի խաչը ուսիդ վրայ կրել։ Պարտք մը կ'ստանձնես այսօր, այն է չարին բարի փոխարինել։ զի այս է եկեղեցւոյ հեղինակ Յիսուս վարդապետի պատուէրը։ Դու վիրաւորեալ հոգիները Աստուածային պատուիրանաց սպեղանիներով բժշկելու պաշտօն կ'ընդունես, և մեղաւոր հոգիները աւետարանական բանիւ բժշկելով մարդասիրին Աստուծոյ

հետ պիտի հաշտեցուցնես իբրև միջնորդ։ Դու ուխտդ Աստուածային սիրոյ այն անխզելի լարն է, որ զոհը Աստուծոյ նուիրական սեղանի հետ կը կապէ անբակտելի կապով։ Եկեղեցւոյ ուխտը քահանան ժողովրդեան, և ժողովուրդը քահանային և երկուքն ի միասին Աստուածային սիրոյ հետ կը կապէ։ Դու պաշտօն ընտանձնեցիր Աստուծոյ և մարդկանց մէջ խաղաղութեան միջնորդ կանգնելու վսեմ շահատակութեամբ։

Հայր քահանայ, խղճի խայթ մը կայ, որ իժէն աւելի կարէվէր կը խայթէ, զդուշացիր անկէ, յիշէ թէ, Աստուած ամենատես է, ճշմարտութենէն և արդարութենէն դուրս ինչ որ ընես՝ Աստուծոյ կամաց հակառակ գործած կը լինիս։ Ձեր քահանայ, իմիտ առ թէ քահանան յանդիմանութենէն աւելի կարեկցութեամբ կարող է հոգւոյ վէրքերը բժշկել։ Խստութիւնը Աստուծոյ կամաց հակառակ է. աղէկ սերտէ Յիսուսի կեանքը և ըստ այնմ վարուէ, Յիսուսի ոգին ունեցիր, որ կարողանաս նորա հօտը հովուել։ Աղքատութիւնը քեզ համար նախատինք մի համարիր, զի անցելոյն մէջ մեր տէր Յիսուս Քրիստոս քեզ ընկեր ունիս։ Ճշմարտութեան և արդարութեան համար սիրով և յօժարութեամբ կրէ այն ամէն հալածանք, նախատինք, արհամարհանք, վիշտ, ցաւ և խոշտանգանք, ինչպէս որ տարաւ Քրիստոնեայ եկեղեցւոյ հեղինակ Յիսուս Քրիստոս։

Եթէ կուզես եկեղեցւոյ ճշմարիտ մշակ և ժողովրդին բարերար հանդիսանալ, կեանքդ սկսէ Գերսեմանի ձորէն և Յիսուսի խաչը ուսիդ վրայ առնելով Յուդայի մասնութենէն սկսեալ քահանայապետաց, Պիղատոսներու և Հերովդէսներու տուներու անցքերէն անցնելով գնա եկ Գողգոթայի կատարը, և անվհեր կերպով աղաղակէ ճշմարտութի՛ւն և արդարութի՛ւն։ Հոն, աւազակներու և մարդասպանների մէջ տեղը նախատական գործիք խաչի վրայ քամուելով ըսէ, նախ Հայր թող սոյա զի ոչ գիտեն զինչ գործեն։ Երկրորդ ըսէ, Հայր ի ձեռս քո կ'աւանդեմ իմ հոգիս։ Ահա այս է քահանայութեան ուխտ և դաշինք։ Ուրեմն ասկէ վերջ ես անպարտ եմ. դու ես քու գործերուդ պատասխանատուն, և գործերդ են որ զքեզ կամ կը պատժեն, ուրիշ ըսելիք չունիմ միայն հոգւոյն սրբոյ շնորհք և եկեղեցւոյ աղօթք կը հայցեմ քեզ համար, ով նուիրեալդ Աստուծոյ տաճարի պաշտաման։

Երբ եկեղեցւոյ մէջ այս վերհանդէսն կը կատարուէր, միւս կողմէն աղքատիկ Սամուէլի տան մէջ սրտաճմլիկ տեսարան մը տեղի կ'ունենար։

ՍԱՄՈՒԷԼԻ ՏԱՆ ԱՆՑՔ

Սամուէլ, իւր կինը և փոքր աղջիկը հետերնին առած եկեղեցի գնացած էին սոյն մեծ և շնորհաբաշխ հանդիսին ներկայ գտնուելու։

Արշալոյս նոր կը ծագէր։ Սամուէլի մեծ աղջիկն Կատարինէն ջերմեռանդ աղօթքներ կը մատուցանէր Աստուծոյ և իւր առաջի օրուան ստուերի անցքէն վրդոված մտաց տագնապներու և սրտի յուզման հանդարտութիւն կը խնդրէր։ Սոյն միջոցին յանկարծակի դուռը կը զարնուէր, Կատարինէն վար կիջնէ հասկնալու համար թէ ո՞վ է եկողը։ Պառաւ աղքատ կին մը էր. ուրախութեամբ դուռը բացաւ ըսելով, մայր իմ, այնպիսի մի ժամանակի մէջ ինձ այցելութեան կուգաք, յորում ընկեր մը ունենալու մեծ փափաք ունէի, Աստուած զձեզ ինձ բարի ընկեր մը ղրկեց իմ առանձնութեանս մէջ զիս մխիթարելու։ Հրամայեցէք ներս մտէք։ Կինը ներս մտնելէն անմիջապէս վերջ, յայտնեց թէ ձեզ ուրիշ այցելումը կուգայ։ Ըսաւ Կատարինէն, ո՞վ է արդեօք։

— Մարդ մի է, ըսաւ աղքատ կինն։

Մարդ մը, Կատարինէի սիրտ սկսաւ դողալ, և ըսաւ ինքնիրէն. ո՞վ որ լինի եկողը այսպիսի անպատեհ ժամանակի մէջ մեր վրայ արտաւորութեան բիծեր հրաւիրելու ծառայելէ ի զատ ուրիշ նշանակութիւն չկրնար ունենալ։ Մայր իմ, ըսէք իրեն. չեմ կրնար մարդ ընդունել այժմ. մինչև որ իմ ծնողքս եկեղեցիէն չվերադառնան։ Սակայն դեռ այս խօսքերը չարտասանած յանկարծ դիմակաւոր մարդ մը ներս կը մտնէ և պառաւ կինն անհրաժեշտ կը լինի, Կատարինէն սոսկալի երկիւղներու մէջ ինքզինք կը կորսնցունէ։ Պահ մը վերջ, ինքզինք գտնելով կ'ըսէ.

Պարոն, ո՞վ որ լինիք, անպատեհ է այս պահուս այս ձեւի տակ իմ տունս գալը, և իմ տակաւ սիրտս վրդովել։ Ներեցէք որ համարձակիմ ձեզ ըսելու թէ պէտք է որ ետ դառնայք, և դեռատի օրիորդի մը համբաւութեան զդայու�՝ները չվիրաւորէք և անոր պատիւը չարատաւորէք որ վարդէն աւելի փափուկ է։

— Օրիորդ՝ մի՛ վրդովիք, եկողը ձեր թշնամին չէ, ձեր բարեկամն է. և ձեր պատիւը իւր պատուոյն հաւասար կը սիրէ։

— Կատարինէն առնական զօրութիւն զգեցած զայն բռնի դուրս հանելու փորձ փորձեց, սակայն չ'յաջողեցաւ. Ճիչ բառնալ ուզեց, բայց մտաբերեց թէ ինչ'բանէ որ կ'զզուշանայ նոյնն իւր ձեռքովպիտի հրաւիրէ իւր վրայ. լռել և համբերել որոշեց։

Դիմակաւորը կէս մը բռնի Կատարինէի թեւէն բռնելով վերընդունելութեան սենեակը կ'ելլեն, երկար լռութենէ մը վերջ, դիմակաւորն կը յայտնէ օրիորդին թէ՝ ինք զԿատարինէն կը սիրէ. և թէ զայն իրեն կնութեան առնելու կը փափագի. և այս մասին Կատարինէի կամք և հաճութիւնն առնուլ կը փափագի։

— Ըսաւ Կատարինէն. կրնամ համարձակիլ հարցունելու թէ իմ պատուաւոր հիւրիս անունը ինչ է. և ո՞վ էք։

— Պատասխանեց դիմակաւորը, օրիորդ, ներեցէք ինձ ըսել թէ՝ այս պահուս անունս և ո՞վ լինիլս երեսիս պէս թագուն պահելու հարկի տակ կը դտնուիմ. միայն թէ վստահ եղիք որ ես ձեր բարեկամն եմ, և զձեզ կը սիրեմ։ Կատարինէն առանձին կ'ըսեր. դաւ մի է ասիկա ինքզինք չիյայտներ և զիս առնել կ'ուզէ։ Յետոյ յայտնապէս ըսաւ, պարոն, ես ուրիշի մը հետ նշանուած եմ և անկարելի է դիմակաւորիդ առաջարկն ընդունել։

— Բայց դիմակաւորը Կատարինէի ամէն առարկութիւններ ցրել կը ջանայ. և փոքրիկ կաշիէ կնքուած պարկի մը մէջ բաւական մեծ դումար մը ոսկի Կատարինէի բարձի վրայ կը դնէ ըսելով. այս ոսկիները կրնայք ձեր կարօտութիւնները և պէտքերը հոգալու համար ծախս ընել։

— Իսկ Կատարինէն ոսկիները կը մերժէ, յայտնելով թէ՝ ես զիս ոսկւոյ չեմ նուիրեր, այլ արդէն անարատ սիրոյ մը յանձնած եմ ինքզինքս, և կը խնդրեմ որ իմ առանձնութիւնս չվրդովէք։

— Այս խօսքը դիմակաւորի զգացումը վերաւորեց, և նորա շարժումները այլայլութիւն մը կրեցին։

— Կատարինէն երկար լռութենէ մը վերջ ըսաւ դիմակաւորին. պարոն, կը խնդրեմ որ իմ լռութիւնս ձեր դիւրազգացութիւնը չ'վիրաւորէ, յոյժ խուովեցուցիք զիս, և մտքիս մէջ սիրտս վիրաւորող նետիմը ցաւ կ'զգամ. և ձեր հեռանալը միայն պիտի բժշկէ իմ մահացու ցաւս։

Այն միջոցին երկուքն ալ իրենց սրտի տագնապն ունէին, մինչև այն վայրկեան մինն իւր դիմակի, միւսն իւր համեստութեան տակ իրենց անմեղութիւն պահած էին, անկէ վերջ՝ այն երկու սրտերն յանկարծակի մինն սիրոյ՝ և միւսն երկիւղի պատերազմներու դաշտ դարձան։

Անոր և երկիւղ բուռն կերպով կը մրցէին զիրար յաղթանակելու ձգմամբ Կատարինէն աղէտալի նախազգացումներով լեցուած կը գուշակէր իւր ապագայ վտանգները, և կ'ըսէր ինքն իրեն թէ՝ այս սրտագին աղէտը կարելի չէ որ առանց ալէկոծութեան անցնի։ Ըսաւ Կատարինէ, բարեկամ, որչափ որ անմեղ լինի մեր այս անյարմար ժամու մէջ մէկ տեղ գտնուիլը, դարձեալ առանց մեղադրանաց չէ, և օր պիտի գայ յորում ժամանակի ձեռքն պիտի յաջողի այս տեսարանի գաղտնեաց քողը վերցուցնել և զմեզ աշխարհի առջև նշաւակել։ Ուրեմն ողջմտութիւն և համբերատար ոգի ունեցիր, ու այս պահուս տակէ հեռացիր։

Կատարինէի այս խօսքը կարծես թէ՝ դիմակաւորին զգացման մէկ ուրիշ թելին զարկաւ, և նորա սրտի վրայ սաստիկ մտայուզութեան երևոյթի մը պատկեր գրոշմեց։ Մի յուզուիր, ըսաւ օրիորդն անոր. վասնզի ինձ հիւր գալուդ համար ընտրածդ ժամանակ անպատէհ էր, և այս անպատէհութեան հետևանաց աղէտներն են, որք զիս կը հարկադրեն պատշաճից օրէնքէն դուրս խօսել։ Ծածկեա՛ զ բարեկամ, կրից առաջնորդութեամբ հոս դիմեցիք այս պահուս քան թէ բանականի խորհրդատուութեան որոշմամբ։ Ով որ լինիս ի հարկէ պատիւ կրող մարդ մը ես. ես իմ անձէս աւելի քու պատիւդ և կեանքդ կը վախնամ. եթէ աւելի առաջ երթաս, այս վայրկենիս սիրով կը յանձնուիմ քու սուրիդ քան թէ սիրոյդ. վասնզի իմ գաղտնի մահս պիտի կարողանայ քու յայտնի պատիւդ պաշտպանել, զոր այս վայրկենէն սկսեալ վտանգի ներքև կը տեսնեմ։

Պարոն, յանուն համեստութեան կը պաղատիմ, որ մեր պատկառանաց քողը չ'վերցունէք, պատիւ աղարտողը ընկերութեան ամուսնութեան հիմունքը կը քանդէ։ Եւ համեստութեան զգացում ջնջելը՝ առաքինութեան և մարդկային պատուոյ իրաւունքները ոտնակոխ ընել է. կ'աղաչեմ կրից մղումը թող տուէք, քանականութեան հետևեցէք։

Այն միջոցին, կ'ըսէր դիմակաւորն իւրովի երեսը մէկ կողմը դարձնելով՝ արդեօք, կրնամ սիրտս սիրոյս գերեզման ընել. վասնզի սոպռ վարուեցայ և չափէն ա՛ելի վշտացուցի, եթէ քիչ մը ևս առաջ գնամ, կարելի է որ նորա վիշտերը յուսահատութեան երթան հասնին, որու հետևանքն անդարմանելի կը լինի, և ինչո՞ւ լսեմ ու տանիմ այսչափ նախատինքներ, կը վայելէ ինձ, նուաստ աղքատ օրիորդէ մը այս աստիճան յանդիմանուիլ և մերժուիլ, պէտք չէ ասկէ վերջ այլևս զինք սիրել վասնզի անարժան է իմ սիրոյս. թող անհետանայ ինձմէ այն սէրը որ սրով կ'օծանի, ի՞նչ յուսահատական վիճակի մէջ կը գտնուիմ, Տէր Աստուած. սիրել կուզեմ, չեմ յաջողիր սիրոյ արժանանալ։ Հեռանալ կուզեմ կրկին անկարող վիճակի մէջ կը գտնուիմ, զի սիրոյս առարկան սիրելէ չեմ կրնար դադրիլ։

Հիմա կ'զգամ թէ հանճարաւոր միտքը կրնայ սիրտ մը ուրախացնել, բայց չկրնար սիրոյ նետերուն դիմադրաւ լինել և անոր ցաւերը դարմանել։ Ուժը որ աշխարհիս թագուհին է, սիրոյ առջև կը խոնարհի, այրող կրակ մը մտքիս եղլեղով կերթայ սիրտս կը տոչորէ. համբերութիւնն ալ իւր սահմանն ունի, ըսելով, օրիորդին կը մօտենայ։

Կ'ըսէ պաղատելով Կատարինէն, Պարոն, ձեր դիմակի տակ ես ձեր վրայ բարի սիրտ և ազնիւ զգացումներ կը տեսնեմ. կը խնդրեմ ձեզնէ յանուն մարդասիրութեան հանդարտ կեցէք, իմ պատիւս այս պահուս ձեր վեհանձն խնամոց պաշտպանութեան տակն առէք։

Պարոն, քիչ մը առաջ, ուղղութիւն և արիութիւն մէկ տեղ նշմարեցի ես ձեր անկեղծ խօսքերուն մէջ, բայց այժմ ձեր խոհեմութեան վրայ թեթև կասկածներ կը տեսնեմ. կը խնդրեմ բանականութեան կշիռը ուղղութեան մէջ պահեցէք։ Անդէն օրիորդի մը պատիւը ձեր ոտքի տակ, անզգոյ թուենոյ մը պէս, բա-

64739

զէկն օգնութիւն կը հայցէ։ Ուրեմն խնամոյդ յանձնուած պատիւը, անարատ պահէ, Պարոն, դաղանաց յատկութիւնն է վերաւորել, մարդիկ պէտք չէ որ վիրաւորեն։ Զի մարդասիրութեան օրէնք մը կայ որ վիրաւորեալները բժշկելու հրահանգ կուտայ, Ուրեմն, քիչ մը առաջ կրից զէնքով վիրաւորածդ սիրտ, մարդասիրութեամբ բժշկէ, և ինձմէ հեռանալէ ի զատ ուրիշ բան մը չեմ խնդրեր ձեզմէ։

Խօսքերդ աղնուականի են, գործով ալ աղնուական և գթասիրտ եղիր, խնայէ ինձ. վասնզի այս պահուս անելանելի անդունդ մը բացուած է իմ առջևս։

Դիմակաւորն կ'ըսէր լուրովի. Եւայի աղջիկներու ամենէն պարզամիտը անդամ իւր շողոքորդ լեզուաւ կը յաջողի հարիւրաւոր խելացի մարդիկ համոզելով խաբել։

Կատարինէն վերստին խօսքի թելն առնելով ըսաւ, Պարոն, շատ շնորհակալ եմ ձեր մեծասրտութենէն ու գորովաղութենիւ առատաձեռնութենէն։

Կ'ըսիշեմ թէ պահ մը առաջ երբ մեր այս աղքատիկ տան խոնարհելու շնորհն ըրիք, պարկ մը ոսկի իբրև ձեր բարեգործութեան մէկ արդիւնք ինձ նուէր տուիք. և ահա հոս բարձին վրայ անարատ կը մնայ։ Կը խնդրեմ որ ձեր սրտին ցաւ մը չ'պատճառելով նոյն ոսկին ետ առնելով տանիք, և անով կրնաք ձեզ համար շատ մը հաճելի հեշտութիւններ և զուարճութիւններ գնել, և ինձմէ ետ մնալ։ Դուք ինձ հետ դաղտամեստ յարաբերութեամբ խղճի տաղնապէն ի զատ ուրիշ բան մը չ'ստիպեր շահիք, զգուշացիք այդ սոսկալի վտանգէն, որուն մէջ կամ մահս կամ ամբողջ կենացս մէջ դատապարտելի հալածանքս կրտեսնուի։

— Ըսաւ դիմակաւորն, զիս չափէն աւելի նախատեցիք և նեղեցիք, օրիորդ, խօսքերուդ սահման դիր։

— Պարոն, կը հասկնամ ձեր խօսքերու նշանակութիւն. և կ'զգամ թէ հետևանքն մինչև ուր կը հասնի։ Ստոյգ է թէ՝ զուք այս վայրկենիս կարողէք իմ զօրութիւնս յաղթահարել. վասնզի Աստուած զկին տկար ստեղծած է. բայց գիտնալու էք թէ տկար կնոջ պահպանութիւնն ալ մարդուն վեհանձնութեան յանձնած է. ուրեմն ձեր վեհանձնութիւնը մի՛ արատաւորէք։

եթէ չ'զթաք պատրաստ եմ հոգիս Աստուծոյ նուիրել քան թէ պատիւս ձեզ։

Սիրով կը զրկեմ այն մահը, որ զիս վատահամբաւութենէ մը ազատէ։ Պարոն, պէտք է անկեղծ խօսիլ, ես ոչ սիրտս կրնամ ձեզ տալ և ոչ անձս ձեզ յանձնել. եթէ լսէք ինձ և համեստութիւնս չ'վիրաւորէք, ճշմարիտ կըսեմ, Պարոն, դիմակի տակ պահուած ձեր վեհանձնութեան յիշատակը միշտ իմ սրտիս մէջ անկեղծ պիտի պահուի, որչափ որ հաւատարմութիւն և սէր երկրիս վրայ յարդ ունենան։ Այս պահուս ձեր սիրտը ձեր դլխէն աւելի աղնիւ կրտեսնուի, և ես ձեր սրտէն կը յուսամ իմ անմեղութեանս պաշտպանութիւն։

— Դիմակաւորն կրկին մօտենալու յանդգնութեան շարժումն ընելով ըսաւ, օրիորդ, ես ոչ թէ տրամաբանելու, այլ սիրաբանելու եկած եմ. մի՛ նեղէք զիս։

— Որուն ի պատասխանի ըսաւ Կատարինէն, մի՛ շտապէք Պարոն, ետ կեցէք, զի շտապող ձեռքը փոխանակ ձկան օձ կը բռնէ. սէրը անմեղ սրտերու մէջ կը թափուի և ոչ թէ բռնաւորայ անհաւատարիմ կրից մէջ։

Անոնք որ չ'հասած զինին կը խմեն, նոքա բնաւ չեն զուարճանար, այլ միայն ապուշ կը դառնան, մի՛ կարծէք թէ այս տեսակ ոճիրներ կրնան միշտ անթափանցելի քողի տակ ծածկուած մնալ, այս տեսակ դաղտնիքները բնաւ չեն նմանիր այն դաղտնիքներուն, որք մինչև ի գերեզման թագուն պահուած կը մնան. զիս և զձեզ մէկտեղ մի՛ մեղցունէք, մեծ մարդու մը սիրտ կը տանիմ ձեր դիմակի տակ, մի թէ չէք գիտեր թէ մեծ մարդկանց ամենէն փոքր գործերն անդամ կը լրտեսուին, ձեր վայրկենական հաճոյք պիտի լինի մեզ մշտնջենական դատապարտութեան կապանք. ուրեմն խնայեցէք նախ ձեզ, ապա աղքատիկ աղջկանս պատուոյն։

Կատարինէի այսչափ թախանձական խօսքերը բնաւ նշանակութիւն չունեցան բորբոքեալ կրակին առջև, կիրքերը յաղթեցին բանականութեան։

Այս պահուս, ամօթխածութեան նշանները Կատարինէի ճակատի վրայէն սահելով կ'անցնէին, նման այն ամպերուն՝ որոնց աստրեները արտօրէից վրայէն ցորենի հակերը դունափոխելով

կըսահին կ'երթան։ Օրիորդն վշտաբեկ դէմքով և յուզեալ սրտիւ իւր արտասուաթոր աչքերն ծպտեալ մարդուն վրայ դարձուցանելով սպառնական ձայնով մը ըսաւ, բռնաւոր, ուրիշ հնարք չ'գտայ։ Հարկադրուած եմ այս անարդանաց ոխը սրտիս մէջ թաղուն բայց միշտ կենդանի պահել, քանի որ ողջ եմ։

— Յուզեալ սրտիւ ըսաւ դիմակաւորն, օրիորդ, այդ խօսքերդ վտանգաւոր են կզդուշանամ զձեզ, որ նորէն չ'կրկնէք։ այս վայրկենէն սկսեալ, դուք ձեր դիմակաւոր այցելուին բարեկամն էք, չափէն աւելի դուք զձեզ մի տանջէք, դուք իմն էք, ես ձերը, և երկուքս ի միասին Աստուծոյ։ ըսելով դիմակաւորն անմիջապէս մեկնեցաւ, բայց Կատարինէն յուսահատ վիճակի մէջ մնաց։

ԿԱՏԱՐԻՆԷԻ ՅՈՒՍԱՀԱՏ ԺԱՄԵՐԸ

Դիմակաւորն մեկնելէն վերջ Կատարինէն իւր սենեկի մէջ կը յուզուէր իւր սրտի վրդովումներով, և կ'ըսէր ինքնին, Տէր Աստուած, այս ի՞նչ աղէտալի յուսահատութիւն է, որ այս պահուս իմ վրաս կիջնէ, սիրտս կըտոչորէ, միտքս ովկիանոսի ալեաց ալէկոծութեամբ կալէկոծէ, այս ի՞նչ սոսկալի դէմք էր որ ինձ պատահեցաւ։ Երկի՞նք դթա՛ ինձ, զու գիտես թէ այս անակնկալ դէպք իմ կամացս և զգացմանս հակառակ բռնութեամբ տեղի ունեցաւ։ Պատժէ՛ ոճրագործը. և այս վայրկենիս իմ կեանքս ալ կարձէ՛ և զիս ազատէ. ապա թէ ոչ՝ այս դէպք քու յաւիտենական գաղտնեացդ մէջ թաղէ՛։ Արդեօք իմ՞ը շարժումն էր որ զիս այս բոցերուն մատնեց, և ո՞ւմ կրնամ յայտնել այս սոսկալի գաղտնիքը, և ոչ իսկ մօրս կը վստահիմ յայտնել։ Զի քաջ գիտեմ թէ՝ գաղտնիք մը երբ ուրիշի մը յայտնուի անիկա գաղտնիք լինելէ կդադրի։ Վանդի գաղտնիքները տեսակ մը յուզիչ զօրութիւն ունին, ուստի յայտնեմ, գիտեմ թէ զայն թաղուն պահելու կըհաւատարմացունեն զիս, և քնաւ ուրիշի մը չ'յայտնելու խոստումն կուտան։ Բայց ամէն բան իմանալէն վերջ, կ'սկսին տեսակ մը սրտայուզութիւն ունենալ և

վրդովիլ, այնչափ որ այլ ևս չ'կրնալով տանել, կըհարկադրուին նորէն իրրև գաղտնիք իրենց մէկ հաւատարիմ կարծած անձին յայտնել, այն ալ իւր մէկ բարեկամին կըյայտնէ նորէն իրրև գաղտնիք։ Վերջապէս գաղտնիքն իրրև գաղտնիք, գաղտնապահէ ի գաղտնապահ, մտերիմէ ի մտերիմ, բարեկամէ ի բարեկամ պտուտաւոր շրջան մը կատարելով շուտով մը կըվերադառնայ հոն, ուրկէ որ ելած էր առաջին անգամ։ Եւ այս մասին այնչափ թերահաւատ եմ, որ նոյն իսկ գաղտնապահութեան հաւատարիմ մնալու ուխտադիր քահանային և բժշկին անգամ չպիտի հաւատամ այս գաղտնեացս խոստովանութիւնը. և ոչ իսկ մօրս պիտի յայտնեմ, ես իմ մէջս պիտի այրիմ և տոչորիմ շարունակ մինչև գերեզմանին հասնիմ։

Այն միջոցին յանկարծ դուռը զարնուեցաւ, զի եկեղեցական հանդէսը վերջացած, իւրաքանչիւր ոք իւր տուն կըվերադառնար ըստ արևելեան սովորութեան՝ ճաշելու։ Կատարինէն դուռը բանալով իւր ծնողք և փոքր քոյր ներս մտան։ Կատարինէի մայրն շուտով զգաց իւր աղջկան այլայլութիւնը, և անմիջապէս աղջկան առանձնարանը մտնելով չորս կողմը աչքէ անցուց, բան մը չ'կրցաւ նշմարել աղջկին առանձին ներս կանչելով ըսաւ. զաւակս, զքեզ տխուր և այլայլեալ, սիրտդ յուզեալ և աչքերդ մթագնեալ, ու արիւնալի կըտեսնամ։ Ի՞նչ ունիս։

Կ'ըսէր Կատարինէն իւրովի, անիծեա՛լ վիշտ, ի՞նչ դժուար է զքեզ թաղուն պահել չ'յայտնելու համար՞, եթէ երեսս գոցեմ աչքիս մէջէն կըտեսնուիս, եթէ աչքերս զոցեմ շրթունքներուս վրայ կըթափառիս, երբ ամբողջ գլուխս զոցեմ, սրտիս մէջ կիջնաս, զայն այնչափ կըխռովես ու կըյուզես. մինչև որ հարկադրուիմ հրաբուխ լեռներու պէս ներսս եղած լաւաները դուրս տալ։ Եւ հեկեկան ձայնով մը պատասխանեց։

— Մայր իմ, ոչինչ բան մը չունիմ։

— Ստոյգ խօսէ, օրիորդ, հիւանդ ես։

— Ո՛չ, մայր իմ, քիչ մը միտքս վրդոված է անձկութեամբ, քան թէ մարմնոս ցաւերով։

— Անշուշտ պատահմունք մը կայ, զոր խիստ զգուշութեամբ լեզուդ ինձմէ ծածկել կ'ուզէ. սակայն ես անիկա սրտիդ վրայ կրկարդամ. և ո՞վ եկաւ այստեղ։

— Մարդ չեկաւ ես առանձին էի ։

— Սուտ կըխօսիս ։

— Սուտ խօսելու պատճառ մը չունիմ, մայր իմ։

— Ուրեմն ի՞նչ է տխրութեանդ պատճառը, զաւակս, եթէ ինձ չ՚յայտնես, այլ որո՞ւ կամ ո՞ւմ պիտի յայտնես ։

— Մայր իմ, մի նեղեր զիս. կըխնդրեմ որ չ՚դժկամակիս, երբ չեմ կրնար պատասխանել քեզ. և ոչ ալ կրնամ դաղտնիքս յայտնել, թող որ յուսահատութեան ցաւերով մեռնիմ։

— Ի՞նչ դէպք պատահեցաւ, զաւակս, խօսէ զիս մի տանջեր։

— Մի հարցուներ, այլ միայն դէմքէս գուշակէ կ՚բածներս ։

Սոյն միջոցին օրիորդի մարմնը այրող տենդը, մտայ զարհուրելի վիճակը, երկիւղներու սոսկումը, նորա սրտին ահարկու վիշտերը կըպատճառէին. աչք երկիր խոնարհած տեղը կըփնտրէր, իւր սոսկալի դաղտնիքը հոն թաղելու ։

— Աղջիկս, յանուն Աստուծոյ, յայտնէ ի՞նչ դաղտնիք ունիս. և ի՞նչ պատճառաւ քու մօրմդ կըծածկես ։

— Ամէն մարդ իրեն վերապահելու դաղտնիքն ունի, բայց, մայր իմ այս վայրկենիս դու իմ վրաս շատ մի՛ բունանար, մահս մօտալուդ է ։

— Օրիորդ վրադ կըկասկածիմ։

— Մայր իմ, դու իմ վրաս կասկածելու բայարձակ իրաւունք ունիս, ինչպէս որ ես ալ քու վրադ զանազան ենթադրութիւն ընելու իրաւունք ունիմ, զիս մինակ ձդել երթալուդ համար ։

— Մի գուցէ նշանածդ Արսլանը եկաւ ։

— Ոչ, այն չէր, երանի՛ թէ այն լինէր. նորա խիղճը միշտ արթուն է, և միտքն զգոյշ, սիրտն ալ աղնիւ, նա չարագործ չէ, ոչ ոճրագործ ։

— Բաւ է որ զիս տանջէք. ուրեմն ո՞վ եկաւ ասա ։

— Մայր իմ, սիրտ տանջելու հարկ չ՚կայ, հիմակուհիմա քեզ բան մը չ՚յայտնելու հարկի տակ կըդտնուիմ. պէտք է որ հետևանքը Աստուծոյ տնօրէնութեան յանձնեմ. և հետս դերեզման տանիմ։

—Օրիորդ, ես քու վրադ յանցաւորի մը պատկեր կըտեսնեմ. և մի հարկադրեր զիս քու մասիդ խիստ միջոցներ ձեռք առնելու. խոստովանէ յանցանքդ ։

— Այո մայր իմ. յանցանք մը, որ դեհենի բոլոր կրակը կարող չէ մոխիր դարձուցանել, յանցանք մը, որ այլևս անկարելի է սրբուիլ, յանցանք մը, որ լեռան պէս սիրտս կըճնշէ և կըճմլէ և պէտք է յայտնել թէ դիմակաւոր անծանօթի մը կրից խաղալիկ եղայ. այնպիսի մի ժամանակի մէջ, որ բարկութեանս արդիւնք, միայն անէծք և նզովք եղան ։ Մայր իմ, անծանօթ ձեռքի մը մէջ անզէն ճնճղուկի պէս փետտուեցայ ուրիշ անէծք չեմ կիտեր, միայն կ՚ըսեմ թէ. նա ով որ է թող իւր արտասունք ով լուանայ իւր ձեռքի արիւնը ։

Մայր իմ, ասկէ աւելի բան մը մի հարցուներ ինձ որպէսզի այս յուսահատ ժամերուս մէջ պատուոյս հետ կեանքս ալ չ՚կորսընցուցնես. յորմէ յոյժ տաղտկացած եմ և դերեզման կըփնտրեմ զիս և իմ յանցանքս անոր մէջ ծածկելու ։

— Աստուած իմ, մինչև հիմա ցաւս աղջկանս պատուոյն վրայ էր, այժմ նորա կեանք իսկ յուսահատութեան վտանգի ներքև կըտեսնեմ։ Ա՜հ չարագուշակ ժամ, սիրտս դաւնութեամբ լեցուցիր. հոգիս թունաւորեցիր. բայց որու վրայ կրնամ յանցանք գնել. ես եմ մեղաւոր, աղջիկս միակ ձդել գնալուս համար ։

Աղջիկս, հանդարտեցուր զքեզ և համբերէ ։ Իւրովի ըսաւ մայրն. աղէղէն ելած նետը այլ ևս ետ չդառնար. կոտրած ապակին չ՚ողջանար. ամէն բան այս մասին Աստուծոյ դատաստանին յանձնել և լռութեան քողի տակ ծածկել պէտք է ։ Բայց ոչ, անպատճառ տիկին Սոֆիային և Արսլանին պարտաւոր եմ յայտնել իբրև դաղտնիք. որ ետ մնան Կատարինէէն ։

ՍԱՄՈՒԷԼԻ ԿԻՆ, ՏԻԿԻՆ ՍՕՖԻԱ ԵՒ ԱՐՍԼԱՆ

Տ.....քաղաքի մէջ կըբնակէր հին դերդաստանէ սերեալ խիստ շատ հարուստ Սոֆիա անուն այրի կին մը, որ Արսլան անուն նորահաս տղայ մը ունէր, և որ Սամուէլի աղջիկ՝ օրիորդ Կատարինէի հետ նշանուած էր ։

Սամուէլի կինն՝ որ խիստ պարզամիտ մէկն էր, չ՚կրցաւ համ-

բերել անմիջապէս իւր փոքր աղջիկը ղրկելով տիկին Սոֆիան և Արսլանը իրենց տունը հրաւիրեց։ Կատարինէն իւր աւանձնարանը մնած, դուռը գոցած իր աղէաը կ'ողբար։ Սամուէլի կինն բոլոր անցքերը՝ որ տեղի ունեցած էին անծանօթի մը միջոցաւ փրստիոջէ պատմեց Սոֆիայի և Արսլանին, և յայտնեց թէ իրաց այս վիճակի մէջ, Կատարինէն այլ ևս կարելի չէ որ իրենց հարս լինի, նաև յաւելցուց ըսել թէ ինք Կատարինէն չէ կարողացած զիմակաւորը ճանաչել թէ ո՞վ էր։ Տիկին Սոֆիա կը-յայտնէ թէ, նորա զլեստուց նշանէն ինք կարողացած է նշմարել թէ ո՞վ է ան։

— Վրայ բերաւ Արսլան ըսելով, խեղճ Կատարինէ, և դու որսացար յորոգայթ նորա, գիտեմ ո՞վ է նա. սակայն թող առ ժամս մնայ։ Ղեղոսի մուկ մը կարողէ կոկորդիլոս մը սպանել։

Կատարինէն ինձ համար անմեղ է և անարատ, ու իմ նշանած լինելէն զգրած չէ. լուր տուր Կատարինէին թող չ'յուսահատի, իբրև պարտք կ'ստանձնեմ իւր պատուոյ վրէժը լուծելու այն չարագործէն, զոր ես խիստ ի մօտոյ կը ճանաչեմ։

Կատարինէն իւր սենեկի դրան ետևի կողմը նստած, Արսլանի խօսքերը կը լսէր. բայց չէր կրնար ինքզինք յուսահատութենէն ազատել և մխիթարուիլ, և կ'ըսէր, այս աշխարհիս մէջ ասկէ վերջ ես անթաղ մեռեալ մի եմ. և ամէն նախատանաց և անպատուութեան առարկայ։

Ո՛վ Աստուած, մահս փութացուր, որպէսզի զիս նախատողները չ'տեսնեմ, Արսլանը իմ յանցանաց կրնարէ իւր բնական վեհանձնութեամբ. բայց ես ի՞նչ օրինօք և ի՞նչ իրաւամբ ներեմ ինձ. և ի՞նչ պարզ երեսութեամբ պիտի համարձակիմ նոցա տունը մտնել։

Տէր Աստուած, առ հոգիս, որ չտեսնեմ, ոչ յանցանքս, ոչ աշխարհ և ոչ մարդիկ։ Զի ամէնքն ալ իրաւամբ անհաշտ աչօք պիտի նային ինձ։ Ա՛հ յիմար եմ եղեր, որ անձնատուր լինելէս առաջ պատուաւոր մահս չ'զրկեցի. անպատիւ կենաց մէջ իբրև մեռեալ պիտի թափառիմ. և ամէն օր մէկ մէկ նախատական մահ պիտի տեսնեմ և ընդունիմ։

Տիկին Սոֆիան և Արսլան Սամուէլի կինը մխիթարելով մեկնեցան. անոնց երթալէն վերջ ըսաւ Կատարինէն իւր մօր։

— Մայր իմ, անպատուութեանս զաղտնիքը, զոր ես ծածկել ուզելով հետս գերեզման տանել կը յուսայի, դուք իմ կամայս հակառակ իմ յուզեալ ժամերուս մէջ միամտութիւնս պատրելով ինձմէ քաղեցիք, և փոխանակ զայն ձեր տան մէկ անկիւնը թաղելու, որ իմ և քու մէջ տեղդ պիտի մնար, զայն պահելու ուրիշ բան մը չ'ըրիք. միայն աղջկանդ անպատուութիւն աշխարհին ցոյց տուիք և կեանքս վտանգի ենթարկեցիք։

Կատարինէն այս դէպքի վրայ մտածելով և օրըստօրէ տկարանալով ծանր հիւանդութեան մատնուեցաւ. նորա կայտառ մարմինը իւր ոյժը կորսնցուց. և այն անմաղ դեղեցկութիւնն աշնան տերևներու պէս դունաթափեցաւ. ասկէ վերջ Կատարինէի փափաք և աղաչանք միայն մահն էր. կը կարծէր թէ բոլոր աշխարհի մարդիկ նաև քար ու փայտ զինք կը քննադատեն և իւր յանցանքը մատնանիշ ընելով իրարու կ'ըսեն թէ, ահա այս է յանցաւոր Կատարինէն։

ԴԻՄԱԿԱՓՈՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԸ

Դիմակաւորն իւր սենեկի մէջ դժգոյն դէմքով, կէս մը յուսահատ և ինք իրմէն ձանձրացած, երթևեկութիւն ընելով կ'ըսէր։ Ա՜հ սէր, դու անիմանալի զաղտնիք մի ես որ աշխարհ կը յուզես, քու նետերդ խիստ շեշտակի կը ներգործեն, քու բացած վէրքերուդ շատերը անբժշկելի կը մնան. և քեզմէ հարուածեալներու շատերը դէպ ի գերեզման կ'երթան։

Դու բնաւ չես տեսնուիր. սակայն շատ շատ կ'զգացուիս, դու այն հուրն ես որ զմարդիկ թիթեռնակի պէս կ'այրես և կը-սաստրես, Արդոսի՞աչք ունիս. որ աշխարհի մէկ ծայրէն միւս ծայր քու առարկադ կը տեսնես։

Կ'ընդունիմ թէ՝ դու երկնային օրէնք մի ես, և մարդկութեան ծագումը քեզմէ առաջ եկած է, բայց դու վարդի մէջ ծած-

կուած իմմի ես, մարդիկ զքեզ կը քաղեն և կը հոտոտան, բայց դու քու անուշահոտութեանդ հետ թոյնի դառնութիւն ես կը հաղորդես, որ կ'երթայ մարդկանց սիրտ կ'ապականէ և հոգին կը վիրաւորէ, չ'մեռցունէր, բայց մահուան անկողնոյն մէջ կը տառապեցունէ։ Այնուամենայնիւ անձինք որ քու օշարակդ խմած են, անոնց ամէնքն ալ իրենց արժանապատուութիւն կորուսած են. կեանք վատնդած, զգայութիւնները վիրաւորած. մահամերձ վիճակի մէջ փրկութիւն և ազատութիւն աղաղակած են. սակայն յաջողած չեն զայն ձեռք բերելու։

Դու խաբերայ սէր. բնակածդ տեղ կ'այրես և կը տոչորես. կը լափես և մոխիր կը դարձնես. ամենէն խելացիները և իմաստունները. խոհեմ և պատուամոլ անձինք անդամ քեզ ստրակ դերի ընելով, քու կառքիդ կը լծես, և անոնց վրայ նստելով ուզած կողմդ մարակելով, խորհուրդ չունեցող անասնոյ պէս կը քաշես կը տանես մաղնիսական զօրութեամբդ. բայց կէս ճանապարհին նոցա աչքերը կը կապես և չես թողուր որ դան նստուդ հանին. դու զարմանալի յատկութիւն մը ունիս, կը գրաւորես թշնամի մը պէս, բայց քեզմէ ալ հեռացունել չեն ուզեր քեզ հասնելու կը հրապուրես, բայց հրապուրեալները նախատանաց և անպատուութեանց ճանապարհի վրայ կը թողուս. ամենու սրտին մէջն ես, բայց և ոչ մէկը զոհ ըրած ես, ամէնքն ալ կիսամեռ վիճակի մէջ թողած ես. քու նետերդ շատ հեռու կ'երթան և անվրէպ կը խոցեն։

Տէր Աստուած, այս ի՞նչ անբացատրելի դաղտնիք մի է սիրոյ հուրը. սրտերը կը վառէ, և ամենէն խելահասը՝ անզգայ և ապուշ կը դարձունէ, աշխարհի ամէն վիշտերը սիրոյ առջև միայն մեղմիկ երաղներ են։ Մարդիկ ամէն անպատուութեանց և մինչև ինքզ մահուան կը դիմանին, բայց սէրէն բաժնուիլ չեն ուզեր։

Նայուածքներ կան, որք սրտերու մէջ սուրէն աւելի խոր վերքեր կը բանան. բնազդումներ կան, որք մաղնիսական զօրութեամբ սրտեր իրարու կը մօտեցունեն. ուրիշներ ալ կան որ կը հեռացունեն, կատարեալ թշնամութիւն հոն է որ, մինչ կ'այրի, միւսն անզգայ կը մնայ, միշտ երջանիկ են անոնք, որք սիրոյ բոցերէն չեն բռնուիր։

Եղեգդրական կայծ մը կ'զգամ, որ ուրիշէ մը բղխելով կուգայ թագուն կերպով սրտիս կը հաղորդուի և զայն կը խռովէ։

Եթէ այս աւուր տեղի ունեցած դէպքն, սրտիս մէջ միշտ վառ մնայ. կը կասկածիմ թէ իրաց այս ընթացք երթայ հասնի այն կէտին, յորում հզօր հրապոյր ունեցող վառարանէն ցոլացող մաղնիսականութեան վերջի կայծն ալ ինձ տապալէ. և այսպէս լինելու մեծ կասկած ունիմ. վասնզի ստէպ տեսնուած է որ ամենէն զօրաւոր մարդն ամենէ առաջ կը խոնարհի բնութեան օրինաց առջև։

Բնազդումն ինձ իմաստասիրել կուտայ թէ՝ հրաբուխին մէջ նստող տարրական նիւթերն օր մ'ալ լաւանալու հետ խառնուած դուրս կը ժայթքին. որու մէջ անտարակոյս իմ պատիս պիտի մահանայ։

Թողունք առ ժամս ապագայի խնդիրը, ա՛յլ զայն վրայ դառնանք զայն դարմանելու։

Այն կինը որ ինձ տեսաւ Սամուէլի տունէն ելած ժամանակս զայն ես խիստ լաւ կը ճանաչեմ. խիստ պարկեշտ և կատարելութեան ձիրքով օժտուած կին մի է չեմ կարծեր որ ինձ մատնէ բայց կասկած կայ. զի Կատարինէն նորա տղայի նշանածն է. ուրեմն խնդիրը թաղելու համար ի՞նչ միջոց ի գործ դնել պէտք է արդեօք։ Տէր Աստուած, ի՞նչ ընելու է որ այս անցք միշտ գաղտնի մնայ։

Սոյն միջոցին դիմակաւորը սարդի պէս ոստայն կը հիւսէր իւր մտքի մէջ զինք լրտեսող տիկինը անոր մէջ որսալու, այնպէս կը կարծէր թէ, զինք տեսնող կինը իւր աչքի առջև եկած կանգնած է. և իւր հրավառ աչերը նորա վրայ սեւեռած էր, ինչպէս որ բաղէն իւր աչք կը սեւեռէ իւր որսին վրայ։ Ն'ըսէր դիմակաւորն ինքնին, այս վայրկենիս գիտես թէ աներեւոյթ ոգի մը կիշխէ իմ վրաս, կը սորվեցունէ ինձ թէ, այս ինչ կորստեամբ միայն կարելի է որ քու դաղտնիքդ թագուն մնայ և չ'յայտնուի։ Խիստ ճշմարիտ է թէ հարկ մարդկանց հնարագիտութիւն կը սորվեցունէ։ Ահա գիշերը իւր խորհրդաւորութիւն հետն առած կուգայ զմարդիկ առժամանակեայ մահուան դատապարտելու։ Գիշերը լաւ խորհրդատու է մարդկանց հնարագիտութեան ձեր և եղանակը սորվեցունելու. ուրեմն

մնածել պէտք է՝ ըսելով, Թիկնաթառի մը վրայ կնթնած երկար ժամանակ խոր լռութեան մը մէջ մնալէն յետոյ, յանկարծակի ոտքի վրայ ելլելով քիչ մը ևս սենեկին մէջ քայլամոլար շրջան կատարելէն վերջ ըսաւ, ասկէ ի զատ ուրիշ հնարք չ'կրցայ գտնել, ուրեմն գործադրելու հրաման տամ։

Ստեփանէն կանչել պէտք է, արդեօք ո՞ւր է, կամ՞ով գիտէ թէ այժմ նա ո՞ր գիւղն է, ուրեմն գրել պէտք է ըսելով գրասեղանի գլուխն անցաւ։

ՍՕՖԻԱՑԻ ՎՐԱՑ ԵՂԱԾ ՑԱՐԱՁԱՑՆՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցական հանդիսի երկրորդ օրը լուր տարածուեցաւ բոլոր քաղաքին մէջ թէ՝ տիկին Սօֆիան այս գիշեր յանկարծակի իւր տունէն անհետացած եղած է և տունէն բնաւ բան մը առած չէ հետը։ Ոմանք կ'ըսէին թէ՝ սրիկաները յափշտակած են զինք փրկանք ստանալու յուսով. ուրիշներ կ'ըսէին թէ՝ գաւադրութեան արդիւնք կրնայ համարուիլ. այլք ոմանք կ'ըսէին թէ տիկինն մեքանաղձոտած է բարոյական մեծ ցաւէ մը, զոր զգացած է բարեկամի տան մէջ դէպքի վրայ։ Եւ ժամանակի երկարաձգութեան հետ տիկին Սօֆիայի վրայ եղած ենթադրական կարծիքներն ալ իրենց ծաւալումն կ'ունենային։ Ուրիշները կը պնդէին թէ՝ իւր տղան իւր մօր հարստութիւն ձեռքէն առնելու համար իւր մայրը կորսնցուցնելը ամենէն լաւագոյն միջոց համարած է, այլք ոմանք հաստատել կ'ուզէին թէ՝ իրենք տանուն մէջ գտիկին Սօֆիան զգեստները պատռտած խելացնոր վիճակի մէջ տեսած են. և թէ բռնել ուզած են, բայց նա անձնատուր լինիլ չէ ուզած. և իւր ետևէն գնացողները քարկոծելով յաջողած է խոյս տալ և անհետացիլ։ Իսկ տիկին Սօֆիայի որդի Արսլանը խիստ զգուշաւոր միջոցներով սկսած էր իւր մօր հետքը որոնել, և ինքը համոզում կը կազմէր թէ՝ իւր մայրը անպատճառ գաւադրութեան մը մէջ ինկած է -

կը խոստանար իւր հարստութիւնը փրկանք տալ իւր մօր ազատութեան։ Եւ կը փափաքէր որևիցէ տեղէ մը իւր մօր ազատութեան համար փրկանք պահանջող նամակ մը ընդունիլ, և պահանջած գումարը վճարել ու իւր մօր ազատութիւն ձեռք բերել։ Խուզարկութեան ամէն կարելի եղած միջոցները ի գործ կը դնէր. և մեծ գումարներու խոստումներ կը նէր իւր մօր վրայ տեղեկութիւն տուողներուն։ Այն օրը պատառատուն զգեստներով պառաւ կին մը փողոցի մը մէջ իւր շուրջ նայելով տեսաւ որ իւր բոլորտիք ուրիշ մարդ չկար, և ինք միայնակ էր, մայրակորոյս Արսլան ալ վերի կողմէն կուզար կամայ մը անոր մօտենալով ականջին գաղտնի բան մը փսփսաց ու անցաւ գնաց։

ՄՈՒՐԱՑԻԿ ԿՆՈՋ ԵՒ ԱՐՍԼԱՆԻ ԿՈՐՈՒՍԸ

Գիմակաւոր մարդը դրսի տարաձայնութենէն իմանալով թէ՝ Արսլան իւր մայրը փնտրել և գտնելու ամէն կարելի եղած միջոցները ձեռք առած է, և խիստ զգուշութեամբ թագուն կերպով խոստումներ կընէ իւր մօր վրայօք լուր բերողներուն, միւս կողմէն իմացած լինելով թէ՝ աղքատ պառաւ կին մը Արսլանի ականջին գաղտնի լուր մը հաղորդած է, և ինքը գիմակաւորն արդէն գիտէր թէ՝ այն կինը ո՞վ է, և թէ՝ գաղտնիք երևան գալու վտանգները մօտենալու զօրաւոր կասկածները հետզհետէ կը ճշմարտուին. վերստին նամակ մը կը գրէ իւր գործակատարին։ Գործակատարը նամակը կարդացած ժամանակ քթին տակէն կ'սկսի խօսիլ հետևեալ եղանակաւ, ինձ ի՞նչ փոյթ է անոր մեղքերով լի գաղտնիքներն իմանալու. միթէ ես խոստովանած չ'եմ, ես մի հրամանակատար մարդ եմ, տէրս ինչ որ հրամայէ այն կընեմ. եթէ իւր հրամաններն ոճիր իսկ լինին՝ մեղքն ալ իրենն է, վարձն ալ. եթէ գործած ոճիրներս քաղաքական ոճրագատ ատեանը իմանայ. ես պիտի ըսեմ, տէրս հրաման ըրաւ ես գործադրեցի, այն ժամանակ պատասխանատուութիւն անոր կը վերաբերի և ոչ թէ գործակատարին։

Չէ, չէ, եթէ բռնուիմ իսկ. իմ տէրս չպիտի մատնեմ վասնզի անհաւատարմութիւն է. սակայն ոչ զիսէ, ծառաները եթէ մտաց կատարելութիւն ունենային. անոնք ալ տէր և իշխան կըլլինէին և ուրիշներու ձեռքի մէջ կոյր գործիք չէին դառնար։

Տիկին Սոֆիայի կորուստէն երկու օր վերջն էր, վերստին լուր մը տարածուեցաւ թէ այս գիշեր մուրացիկ պառաւ կին մը քաղաքէն դուրս գետն ընկած խղդուած է, պարտիզպանները նորա խղդուած մարմինը գետի եզերքէն գտնելով դուրս հանած և հոն աւազի մէջ թաղած են։ Եւ թէ՝ Արսլան այս գիշեր քանի մի ընկերներով որսի անտառը որս ընելու գնացած ժամանակը՝ ասպատակները նոցա վրայ յարձակելով մեծ կռիւ մը տեղի ունեցած է. քանի մի հոգի վիրաւորուած. Արսլանն ալ կնտակահար լինելով մեռած է։

Այս տարաձայնութեան վրայ Յովսէփ իշխանը. որ ըստ ասութեան ոմանց տիկին Սոֆիայի և Արսլանի ազգականներէն մինն էր, ութ օր սուգ պահելէն վերջ. իբրև այս դերդաստան ժառանգը, կառավարութեան դիմելով նոցա տան կահկարասիք և ամէն ինչք և ստացուածքներ իւր տուն փոխադրելով, տիկին Սոֆիայի տունն ալ վարձակալի մը տուաւ։

Ի զուր կըպաղատէր Սոֆիայի երկան քոյրն թէ ինքն է այդ դերդաստանի օրինաւոր ժառանգը. վասնզի աղքատի ձայնը շատ ըսող չլինիր. բուն ժառանգն զրկուեցաւ, ուրիշ մը ժառանգ եղաւ այն անքաւ հարստութեան։

Գալով պառաւ կնոջ և Արսլանին անցից ճշմարիտ պատմութեան, հետևեալ եղանակաւ տեղի կ'ունենայ։ Հպարտութիւն գոռոզէ, խիստ քիչ կ'զգուշանայ, և իւր ոտքի առջև լարուած որոգայթները կըտեսնէ, բայց փոխանակ անկէ խոյս տալու. անոր դէմ խիզախելու կըպատրաստուի։ Ճշմարիտ խօսելու մէջ վտանգ չ'կայ։ Արսլան մինչև ատիճան մը, եթէ հպարտ չէր, գէթ յանձնապաստան յանդուգն կըհամարուէր, զի մէկ կողմէ իւր մայրն կորսնցուցած, և նորա կորստեան պատճառը Վիչէն լինելն գիտնալով հանդերձ, միւս կողմէն Վիչէնի վտանգաւոր առաջարկն ընդունելով հաւանութիւն կուտայ իւր և իւր մօր դաւաղիրներու հետ ընկերանալ որսի անտառը գնալ երթ որսալու։

Ըստ Ասիացւոց դրութեան իրիկուան ժամը տասնեմէկն էր, յանկարծակի Ստեփանէն Վիչէնի կողմէն Արսլանին ներկայանալով կըյայտներ թէ, Վիչէն ինքը տակաւ լինելով կրփափագի որ Արսլանը ընկերանայ Ստեփանէին և ուրիշ մի քանի անձանց հետ այս գիշեր որսի անտառ գնալ երթ որսալու։

Արսլան անմիջապէս սոյն առաջարկն ընդունեց, թէրևս այն նպատակաւ որ Վիչէնին կասկած չ'տայ թէ ինքը վերահասու եղած է Վիչէնի ամէն արարմանց. և թէ կըյուսար որ Ստեփանէին ընկերանալով կարելի լինի իւր մօրը անյայտ լինելոյն գաղտնիքը Ստեփանէէն քաղելու։ Հարցուց Արսլան։

— Պարոն, կարելի՞ է որ Վիչէն իշխանը ինք ևս մեզ հետ լինի։

— Ոչ. անկարելի է. վասնզի կարծուածէն աւելի տակաւ է։

— Ուրեմն մեզ ընկերացողները ժողովելով եկէք այս տեղէն ի միասին երթանք։

Երբ Ստեփանէն գնաց ընկերները կանչելու, մարդ մը Արսլանին ներկայանալով յայտնեց թէ աղքատ կինը Ստեփանէի հետ քաղաքէն դուրս ելած են, և այս մասին Արսլանի մտքէն ուրիշ բաներ անցան. զի անմիջապէս յիշեց առաջին օր աղքատ կնոջ գալը, և իւր ականջին գաղտնիք մը յայտնելը. նաև Վիչէնի գաղտնեաց վերաբերեալ անցքերը յիշելով, չուզեց անպատրաստ մնալ վտանգներու դէմ։

Օգտակար բնազդումներ կան, որք աննենգ հոգիներուն զգուշութեան հրահանգներ կուտան։ Արսլան որսի գնալէն առաջ անմիջապէս գնաց իւր բարեկամներուն լուր տուաւ որպէսզի յանգէտս իրենց ետևէն, և կամ առաջէն որսի անտառ երթան և զինք Արսլանը իրենց աչքի տեսութենէն չ'հեռացունեն։

Ա՛ըսէր Արսլան իւր հաւատարիմ ընկերներուն, թէև ես երաշխներու հաւատացողներէն չեմ, այսու ամենայնիւ այս գիշեր խիստ չարագուշակ տեսիլներ տեսայ և իմ կեանքս վտանգի տակ է. ուստի կըխնդրուի որ ձեր սրատես աչք ինձմէ չ'հեռացունէք. այսպէս ևս ձեր զօրաւոր բազուկներ իմ անձիս պաշտպանութեան գործածէք։

Արսլանի գաղտնի ընկերներ անմիջապէս որսի անտառը հասնելով թագուն կերպով կըհսկէին իրենց բարեկամին և նորա ներ-

կայութիւն աչքէ չէին հեռացուներ։ Մինչ Արսլան երէի մը ետևէն ընկած գէպ ի անտառի խորերը կը դիմէր. Ստեփանէն իր որսն եղող Արսլանի ետևը կը մտրակէր իր ձին։ Երբ ընկերներէն բաւական հեռացան, Արսլան անտառին ձախ կողմը խաղացած ժամանակ, հրահանգեալ Ստեփանէն զԱրսլանը իբրև որսի երէմը որսալ կ'ուզէր. և անոր կուրծքին հրացանի գնդակ մը ուղղեց. բայց բարեբաղդաբար գնտակն վրիպելով փոխանակ կուրծքին գնաց Արսլանի սրունքը վիրաւորեց, և անմիջապէս ձիէն վար ինկաւ։

Արսլանի կենաց պահապան ընկերներն, որք բազէի սրատեսութեամբ շարունակ նորա անձին կը հսկէին, Արսլանի վիրաւորուիլը տեսնելով, յարձակեցան նորա թշնամիին և ընկերներուն վրայ։ Այս հաւատարիմ ընկերներէն մին որսի անտառին մէջ իր հիանալի ձիավարժութեամբ և իր աշտանակած պատուական նժոյգի ժիր թեթևութեամբ հոլանի բազէի պէս սրարշաւ յոլովակի կը գառնար, և արի զինաշարժութեամբ կը յաջողէր թէ թշնամին իրմէն հեռու պահելու և թէ իր սիրելի վիրաւորեալ Արսլանը գետնէն վերցունելով առնել հեռանալու, և անվնասութեամբ կ'ըսէր նա։

Պարոն Ստեփանէ, մի՛ կարծէք թէ ամէն գիշակեր թռչուններ կը յաջողին կաքաւ որսալու. պէտք է որ գիտնաք թէ՝ բազէի սրատես աչք անթարթ կերպով նորա կենաց կը հսկէ, կը հարկադրեմ ղձեղ ետ քաշուելու, երբ կը տեսնէք թէ՝ ուժեղ բազուկ մը, անկեղծ սիրտ մը անքուն աչքով կը հսկէ նորա կենաց պահպանութեան. պէտք է որ ձեր անձին խնայելով հեռանաք. եթէ կրկին առաջ գայք ձեր բնական յամարութեամբ. պիտի պարտաւորիմ խորտակել ձեր խրոխտ ամբարտաւանութեան եղջիւրը։

Այս արիաձեռն գիմակաւորը սպառնալիք կ'ընէր Արսլանի թշնամիներուն աւելի զանոնք երկիւղիւ պաշարելու, քան թէ վնասելու մտօք. վասնզի գիտէին թէ Ստեփանէն յումմէ՛ հրահանգեալ էր. և իրենց քաջութեան ուժը Ստեփանէէն աւելի անոր հրաման տուողին գէմ գործածելու կը պահէին։ Ստեփանէն և իր ընկերներն խոյս տուին թէ ասպարէզէն և թէ որսի անտառէն. իսկ վիրաւորեալ Արսլանի բարեկամներն զայն

վտանգէն ազատելով անտառին մէկ՝ ապահով անկիւնը հանդիստ առին. զի վիրաւորեալի մարմինը չափազանց արեան վատնումէն և միտքն զանազան այլայլութենէն տկարանալով նիրհել կ'ուզէր։

Բնութիւնն այս փոքր ժամանակուոր անդորրութենէն օգուտ քաղելով քնով նորա կարողութիւնները և ոյժը կը կազդուրէր։

Արշալոյս բարձրաբերձ ծառերով զարդարուած անտառի յանդուգն վայրերը սկսած էր լուսաւորել, դալարագեղ տերևներն ցօղաւէտ գիւրաբեկ մարգարիտներով կը շողային, եղջերուն իր եղնիկ հետն առած անտառի բարձրադոյն վայրերը կը դիմէր, այծեամը սիգապանծ անվեհեր կերպով իր կորիւնի առաջէն կը քալէր։ Ահա այս պահուն էր՝ որ Արսլանը արթնցունելով, և անծանօթ ճանապարհներէն անցնելով ապահով վայր մը կը փոխադրէին։ Փոխադրուած փոքր պարտիզի մէջ դալարաւէտ գիրքի մը վրայ նստած իր վէրքի բուժումն ակնկալելու յուսով անհամբեր վիրաբուժի գալստեանը կ'սպասէր։ Մինչ Արսլան այս վիճակի մէջն էր, միւս կողմէն Ստեփանէն և իր ընկերները Արսլանի վրիպակաւ զարնուիլը և մեռնիլը տարածեցին Տ.....քաղաքի և բոլոր գաւառներու մէջ։

Մի և նոյն գիշերը որսի գնալէն առաջ ուրիշ ոճիր մը ևս տեղի կունենայ։ Երբ Արսլան իր ընկերները կանչելու կ'երթար, քաղաքէն դուրս դետի եզերք ձայն մը լսելով, առաջ կերթայ և կը տեսնէ որ ծանօթ մարդ մը կինը մը գետը նետելու կ'աշխատի։ Արսլան շուտով վերահասու լինելով եղելութեան, կը փութայ հրացանի գնտակ մը ուղղել մարդոյն. սակայն մարդն արդէն իր պաշտօն կատարած և կինը գետը նետած ու խոյս տուած էր։ Արսլան անմիջապէս լոթերը հանելով և ինքզինքը գետը նետելով կերթայ կինը կազատէ. և կը տանի իր հօրաքրոջ խնամքը կը յանձնէ զայն գարմանելու և ծածուկ պահելու պայմանաւ։

Այս բարեմիտ կին կարի հէք և տարաբախտ արարած մի էր, որ ամէն բանին աչք կը դոյդէր չ'տեսնելու համար, որպէսզի որ ուրիշի մը մեղայ կ'ցորդ չ'լինի. Ոմանք կ'ըսէին այս կնոջ համար թէ՝ ազնիւ տոհմէ մը սերած է. բայց բախտի ձախորդ հարուածներէն հարկադրեալ, քնչուներու պէս մուրացկանութեամբ կ'ապրի, ցնցոտի ղգեստներու մէջ պատսպարուած և

փողոցի փոքր տղայք ղինք ծաղր կ'ընէին կընախատէին և երբեմն վրան ցեխեր կընետէին, շուներն անգամ հաչելով և խածնելով կըհալածէին այս ողորմելի կինը, բայց նա այս ամենուն յօժարակամ կըտանէր։ Խօսք մը ունէր զոր ստէպ կըկրկնէր, կեանք՝ կըսէր նա՝ համբերութեան մէջն է։

Այժմ կըհրաւիրեմք մեր ընթերցողքը դառնալ տիկին Սոֆիայի տեսարանին հանդիսատես լինելու։

ՏԻԿԻՆ ՍՕՖԻԱՆ ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱԲԵԹԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Պարոն բժիշկ, ըսաւ տիկին Եւայ, որ կանանց հիւանդանոցի գործակատարներէն մինն էր, այս առաւօտ զգայազիրկ ողորմելի հիւանդ կին մը եկած է, որու ողորմելի վիճակին արգահատելով, իմ սենեկիս մէջ ընդունած եմ զինք, և կըխնդրեմ որ դաս նայիս և իրեն հիւանդութեան համեմատ դեղագիր մը պատրաստես։

— Շատ լաւ, տիկին, քիչ մը համբերեցէք, հիւանդաց այցելութիւնս վերջացնեմ յետոյ կուգամ։

Քիչ մը վերջ բժիշկը տիկին Եւայի սենեակը գալով, հիւանդի բաղնի զարկը և մարմնոյ շատ մը մասունքները քննել և շօշափելէն յետոյ, ցասկոտ դէմքով մը կըհարցնէ տիկին Եւային թէ՝ այս կինը ո՞վ բերաւ հոս։

— Անծանօթ մարդ մը։

— Անծանօթ մարդու մը ձեռքէ այս տեսակ հիւանդներ ինչու կընդունիք, և չէք գիտեր թէ հիւանդանոցի ներքին կանոնաց դէմ է, պէտք էր որ բերողին ո՞վ լինիլը, և ո՞յր կողմէն ղրկուիլը իմանայիք, և յաւելցուց ըսել թէ հիւանդն ի՞նչ անունով և ի՞նչ մականունով արձանագրուած է։

— Մականուն չունի, միայն Սոֆիա անունով արձանագրեցի։

— Ո՞յր կողմէ ղրկուած լինելը չէք գիտեր։

— Պատուէր ունիմ, Պարոն բժիշկ, ծածուկ պահելու։

— Այժմ ծածուկ կըպահես բայց վերջը թէ կըպարտաւորիս յայտնել, և թէ մեծ պատասխանատուութեան տակ կըմնաս։

— Ինչու, Պարոն բժիշկ, ի՞նչ կայ, արդէն կըտեսնէք թէ զրեթէ մեռեալ վիճակի մէջ հոս բերուած կին մը է. ոչ կըխօսի ոչ կըլսէ. և ոչ ալ կ'ուզայ. միայն տկար շունչ մը կուտայ կ'առնէ. և քիչ մը վերջ կարծեմ այն ալ կըմարի. ասոր պատասխանատուութիւնն ի՞նչ է։

— Արդէն ինդիրն ասոր վրայ է. ուրիշի մը գործած ոճիրը հիւանդանոցիս պիտի վերագրուի։

— Ուրեմն կըխնդրեմ որ բացատրութիւն տայք այս կնոջ հիւանդութեան մասին։

— Տիկին, այս հիւանդը արկածի հանդիպած է, և ասկէ մեր հիւանդանոցի պատիւը աղարտող ծանր հետեւանքներ կրնայ առաջ դալ, դուք մեծ անխոհեմութիւն ըրած էք, որ բերողի անունը և մականունը և որոյ կողմէն խրկուիլը իմացած ու արձանագրած չէք։

— Եւայ սկսաւ վարանիլ և երեսի դոյնը փոխել։

— Տիկին, ձեր մտային հիւանդութիւն այս հիւանդի տկարութենէն մեծ է. և այս վայրկենիս մէջ, դուք մեծ պատասխանատուութեան տակ էք ձեր զանցառութեամբ, և կարելի է որ եթէ տեսուչն իմանայ, ինչպէս որ պարտաւոր եմ իմացնել, կարծեմ թէ դուք ձեր պաշտօնէն կ'արձակուիք։

— Ցանուն Աստուծոյ, Պարոն բժիշկ, ի՞նչէ այս կնոջ հիւանդութեան դաղտնիքն ինձ ըսէք։

— Այս կնոջ հիւանդութիւն յանկարծական և դիպուածական է, և ոչ թէ բնական, զօրաւոր դեղեր կան, որք մարդիկ այս վիճակին կըհասցնեն, և թերևս այս կինը ուրիշի դաւաճանութեամբ այս վիճակի մէջ ինկած է։

— Պարոն բժիշկ, այս կինը այս առաւօտ ապրեցութեան տէր մարդու մը կողմէն հոս եկաւ, այն պաղտնի հրահանգով՝ որ խնամուելու պատրուակին տակ, անիսնամ մնայ, բժշկի դեղ իրեն չարուի, և իբրև տրուած կեղծուի, կերակուրի մասին զանցառութիւն լինի, մինչև որ նուաղի և հոգին փչէ, վասնզի կասկիա մեծ մարդու մը դաղտնիք լրտեսած է, և զօրաւոր կասկած կայ թէ զայն պիտի հրատարակէ, որով նա մեծ վտանգի և անպատուութեան մէջ պիտի իյնայ, ուստի այս միջոցը ի գործ դնել որոշած են։

— Շատ լաւ, տիկին, բայց մենք հոս չէ թէ ողջերը մեռցունելու, այլ հիւանդները դարմանելով առողջացնելու կոչում ունինք. այդ ի՞նչ սոսկալի ոճրագործութիւն է որ ձեզ մեզ գործել տալու փորձ կըփորձեն։ Այդ աւանակ մարդ, ով որ է, այդ մարդ հրեշ է և գազան, մարդ անուան տակ ծածկուած, ամենեին մտիկ մի՛ ըներ, և պէտք եղած խնամքը տանիմք, այս կին պիտի առողջանայ թէև քիչ մը ուշ. և իմ ձեռքս եկած բոլոր խնամքները պիտի կատարեմ. և եթէ մեռնի՝ դու մեծ պատասխանատուութեան տակ պիտի մնաս իբրև այս կնոջ սպանիչ։

— Պարոն բժիշկ, լաւ կ'ըսէք, բայց այս կին բերողը հինգ օր վերջ կուգայ ի՞նչ պատասխան տամ։

— Մեռաւ՝ պատասխանէ։

— Լաւ, բայց Հիւանդանոցի արձանագրութեան տոմարները ամէն ամսագլխոյն հոգաբարձութիւնն աչքէ կ'անցնէ, և այս կինը ղրկողն ալ հոգաբարձուներէն մին է. և գիտէք թէ քանի որ ինք այս խնդրոյն հեղինակն է, պիտի տեսնէ հիւանդի անունը, այն ժամանակ ես ուր կրմնամ։

— Ապուշ կին, այդ մասին իմ խորհրդեանս հետևէ, այդ անունը եղծէ իբրև մեռեալ։ ուրիշ անուն մը դրէ Եղնա անուն Նորեկ հիւանդ գիւղացի կին մը, և անձ մը ազատելու համար այս անմեղ կեղծիքը չե՞ս կրնաս ի գործ դնել։

— Ապա եթէ քահանայն հարցաքննեն, նա ալ ինձ պէս խեղճ մի է, այսպէս ալ գերեզման փորելը, և նոքա ալ պատասխանեն թէ մենք չ'թաղեցինք, այն ատեն ի՞նչ ընելու է։

— Այդ մասին ապահով եղիր, ես կըսեմ, թէ անոնց և թէ՛ քահանային, հոգի մը ապրեցունելու համար մեզ հետ թող ուտ խօսին։

— Բժշկի հրահանգին համեմատ, ամէն բան կարգի մտաւ, և հիւանդ կինը երկար տառապանքէ մը յետոյ քիչ մը առողջացաւ, բայց մելամաղձոտ հիւանդութիւն մը վրան մնաց. և հարկադրուած էր գուրս չելլել, զի խանգարեալ երևակայութեանց մէջ կըշրջէր միշտ։

ԱՅԼԵՒԱՅԼ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՍԱՄՈՒԷԼԻ ԱՂՋԻԿՆ

Տիկին Սոֆիայի յանկարծական կորուստն Նորա որդի Արսլանի անտառին մէջ սպանուիլը, աղքատիկ պառաւ կնոջ մը քաղաքէն դուրս դեռամոյն լինիլը. բարենշան գործեր չէին համարուեր. և հասարակութեան մէջ այլևայլ տարաձայնութեանց առիթ տուին։ Մանաւանդ Յովսէփ իշխանի բռնած սխալ ընթացքն տիկին Սոֆիայի ստացուածոց գրաւման մասին, այս բաները Տ.....քաղաքի մէջ խիստ այլանդակ ենթադրական կարծիքներ երևան բերին։

Այս միջոցին Սամուէլի տան մէջ վառնդուած յուսահատ աղջիկ մը անմխիթար կերպով կ'ողբար ու կրտառապէր, զի կորսնցուցած էր իւր պատուոյն հետ, նաև իւր սիրելի Արսլանը և Նորա մայրը։ Կ'ըսէր ինքն իրեն Կատարինէն. այս աշխարհիս վրայ թշուառներու երամներ կան, որք մրրիկներու պէս այս աշխարհիս երեսէն կըսահին կ'անցնին կ'երթան այլ ևս ետ չեն դառնար։ Անոնց տեղը ուրիշները կըյաջորդեն. և աւաջիններու վշտաց բեռը իրենց ուսին վրայ կրելով, այս վիճակի մէջ մեռելները ապրելէ ձանձրացողներէն աւելի լաւ են։

Արդարութեան դատ մը կայ, որ միշտ ոտնակոխ կըլլինի, ով որ կ'ուզէ այս դատին պաշտպան կանգնիլ, նա պէտք է որ Ցիտասի պէս անարտունջ խոնարհի մահուան գործիք խաչին վրայ։ Այս խօսքերը ըսելով Կատարինէն հեղեղներու պէս արտասուքներ կըթափէր երկար ժամանակ այս յուզեալ վիճակի մէջ մնալէն յետու սկսաւ ինքզինք մխիթարել ըսելով. պէտք չէ որ չափէն աւելի յուսահատիմ. զի յուսահատութիւն անաստուած հոգևվարքներուն միայն կըվայելէ. ես գիտեմ թէ Աստուած մեղաւորներու համար արդահատող հայր մի է, ու չէ թէ ձաղկող ագրապետ մը անշուշտ կընեռէ իմ ակամայ սխալանացս, և Արսլան ու Նորա մայրը անմեղներու պատկով կըպսակէ իւր երանական փառաց մէջ։

Մարդկանց մէջ տղեղ գործեր կը գործուին, որոց վրայ ողջ-

մտութիւն հաշտ աչքք չինայիր. չ'գիտեմ թէ Աստուած ի՞նչ կ'ըսէ անոնց. որք այս գործոց տէր և հեղինակն են. ես կը հաւատամ թէ յաւիտենական իրաւանց կշռոյն մէջ զրկեալի ազատութիւնքը ամէն բանէն ծանրակշիռ է։ Ինձ պէս վհատեալներու համար ազօթք պէտք է, զի ազօթք իբրև մագնիս քաշելով կ'ելցուցնէ այն երկնային ցօղը որ մարդկանց յոյսը զուարթացնելու և սիրտը հանգարտելու միակ գեղը և սպեղանին է։

Խեղճ Կատարինէն տակաւին իւր սգոյ և տրտում ժամերէն դուրս չելած՝ ահա յանկարծակի նամակ մը կ'ստանայ Վիչէն իշխանէն։

Այս նամակը կայծակի արագութեամբ Կատարինէի սիրտը կը շանթահարէր. ոչին կը վիրաւորէր և մարմնոյ զօրութիւնը կը սպառէր. ու զինք վրէժխնդրութեան կը շարժէր։

Բայց տկար արարած մը ի՞նչ կարողէր ընել հսկայ բռնութեան դէմ, բռնութեան մը, որ հազարաւոր մեքենաներով լի էր

ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿԱՑ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆՔ

1774 Յունիս 14

Համեստափայլ օրիորդ Կատարինէ Սամուէլեան,

Նախախնամութեան դաղտնի խորհուրդները մարդկանց մտաց անհասանելի են։ Անշուշտ լսած էիք թէ՝ ես ձեր նշանած պարոն Արսլանը ո՞րչափ կը սիրէի, և ո՞րչափ էր իմ համակրանքս առ նա։

Ինչպէս ձեզ՝ այսպէս ալ ինձ մեծ ցաւ և տխրութիւն պատճառեց նորա գիպուածական և յանկարծակի մահը. որ թաւալանէս երկու ամիս ու կէս առաջ տեղի ունեցաւ որսի անտառ մէջ։

Արդ ես կամք ունիմ. եթէ Նախախնամութիւնն հաճի զձեզ ինձ ընկեր որոշել, և կը յուսամ թէ չէք մերժէր, և այս մէջ-ցը, ասիթ պիտի ընծայէ մեզ որ մենք հանկուցելոյն կարօտը իրարմէ առնենք. ընդունեցէք համակրական յարգանքս։

ՎԻՉԷՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ

1774 Յունիս 15

Վսեմաշուք Վիչէն իշխան Յովսէփեան

Պատիւ ունեցայ յարգանք ընդունել Ձեր վսեմութեան նամակը. և առ իս տածած համակրանքն։

Իմ մեծարանաց հետ կուզամ զեկուցանել Ձեր վսեմութեան թէ. արեգակը խէթիւ հայեցաւ յիս, զի իմ սիրելւոյս հետ նոսա մարեց յոյսս, թերևս Նախախնամութեան մէկ դաղտնի անօրէնութիւնն կ'ուզէր զիս ամուսնութենէս զրկել. անոր համար իմ նշանածիս մահը փութացուց։ Ուրեմն Նախախնամութեան անօրէնութեան դէմ խոնարհելով կը յայտնեմ Ձեզ թէ, պատրաստ եմ առ ժամս չամուսնանալ որևէ անձի մը հետ, պիտի մխիթարուիմ իմ նշանածիս անմիւնով, որ ինձ համար նուիրական է։

Սգաւոր

ԿԱՏԱՐԻՆԷ

Վիչէն իշխան նամակը կարդալով նշմարեց որ այս եղանակաւ գործը կ'երկարի, և Կատարինէն չընդունիր իւր հետ ամուսնանալու առաջարկը. ուստի իւր մայր մեծ իշխանուհւոյն գիմաց. և ըստ տեղական սովորութեան առանց աղջկան կամաց հաւանութեան, միայն նորա ծնողաց և ազգականաց հաւանութիւնն ստանալով բաւ համարեցին։ Կատարինէն որչափ որ ազատամիտ օրիորդ մի էր, բայց դարձեալ տեղական նախապաշարման դէմ մրցելու չափ քաջութիւն չունէր. ուստի իւր ծնողաց չկրնալով դիմադրել, զիջում ըրաւ Վիչէն իշխանի հետ ամուսնանալու. պայմանաւ որ Վիչէն անդամ մը առանձին հինգ վայրկենի չափ Կատարինէի հետ տեսնուելէն վերջ օրիորդը խոստումն տայ, կամ ոչ։

Նոյն օրը Վիչէն խոնարհեցաւ Կատարինէին առանձին ունկնդրութիւն մը տալ երկու վայրկեան։ Ընթերցողը կրնայ դուշակել թէ Կատարինէն ի՞նչ ըսաւ Վիչէնին։

Յետ այնորիկ Կատարինէն Վիչէն իշխանի նշանածն էր։

ԿԱՏԱՐԻՆԷԻ ՏԽՈՒՐ ԺԱՄԵՐԸ

Աստուած իմ, այս ի՞նչ նեղսրտութիւն, որ զիս մահու չափ կրվիրաւորէ, ի՞նչ հակասութեան մէջ կրտառապիմ. օգնէ՛ ինձ Աստուած։ Մէկ կողմէն ամենասիրելի նշանածիս աղէտալի մահը միւս կողմէ բարձր գիրք ունեցող իշխան մը ձոխ հարստութիւն որ նահանգիս մէջ ամենէն աւելի պատուաւոր ազդեցութեան տէր ընտանիք մը են, և որոյ մէջ իմ դտնուիլս մխիթարութիւն է ինձ համար, ասիկա պատահման մէկ արդիւնքն է. ամէն աղքատ օրիորդներ չեն յաջողիր ձեռք բերելու, խիստ քիչերուն կը հանդիպի այս տեսակ բարեբաղդութիւն։

Ապա Արսլանի մահը և նորա մօր կորուստը, որ անշուշտ այս անօրէնութեան որդւոյն հրամանաւ տեղի ունեցաւ, ի՞նչպէս մոռնամ, և ի՞նչպէս յանձնուիմ այն ոճրագործ ձեռաց, որ չարաանմեղ անձանց արիւնով ներկուած է։

Ի՞նչպէս նայիմ այն հրեշի վրայ, որ իմ սիրոս, սէրս։ հոգիս և պատիւս միանգամայն մահացուց։ Ա՛հ անզգայ ծնողք, զիս Աստուծոյ տաճարէն հանելով, սատանայի դեհենի հրոյն կրմատնեն։

Տէր Աստուած, զօրացուր իմ խորհուրդներս, որոյ մէջ շուարեալ կրմնամ. կ'ըսէր ինքնին, օրիորդ Կատարինէն քիչ մը վերջ հանդերձեալ է հարս լինելու Վիլէն իշխանի հետ ամուսնանալով, շատ լաւ, բայց խեղճ աղջիկ.....։

Տէր Աստուած, իմ անցեալս քու դաղտնեացդ քողի տակ ծածկէ, բեկեալ անօթ մը իւր նախկին վիճակին դառնալու համար երկնային հրաշից կրկարօտի. Աստուած իմ, ամէն բան քեզ յայտնի է. սիրոս քեզ կրբանամ. քու ամենօրհնեալ կամքդ թող կատարի, որ միշտ բարի է. ա՛հ երանի թէ՛ հոգիէ մը և կամ մուրացկանի մը համար սահմանուած լինէի. քան թէ Վիլէն իշխանին։ Ի՞նչ նշանակութիւն ունի իմ աչքիս առաջ այս ամէն իշխանի տունէն եկած փառաւոր զգեստները և զարդերը. երբ ես անոնց մէջ չեմ տեսներ իմ հոգւոյս ամենէն անգին զարդը. և հարցունողներուն ի՞նչ պատասխան տամ. որ

անպարտ մնամ, կ'ընդունիմ թէ անհաստատարիմ եմ և ստգտանայ արժանի ամէն համեստներու ողջմտութեան առջև։ Աչքիս առաջէն սահելով կ'անցնին այն ամէն զօրաւոր և բուռն միջոցները, թախանձանքները, զիջումները, խոստումները։ Տկար և անզէն արարած մը, այս ամենուն ինչով դիմադրէր, անոնց ամէնքն ստոյգ են և ճշմարիտ. սակայն բան մը կար, որ կարող էր ամէն բանին յաղթել, այն էր իմ պատուաւոր մահս։ Ինչու՞ սիրով չ'ըրկեցի. և պատիւս անպատուութեան հետ փոխեցի, այս պարապայիս մէջ կատարեալ կերպով մեղանչած եմ արիութեան դէմ։ Անցեալն անցած է, աղէտն եկած նեռը այլևս ետ չի դառնար. ուրեմն այս ժամուս մէջ ինձ երկու բան կայ ընելու, կամ ինքզինքս մեռցունել ինքնասպանութեան մեղայ տակ մնալ, և կամ ամէն նախատինք և հալածանք աչք առնելով գնալ։

Ո՞վ Տէր. քեզ կրյանձնուիմ որնոր բարի է, զիս դէպ ի այն առաջնորդէ։ Սոյն միջոցին Կատարինէն կրկին սկսաւ հեծկլլալ և նուաղեալ ձայնիւ մը ըսաւ. Արսլան մի՛ թողուր որ զիս պատուոյս դաւաճան Վիլէնի հետ ամուսնացունեն, տար զիս քու դերեզմանիդ ամիւնի հետ միացուր. քու դերեզմանդ Վիլէնի հարսանեաց առաղաստէն աւելի նախապատիւ է ինձ համար, վասնզի դերեզմանդ անմեղութիւն կրբուրէ. իսկ նորա առաղաստէն մեղք և դաւաճանութիւն. ա՜հ Արսլան. դու և մայրդ ինձ համար մեռայք. ինչու՞ ես չեմ կրնար ձեր սիրոյ համար մեռնիլ. Աստուած, կարձէ իմ արատաւորեալ կեանքս, ըսելով, անզգայ գետին ընկաւ և երկար ժամանակ անձայն և անշունչ մնաց։

Այս թմրեալ վիճակի մէջ Կատարինէի մայրն գիպոածով վրայ գալով կարծեց թէ Կատարինէն քնացած է, արթնցունել ուզեց բայց տեսնելով որ քունէն աւելի թմրութիւն կայ, փութայ երեսին ջուր սրսկելով արթնցունելու։ Երբ Կատարինէն իւր թմրութենէն սթափեցաւ, լսեց այն խօսքերը որք կ'ուղղէին իրեն, զինք մխիթարելու համար. և արդէն հարսանեաց ժամը հասած էր և ամէն բան այլևս ոչինչ կրհամարուէր։

ՀԱՐՍԱՆԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Հրաւիրակները գաւառին ամէն կողմերը գնացած էին իշխանները տոհմականները, պայազատները ամէն երևելիներու հետ նաև իշխանին սիրելիները, աղգականներն և բարեկամները հրաւիրելու։ Եւ հեղհեղեալ հրաւիրեալները կը հասնէին իշխանին տունը, հարսանեաց հանդէսը ըստ Հայոց սովորութեան ութ օր տեւելու պայմանաւ սկսուեցաւ խիստ շքեղ կերպով։

Երաժշտական խումբերու քաղցրանուագ ձայներն, և դաշնակներու այլևայլ գեղեցիկներն, կերթային թռչնոց ձայներու հետ կը միանային և հանդիսականներու սրտերն ուրախութեան մէջ կը դնէին։

Իշխանն հրաման կուտար ՅԿ....քաղաքի ամբողջ ժողովուրդը ըստ պատուոյ աստիճանի խումբ խումբ կոչունքի հրաւիրել, և մէն մի մեծատանց սպասաւորները ըստ արևելեան սովորութեան, նուէրներով պատուել, և աղքատներուն առատ ողորմութիւններ շնորհել, և իւր օգնականներուն ազամանդեայ մատանիներ. և նժոյգ ձիեր և այլն կրբաշխէր ի նշան սուրբ ինքն տեղեկ հաւատարիմ ծառայութեանց։ Փոքր մանկանց գլուխները դափնի պսակներով կը պսակէր։

Յովսէփ իշխանի որդւոյն հարսանեաց հրաւիրեալներէն ոմանք զարդարեալ էին իրենց համազգեստներով. որոց ոսկիէ հիւսուած կուրծքի զարդերը տեսնողներու աչք կը խաղցնէին. ոմանք զարդարուած էին ասիական ձևերով, և իրենց կերպասներն զգեստներուն վրայ սամուրի ծանրագին մուշտակներ հագած էին։ Ոմանք սպիտակ աքիսի պճղնաւոր մուշտակներով, այլք երկայն և աղնիւ մետաքսեայ զգեստներով հանդիսավայրը կը դիմէին։

Իշխանք և իշխանուհիներ հանդէսի ժամանակ տեղ իրենց զգեստները կը փոխէին, միշտ վերջինը առաջինէն տարբեր գեղեցիկ և ծանրագին լինելու պայմանաւ։ Կանանց ազամանդեայ և մարգարտեայ ու ոսկեղէն զարդերը երբ դիշեր ժամանակ իրենց զանազան գոյները (առժամանակեայ կերպով) փոխ կուտային լուսաւորեալ անթիւ ջահերուն, անդրադարձաբար հանդիսականաց գառնալով նոցա աչքերը կը շլացունէին։

Անտառի մէջ նմանը չ'տեսնուած հրախաղութիւններ տեղի ունեցան հարսանեաց դիշերը։ Եւ կամարաձև յօրինուած ապակիները մոդական լուսով լուսաւորուած էին այնպիսի ճարտարութեամբ՝ որ ամէնք կը զարմանային. վասնզի այն տեսարանի վրայ դիշեր ժամանակ լուսաւորեալ անթիւ կեղծ և անկեղծ աստղերը, մահեկաձև լուսինը, ճաճանչաւոր արեգակը, բնութեան զարմանալի տեսարանը, այլևայլ խորհրդաւոր զրուածները կը տեսնուէին, և կը կարդացուէին։

Հեռուէն եկած ոմանց հանդիսականաց զգեստներն ոսկեթելերով հիւսուած ասիական ընտիր կերպաներ էին։ Յովսէփ իշխան վերհսկիչական դիրքով կատարեալ շնորհօք ազնուականի մը վայելուչ քաղաքավարութեամբ օժտեալ էր, նա իւր ոսկեհիւս համազգեստներն հագած կուգար մէն մի հրաւիրեալ հանդիսականները բարևելու. և իւր համակրական ժպիտներով զանոնք մեծարելու. իւրաքանչիւրի աստիճանին համեմատ իրենց տեղերը բազմեցունելու։ Կատակ և ծիծաղ ամէն կողմ կը շրջէին, ամէնու սիրտը լի էր անհամեմատ ուրախութեամբ։

Իշխանի տան սեղանի սպասները ոսկի էին և արծաթեղէն և Զինու յախճապակեայ. սեղանը զարդարուած էր հարիւրաւոր մոմերով և վեց թևեայ աշտանակներով, զանազան ծաղիկներով, բազմատեսակ համադամ կերակուրներով, խմորեղէններով, շաքարեղէններով, և ազնիւ ըմպելիներով, ու քաղցրահամ մրգեղէններով, օշարակներ կը բաշխուէին ոսկի ըմպանակներով, գինին անաբատ էր և անապական ու անխառն որևէ խառնուրդի բաղադրութիւններէ. խնձոյքի մէջ մեծ իշխանուհին մեծաքէ բեհեղեայ շրջազգեստներ հագած, յակինթներու և ադամանդներու մէջ կը շողշողար։ Ամէն կողմ գեղեցկութիւն, վայելչութիւն, մեծ ընդունելութիւն. քաղցր երես և անկեղծ սիրտ կը տեսնուէր։ Քաղաքացիները իրենց գուռները և պատշգամները զարդարած էին ի նշան խնդակցութեան իրենց իշխանի ամուսնական հանդիսին, հրապարակները կը զարդարէին գոյնզգոյն ծաղիկներով։ Այս ամէն հանդէսներէն վերջ, կուգար նոր իշխանուհին փառաւոր կառքի մէջ նստած իւր աջ կողմ ունենալով իւր խոստովանահայր և պսակադիր քահանայն իսկ ձախ կողմը Վիլէնի կնքամայրը։ Ասոնց կը ընկերակցին ուրիշ կառքերու մէջ

իշխանուհին հրաւիրելու գնացող իշխանուհիներ։ Նոր իշխանուհին երբ կառքէն իջած գուռնէն ներս կը մտնէր, զինք բարեւելու և հրաւիրելու գնայ իւր ամուսնոյն հայր Յովսէփ իշխանն, իշխանուհին ըստ ասիական սովորութեան, իւր պարոն Պապի ձեռք հարուրելով, նորա թեւը մտաւ. և սանդուղներէն վեր ելլելով հանդիսականաց մեծ սրահը մտաւ, սոյն միջոցին նորեկ իշխանուհին, փոքր ինչ սրտայուզութիւն ունէր. նա գլխոյ խոնարհ ակնածական բարեւները տուաւ հանդիսականաց և գնաց իրեն համար պատրաստուած տեղը նստաւ։

Այն հիացքանչ բազմութեան մէջ նոր իշխանուհւոյն ճակտի վրայ զետեղուած ադամանդներու քաւամանեակը վէտ առ վէտ ծածանելով կծփար և տեսողներու աչքանչացումն կուտար։

Ամէն բան պատրաստ էր, անմիջապէս եկեղեցական հանդէս կազմուեցաւ. Նշանի օրհնութեան արարողութիւն. հետևաբար պսակի խորհուրդ կատարուեցաւ եկեղեցական զգեստով զգեստաւորեալ քահանայից ձեռքով. ուր խորհրդաւոր պսակի վրայ ճառախօսութիւն մը ևս տեղի ունեցաւ աւագ քահանայի կողմէն որ խիստ սրտառուչ էր, և պսակի խորհրդեան պատշաճ։ Ահա այսպէս կատարուեցաւ Վիչէն իշխանի և Կատարինէ իշխանուհւոյն նմանը չ'տեսնուած պսակադրութեան փառաւոր հանդէսն. յորմէ յետոյ հանդիսականներն իրենց տեղ վերադարձան։

Հարսանիքէն երեք օր վերջ, իշխանի խոհանոցի ծխնելուղէն բարակ մուխ մը բարձրանալով շուտով մը քաղաքին մէջ տարածուեցաւ բայց լուութիւնն զայն իւր քողի տակ առնելով ծածկեց։

ՍՕՓԻԱՑԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԺԻՇԿՆ ՈՒ ՔԱՀԱՆԱՑՆ

Սոֆիան որքան որ առողջացած կը տեսնուէր. սակայն մտային խանգարման հետքերը մնացած էին, որք միշտ ցնորքներու մէջ կը նկղմէին զինքը։

Ինքներ նա, սարսուռ մը կ'զգամ. մէկ մը գլխուս մաղերէն քաշած դէպ ի վեր երկինք կը քաշէ. զանազան հոգիներ զիս կը հաղորդեն. չգիտեմ թէ հրաշք մի է այս որ կը տեսնեմ արդեօք, և պէտք է որ տեսածներս բժշկին պատմեմ։

Իւր սրտնեղութեան ժամերու մէջ, ցնորքներ կը կազմէր, և ինքն անոնց իրական բաներէն աւելի նշանակութիւն տալ։

Նորա խանգարեալ ուղեղը, զինք իրական աշխարհի սահմանէն հանելով կը տանէր երևակայական ցնորքներու մէջ կը ձգէր. որ շարունակ կը տառապէր, և հաւատք կազմած էր՝ որպէս թէ իւր ներս երկու մարդ կայ, որոց մին կուլայ, և միւսը կը խնդայ. գիտէր թէ իւր վարած կեանքը պժգալի էր. կ'զգար թէ դատս ելլել և օգափոխութիւն ընել յոյժ հարկաւոր է իրեն համար. սակայն իւր թշնամւոյն հալածանքէն հարկադրուած էր հանդարտութեան դուրս չելլել։

Օր մը բժիշկը սոյն կնոջ իւր սովորական այցելութիւն տրուած ժամանակ ըսաւ նա բժշկին։

— Պարոն բժիշկ, գիշերները ստէպ հրաշքներ կը տեսնեմ խիստ զարմանալի կերպով, որուն ի պատասխանի ըսաւ բժիշկ։

— Տիկին, տեսած հրաշքներդ պիտի ընդունիմ, եթէ ջիղերդ ճնշումէն առաջ եկած չ'լինին. թէպէտ ձեր հիւանդութիւնը գնայ. բայց ուղեղի ցնցումներն տակաւին քնացած չեն։

— Ի՞նչ ըսել է, Պարոն բժիշկ, յայտնի հրաշք է տեսածներս։

— Այո՛, տիկին, հրաշքի պէս բաներ են տեսածներդ, որոնք հետևեալ մարդկանց մարմնոյ ճնշումը, երկար հսկումը, սնունդնան պակասութիւնը. ցաւագար ուղեղը. մտաց յափշտակութիւն ևայլն, ասոնք այլևայլ երևակայական տեսիլքներու ծնունդ կուտան և իբրև հրաշք կը տեսնուին։

Հիւանդ ուղեղներէն երևակայական բոց մը կը հոսէ, որ ըզմարդն անրջական տեսիլներու, և անգոյ աշխարհներու ու այլանդակ ձեւակերպութեանց կ'առաջնորդէ։

Ձեզ լաւ խորհուրդ մը կուտամ, և պէտք է որ ճշդութեամբ պահէք, երբ այդ հրաշքները ձեզ կը մոտենան և երևիլ կսկսին, անմիջապէս ձեր սենեկէն դուրս ելլէք. տիկին Եւայի սենեակը գնացէք. և կամ պարտէզ ելլէք շրջագայեցէք, թէ գիշեր լինի և թէ ցորեկ. այդ տեսիլքներու վրայ ամենևին մի մտածէք.

այլ ուրիշ զուարճալի առարկաներու վրայ խորհեցէք և խօսեցէք. մինչև որ ձեր խանդարուած ուղեղը կազդուրուի և ջնջեր զբաղան. յորմէ յետոյ այլևս ամենևին հրաշք չէք տեսներ և աւելցուց ըսել։ Տիկին, ձեր տեսածները ցնորքներ են, և ոչ թէ հրաշք, Ճշմարիտ հրաշքը միայն արտաքոյ կարգի յայտնութիւններ են. որք աստուածային մեծութեան գրոշմ կրկրեն և բնականէն պերիվերոյ են։ Աւելորդապաշտական բնաջրումներ ևս կան. որք հոգիներ կը զրգռեն անխորհուրդ եռանդով, և միտք կը խզդեն երևակայական սնոտիներու մէջ։

Աւելորդապաշտական հաւատք մը կայ, որ ողջամիտ մարդկանց ուղեղի մէջ թերահաւատութեան արբեցուցիչ շոգի մը դառնալով, զանոնք դէպ ի անհաւատութիւն կրտանի. սակայն այն խանդաղեալ աւելորդապաշտութեանց մէջ պարզ և անմեղ հաւատք մը ևս կրտեսնուի, յորմէ ակնածելով մարդ չ'կրնար աւելորդապաշտութեանց մօտիլ և անոր քողը վերցնել որպէսզի հաւատացեալի կրօնական զգացումը չվիրաւորուի։

Խաւարի հետ յոդնելու չափ կռուելու հարկ չ'կայ. զի հանճարը արագ կերպով առաջ կը քալէ անոնց լուսատու լուծումներուն հասնելու համար. յորմէ յետոյ ամէն բան Ճշմարտութեան շրջանի մէջ պիտի տեսնուի։

Ս'ըսէր Սոֆիան, Պարոն բժիշկ, կրօնք հաւատոյ այն լաստափայտն է, որում մարդիկ յուսով կ'ապաւինին, և իրենց անձն անոր կրհաւատան ու հոգւոյ փրկութիւն անկէ կ'սպասեն. կրօնի և հաւատոյ յուսովն է որ մարդիկ այս աշխարհի աչէկածութիւններէն և վտանգներէն անսասան կերպով կանցնին. կրօնք այն զօրաւոր սպեղանին է, որ մարդկանց վէրքերը կը բժշկէ, վիշտերը կը թեթևցնէ, նեղութիւն և հալածանքներ տանելի կ'ընէ։

Աշխարհի դառնութիւնները երկնային քաղցր սիրով կը բարեխառնէ, կրօնք զմարդն դէպի բարոյական առաքինութիւն կը մղէ չարիքներէն և ոճիրներէն կ'զգուշացնէ, մարդասիրութեան ըղձայու�ները կ'ազնուացնէ. կրօնի յոյսն Աստուած և մարդիկ միմեանց հետ կրօնական կապով կը կապէ, մէն մի մարդու մէջ ներքին ձայն մը կայ, որ կրօնական պարտականութիւնները կը յիշեցնէ. այս ձայն արարչապետական բարձր հեղինակութիւնէ

մարդկանց մէջ հաստատուած է, այս ձայնը ունին իրենց մէջ բնապաշտ, նիւթապաշտ, կռապաշտ, աստուածապաշտ և անաստուած կարծուածներն իսկ. ուր որ այս խղճի ձայն կայ, հոն հաւատք ալ կայ կրօնք ալ կայ. թէև այլևայլ ըմբռնմամբ. սակայն ամէնքն ալ իրենց աչք և յոյս միևնոյն նպատակին յառած կը գիտեն. ինչպէս աստուածապաշտն այսպէս ալ կռապաշտ և հեթանոս ամէնքն ալ իրենց սխալանաց վրայ կ'ողբան։

Նրջանիկ են հրեշտակային կենաց նուիրուող հոգիները. որք իմանալեաց կայանքի մէջ տեղ ունին. կ'ըսէր բժիշկն։—Տիկին, ես կենաց շաւղի մէջ ամէն բանին բնական կողմը որոնողներէն չեմ. զի գիտեմ թէ այլ է մարդի քննութիւն, այլ է սրտի պարզ հաւատք. բայց բնութեան մէջ բարեաց և չարեաց խառնուրդ մը կայ, որ մարդկանց սիրտը անհանգիստ կ'ընէ. խորհելու պակասութիւն մը կայ, որուն տգիտութիւն կ'ըսուի, և անկէ բնաւ բան մը չծագիր. զի անոր մէջ հոգիները անշարժ և անգործ կը մնան։ Կը տեսնուին կարգ մը մարդիկ. որ իրենց երիտասարդական կրից մղումներէն հարկադրեալ իրենց կրօնական ուխտը կը մոռնան. արդեօք նոքա իրենց ուխտաղանցութեան ցաւը ինչով կը գարմանեն, գիտեմ նաև թէ կրօնք չառնեցողները պտուղ չ'բերող գօսացեալ ծառերու պէս միայն այրելու համար կը մնան։ Չեմ ուզեր քննադատել. զի Աստուած ինձ սատելու անկարող սիրտ մը տուած է. միայն կ'աղօթեմ ամենոց զղջաստութեան համար։

Պաշկանգեալ դրութիւններ կան՝ որ զմարդն անշարժութեան կը դատապարտեն, այդ դրութիւններ կրնան զմարդն պարկեշտ ցոյց տալ. սակայն կարող չեն զայն առաքինի ընել. բնութիւն հաշտ աչք չնայիր ասոնց. այս տեսակ դրութիւնները թէպէտ մարմինները կը պահեն. սակայն հոգին կը մահացուցանեն. փայտակոյտի վրայ չեն հաներ. բայց վատահամբաւութեան բեմի վրայ կը գամեն. այս դրութեանց մէջ զանուողներու խիղճն բռնաբարեալ է։ Դրութիւններ ևս կան. որոնց մէջ մարդկանց վայրենական կամքն կը գառնայ և կը լինի մշանջենաւոր հարկ. ասոնց մէջ կեանքը կը մեռնի. յուսահատութիւն զմարդն կ'առանձնացնէ. առանձնութիւնն ալ զայն երևակայական ցնորքներու մէջ կը ձգէ. ուրկէ կը ծնանի այն ամէն այլանդակութիւններն. որոնց շատերը դուք տեսած էք և կը տեսնէք։

Տիկին Սոֆիան հետզհետէ բժշկական զօրաւոր հոգատարութեան շնորհիւ իւր առողջութիւնը կատարեալ կերպով ձեռք բերած էր. և հիւանդանոցի մէջ Եղիսա անուան տակ ծածկուած կրծառայէր խիստ յաջողակ կերպով և մեծ գութ ունէր հիւանդաց վրայ, ամէնուն համար մայր մը էր իւր ազնուութեամբ և հոգատարութեամբ։ Եկան հասան այնպիսի օրեր, յորում Սոֆիան վերստին ծանր հիւանդութեան մը ենթարկուելով անդամ էր ի կենաց. ուստի փութանակի քահանայ մը կ'ուղէր խոստովանելու և հաղորդուելու համար. դժբաղդաբար այն օրն ալ քահանայն ուրիշ գիւղ մը գնացած էր։ Սոֆիան տեսնելով որ իւր հիւանդութիւն աստիճանաբար առաջ կերթայ, մեծ թախանձանքներ ըրաւ տիկին Եային որ անպատճառ քահանայ մը բերել տայ. քահանայն եկած ժամանակ՝ բժիշկն տիկին Սոֆիայի անկողնոյ մօտ նստած էր, և ըսաւ քահանային, Հայր, դրեթէ բժշկական ամէն հնարքներ չօգնեցին այս հիւանդին. ուրեմն ձեր նուիրական պարտք կատարեցէք, այս խղճալոյն հոգին հաշտեցուցէք Աստուծոյ հետ։ Քահանայն իւր հոգևոր պաշտօն և մատակարարութիւն կատարելէն վերջ, կրկին սկսաւ բժիշկը խօսիլ տիկին Սոֆիայի հետ հետևեալ եղանակաւ։

Տիկին, յուսոյ հրեշտակ մը կայ, որ յուսահատութեան վերջի ճգնաժամերուն մէջ կը հանի. տառապանաց մէջ մահամերձ հոգիները երկնային փառաց վսեմ խորհրդածութեամբ և երանական աւետեաց սփոփելու։

Տիկին, խղճի խայթ չունեցող հոգիները մարդկանց առաջ աղէտներու և թշուառութեանց մէջ բան մը չեն կորսնցուներ. զի Աստուծոյ առաջ անվրդով սրտի անդորրութեան մէջ խաղաղութիւն կրվայելեն. գութ ղձեղ հանդարտութեան մէջ պահեցէք. ձեր խղճի սրբագին փափկութիւնը ինձ հաւատալ կուտայ թէ դուք պարզ և մաքուր կրօնի զգացումները ձեր մէջ միշտ վառ պահած և կրօնական պարտականութիւնները կատարած էք։ Հաւատացէք թէ անվիտութեամբ մեղանչողները երբ զղջան Աստուծոյ ներողութեան կ'արժանանան. արտասուքները որք զղջացեալի դառնակսկիծ սրտէն բղխած տեսակ մը արիւններ են. նոքա երբ մեղքերու վրայ կը թափին այն ժամանակ երկնային համակրական ցօղ մը ևս իբրև մարդասիրին Աստուծոյ

շնորհական կաթիլները սահելով կ'երթան կը խառնուին այն արտասուքի հետ և մեղքերը մաշեցուցելով կը ջնջեն Աստուածային անյիշաչար ներողութեամբ։

Բժիշկը այս խօսքերէն վերջ կրկին տիկին Սոֆիայի առողջական վիճակը հարցուց. նա պատասխանելով ըսաւ. մարդ մը պէտք է որ իւր գտնուած վիճակէն գոհ լինի. վասնզի դժգոհութեան մէջ բնաւ հանդստութիւն չ'կայ. և այս աշխարհիս վրայ մաքուր խղճէն աւելի քաղցր հանդստութիւն չ'կայ խիղճս քննելով քիչ շատ մաքուր կը գտնեմ. իսկ ակամայ և անդիտութեամբ սխալանացս ներումն ալ Աստուծոյ գթութենէն և ողորմութենէն կը հայցեմ. մարմնոյ տկարութենէն տաժանելի միտք մը իւր անցեալ առողջ կեանքը նորէն վերսկսելու իղձէն ի զատ ուրիշ բանի մը չփափագիր։ Պարոն բժիշկ, հիւանդութիւնները նախախնամութեան կողմէն եկած, մարդկանց զգուշութեան մէկ ազդարարն են. սակայն մարդիկ խիստ քիչ կը շահին ասկէ. անցեալ չարիք և բարիք շուտով կրմոռցուին։ Հիւանդութիւնը մեծ աղէկութիւն մը կը բերէ իւր հետ, այն է թէ մարդկանց տպաւորութիւնները ազնուացնելով, զանոնք Աստուծոյ մօտեցնելու կը հրահանգէ։

Սոյն միջոցին հիւանդը խորին հառաչանքներով այս կամ այն կողմ կը նայէր մէկ մը փնտրողի պէս և յանկարծակի երիտասարդ տղայ մը տեսաւ իւր գլխոյն վերև կանգնած. այս պահուս քանի մը արտասուաց կաթիլներ վազեցին Սոֆիայի և երիտասարդի աչերէն. երկար լռութենէ մը վերջ խօսքի թելն առնելով ըսաւ Սոֆիան. ճշմարտութիւն, որ մարդկանց կենաց ապահովութեան համար միշտ հարկաւոր է, նա միշտ իւր հաւատածիներու ձեռքի մէջ կը փետտուի. և խոյս տալով կ'երթայ երկար ժամանակ կը ծածկուի. թէպէտ անկեղծաբար փնտրողները զայն կը գտնեն բայց խիստ ուշ։ Պարոն բժիշկ, իմ փընտրածս ալ նոյն ճշմարտութիւն և արդարութիւնն է. սակայն չեմ կրնար զանոնք գտնել. որպէսզի իմ և իմ այս սիրուն զաւակիս անմեղութեան դատը անոնց առաջաւ և անկաշառ դատաստանին յանձնեմ, և արդար իրաւունքս պահանջեմ։ Պարոն բժիշկ, հիւանդներն ալ իրաւունք ունին ծերունի մարդկանց պէս օրհնութիւն կարդալու և շնորհակալութիւն մատուցանելու ի-

ընց բարերարներուն, ուրեմն ես ալ կուգամ իմ երախտագիտութեանս հետ շնորհակալիքս մատուցանելու ձեզ, որ իմ փրկիչ և բարերարս էք. երկու անգամէ որ զիս գերեզմանի դուռնէն ետ կըդարձուցէք։ Ձեր բարեաց փոխարէն ուրիշ բան մը չունիմ վճարելու այլ միայն անկեղծ սրտէս բղխած արտասուքովս խառնուած երախտագիտութիւնս կուտամ ձեզ. ասկէ աւելին Աստուած թող վարձատրէ զձեզ, որ ձեզմով իմ կեանքս պահեց։

Սոյն խօսքերէն վերջ երիտասարդն մօտենալով Սոֆիային՝ նորա ձեռները համբուրեց լալագին դիմօք և նորա վիճակը հարցուց. որուն պատասխանելով Սոֆիան ըսաւ. զաւակս, շատ լաւ եմ. իմ այս տեղի կեանքս խիստ անմեղէ և գեղեցիկ ու աչացս սիրելի և հոգւոյս մխիթարական. այս աղքատիկ պարզութեան և գեղջկական անմեղութեան մէջ կենաց ամենէն զուարճալի քաղցրութիւն կըվայելեմ. հանդարտ սրտիւ և առանց խղճի խայթի, գոհ եմ Աստուծոյ ողորմութենէն որ զիս ազատեց այն զիշխանձ գայլէն որ մարմնոյս հետ հոգւոյս ալ մահ կ'սպառնար։

Այն լոյսէն խոյս տուող խաւարի որդին թող իւր երեսը դէպ ի անցեալ գարձունէ. մեռած գնացած Սոֆիայի հոգւոյն ալ թող տիրապետէ. թող սարսափ ազդէ նախապաշարման տակ ընկճեալ հոգի չունեցող ստուերակերպ ուրուական մարմիններուն։ Զաւակս, վրէժխնդրութիւններ կան՝ յորոցմէ ոմանք սոսկումով կըխորշին. ոմանք բարձր վեհանձնութեամբ կըմօտին. ասոնց վրայ ոմանք կ'սքանչանան, ոմանք ատելութեամբ կըլեցուին. սակայն խորտակումը մեծ մասամբ իրաւունք ունեցող տկարի կողմին բաժին կըմնայ. և զօրաւորը կըյաղթանակէ. վանդի վանդ ալ իւր ուժը անոր ուժի հետ կըմիացնէ. այս պարագայիս մէջ իմաստուններէն շատերը լուութեան քող մը կըքաշեն իրենց վրայ. և լեզուներուն սանձ կըդնեն. որպէսզի կարծիք չ'տան թէ իրենք տկարի իրաւունք պաշտպանել կ'ուզեն։ Զաւակս, Վիչէնի կասկածը թիթեռնակի պէս իմ թեւերս այրեց. բայց այս տեղը անմխիթար չեմ. կըհաւատամ թէ յուսոյ և սիրոյ հրեշտակը իմ հոգիս դէպ ի Աստուած պիտի առաջնորդէ. որու ձեռքն է կեանք և մահ, վարձ և պատիժ. եթէ Աստուծոյ կամաց հակառակ վարուած եմ, այն ալ իմ տգիտու-

թեանս և կրիցս բռնութեան ներքև գործած եմ. որոյ համար դարձեալ նորա գթութեան և ողորմութեան դիմելով ներում կըխնդրեմ։ Որդիս, հասան ինձ այստեղ այնպիսի ժամեր՝ որոց մէջ ես իմ վերջի պայքար և ջղաձգութիւն ու սարսուռներ կըզգայի, և նրբահայեաց աչքեր կրնային գուշակել թէ իմ հոգիս իւր մարմնէն բաժնուիլ կ'ուզէր. թեթև շունչ մը միայն հովի պէս շրթունքներէս կըսահէր. և ամենուն կ'ըսէի։ Մնաք բարեաւ, ներեցէք ինձ. իմ հոգիս յաւիտենականութեան սեմի վրայ ճշմարտութիւն մը կըտեսնէ. և ես պատրաստ եմ այն հոգին Աստուծոյ յանձնել. մարմնս ալ հողոյն ատանդ տալ։ Կ'ըսէի իմ շուրջս բոլորուողներուն թէ պէտք է որ լուութեանս նշանակութիւնը հասկնաք։ Այս վայրկենին ամէն մարդ ինձմէ հեռացաւ և կարծեցին թէ մեռայ ես. նոյն պահուն ես իմ դաւանութիւնս կըկարդայի և կ'ըսէի. կըհաւատամ զԱստուած տիեզերաց արարիչ և ստեղծիչ ու խնամակալ. կըհաւատամ անմահութիւն հոգւոյ անմահութեան. կըսիրեմ և կըյարգեմ բարոյականութիւն, կ'ընդունիմ այն ամէն պարտք և իրաւունքները որոնք որ ճշմարտութեան և արդարութեան սկզբանց վրայ հաստատած են. մեծ է սիրոյ և անյիշաչարութեան հեղինակը Յիսուս Քրիստոս. որ խաղաղութիւն բերաւ աշխարհին։ Մինչ դէպ ի յաւիտենականութիւն դնալ կըպատրաստուէի. նորէն Աստուած իմ ողորմելի կեանքս նորոգեց. թերևս վերջին անգամ զքեզ տեսնելու կարօտս լեցնելու բարեսրտութեամբ նախախնամութիւն գաղտնի ձեռք մը ունի, որ մարդկանց հասողութենէն շատ վեր է. որ երբեմն զարմանալի և հրաշալի կըգործէ. սոյն ձեռքն է որ իմ ձեռքէս բռնելով գերեզմանի եզրէն ետ դարձոյց. թերևս ապագայի մէջ ինձ պէս մեղաւոր կնոջ մը ձեռքով քու ճշմարիտ դատիդ վկայ լինելու տնօրէնութեամբ. ուրեմն Աստուծոյ օժանդակութիւն կըհայցեմ քու բաղուկներդ և հանճարդ զօրացընելու համար։

ԻՇԽԱՆԻ ՏՈՒՆԷՆ ԿԱՏԱՐԻՆԷԻ Ի ԲԱՆՏ ՓՈԽԱԴՐՈՒԻԼԸ

Վիչէն Իշխանը ամուսնանալէն երկու ամիս վերջ յաջորդաբար շշուկները տարածուեցան քաղաքի և գաւառներու մէջ. ոմանք կ'ըսէին թէ՝ Իշխանուհին տկար է և իւր առանձնարանէն ամենևին դուրս չելլեր. ոմանք կ'ըսէին՝ խելքը կորուսած է, և ոմանք ևս կ'ըսէին թէ Իշխանը զինք չսիրեր, և առանձին սենեկի մը մէջ փակել տուած է զայն. ևայլն։

Այս ենթադրութեանց մէջ ամենէն ստոյգն հետաքրքիրներու տուած լուրերն են. որոց աչքէն բան մը չէր վրիպեր։

Նորա հրատարակեցին թէ՝ Իշխանուհին ժամանակէն առաջ իւր ծաղիկը թառամեցնել տուած է, և թէ հինգ ամսէն ի վեր յղի է. քանի մի օրէն յետոյ լուր տարածուեցաւ թէ՝ Իշխանուհին յանկարծակի Իշխանի տունէն անհետացած եղած է։

Գիշեր իւր խաւարային քող տարածած էր մեր երկրի վրայ, բնութիւն ամէն հոգիներ լռութեան կը դատապարտէր։ Վիչէն Իշխան և Կատարինէն իրենց առանձնարանի մէջ իրարմէ զժգոհ նստած միմեանց հետ քէն էին և չէին խօսեր, Իշխանի տունը գրեթէ սգոյ թատր մը դարձած էր. ընդհանուր օրէնք է՝ ելեգրականութեամբ լեցուած ամպերը անպատճառ պիտի որոտան և պայթին։ Նոյնն պատահեցաւ խեղճ Իշխանուհւոյն այն չարաբաստիկ ժամուն. զի յանկէկալ յանկարծակի Իշխանի անտարակոյս եղող պարտէզի դուռ բացուեցաւ, և սպասուհիներէն մինն սանդուխէն վեր ելլելով եկաւ Վիչէն Իշխանը դուրս կանչեց. այն պահուն ականջի անախորժ ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր Կատարինէն ի բանտ փոխադրեցէք։

Անիկա Վիչէնի ձայնն էր, որ այս պահուս Կատարինէի արգէն խռովեալ սրտի մէջ դառնութեան և թոյնի կաթիլներ կաթեցուց. և նորա երևակայական երջանկութեան յոյսը դառնութեամբ լցուց։ Մինչ Կատարինէն շարժումն կընէր իւր սենեկէն դուրս ելլելու, տեսաւ որ երեք դիմակաւոր մարդիկ իւր գլխոյն վերև կեցած իրեն լռելու և հնազանդելու սպառնական

հրաման կուտային։ Հրաման մը՝ որ մահուան հրաւիրող կրողէն աւելի սպառնալի էր։ Աղիողորմ ձայնով գոչեց. մարդիկ, այս ահարկու գէմքով աւազակի՞ թէ մարդասպանի վրայ կը յարձակիք իմ ո՞ր մեղքս գիս ձեզ մատնեց. և ի՞նչ կուզէք ինձմէ. ահ տէր Աստուած, մատնուած եմք արդեօք։

— Ըսաւ գիմակաւորի մէկը բիրտ ձայնով մը, այո մատնուած ես տիկին, հնազանդէ և մեր ետևէն եկ։

— Յանուն գթութեան և մարդասիրութեան Իշխանը ներս կանչեցէք. և մի գուցէ Իշխանին համար վտանգ մը լինի։

— Տիկին, այս վայրկենիս քու Իշխանդ մենք ենք, և պէտք է որ մեզ հետ գաս. ապրեցէ՞ ոչ (հրացանի սուինը ցոյց տալով) դու գիտես։

— Լա՛ւ, լա՛ւ պարոն, կը հնազանդիմ ճակատագրիս, և գիտեմ թէ այս ի՞նչ խաղէ, բայց իմ անմեղ արիւնս, որ ուրիշ բանով անկարելի է մաքրուիլ, Իշխանի զղջման արտասուքները թող լուանան զայն. այս վայրկենէս հնազանդ եմ ձեզ, պարոններ. մաքուր խղճմտանաց տերը վտանգներէն չվախնար. որքան որ ձեր ձայն ահարկու կը տեսնեմ, բայց կը հաւատամ թէ՝ դուք զիս այն մեղմ ձայնին կ'առաջնորդէք, ուր ամէն բան խաղաղութիւն է։

Իշխան, զիս մատնեցի՞ր, և այս բոպէիս մէջ, ինքզինքդ ինձմէ ծածկեցիր։

— Ձայն մը անորոշ կերպով կ'ըսէր. մահուան արժանի ես։

— Մահուանէն չեմ վախնար. զի մահը յուսահատներու փնտրածն է. մահը իմ կրած տառապանքներէս ամենէն թեթևն է. անվեհեր հոգին անպատիւ մարդկանց հետ կենակցելէն աւելի մահուան կը յօժարի, մտքս և զգայութիւնս զիս կը համոզեն թէ՝ այն վիշտերը, որ միայն մարմնոյ կը տանջուին, նորա պիտի պատճառ դառնան հոգիս դէպ ի լաւագոյն աշխարհ մը անմեղներու կայանքին մէջ առաջնորդելու. սուրբերու հալածիչները անոնց առջին անմահական կենաց դռները բացին. չեմ վախնար մահուանէն զի երանութեան յոյսը հարստահարեալներու բարեկամն է. ո՞վ խոյս կուտայ Աբելի մահուանէն, երբ կը հաւատայ թէ՝ Աստուած նորա արիւնը կընդունիրագործէ։ Հալածանքը իմ կոչումս պիտի նուիրագործէ. Աստուած միշտ հալածեալնե-

ռու կողմ. և հալածիչներու դէմ զտնուած է. անիրաւութեան և ատելութեան երեսէն հալածուողները արդարութեան պաշտպան Աստուծոյ կըմօտենան։

Թող Աստուծոյ Ճայ մեր դատաստան, Վիչէն, որ այս վայրկենիս թէ՛ զիս այստեղ թէ զքեզ պահուածդ տեղ կըտեսնէ, և թէ՛ երկուքս ի միասին աղքատ Սամուէլի փոքր տան մէջ։

Աստուած իմ, յօժարակամ կըտանիմ ամէն հալածանաց. բայց վրէժխնդրութեան դատս քու արդար աթոռոյդ պատուանդանի տակ կըդնեմ. դու դատէ արդար չափով։

Իշխանուհին արտօնեալ էր իւր հօր տունէն բերած քանի մի կտոր ցնցոտի զգեստներն իւր հետն առնելու. ինչպէս որ պարտաւորեալ էր (առանց մէկի մը հետ խօսելու) երեք դիմակաւոր հրացանակիրներու հետ իշխանի տունէն դուրս ելլել և անոնց հետևելու։

Իշխանուհին դիմակաւորներէն առաջնորդուելով դիշեր ժամանակ, չորս ժամ հետիոտն քալելով, հասան բլրակի մը վրայ կառուցուած այն հին դղեակը, որ ժամանակին մահապարտներու բանտարկութեան վայրն էր. և որովհետև այն ժամանակին ըստ արևելեան սովորութեան կանանց համար բանտ չկար, առաջին անգամն էր որ նոյն դղեկին մէջ սենեակ մը կըյատկանար իշխանուհւոյն. ընդ հսկողութեամբ բանտապետուհի պառաւ կնոջ մը որ յառաջագոյն պատրաստած էր ամէն բան ըստ հրամանի Վիչէնին։

Կատարինէն երբ բանտի մէջ իրեն համար պատրաստուած առանձնարանը մտաւ, գիշեր ժամանակ չորս կողմը մութ և խաւար զտաւ հոն միայն ցնցոտի անկողին մը, հողէ ամանով մը ջուր, աղօտ լոյս տուող ճրագ կայր... Նորա առանձնարանը խիստ խոնաւ էր, և չափազանց փոքր. սակայն դաշտի մը վրայ նայող փոքր պատուհան մը ունէր սենեկի առաստաղին փակած հաստաւոր սարդերը ոստայն կըհիւսէին. պատերու մէջէն հաստաւոր մուկեր կելլէին և աներկիւղ կերպով սենեկի մէջ երթևեկութիւն կ՚ընէին։ Կ՚ըսէր Կատարինէն. պէտք չէ որ յուսահատիմ. զի մուկերը իրենց խաղերով, սարդերը իրենց ոստայնահիւսութեամբ կրնան իմ ուշադրութիւնս իրենց գրաւել և միտքս զբաղեցնել. հոս անմեղութիւն և սրտի հանդարտութիւն

կայ. և ես այս տեղը նոր կեանք մը պիտի սկսիմ, իմ յարաբերութիւնս պիտի լինի Աստուծոյ հետ, այն Աստուած, որ քարին մէջ եղած որդն անգամ անտես չընելով կըխնամէ, անշուշտ իւր խնամքներով պիտի սփոփէ զիս, և զայն որ յիս։ Այս փոքր պատուհանէս տեսնուած բնութեան սքանչելի տեսարանները իրենց շքեղութեամբ պիտի զան և մեղմացնեն իմ տրտմութիւններս ու իմ մտացս սնունդ պիտի տան Աստուծոյ հրաշակերտ յօրինուածները դրուատելու։ Իմ անձս պիտի ուրախանայ իւր առանձնակի կենաց մէջ ունեցած խղճի հանդարտութեամբ, այս ժամերը իմ կենացս յիշատակներու մէջ ամենէն մեծ նշանակութիւն ունեցող բանը պիտի համարուին։

Ա՜հ ազատութիւն, դու կենդանի կարողութեան և զօրութեան ամենագեղեցիկ դուստրն ես. բայց ինձ պէս տկարները կարող չեն զքեզ ունենալ և վայելել։ Այս վայրս իմ ազատութեանս որորան պիտի համարուի. և հոս ազատութեամբ պիտի վայելեմ խղճիս հանդարտութիւնը. այլ ևս Վիչէն չկայ որ իմ խիղճս և զգացումներս բռնաբարէ։ Թէպէտև ճակատագիրս զիս մրրիկներու պէս տեղէ ի տեղ կըփոխադրէ առանց հանգիստ տալու. սակայն ես այս գերութեանս մէջն անգամ մխիթարութիւն մը ունիմ. այն է որ ծոցիս մէջ ազատ սիրտ մը կըկրեմ։ Այս սենեակը ինձ համար ոչ թէ բանտ՝ այլ հոգւոյս նուիրական սրբավայրն է. Նախախնամութիւնը երբեմն ոգիներ այս տեսակ վայրերու մէջ ազնուացունելով կըբարձրացնէ առաքինութեան այն վսեմ աստիճանին, ուրկէ հոգւոյ զմայլումները կըբուրեն։ Անիրաւ ընկերութեանց մէջ մարդկային արդարութիւն անգոյ կըմնայ, նման այն մոլի ոգիներուն, որոց խղճի ձայն կիրքերու խաւարին մէջ ծածկուելով ճնշուած կըմնայ. աշխարհի մէջ ծուռ կրծող մոլութիւններ կան որոնցմէ մարդիկ խիստ դժուարաւ կրնան ետ մնալ, և ամենէն ճարտար բժիշկն անգամ կըտարակուսի անոնց սպեղանիք պատրաստելու։ Թէպէտ բանտս խիստ խոնաւ է և օդը ճնասակար և ասոնց հետ միացած են իմ հալածանաց վիշտերը և զգացած բարոյական ցաւերս ու միայնութեանս տխուր ժամերը՝ որք սոսկալի կերպով զիս կըճնշէն, այսու ամենայնիւ ինձ համար Վիչէնի մեղապարտ տունէն գերիվերոյ է. զի հոստեղի կեանք անխռով է և առանց մեղաց, ու առանց աչէկոծութեան։

Կատարինէն գիշեր ժամանակ երբ տեսաւ թէ Լուսնոյ լոյս իւր պատուհանէն ներս ցոլալով օժանդակեց իւր Ճրագի տկար լոյսը զօրացնելու և իւր սենեակը լաւ մը լուսաւորելու , այն պահուն քիչ մը հանգստացած էր իւր արդէն ունեցած յոգնութենէն , ոտքի վրայ ելլելով և սենեկի մէջ երթևեկութիւն ընելով կ'ըսէր ։ Այս աշխարհս բաբէլոնեան խառնակութիւն մի է . ուր մարդկանց ամէն ընթացք շփոթութեան մէջ է . զի շատ տեղ անիրաւի կամք կ'իշխէ , անոր համար Աստուծոյ արդարութեան կշիռը , Ճշմարտութեան ձայնը հալածանաց և Ճնշման ներքև կը գտնուին . թէպէտ Աստուծոյ իմաստութիւն բնաւ ուղղութեան հակառակ օրէնք չ'դրաւ . բայց չար ոգիները զբարիներ հրապուրելով կը մոլորեցուցնեն . իրողութիւնները կը համոզեն զիս հաւատալու թէ՝ մարդկանց մեծագոյն մասը տառապանաց մէջ թափառելու համար սահմանուած են . վասնզի կը տեսնեմ որ վշտաց դաշոյն շատ մը անմեղներու սիրտ կարևէր կը խոցէ . ցաւութիւններ կան , որք ամէն աչք չը ըներ տեսնել և ոչ պարզ սրտեր կրնան զուշակել . զի նորա բարի և աղնիւ սրտի պատուական տակ Ցուգայի համբոյրներով ուրիշները կը մատնեն . այս մատնուածներու մէջէն անոնք՝ որք Աստուծմէ չեն հեռանար , նոցա սիրտը դրախտ կը դառնայ . որու մէջ Աստուած կը բնակի . պատրանք մի էր որ ինձ հանդիպեցաւ Վիչէնի ձեռօք , որ իմ ամէն երջանիկ յոյսերս երազի փոխեց ։

Վիչէն Ճշմարտութիւնը մատնեց երբ զայն յայտնելու լուեց . իւր մեղք ծածկելու համար զիս հալածանաց ենթարկեց . այս տխուր ժամերուս մէջ պէտք է որ ես լուին պաշտամամբ կրօնական պարտքերս կատարեմ . Աւետարան մը ունիմ , պէտք է որ զայն կարդալով ինքզինքս մխիթարեմ . սքանչելի է Աւետարան իւր պարզութեան մէջ , զի անկէ կը բղխի այն սիրոյ լարը , որ զմարդիկ Աստուծոյ հետ կը կապէ , տատնաբանեայ օրէնքները մարդկանց բարոյականութեան խարիսխներն են , Աւետարանն ալ բարոյականութեան մեծ շէնքի հիմն է . բարոյականութիւնը մարդկանց պատուոյ պահպանն է , ասոնք պիտի լինին զիս մխիթարողները յետ այսորիկ ։ Մեղաց մէջ ինքնները յուսահատելէն աւելի աղէկ է որ ես դառնան ։ Աստուած իւր ձայնը խղճին կը ներշնչէ , ուրկէ կը բղխին այն փրկարար դասերը .

որք մարդկանց կոչումն կ'ազնուացուցնեն . բանականութիւնը իւր Ճշմարիտ մտածութեանց մէջ փնտրելով կը գտնէ զԱստուած , և կը ճանաչէ աստուածային պաշտամունք , որ սիրոյ վրայ կը կայանայ , և հոր Աստուծոյ կը մատուցուի ։ Յիսուսի վարդապետութիւն սիրոյ վրայ հիմնուած է , մարդասիրութիւն և անձնուիրութիւն կը սորվեցուցնէ ։

Այս խօսքերէն վերջ Կատարինէն թէ սաստիկ յուզեալ և թէ չափէն աւելի յոգնած լինելով՝ ընկաւ իւր աղքատիկ անկողնոյն վրայ ու քնացաւ ։ Կատարինէն եկեղեցական հանդէսի օրէն սկսեալ մինչև ցայսօր տակաւին այսպիսի հանգիստ քնացած չունէր . այլևայլ տագնապ , սրտնեղութիւն ունենալոյն համար ։ Բանտը գիտես թէ մտատանջութեան ամէն ծանրութիւնները վերցուցած էր անոր վրայէն ։ Երբ առաւօտ եղաւ , եկաւ բանտապահ կինն խիստ համակրական և մխիթարական ու շնորհալի կերպով մխիթարեց զԿատարինէն , և կաթով սուրճ մը մատարեց Կատարինէին . այն վայրկենէն սկսեալ բանտապահուհին մօր մը պարտք և խնամք ստանձնեց կատարելու քանի որ Կատարինէն բանտի մէջն է ։ Ի'ըսէր Կատարինէն . կրփափաքիմ միշտ ձեզ հետ այս անմեղ բանտիս մէջ լինիլ , և ձեր խնամքները վայելել ։ Կինը երթալէն վերջ Կատարինէն իւր փոքր պատուհանին մէջ նստած Աւետարան կը կարդար ։ Նորա պատուհանին տակ Կատարինէէն աւելի ողորմելի կեանք ունեցող քաղաքականապէս զբաղարտեալ ծերունի մարդ մը հետևեալ կցկտուր խօսքերը կը խօսէր ։

— Այս աշխարհիս տխուր իրողութեանց և երազի պէս եկած ու գնացած գործոց մէջ անմահ բաներ ալ կան . այն է աղքատի յոյսը . առաքինոյն խիղճը։ Աշխարհի մէջ մարդկանց կարծեաց տարբերութիւնը զաշխարհ յուզող ալեկոծութիւն մի է ։ Մարդկութեան շղթայի մէկ կողմէն հիւսուիլը և միւս կողմէն քանդուիլը Աստուծոյ մէկ տնօրինական վճիռն է , որ ամենուն համար հաւասար է ։ Աստուած , դու զիս կազդուրէ . զի այսօր չափազանց սրտնեղութիւն մը ունիմ , խիղճս անողջանալի կերպով կը հարուածուի կամքէս . ուրեմն աղօթել պէտք է այն չարախօս մարդկանց համար , որք ապականարար օձերու պէս իրենց լորցունք հոտաւէտ ծաղիկներու վրայ ծորելով զանոնք կը թունաւորեն ։

Նախազգացումներ կան, որք վերջէն պատահելիքները առաջէն կըգուշակեն. Աստուած իմ, օգնէ ամէն հալածեալներուն և զանոնք պաշտպանէ քու զօրաւոր թեւերուդ ներքև։

Երկրագունդ հասարակաց հայրենիքն է, գերեզման՝ ամենուս մայր է. էակները միայն իրենց սեռով կըտարբերին։ Բնութեան մէջ անհատական օրէնք չ'կայ, ամէնքս ալ բնութեան օրինաց հպատակող զաւակներ եմք. մարդիկ իրարու եղբայրներ էին, բայց կարծիք և եսութիւն զանոնք իրարմէ բաժնեց։

Թող չ'կարծուի որ դէպ ի կախաղան դնացողներ ամէնքն ալ ոճրագործներ են. թերևս անոնցմէ շատեր անմեղ զոհեր լինին։ Անմեղները երբ անիրաւութենէն և ստութենէն կըհալածուին, այն պահուն նոքա իրենց անմեղութեան դատը ճշմարտութեան և արդարութեան պաշտպանութեանը կըյանձնեն։ Ճշմարտութիւն և արդարութիւն թէպէտ անմահ են, բայց միշտ հալածման մէջ են. սակայն հոգ չէ. վասնզի նոքա կը քողարկուին, բայց չեն թաղուիր. կըհարուածուին, բայց չեն մեռնիր. և ի հարկէ օր մը պիտի յաղթանակեն։ Տէր Աստուած, իմ ապագաս, որ քու գաղտնեացդ մէջ թագուն կըմնայ, ի՞նչ է արդեօք, ըսած է խղճուկ ծերունին Լամեխ քահանան. անասունները իրարու ձեռքէ ճարակ չեն յափշտակեր, եթէ փեթակի մէջ դտնուող զօրաւոր մեղուն ըսէ. այս ամէն մեղը իմս է. այն ժամանակ միւս մեղուներ ի՞նչպէս պիտի ապրին։ Մարդիկ սէր բառ մը կըդործածեն. որու հնչումն խիստ զողտրիկ է և ախորժելի. այդ սէրը այն համակրանաց լարն է. որ զմարդիկ փոխադարձ պարտեօք և իրաւամբ իրարու հետ կըկապէ. այս սիրոյ լարը այժմ ես թուլցած կըտեսնեմ. վասնզի ճշմարիտ սէրն բնաւ երբէք չուզեր ուրիշի վրայ բարձրանալ. այլ ինքզինք կըզոհէ ուրիշներու համար. եթէ կըկասկածիս ըսածիս, սիրոյ հեղինակի գործերուն դիմէ. ապահովութեան համար միութիւն պէտք է, առանձին տունկք արևու տապէն կըթօշնին ու կըչորանան, անօդնականը՝ ճնճղուկի պէս զօրաւորներու մազիլներու մէջ կըփետտուի ինչպէս որ ես ալ կըփետտուիմ զոպարտիչի մը չար լեզուէն. և բանտի խոռոչներու մէջ կըթափառիմ. երբ ձայնս կարող չեմ լսելի ընել տալ արդարութեան ականջին, ինձ միայն մէկ բան կայ ընելիք. այն է որ իմ սիրտս նուիրեմ

Աստուծոյ մեծ և անկեղծ սիրոյն և պաշտպանութիւնի անոր համատարած թեւերու տակը։

Թռչնոց մէջ ամենէն անզէն և տկարներն են ճնճղուկ և ծիծառն, սակայն երբ գիշատիչ թռչունը զանոնք իւր մագիլներու մէջ որսալ կ'ուզէ, նոքա խումբ կըկազմեն կըմիանան և գիշատիչը կըհալածեն։

Մարդկանց միտք ասոնցմէ աւելի տկարագոյն է. անոր համար յուսահատներու յոյսն խոյս կուտայ իրենց ոգիէն իբրև բեկեալ ամանէ մը։ Սահման մը կայ որուն մէջ կ'ապրին ամէն արարածներ. սակայն Աստուած այն սահմանէն դուրս է։ Աստուած գիծ մը սահմանած է և անիկա ժամանակն է, որ ամէն բան իւր հոսանքի հետ գլորելով կըտանի յաւիտենականութեան մէջ կըթաղէ. ժամանակի բաժանումն կայ, որ մարդիկ իրենց տկար լեզուով անցեալ, ներկայ և ապառնի կըկոչեն, սակայն Աստուծոյ համար ամէն ինչ ներկայ է։

Մարդիկ անցեալը կըմոռանան, և կըհաւատան թէ՝ անցեալը մոռացութեան մէջ թաղուելով անհետացաւ. սակայն աշխարհի սկիզբէն մինչև վերջ մարդկանց թէ բարի և թէ չար գործեր Աստուծոյ տեսութենէն չեն վրիպիր։

Մինչ Կատարինէն իւր փոքրիկ խցեկի պատուհանէն մերթ ծերունւոյն խօսքերուն ուշադրութիւն դարձուցած մտիկ կ'ընէր, մերթ բնութեան տեսարանի վրայ զմայլմամբ կըդիտէր, ահա յանկարծ խնամակալ պառաւը սենեկէն ներս մտնելով իմացուց թէ պառաւ կին մը հոս պիտի գայ ձեզ հետ առանձին տեսնուելու։ Ըսաւ Կատարինէն, մայր իմ, կըպաղատիմ արգիլէ զինքը, չեմ ընդունիր և ձեզմէ ի զատ ուրիշ որևէ անձ չեմ ուզեր իմ սենեակս մտնէ. եթէ ըսելիք մը ունի՝ թող ձեզ յայտնէ, և դուք ինձ հաղորդեցէք։ Կինը դուրս ելլելով, կրկին վերադարձաւ և յայտնեց թէ անպատճառ զձեզ առանձին պիտի տեսնէ. և ձեզ կարևոր գաղտնիքներ ունի հաղորդելու։ Եկողը ներս մտաւ, որ Կատարինէի անծանօթ չէր. այլ Վիչէնի տան խոհարար բարի կինն էր փոքր համակրական տեսութենէ մը վերջ, Վիչէնի հրամանը կատարելէր թէ, դուք ձեր յոլոթիւն վիժել տուէք և հինգ օրէն վերջ բանտէն պիտի ազատիք։ Այս լուրը կայծակի պէս Կատարինէի սիրտ կըծակեր և ձեռ-

քերը դէպ ի երկինք բարձրացունելով կ'ըսէր , տէր Աստուած, առ աւանդդ և զիս ազատէ այս ճիւաղի ձեռքէն, որ իւր ատելութիւնը վրէժխնդրութեան փոխելով՝ զիս բովանդակ աշխարհի մէջ խայտառակելէն յետոյ այս դառն և անտանելի տանջանաց մատնեց , զորս յօժարութեամբ կը կրկեմ. բայց այդ վատ հոգին այժմ կ'ուզէ ամէն մեղքերուս վրայ մարդասպանութիւն մը ևս աւելցունել։ Մայր իմ, գիտեմ որ դու զիս կըսիրես. և սկիզբէն մինչև վերջ ամէն բանին ալ տեղեակ ես. կըխնդրեմ, դնա և ըսէ այդ վատատոհմին թէ՝ կ'ըսէ Կատարինէն , այդ մարդասպանութեան ոճիրը փոխանակ ինձ գործել տալու դու ինքդ գործէ։ Ղրկէ դահիճը , սպանել տուր մայրն , այն ժամանակ իւր արդանդի պտուղն ալ կըմեռնի իւր մօր հետ ։ Ո՛չ, ո՛չ մայր իմ. Կատարինէն բնաւ այդ ոճիրը չպիտի գործէ . և ողջ պիտի պահէ իւր զաւակը , մուրալով զայն պիտի մեծցունէ , և պիտի կտակէ իրեն թէ , մօրդ անպատուութեան վրէժը ձեռքովդ լուծէ քու հայրդ Վիչէնէն , որ զիս անհաւատարիմներու կարգը դասեց , իւր մեղք ծածկելու համար ։ Մայր իմ, ըսիր թէ հինգ օրէն վերջ բանտէն կազատիմ, այս մասին յատուկ կըխնդրեմ որ ըսէք իրեն թէ , շնորհակալութիւնս կուտամ իրեն , ոչ թէ հինգ օր վերջ պարգևել խոստացած ազատութեանս համար , որ տակաւ ապագայի յոյսերու մէջ ծածկուած անյուսութիւն մի է՝ ըստիս , այլ անոր համար է՝ թէ խոստումն տայ ինձմէ ի զատ ուրիշին չարիք չ'հասցնելու ։

Մայր իմ, մինակ ես չեմ անիրաւութեան զոհ , շատ ընկերներ ունիմ, և ստէպ տեսնուած է որ զօրաւորները իրենքզիրենք իրենց գործոց սխալմունքներէն թագուն պահելու համար , անմեղներէն վրէժ լուծելով կըմսիթարուին ։ Ինչևիցէ , Թող Աստուած դատէ , որ ամէն բան մերկապարանոց է նորա ամենատես աչքի առաջ։

Փառասիրութիւնը մոռցունել տուաւ Վիչէնին իրաւունք և արդարութիւն . նա փառամոլութենէն հարկադրեալ զիս այս տառապանաց մատնեց . այդ անձը խիստ նուաստ է , անմեղ ա- նուն մը տղմով աղտեղելով յաղթութեան մրցանակին հանիլ համարեց , կրած վիշտերս և դատապարտութիւնս ու արիւնանախաւն արցունքներս չեմ կարծեր որ ապարդիւն պիտի մնան ,

կըհաւատամ թէ Աստուած զանոնք կ'արդիւնաւորէ . նաև կըհաւատամ թէ՝ այն բողոքները , զորս մատուցի , պիտի լսուին , վասնզի զրկեալի մը աղիողորմ ձայնն է անիկա , շատ հալածուեցայ . բայց պէտք էր որ հալածուէի ։ Կինը Կատարինէի ամէն խօսքերը իւր սրտին մէջ տպաւորելով հրաժարական բարևը տուաւ և դուրս ելաւ ։

Կատարինէն զոհ էր իւր այժմեան վիճակէն , և երկար ժամանակ բանտի մէջ կըմսիթարէր ինքզինք ։

Հասաւ Կատարինէի ծննդաբերութեան ժամերը և զաւակ մը ծնաւ ու քանի մի օրէն վերջ Կատարինէն հիւանդանալով քահանայ մը խնդրեց խոստովանելու և հաղորդուելու ։ Բարի բանտապահուհին լուր զրկելով գիւղացի քահանայ մը բերել տուաւ . բայց երբ քահանան զԿատարինէն տեսաւ , նախապէս նորա ականջին բան մը ըսաւ խիստ ծածուկ կերպով, որուն պատասխանեց Կատարինէն. զիս մի՛ խռովեր, այդ առաջարկութիւնը ուրիշներն ալ ըրին . բայց ձեռնունայն ետ դարձան ։ Սոյն միջոցին բանտապահ կինն ներս մտաւ , և քահանան բարձր ձայնով ըսաւ անոր. Կատարինէն անհաւատ կըտեսնեմ։ Հետևապէս կարող չեմ որ և է հոգևոր պաշտօն կատարել։ Քահանային ի պատասխանի ըսաւ Կատարինէն . տէր հայր , մի յանդգնիր իմ խիղճս քննելու որ յատակ չունի . հաւատքն անտեսանելի է դու կարող չես զայն տեսնել, որ կարողանաս ճշմարտապէս ճանաչել թէ , ունիմ թէ չունիմ։

— Տիկին , բարկացուցի՞ զձեզ։

— Ո՛չ, տէր հայր , չ'բարկացուցիք , այլ սիրտս վիրաւորեցիք , և հոգիս թունաւորեցիք . կըխնդրեմ որ այս վրդովեալ վիճակիս մէջ մահուանս պատճառ չ'դառնայք . շնորհակալ եմ ձեզմէ , տեղերնիդ դարձէք . ուրիշներու հոգիները կառավարեցէք։

Երբ քահանան դուրս ելաւ , կ'ըսէր ինքներէն Կատարինէն . Յիսուսի հաղորդութեան ճաշակէն , որ երկնային սիրոյ յատիտենական խորհրդանշանն է , քահանան զիս կը զրկէ ոճիր չ'գործելոյս համար ։ Փոխանակ ճշմարտութեան և ուղղութեան հրաւիրելու , ոճրագործութեան կըթելադրէ . թերևս այդ ալ Վիչէնի մէկ լարած դարանը եղած լինի ։ Քահանան կուզէր որ մարդասպանութիւն ընեմ, որ ինձ ներէ , մեղքերս քաւէ և հա-

ղորդէ. ես արդէն դատապարտեալ և հարուածեալ մի եմ։ Եւ արդ իմ աղաղակս, հառաչանքս և արտասուքս ժողովելով երկնաւոր Դատաւորին ամենատես աչքի առաջ կը դնեմ, Աստուած ինքնին թող պաշտպանէ զրկելոյս դասը և հաշտուի հոգւոյս հետ։ Այս նեղ պարագայիս մէջ պէտք է որ միջնորդութիւն հայցեմ այն մօրէն. որու Որդին խաչի վրայ կը բարեխօսէր իւր պահիճներու համար։ Մայր եմ ես. այս քահանայի վրայ անկեղծ բնաւորութեան զգուանք պատճառող շատ մը թերութիւններ տեսնելուս համար համեստ առաքինութիւն չ'ներեց ինձ առնոր չափազանց յարգանք տալու։ Տապանակի նեցուկ կեղծ եկեղեցականը թշուառ հոգի մը կառավարելու անկարող վիճակի մէջ տեսայ ուրեմն իմ հոգւոյս հաշիւները խղճիս միջնորդութեամբ սկսիմ ղեսս ստեղծող Արարչի հետ կարգադրել։

Կատարինէն իւր զաւակ ծնած էր արդէն ի վեշտ և ի ցաւ։ Նա իւր ցաւերէն ազատելէն վերջ կ'ըսէր նորածին զաւակին. սիրասուն զաւակս, ահա ծնար, բայց ո՞ւր տառապանաց բանտի մէջ. մայրական գիրկս բաւական չէ զքեզ պահելու, կը խորհիմ թէ ի՞նչպէս պատսպարեմ. և ի՞նչ կերպով սնուցանեմ քու մատաղ մարմինդ։

Ծիծաղադէմ մանկիկն կը ննջէր իւր մօր գրկաց մէջ, որուն նայելով Կատարինէն տխրամած դէմքով կ'ըսէր, սիրասուն զաւակ, հայրեր կրնան ուրանալ իրենց զաւակները, բայց մայրեր բնաւ ոչ։ Աստուծոյ գթութեանը կը յանձնեմ զքեզ, անմեղ զաւակս, ըսելով, Կատարինէն իւր արտասուալի աչերը դէպ ի երկինք վերցուցնելով կ'ըսէր։ Ո՛վ Տէր, այս զաւակ դու ինձ պարգևեցիր. ես ալ զայն քու խնամոյդ կը յանձնեմ, ուրեմն պաշտպանէ այս անմեղը. հոս օգնական քահանայի ձեռք մը չ'կայ որ երախայն աւազանի մկրտութեամբ Ս. Երրորդութեան անուան նուիրէ, և յիշեցուցնէ ինձ իմ մայրենի պարտականութիւններս. ո՛վ Տէր, պաշտպանէ այս դժբաղդ մանկան. կեանքը, որ իմ սիրոյս առարկան է, և որու համար եթէ հարկ լինի կեանքս կը զոհեմ։

Կատարինէն իւր սրտայուզութենէն յոգնած, թիկնաթոռի մը վրայ կը մրափէր և մերթ ընդ մերթ արթնալով կը հեծկլտար. և այս պահուս բանտապահ կինն ներս մտաւ և հետևեալ խօսքերը ըսաց Կատարինէին.

Գաղտնի խնդիր մը կը յուզէր Կատարինէի սիրտը, և զինք չարաչար կը տանջէր, նա միշտ կը ջանար իւր զգայութիւնը չի-կորսնցունել, և կաշխատէր իմանալ թէ իւր վէրքն ո՞ւր է, և շօշափելով կը գտնէր թէ սրտի կեդրոնէն զարնուած էր. ուստի կ'ըսէր, մայր իմ, այլ ևս առոյգութիւն չ'կայ, կը տառապիմ այն նիւթական և բարոյական ցնցումներու տակ, որ ժամանակէն առաջ մարդ կը մեռցնեն մարմնոյս հետզհետէ կրտկարանայ չ'գիտեմ թէ արշալոյս ի՞նչ կը բերէ իւր հետ ինձ համար. ամէն միջոց, հնարքներ ինձ համար անօգուտ կը թուին այլ ևս։ Բայց չ'գիտեմ թէ Աստուած ի՞նչ պատրաստած է ինձ համար յաւիտենականութեան մէջ։ Մայր իմ, մխիթարութիւն մը ունիմ սրտիս մէջ, այն է թէ՝ մարմնոյս տկարութեան մէջ հոգիս զօրաւոր կը նկատեմ Աստուծոյ խոստացած յոյսերու մէջ։

Բարոյական վէրքերը սուր կերպով կ'ազդէին նորա վատառողջ կազմութեան. որոյ մօտալուտ քայքայումը խիստ դիւրին էր գուշակել. և ինք Կատարինէն ալ զգալով կ'ըսէր իրեն համար, արմատէն մինչև ճիւղերը զօսացեալ ծառի մը վերակենդանութիւն յուսալը միմայն երկնային հրաշքի մը գործ է։ Ճմլուած ողկոյզ մը չկրնար տրտնջալ զինք ճմլողի դէմ։ Թերևս ասոր մէջ ալ Նախախնամութեան մատը եղած լինի։ Քրիստոնէի մը պարտքն է համբերութեամբ տանել քան թէ տրտնջանք. առանց վշտանալու նեղութեանց տանիլն ալ արիասրտութիւն մի է։ Բնութեամբ ծռած կաղնիի ճիւղը աւելի ուժգնապէս վեր կը բարձրանայ. ուժգին լարուած աղեղը իւր նետ աւելի հեռու կրնետէ. վշտալի փորձերը հոգիներուն վեհութիւն կուտան և սրտեր կ'աղնուացունեն. հալածանքի հնոցէն մաքուր հոգիներ կ'ելլեն։

Ամսոյիսի մի ժամանակի մէջ կը խօսիմ, յորում կարծես թէ անորոշ ձայն մը զիս դէպ ի լաւագոյն կեանց ոսկեղէն դուռը կ'աւաջնորդէ, մահուանէ չեմ վախնար, բայց կը ցաւիմ որ անմեղ ոգի մը ալ ինձ հետ կը մեռնի, մեղանչողը ես էի. այս անմեղը ի՞նչ յանցանք ունի։ Սոյն միջոցին հիւանդ Կատարինէի աչքէն քանի մի արտասուաց կաթիլներ վազեցին և սկսաւ անհասկանալի բառերով մրմնջալ, կը գուշակուէր թէ նա իւր հոգին Աստուծոյ հետ հաշտեցունել կ'ուզէր։ Գիշերը այն տխուր

գիշերներէն մինն էր . որ փչող հովը հոգեւարի մը մրմունջներուն կընմանէր . սաստիկ անձրեւ մը պատուհաններու ապակիները կ'ապտակէր . ժամանակ առ ժամանակ մահաշունչ լռութիւն մը թողլով սոյն միջոցին համայն բնութիւն կրտառապէր . ծառերը հողմերէն կըշարժէին . և տրտմապէս իրենց գլուխը կըծռէին , դաշտերու թռչունները մացառներու մէջ իրենց պատսպարան կրփնտրէին ։

Կատարինէ իւր ձգնաժամերուն մէջ կ'ըսէր . այս վայրկենիս մարմինս կրտկարանայ և յոգեկանները կ'սկսին քայքայիլ , արդ ժամ է որ Աստուած հզօրեղապէս ներգործէ հոգիս զօրացնելու . հաւատք երբ մարդուս խղճի անդորը խորշերուն մէջ մուտ կըգտնէ , աշխարհի բոլոր անցաւոր բաներ կըխոնարհին աստուածային սիրոյ առջև . հոգին զմայլելի հրապոյր կըզտնէ երկնային շնորհաց հետ ունեցած հաղորդակցութեամբ ։ Ուրեմն ժամէ որ սիրոս Աստուծոյ նուիրեմ , ըսելով , իւր խօսքերը զինք խնամող կնոջ ուղղելով . և անոր վրայ երկար հայեցուածք մը ձգելով՝ ըսաւ . դու իմ թշուառութեանս մէջ ինձ պահապան հրեշտակ միսիթարիչ ու բարերար մայր մը հանդիսացար , քու երախտիք և իմ երախտապարտութիւնս թող թագուն մնայ այս աշխարհիս վրայ , անշուշտ ծածկագէտն Աստուած տեսաւ քու առիս ըրածդ խնամքներ , և պիտի վարձատրէ զքեզ ։ Մայր իմ , այլ ևս ապրելու յոյս չունիմ . զերբար չպիտի տեսնենք . ուրեմն մնաց քեզ բարերար ձեռքդ , որ վերջին անգամ համբուրելով հոգիս Աստուծոյ յանձնեմ ։ Սոյն միջոցին Կատարինէն ուրիշ ճշմարիտ քահանայ մը իւր քով մնացած տեսնելով՝ ըսաւ , հայր , դու խաղաղութեան հրեշտակ մի ես , որ այս պահուս եկար լսել իմ զղջումներս և խոստովանութիւնս , լսէ՛ խոստովանութիւնս և գիրջս , և յետոյ գլխուս վրայ արտասանէ ներող Աստուծոյ անուամբ թողութեան վճիռ , և գլուխը քահանայի ձեռաց ներքև խոնարհելով բոլոր կենաց մէջ գործած մեղքեր մի առ մի խոստովանեցաւ և արձակումն առնելէն վերջ ըսաւ , տուր որ համբուրեմ այն ձեռքը , որ վերջին անգամ գլխուս վրայ բարձրացաւ ի նշան Աստուծոյ ներողութեան ինձ պէս մեղաւորի մը ։ Այն երջանկութիւն պատճառող յանկարծական արձակման օրհնութիւնը իբրև երկնային ցող կիջնէր նորա վշտաբեկ հոգւոյն վրայ , զոր անդութ դաւաճանութիւնը կարեւեր վիրաւորած էր ։

Մարդկանց գործարանաց կազմակերպութեան մէջ երբեմն այնպիսի զարմանալի ֆիզեղական փոփոխութիւններ տեղի կ'ունենան որոց դէմ բժշկական պիտութիւնք պահ մը կրշփոթին ։ Բժշկաց կողմէ անբուժելի կարծուած շատ մը հիւանդներ տեսնուած են , որ յանկարծ մահուան կապանքները խզելով առողջացած են ։ Բարեմիտները այս տեսակներուն հրաշք ապրեցաւ կ'ըսեն , իսկ գիտունները բնական դէպքի հետեւանք կըհամարին . և այս հրաշախառն դիպուած Ճիշտ Կատարինէին հանդիպեցաւ ։

Կատարինէն իբրև երկնային հրաշք մը դերեզմանէն ետ դարձաւ . և կ'ըսէր իւր պաշտպան բանտապահ կնոջ , մայր իմ . իմ տխուր յուսահատ և միանգամայն հոգեվարք վիճակիս մէջ ձեր ինձ ըրած խնամոց և աշխատութեանց ու վերհանձն պաշտպանութեան մասին իմ երախտագիտութիւնս կը յայտնեմ ձեզ , և ի սրտէ շնորհակալ եմ . դուք ձեր մայրական գթութեամբ և խնամօք իմ անցեալ բոլոր վիշտ և տառապանքներս ինձ մոռցուցել տուիք ։ Եթէ հաճի երկինք ասկէ վերջ ինձ երջանիկ օր մը տալ , այն ալ ձեր խնամոց արդիւնք պիտի համարուի . կեանքս ձեզ կըպարտիմ , մայր իմ . վասնզի եթէ դուք չօգնէիք և չխնամէիք զիս , պիտի կորսնցուցէի իմ կենացս հետ նաև այս նորածին անմեղ զաւակիս կեանքը ։

Կ'ըսէր բարի կինը Կատարինէին . Տիկին , ձեր բարեսրտութիւն կըշափազանցէ իմ անցելոյն մէջ ձեզ ըրածս ջնջին ծառայութեան մասին . որնոր շնորհք մը չէր . այլ կարեկցութեան պարտք մի էր զոր յօժարութեամբ կատարեցի ։

Զաւակս , խիստ շատ սիրեցի զձեզ . վասնզի ձեր սիրտը ձեր հոգւոյն պէս բարի է և աղնիւ . մի յուսահատիք . վշտացեալներու ամենէն մեծ բժիշկ , յոյսն է . եթէ չլիներ յոյսն , վիշտերը անթիւ կոտորածներ պիտի ընէին ։

Յոյսն այն լաստափայտն է , որ ամէն նաւաբեկեալ հոգիները անոր ապաւինելով աղատութիւն ձեռք բերելու մեծ հաւատք կունենան . յոյսն մարդկանց սրտի մեծ հարստութիւնն է ։ Ուրեմն , զաւակս , յուսա և համբերէ . անմեղներու պաշտպան Աստուած օր մը քու անմեղութիւնդ երևան կըհանէ և զքեզ կազատէ ։

— Մայր իմ , շնորհակալ եմ ձեր բարի խրատներէն . որք անջնջելի կերպով տպաւորեցան սրտիս վրայ ։

ԱՐՍԼԱՆ ԵՒ ԻՒՐ ԸՆԿԵՐՔ

Այն պահուն յորում պայծառ արեգական ներքև բնութիւն կը զուարթանար , և ամէն բան բնութեան հետ կը խայտար , Արսլան իւր առած մահացու վէրքէն նոր ապաքինած , քաղաքէն դուրս յորդահոս գետի գալարաւէտ եզերք յամրաքայլ շրջան կը կատարէր անծանօթ կերպով :

Արսլան որչափ որ իւր մարմնոյ վէրքէն բժշկուած էր , սակայն նորա սրտի մէջ ուրիշ երկու բարոյական վէրքեր կային , որք սաստիկ կերպով զինք կը տանջէին ու կը նեղէին :

Նա որչափ որ կ'ուզէր իւր միտք վսեմութեամբ ընդլայնել , այնչափ ալ արգար ցասումը զինք կը նեղէր . կը յուզէր , և առաջ կը մղէր ճշմարտութեան պաշտպան կանգնելու , և ստութեան քող պատռելու , ու անոր մեքենայութիւնները խայտառակելու :

Կ'ըսէր նա ինքնիրեն , ամէն բան իւր սահմանն ունի , համբերութիւնն ալ իւր սահմանն ունի , բայց չափազանց համբերութիւնն զմարդն անզգայներու շարքի մէջ կը դասէ : Ծայրահեղութիւնները չափաւորել պէտք է , որպէսզի կարողանամք կամքերը բերել միջասահմանին հասցունել , և եթէ հնար լինի , անմեղները փրկել : Ես մինակ չեմ , ազնուասիրտ և ուղղադատ ընկերներ ունիմ ինձ օգնելու պատրաստ : Մեր խնդիրը պարզ է և ամենևին պատրուակ չվերցունէր . ամէն բան յայտնի է , ես որք և անվնաս տղայ մը եմ . ի՞նչ մեղանչած էի Յովսէփ իշխանի տան դէմ . ո՞ր յանցանացս համար էր այսքան անձնական նիւթական և բարոյական պատիժ . զոր իբրև մահուան թոյն խմեցուցին ինձ : Վատ Վիչէն նշանածս անպատուեց . մայրս կորսնցուց . զիս սպանելու հրահանգ և հրաման տուաւ . այլ խնդիր է , թէ Նախախնամութիւն իմ կեանքս պահել կուզէր , և պահպանեց : Մեր բոլոր ինչք և ստացուածք , կահկարասիք և տուն գրաւեցին . խեղճ հօրաքոյրս ժառանգութենէ զրկեցին : Այս ամէն վատութեանց դէմ համբերելը անզգայութիւն է : Ուրեմն արդարութեան դէմ մեղապարտ չդտնուելու համար գործել պէտք է չափաւոր սահմանի մէջ : Սակայն մինակ ի՞նչ կրնամ

ընել այս պարագայիս մէջ պէտք է գնալ արդարութեան դատին պաշտպան , իմ քաջ ընկերներս փնտրել և գտնել : Երթամ հաւատարիմ բարեկամներս և ընկերներս Վահան Արշակ Տիգրան և Պօղոս ինձ զօրաւիր կանչեմ . և ամէն բան անոնց յայտնեմ , ու գործի ձեռնարկեմք , Աստուծոյ օգնութիւն մեզ պաշտպան խնդրելով : Պտղատու ծառերը զօրացնելու համար անոնց փաթթուած և նոցա սնունդ առնելու զօրութիւն արգելող բաղեղները կտրել և մաքրել կարևոր է :

Միւս օրը բարձրահասակ կաղնի ծառի մը տակ դումարուած էին Արսլան և իւր չորս ընկերները . որոց հետ սկսաւ խօսիլ հետևեալ եղանակաւ :

Բարեկամներ , պէտք չէ ծածկել ձեզմէ այն խնդիրները , որ մինչև ցարդ խիստ զգուշութեամբ սրտիս գաղտնեաց մէջ պահեցի , բայց այժմ անոնք ձեզ յայտնելու տկար հարկի տակ կը գտնուիմ : Ի վերայ այսր ամենայնի , նորէն կը պարտաւորիմ խիստ զգուշութեամբ խօսիլ այն գաղտնեաց վրայ , որոց խորհրդաւոր տարերքը , հնարագիտութիւնն տակաւին մթութեան մէջ կը պահէ . և զոր ժամանակն պիտի մեզ յայտնէ : Բարեկամներս , իմ առաջարկութիւնս որ ձեզ պիտի ընեմ և ձեզմով կը յուսամ յաջողութեան հանիլը նուիրական դատի մը կը վերաբերի , որ շատ խորհելու պէտք չ'կայ . վասնզի արիութեան կը պատկանի , քան թէ խորհրդեան : Այս պարագայիս մէջ եթէ հաճիք ինձ ընկերանալ , մենք պէտք է որ մեր յոյս Աստուծոյ արդարութեան վրայ հիմնելով , մեր խղճի գիտակցութեան թելադրութեան հետևինք , և չ'գիտեմ թէ ձեր կամք պիտի համաձայնի՞ իմ առաջարկութեանս :

— Այն միջոցին Վահան , որ խիստ ճշգութեամբ իւր անուան պատկեր կը կրէր , խօսքի թելն առնելով ըսաւ : Պարոն Արսլան հետաքրքրութիւն զօրաւոր է յանդգնութիւն կուտայ մարդուս ձկտիլ և լսել այն բաներ . զորս թերևս ներելի չլինի իրեն տեղեկանալ . արդեօք ներելի՞ է գոնէ աղօտ կերպով մը լոյս առնել այն բաներու վրայօք որք տակաւին ձեր սրտի և խորհրդեան գաղտնեաց մէջ պահուած կը մնան մեզմէ խսպառ անծանօթ :

— Որուն ի պատասխանի ըսաւ Արսլան , Պարո՛ն , չեմ կրնար ամէն բան խօսիլ առայժմ , միայն այս չափ կը յայտնեմ թէ ի՞նչ

կընշանակէ ձեր բարեկամ Արսլանի նշանածը բռնի առեւանկել. Արսլանի մայրն անհետ ընել. Արսլանի կենաց դաւաճանութիւն այն կեանքի համար կ'ըսեմ որ ձեր շնորհիւ ազատեցաւ. և յիշել կուտամ ձեր իմաստուն մտայ այն ոլորմելի կինը, որ ինձ գաղտնիք մը յայտնելու համար, անիկա գետամոյն ընել տուին. ասոնք արդարութեան դէմ այն տեսակ ոճիրներ են, որոնց Աստուած չներէր։

Վիլէն այս աՀն հնարքները նուրբ հնարագիտութեան տակ գործելէ և գործել տալէն վերջ այժմամէն բան պարզմտութեան տակ ծածկելով սուրբ կը ձեւանայ. եթէ այս ոճիրները խնդիր ընեմք և քաղաքական օրինաց յանձնեմք. և այս մասին խիստ յայտնի է նորա ձեռք առնելիք միջոցները իւր հզօր ազդեցութեամբ և հարստութեամբ. և հնարքներ պիտի հնարէ զինք արդարացնելու և զմեզ անկանգնելի կերպով կործանելու։

Պարոններ, ես այդ ընտանեաց վրայ խիստ շատ բաներ գիտեմ սակայն իմ կեանքս վտանգի տակ չ'դնելէն առաջ կարող չեմ յայտնել. այդ չարասիրտները հալածելով զոհ չեն լինիր. այլ մահուան դարաններ և որոգայթներ ևս կը լարեն, ինչպէս որ ձեզ յայտնի է. տիկին Եղիսաբէթի սուրբ պատպարան եղող ողորմելի հիւանդայ համար պատրաստուած հիւանդանոցի հաւատարմութիւնն անգամ կ'ուզէին չարաչար գործածել։ Յիշեցէք մօրս վիճակը. այդ վատութեան որդիներ ժէզուիթներու չափ հնարագէտ մարդիկ ունին իրենց ձեռքի տակ. որք սուր թափանցութիւն մը ունին լրտեսելու մէջ. այդ մարդիկ զօրաւոր միջոցներ ունին. սրտի ու խղճի դաղտնեաց խորերը թափանցելու և դաղտնիքները քաղելու, իրենց կրից և փառաց համար գործածելու. անոնց լեզուները շուայլ են վատերու պէս մատնելու, ինչպէս որ նոցա աչքը հետամուտ պիտի լինի մեր ընթացք քննելու։

— Արշակ Արսլանի խօսքն ընդհատելով ըսաւ, բարեկամ, ըսածներդ ստոյգ են. սակայն ես եթէ փոքր ի շատէ կը ճանաչեմ զանոնք, նորա մեր առջևը անպարտելի ախոյան մը չեն, զի իրենց մեծաքանութեան հետ նաև խիստ երկչոտ ոգի մը կը կրեն իրենց ներսը, և սակայն իրենց մտաց իրենց կամաց հակառակ ուրիշ կողմ կը սահի, դու բարեկամ, մեր վրայ վստահութիւն ունեցիր. և բնաւ մտքդ թող չանցնի թէ երկչոտութիւն կարգելէ զմեզ քեզ ընկերանալէ, քեզ հետ խորհելէ, և գործելէ։ Մենք ևս քեզ պէս (ինչպէս որ գիտես) վտանգներու մէջ ոչ չափէն աւելի կը յուզուիմք և ոչ կը վախնամք և ոչ կը շփոթիմք, պընձէ սիրտ կը կրեմք մեր երկաթեայ մարմնոյ մէջ։ Գիտէք թէ երիտասարդական հաճոյքները կարող չեն մեր խորհրդածութիւնները խանգարել մենք միշտ մեր խելքի և խօսքերու տէրն եմք և մեր դաշնց հաւատարիմ։

— Ա՛ըսէր Արսլան, գործ մը իւր նպատակին հասցունելու համար ուժէն աւելի յարատև իմաստուն հնարքներ պէտք է գործածել։

— Այո, ըսաւ Արշակ, գիտեմք իմաստութեամբ շարժիլ մեր մեծութեան նշանները չ'կորսնցունելու համար. գիտեմք չափաւորութեան սահմանի մէջ գործել խոհեմութեան արատ չ'բերելու համար։

Գիտեմք ուղղութեան սահման պահել արդարութեան զայրոյթ մեր վրայ չ'գրգռելու համար, գիտեմք ժամանակ ու տեղը. միջոցն ու պատեհութիւն։ Վարժ եմք, թէ խիզախելու և թէ յետս դառնալու և ծածկուելու մէջ. վերջապէս գիտեմք ի կիր առնուլ զժամանակը։ Ուղիղ բնազդումներ կան, որք անենգ հոգիներ հրահանգելով կը մղեն դէպ ի անմեղի իրաւանց պաշտպանութեանը. և մենք այսօր այդ կոչման հրաւիրուած եմք. եթէ մենք յաջողիմք չարագործները պատժել. անշուշտ ամէն բարի և պարկեշտ անձանց անտեսանելի բարերարները պիտի հանդիսանամք։ Բարեկամ, մարդիկ իրենց մանկութեան մէջ տգիտութենէն հարկադրեալ շատ մը սխալներ կը գործեն. և ծերութեան մէջ տկարութենէն հարկադրեալ գործել ետ կը մնան. միայն երիտասարդութեան ժամերն են, որք կրնան օգտակար լինիլ մէջ ու ամէն մարդկանց. և մենք այժմ այն ժամերու մէջ կը գտնուիմք. ուրեմն մեր ժամանակն անցին է. ժան գնոյ չ'ծախենք։

Ժամեր կան, որոյ մէջ իմաստութիւն կը տկարանայ սիրտը թշուառութեանց դէմ զինելու. բայց որովհետև դատը արդարութեան և անոր վրէժխնդրութեան կը վերաբերի, արդարութիւն միշտ կեանքէն նախագաս և վերագաս է, արդարութեան դատի

համար կեանք տալը երջանիկ և յարատև կեանք մը գտնել ըսել է. այսպէս սորվեցոյց մեզ Գողգոթայի զոհը։

Արշակի վրայ իւր աղատախօսութեան հետ լծորդուած կը տեսնուէր նաև նորա ազնիւ զգայումը և խոհական ընթացք. կ'ըսէր Արշակ Արսլանին, եղբայր, չափէն աւելի մի՛ յուզուիր. և ոչ ալ վշտացիր այս ձախորդ դէպքերու վրայ. այս աշխարհի մէջ չ'կայ մարդ մը որ իւր վիշտ և սրտի ցաւն չունենայ. մարդկանց մէջ ամենէն զօրաւոր իմաստուն և առաքինին Գողգոթայի զոհն էր, որ ամենէն մեծ վիշտերը և ցաւերը կրեց, եղբայրներ, ասկէ վերջ մենք խիստ տաժանելի և վշտալի փորձերէ պիտի անցնինք. շարունակ խղճի և պատուոյ պայքարներու և վտանգաւոր կացութեան մէջ պիտի լինինք, դժնդակ հետևանաց վրայ մտատանջութեամբ պիտի խորհինք, թէ արդեօք դիւցազն եմք, թէ յաղթահարեալ, դէպ ի փառք կերթամք թէ դէպ ի պարտութիւն։

Այս սրտայուզութիւն տեսակ մը պատիժ պիտի դառնայ մեզ համար մինչև որ մեր նպատակին հասնինք։

Արշակ իւր խօսքերը վերջացուցեալէն յետոյ, ըսաւ Արսլանուրեմն մեր գործ պիտի լինի չափաւոր սահմանի մէջ նախնամութեան գործիք լինիլ վրէժ լուծելու, եթէ Աստուած հաճի յաջողութիւն և յաղթութիւն մեր կողմ դարձուցանել։

Այս վայրկենիս չեմ համարձակիր ձեզ յայտնել թէ այսօր ի՞նչ պիտի ընեմք վասնզի անյայտ ապագայի քող վերցուցեալով, նորա տակը բան մը չպիտի գտնեմք. ուրեմն պատրաստ մնալ և Աստուծոյ արդար ձայնին սպասել պէտք է՝ ըսելով մեկնեցան։

ՅՈՎՍԷՓ ԻՇԽԱՆԻ ՏԱՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ

Գիշեր ամպած էր և խաւար. բնութիւն իւր քողի տակ առած էր ամէն բան. բոլոր վաստակաբեկ մարմինները, յոգնած միտքերը. և թախծեալ սրտերը, քնոյ ազգայութեան մէջ կը-

նիրհէին։ Լռութիւն կը տիրէր քաղաքի ամէն կողմը։ Մինչ ամէն տուն իւր խաղաղ հանգստութիւն կը վայելէր. անոնց մէջէն Յովսէփ իշխանի տան մէջ աղէկտուր անցքեր կանցնէին։ Գիշերուան ժամ ութն էր, ըստ ասիացւոց։ Յանկարծակի մեծ գղրդումներով և շառաչիւններով Յովսէփ իշխանի տան դուռները և պատուհանները կը խորտակէին, զինեալ և ծպտեալ սեւ գիմակաւոր մարդիկ ներս կը մտնէին, ու իշխանի տուն կողոպտելու և զՎիչէն իշխանը բռնի հետերնին տանելու։

Իշխանն և իրենները, այս անակնկալ դէպքէն ահաբեկած, ինչ ընելիքնին չէին գիտեր։ Այս աղմուկի մէջ, միայն Ստեփանէն էր սրտոտ որ անմիջապէս անկողնէն ելլելով հասաւ իւր զէնքերը առաւ և սկսաւ ասպատակաց դիմադրել այն քաջասրտութեամբ ինչպէս որ կ'ընեն ամէն հաւատարիմ ծառաները իրենց տիրոջ պաշտպանութեան համար։ Այս պահուս, մեծ իշխանը ինքզինք կը թաղուցանէր նեղ և խիստ փոքր սենեկի մը մէջ։ Իշխանուհին սանդուղներէն վար սահելով կերթար խոհանոցի մէկ անկիւն կը պահուէր խոհարար կնոջ հետ. Կատարինէն արդէն բացակայ էր նա բանտի մէկ խոռոչ մտած իւր դժբաղդ վիճակի վրայ կ'ողբար։ Վիչէն իշխան ուր ննջարանի մէջ թիկնաթոռի մը վրայ ընկած և ինքզինք կորսնցուցած կիսամեռ վիճակի մը մէջ անշարժ կը մնար։ Մինակ Ստեփանէն էր որ գնտակ կը փոխանակէր եկողներու դէմ առ դէմ աղէտն անհետացնելու ճգամբ, բայց դժբաղդաբար չէր յաջողէր։

Կ'ըսէր գիմակաւորի մէկը Ստեփանէին, բարեկամ, հանդարտ կեցիր և անձնատուր եղիր. եթէ չ'լսես և մեր անողոքելի զօրութեան դէմ ի վէգ գալէ յետոյ չ'կասիս, հաստատապէս գիտցիր թէ յամառ կեանքդ մեծ աղէտով մը պիտի թունաւորես։ Համոզում ունեցիր թէ, այսօր և այս ժամուս, արիութիւնն է մեր անվեհեր ընկերն, որ ամէն հովերու և մրրիկներու դէմ պիտի խիզախէ, և քու զէնքերդ տապալելով պիտի երթայ իւր նպատակին հասնի՝ հովը չորաբեկ տերևները վանելէ չկասիր. մի հարկադրեր մեզ յանդգնութեանդ չափը տալու, դէմդ կեցողները արդէն վտանգ կը փնտրեն անոր դէմ խիզախելու համար։ Ստեփանէն այս պահուս, թէ և ինք զօրաւոր, բայց միայն մնալուն համար սրտայուզութեան սարսուռ մը կ'զգար. և հետզհետէ վրան յուսահատութիւն մը կը տիրէր։

Դիմակաւորի մէկը իւր զէնք դէպ ի Վիչէն շարժելով կ'ըսէր. վատ մարդ, ինչպէս ժպրհեցար անմեղ հոգի մը անպատուութեան և թշուառութեան ծանր լուծի մը տակ խորտակել պիտի ընդունիս այս վայրկենիս մեր ձեռքէն արժանաւոր պատիժդ։ Որուն ի պատասխանի կ'ըսէր Վիչէն տաղտամութեամբ և մեղմ ձայնով մը։ Անծանօթ, իմաստութեամբ շարժէ լեզուդ, չկատցած և չբննածդ բանին շուտով վճիռ մի տար։ Անծանօթները սկսած էին տան մէջի ամենէն ծանրագին բաները ժողովել։

Այս կապտա կապուտ եղած ժամուն իւրովի կ'ըսէր Վիչէն, չեմ վշտանար հարստութեանս, փառքերուս, մեծութեանս, և աստիճանիս կորստեան վրայ, ամենքն ալ բաղդի և դէպքի բարիքներն էին, եկան և ահա կ'երթան։ Միայն կը ցաւիմ պատուոյս վրայ, որ ամեն բաներէն նախադաս կը համարէի. և զայն որ և է բանի հետ չէի փոխեր։ Ահա այն անդին դանձս է. որ այս վայրկենիս տիղմերու մէջ կը տեսնեմ, վաղն ալ հրապարակի վրայ խուժանի ոտից կոխան պիտի լինի։

Բաղդին անիւը դարձաւ, բաղդն այսօր մեզ դէմ կը կռուի, որքան մրցիմք, այնքան մեր պատուոյ արատը պիտի աւելնայ, և հարուածները շատնայ. ա՜հ բաղդ, դու փոփոխամիտ սիրուհի մը ես. քեզ շատ չվստահացուիր։ Սակայն ցաւ է յայտնել թէ մարդիկ թշուառութեան մատնուելէն վերջ կ'զգան, քու ըրածդ անիրաւութեան ինչ և է, այս վայրկենիս զլուխ խոնարհելէ ի զատ ուրիշ միջոց չ'կայ ըսելով, ինքզինք յանձնեց դիմակաւորներուն։ Ստեփանէն երբ վերջին շարժումը ևս կ'ընէր զՎիչէն պաշտպանելու և չ'յանձնելու. անյաջող գտնուեցաւ, և ծանր հարուած մը ընդունեց։ Դիմակաւորները զՎիչէն և Ստեփանէի վերաւորեալ դիակը ի միասին առին կ'երթային։ Սանդուխէն վար իջած ժամանակ դիմակաւորներէն մին հեղնութեամբ ըսաւ Վիչէնին. Պարոն, աղքատութիւն ասկէ վերջ հոգոբեղապէս պիտի պաշտպանէ ձեր տունը գողերու գողութեան և ասպատակներու ասպատակութեան դէմ։ Խիստ տաժանելի էր Վիչէնի սոյն ուղևորութիւն և նախատանօք լի։

Գիշեր ժամանակ Վիչէն և անծանօթ մարդիկ ի միասին կերթային անծանօթ և լեռնային ճանապարհներէն։ Հարցուց Վիչէն թէ՝ զինք ո՞ւր պիտի տանին, որուն ի պատասխանի ըսաւ

իրենցմէ մին, քեզ չ'վերաբերող հարցումներ մի ըներ. որպէս զի չ'հարկադրուիմք գործնական փորձով հետաքրքիր գտուողութեանդ չափ տալ. հնազանդէ և քալէ։ Պէտք է յիշել թէ՝ Ստեփանէն և Վիչէն ի միասին չէին. այլ՝ այլևայլ կողմերու բաժնուեցան. Վիչէն ինքզինք յանկարծակի լեռան մը այրի մէջ գտաւ։

ՎԻՉԷՆ ԼԵՌԱՆ ԱՅՐԻ ՄԸ ՄԷՋ

Բնութիւն տրտում և տխուր, օդն ալ անձրևոտ էր. ամպերը արագ կերպով միմանց հետ շփուելով սոսկալի կերպով կ'որոտային և էլեքդրական կայծեր կը հոսեին յահ և յերկիւղ շատերուն. խիստ բնական էր թէ՝ մէն մի մարդ իւր մասնաւոր բաժինն ունէր այս տխուր ժամերու մէջ. սոյն տխուր ժամերը մէկ մէկ տարի կը համարուէին այն խեղճ վիճակ ունեցող մարդոյն համար, որ իբրև գերի լեռան մէկ կողմը մացառախիտ անտառի մը այրերու միջոն մէկ խորշի մէջ փակուած իւր մահուան ժամուն կ'սպասէր։ Այս տարաբաղդ մարդը Վիչէն իշխանն էր, որ կ'ըսէր ինքնիրէն այս՝ բոպէիս բովանդակ մարդկութեան մէջ ամենէն թշուառ ես եմ այս գերութեանս շղթայներու մէջ։

Աստուած իմ, այս ի՞նչ դժբաղդութիւն է. խիստ վտանգաւոր դիրքի մէջ կը գտնուիմ։ Վիչէն գերի՞ լինի խումբ մը վայրենի աւազակաց ձեռք. անակնկալ և խիստ սարսռելի դէպք մի է։ Եւ ի՞նչ կընշանակէ այս հրամանատար իշխանի մը ստրուկներու ձեռքի մէջ գերի լինիլ, և անոնցմէ հրամայուիլ, ու անոնց կամակատար ծառայ լինելու չափ նուաստանալ։ Ո՞ւր են արդեօք մեր քաջազունները, ո՞ւր մնաց իմ ախոյանս Ստեփանէն, և ի՞նչու չգար ասոնց բռնութիւնը խորտակելու և զիս ազատելու։

Ա՜հ, տէր Աստուած, եթէ անգամմը այս ծուղակէն ազատուիմ, իմ ընելիքներս խիստ լաւ գիտեմ կարգադրել։ Այս ի՞նչ չարադուշակ ժամ է որու մէջ ես հոգեվարի մը պէս կը տառապիմ։ Արդէն բնազդական երկիւղներով լի սարսուռներս մէկ

մէկ չարագուշակներ էին այս յուսակտուր վիճակիս մասնուելու։ Գիտեմ թէ ի՞նչ բանի հետևանքն է որ կը քաշեմ։ Ա՞հ անիծեալ կրից մղում, զիս մինչև գերութեան շղթային բերիր հասուցիր։ Աստուած իմ, իմ անցեալս մոռացութեան տուր, զիս մինչև յուսահատութեան դուռը մի՛ հասցներ։ Կրխոստանամ այս վայրկենէս վտանգէս ազատելէն վերջ այլ ևս չանսալ կրից չափազանցութեան ձայնին, և անմեղներու վրայ զրպարտութեան մեղք չ'գնել։ Կիրքերը զիս բանականութեան սահմանէն հանելով մղեցին բերին այս վայրենի գազանաց բոյներու մէջ զետեղեցին։ Տկարամիտ Վիչէն, մինչև երբ պիտի քաշես սխալանացդ հետևանք եղող պատիժները, բնազդումներ կան, որք հոգիները կը զրգռեն անխորհուրդ եռանդով, և միտքեր կը խզդեն անասնական սնոտի վայելքներու մէջ. որու արբեցութեան հետևանք կը-ելնի պատիժ, բանտ, գերութիւն, կախաղան, և մահ։ Անտարակոյս գիտեմ թէ՝ այս գազանաբնակ այրերու միջն մէջ պահուած է իմ մահս. և քիչ ժամանակէն երևան պիտի ելլէ ու զիս պիտի լափէ անյայտ գերեզման մը պիտի ունենամ եթէ մարմինս գիշակեր ընել չ'տան։ Տէր Աստուած, խնայէ՛ իմ թշուառ կենացս և փրկէ՛ զիս այս վտանգէս։

— Դիմակաւորի մէկն Վիչէնին մօտենալով ըսաւ. դու վատ մարդ ես։

— Վիչէն նոցա մեծին դիմելով գանգատ կ'ընէր երեն վատ ըսելոյն համար։

— Ըսաւ մեծն, դու մի՛ լսեր այդ լերանցի ռամիկ մարդու խօսքերը զի անոր սովորութիւնն է միշտ պատշաճից օրինաց հակառակ՝ ամէն բառը իրեն իսկական նշանակութեամբ արտասանել։ Վիչէն սկսաւ քթի տակէն մրմռալ։

— Ուրիշ մը ևս իրեն մօտենալով հեգնութեամբ ըսաւ, Պարոն, կարծեմ թէ դուք ձեր անցեալ գործերու յիշատակներով կը մխիթարէք զձեզ այնպէս չէ՞։ Վիչէն չ'պատասխանեց. բայց կ'ըսէր ինքնին. այս մարդիկ սոյն խօսքերով իմ անցեալս յիշել կ'ուզեն, զոր ես միշտ զգուշութեամբ և խնամօք մոռացութեան քողի տակ ծածկել կուզեմ. այժմ կ'զգամ թէ խիստ անհաճոյ անցեալ մը ունեցած եմ, և զոր բնաւ լսել չեմ՝ ուզեր. զղուելի էր իմ այն պժգալի կեանքս. յորս մղեց զիս անխորհուրդ կեր-

պով իմ մանկական խակութիւնս։ Վերջապէս յուսահատիլ պէտք չէ, կարելի եղածին չափ խոհեմութիւն ձեռք առնելու է, բազդի հարուածը դարմանելու համար նեղ պարագաներու մատնուած մարդիկ պէտք է որ զիջանին իրենց անհաշտ թշնամիին անգամ օգնութիւն և պաշտպանութիւն պաղատելու։ Ուրեմն զիջումն ընելէն ի զատ ուրիշ միջոց չ'կայ ըսելով, իւր մէկ հակառակորդէն համակրական մարդասիրութիւն մը ակնկալած ժամանակ, ըսաւ նա՝ Պարոն, կը ցաւիմ որ ձեզ չ'պիտի կրնամ նկատել իբրև մեր անկեղծ բարեկամներէն մինն, որոյ հետ միշտ բարեկամութեամբ և անկեղծութեամբ վարուելէն մեծ հաճոյք կ'զգամ։ Դժուար էր Վիչէնին իւր սեպ գլուխ խոնարհեցուցեալ ասոնց ազդեցութեան տակը որու ճնշումը ուժգնապէս կզգար. սակայն ազատելու համար ալ խոնարհելէ ի զատ ուրիշ միջոց չկար։ Մէկ մը իրեն մահուան սպառնալիք ըրած ժամանակ, ըսաւ Վիչէն, Պարոն, չեմ յուսար թէ դուք ձեր ըսած անգթական սպանութիւնը իմ վրաս ի գործ դնելու կամք ունենայք վասնզի բնութեան Արարիչն մարդասիրութեան հակառակ այս տեսակ ոճիր մը ի գործ դնելու անզգայ սիրտ մը տուած չէ ձեզ։ Ըսաւ ուրիշ մը, շատ ճշմարիտ խօսեցար, Վիչէն, զի ոճրագործութեան սիրտը միայն քեզ յատուկ է և քեզ համար առաքինութիւն. իսկ ուրիշներու համար մեղք և յանցանք։ Այս պահուս Վիչէնի աչքէն քանի մը արտասուաց կաթիլներ վար սահեցան։

ԿԱՏԱՐԻՆԷՆ ԲԱՆՏԷՆ Ի ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Կատարինէն չորս երկար ամիսներէն աւելի բանտի մէջ մերթ սրտայուզութեամբ վշտով և հարուածներով, մերթ ծննդաբերութեան տառապանօք, մերթ մերձ ի մահ հիւանդութեամբ անցնելէն վերջ. օր մը բանտապահ կնոջմէն խնդրեց որ, յիշեալ կնոջ հետ բանտէն դուրս ելլէն. և անտառի մէջ գտնուող փոքր աղբիւրի գլուխ գնալով, քիչ մը մաքուր օդ առնեն և

զուարճանան։ Վասնզի բանտապահ կինն միշտ կը գովէր անտառի զեղեցկութիւն և աղբիւրի բարեհամ ջուրը։ Բանտապահ կինը, որ մեծ վստահութիւն ունէր Կատարինէի հաւատարմութեան վրայ, բնաւ չ'կասկածեցաւ, և յօժարութեամբ թոյլատրեց գնալ միայնակ և երկու ժամէն վերադառնալ։ Կատարինէն իւր ընդունած հրամանին և հրահանգին համեմատ իւր նորածին մանկիկը գիրկն առած դուրս ելլելով, գնաց պտոյտ մը կատարեց. յետոյ վար իջաւ աղբիւրի գլուխ հանգիստ առնելու և պաղ ջուր մը խմելու մտօք։ Կատարինէի համար այն ժամը իւր կենաց մէջ վայելած ամէն ժամերէն աւելի իրեն երջանկութիւն տուողն եղաւ։ Հոն կ'ըսէր Կատարինէն, ինչպէս որ Աստուած վշտաբեկ հոգիներուն դերագոյն բժիշկն է, այսպէս բնութեան տեսարան վերաւորեալ և խուովեալ սրտերու վերանորոգիչ զօրաւոր սպեղանիքն է. երկար հանգստութիւն մը վայելելէն վերջ, հասաւ իւր վերադառնալու պայմանաժամը։ Մինչ նա անտառէն դէպի բանտ իւր ուղևորութիւնը կը շարունակէր, և ահա յանկարծակի խիտ ծառերու մէջէն երեք անծանօթ մարդիկ իրենց երեսները ծածկոյթի մը տակ պահած գալով զԿատարինէն շրջապատեցին, և զինք առնել տանել կ'ուզէին։ Կատարինէն սաստիկ խուռված պահ մը ինքզինք կորսնցունելով կը հարցնէր ինքն իրեն, տէր Աստուած ո՞ր եմ։ Կ'ըսէր զինք պաշարողներէն մինն խրոխտ ձայնով մը, տիկին, զուակդ ինձ տուր։ Կատարինէն ձեռք դէպ ի երկինք տարածելով կ'ըսէր, պահապան Աստուած գթա և պաշտպանէ այս վայրկենիս զիս և անմեղ զուակս, և իւր վրայ յարձակողներուն դառնալով կ'ըսէր. պարոն անծանօթներ, կը պաղատիմ յանուն Աստուծոյ, մանկանս խնայեցէք, զուակս մի առնէք. գլուխս ամենայօժար սրտով կը յանձնեմ ձեր ոտից և սրոյն առջև, զիս մեռցուցէք, անկէ վերջ իմ զուակս տարէք բանտի դուռ դրէք, թող բանտապահուհին առնէ և խնամէ. պարոն, մի մեղադրէք մայրերը իրենց զուակները սիրելոյն համար, բնութիւն ինք տուած է ամէն մայրերուն այդ բնական սէրը, տեսէք թէ հալածական աղուէսը. վայրենի կատաղար կատուն անգամ իրենց կորիւնները կը սիրեն. իբրև շնորհ կը խնդրեմ ձեզմէ որ զիս աղատ թողուք։ Ես արդէն հարուածեալ և վիրաւորեալ մի եմ. և այս անտառի մէջ մոլորեալ ոչխարի

մը պէս կը թափառիմ. ձեզ առիթ կուտամ ողորմածասիրութեան և մարդասիրութեան բարի գործ մը գործելու. մանաւանդ թէ տկար արարած կին մի եմ. ձեր վեհանձնութեան կ'ապաւինիմ. առաջնորդեցէք ինձ մինչև բանտի դուռը. ուր որ միշտ մնալու դատապարտեալ եմ, և դուք հրեշտակի խաղաղութեամբ գնացէք իմ երախտագիտութիւնս և շնորհակալութիւնս ձեզ հետ տանելով։

— Ըստ անծանօթներէն մինն. ձեր յանցանքն ի՞նչ է որ բանտարկուած էք, տիկին։

— Պարոն, որովհետև ես հետաքրքիր չելայ ձեր ով լինելն իմանալու կ'աղաչեմ որ չ'դժկամակիք երբ ես իմ յանցանացս դաղտնիք ինձ վերապահել ուզեմ։

— Տիկին, ձեր բանտարկութեան պատճառ, որ դուք դաղտնիք մը համարելով ձեզ վերապահել կ'ուզէք, և չէք կամիր մեզ յայտնել. այդ դաղտնիքը ամէն մարդ դիտէ խիստ պարզ կերպով. ուրեմն ի՞նչ հարկ է զայն մեզմէ թագուն պահել։

— Ներողութիւն կը խնդրեմ ձեզմէ և կը դամ թէ դուք բարեսիրտ անձինք էք. մի հետամուտ լինիք իմ պժդալի անցեալս խուզարկելու որ լի է աղտեղութեամբ, և որու պատմութիւնը զզուանք պիտի պատճառէ ձեր ողջամիտ լսելեաց՝ ըսելով սկսաւ արտասուել։

— Տիկին, պէտք չէ արտասուել, զի արտասուքներ սիրտ մեղմացունելէն աւելի վհատութիւն կը պատճառեն։

— Պարոն, արտասուքներ միայն գիտեն վիրաւորեալ սիրտ մը, բեկեալ հոգի մը, բանտարկեալ թշուառ մը, սփոփել և նորա ցաւերը մեղմացունել։

— Տիկին, եթէ բանտարկեալ մի ես, ի՞նչպէս բանտէն դուրս ելլելու արտօնութիւն ստացար։

— Հաւատարիմ կնոջ մը պաշտպանութեան տակ կը գտնուիմ. և նա ինձ դթալով՝ երկու ժամու համար ազատութիւն շնորհեց։

— Չկասկածեցաւ թերևս չվերադառնայք։

— Նա իմ հաւատարմութեան վրայ բնաւ կասկած չունեցաւ. սակայն չ'գիտեմ թէ, վստահութեան թէ անհոգութեան արդիւնքն էր. երանի՛ թէ ոչ նա հրաման տար. և ոչ ալ ես դուրս ելլէի։

— Ըսաւ ուրիշ մը. (որու ձայնը Կատարինէի քիչ մը ծանօթ երեւցաւ.) ժամանակն անցին է չ'կորսնցունեմք. և անմիջապէս զաւակը իւր մօր գրկէն յափշտակելով. զԿատարինէն այն ձայն ծանօթ եղող անձին ձիու գաւակին վրայ առին և անտառի մէջ աներևոյթ եղան. այս պահուս Կատարինէն ինքզինք կորսնցուցած էր, չէր գիտեր թէ ո՞ւր կըտանին զինք. և նորէն ի՞նչ աղէտներու պիտի հանդիպէր։ Զ'մոռնանք ըսելու թէ՝ Վիլէնի տուած այն պարկով լեցուն և կնքուած ոսկին, մինչև այն ժամանակ անպատաս կըմնար Կատարինէի գրպան. սակայն նոյն ճանապարհորդութեան միջոցին կորսուած էր. և Կատարինէն չէր գիտեր, ճանապարհի՞ն ձկեց. թէ զինք յափշտակողներն առին։

ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱԲԷԹԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հիւանդանոց խիստ փառաւոր շէնք մը էր և բարձր դիրք մը ունէր. զարդարուած էր ասիական դեղեցիկ նկարներով. և վայելուչ ծաղիկներով ըստ եւրոպական դրութեան։ Խիստ կանոնաւոր էին ննջարանները, հիւանդանոցի պատուհանները բարձր էին և լայն, ու օդ առնելու շատ յարմարագոյն։ Շէնքին այն կողմերը, որք ցնաստակար և խիստ օդի դէմ՝ կըդանուէին, պատուհան չունէին. ընդարձակ և փառաւոր ճեմարան և սրահներ ունէր, որոշեալ ժամերու մէջ հիւանդները իրենց ննջարանէն ելլելով այն լայնածաւալ սրահներու մէջ կըճէմէին. ոմանք իրենց վտանգեալ սիրտը, ոմանք իրենց խօթացեալ մարմինը. ոմանք իրենց թարշամեալ և թուլացեալ ջիղերը կազդուրելու և զօրացունելու համար։

Հիւանդաց կերակուրները խիստ կանոնաւոր էին. և մէն մի հիւանդին բժշկի տուած հրահանգին համեմատ կերակուրներ կըպատրաստուէր. բժիշկները անպատճառ օրը երկու անգամ պարտաւոր էին գալ և հիւանդները աչքէ անցնել, և նորեկներուն իրենց հիւանդութեանց համեմատ ննջարաններ որոշել և դեղագիրներ պատրաստել անխափան կերպով, նոցա դեղերը ժամանակին հասցունելու, մեծ հոգ և խնամք կըտարուէր. այսպէս ևս փոխադրական հիւանդութիւն ունեցողներուն զատ զատ սենեակներ կըյատկացնէին, և անոնց ճեմարանի սրահն և պարտէզն զատ էր. նաև նոցա կերակուրի և ըմպելեաց սպասները յատուկ էին։

Հիւանդանոցի զգեստները ամէնքն ալ ճերմակ էին և միօրինակ. զգեստներու մաքրութեան մեծ խնամք կըտարուէր, մինակ միջնադանակով մը կ'որոշուէր արանց հիւանդանոցը, կանանց հիւանդանոցէն։ Հիւանդանոցն ինչպէս որ իւր յատուկ բժիշկները, դեղագործ, ու դեղարանն ունէր. այսպէս ալ իւր յատուկ քահանան ունէր, որ ամէն կիրակի անխափան կուգար հոգեւորական պաշտօն կրկատարէր պատարագելով. նա հիւանդները խոստովանցունելով, հաղորդելով և մեռելները թաղելով, խղճի մտօք իւր պաշտօն կրկատարէր։

Հիւանդանոցը շրջապատուած էր փոքր անտառէ մը։ Ցորդահոս գետէ մը. ու բաւական մեծկակ լճակէ մը. շէնքը ասոնց մէջ բլրակի մը կատարի վրայ իբրև կոթող բարձրացած կ'երևէր, լի էր իւր ծոցը դթութեամբ ողորմութեամբ ու մարդասիրութեամբ։ Աւանդաբար կըպատմուէր թէ՝ այս շէնքի շինութիւնը և բոլոր ծախսերը Եղիսաբէթ անուն այրի իշխանուհւոյ մը կտակին արդիւնքն էր, որ ժամանակին գրամագլուխ մը ամբ

դանոցի ծառաները իրեն ընկերուհիներ ունեցաւ, որք արդահատանք, համակրանք և սէր ցոյց կուտային իրեն. և սրտառուչ խօսքերով կ'սփոփէին նորա վիրաւորեալ սիրտը։ Հիւանդանոցի խնամակալութիւն, կանանց մասին, բարեպաշտ և ողորմած կանանց անօրէնութեան յանձնուած էր. նորա մեծ զգուշութեամբ խնամք կը տանէին Կատարինէին։ Սակայն Կատարինէն ինք աշխատելու փափաղող կին մը լինելով թէև տակաւին տկար, այսու ամենայնիւ չուզեց հիւանդայ իրաւունքը յափշտակել, ու հիւանդանոցի հայ ձրի ուտել և զգեստները ձրի հագնիլ. ուստի քանի մի օր իբրև հիւր հոն պատսպարուելէն վերջ տեսչին ներկայանալով խնդրեց որ իւր կերած հացին և ընդունած հագուստներուն ի փոխարէն իրեն մասնաւոր աշխատութիւն մը յանձնեն որ յօժարութեամբ պիտի յանձն առնու կատարել։

Տեսուչ յայտնեց Կատարինէին թէ. ձեզ համար մէկ տարեկան ծախս վճարուած է բարեսէր մարդու մը կողմէն. ուստի աշխատութեան հարկ չմնար ձեզ, հանգիստ կեցէք։

— Այդ աղնուասիրտ մարդ զոր ճանաչելու պատիւ չունիմ. ով լինի, շնորհակալ եմ իւր բարեսրտութենէն. բայց քանի որ ես կարողութիւն ունիմ աշխատելու, սրտիս յօժարութեամբ նոյն նուէրը հիւանդանոցին իբրև ողորմութիւն նշանակելով, ինձ ալ հիւանդ կանանց զգեստները լուալու և կարկատելու ու մաքրելու փոքր պաշտօնը յանձնեցէք զոր ամենայն սիրով պիտի կատարեմ։

Տեսուչը տեսնելով թէ ստուգապէս իրենք լուսաբարի մը պէտք ունին՝ Կատարինէի փափաղած պաշտօնը յանձնեց իրեն, և Կատարինէն շատ ուրախութեամբ և յօժարութեամբ կրկատարէր և այն աշխատութեամբ կըմխիթարուէր. սոյն պաշտօն բնականաբար պիտի ծանօթացնէր զԿատարինէն հիւանդանոցի մէջ գտնուող ամէնու հետ, բայց ի մի կնոջէ, որ միշտ անծանօթ մնաց Կատարինէէն մինչև վերջի օրը։

Կատարինէն ամէնու համակրանք և սէրը վաստակած էր. մեծ կանայք զայն կ'ընդունէին իբրև իրենց զաւակը. միջահասակները իբրև քոյր, փոքրերը իբրև մայր. քաղցր էր Կատարինէի համար հիւանդանոցի անմեղ կեանքը. և միշտ շնորհակալութիւն կը-յայտնէր Աստուծոյ. որ զինք այս առաքինական վիճակի մէջ դրած էր։

ՍՏԵՓԱՆԷՆ ԳԻՒՂԱԿԱՆ ՏԱՆ ՄԸ ՄԷՋ

Ստեփանէն վիրաւորեալ արիւնաթաթաւ ծանր վիճակի մը մէջ գիւղի մը անկիւն փոքր տան մը մէջ փոխադրուած կը խնամուէր, և վիրաբուժական գործողութիւններ կը լինէին իւր վրայ. մեծ հսկողութիւն և խնամք կը տանէին անոր բժշկութեան մասին. և անոր արիւնաշաղախ զգեստները իւր տուն ղրկեցին անծանօթ անձի մը հետ. ի հարկէ թէ այս ալ իւր գաղտնի նպատակն ունէր։ Ինչպէս որ մարդիկ երբեմն ոգելի ըմպելիներ խմելով արբենան, իրենց խօսածները, շարժուածները, գործերը, խորհուրդները այլանդակ կը լինին. բայց երբ գինովութենէն սթափին, կը զղջան իրենց ազեղ անցելոյն վրայ. ճիշդ այսպէս էր նաև Ստեփանէն, զի ինքը ուրիշի մը ձեռք կոյր գործիք լինելու գինովութենէն սթափեալ կը զղջար իւր անցելոյն մէջ գործած սոսկալի ոճիրներուն վրայ և այն մեղքերը քաւել կուզէր, բայց թէ ի՞նչ ընել պէտք է, այդ եղանակին վրայ տգէտ էր անոր համար գրեթէ միշտ յուսահատ էր։

Կ'ըսէր Ստեփանէն, զինք գիւղային բուսական արմատներով դարմանող փորձառու և հնարագէտ ծերունի կնոջ. իմ բարերար քոյրս. այս անիծեալ Վիչէն իմ տունս քանդեց. իմ մարմինս չարաչար վիրաւորել տուաւ, և հոգիս դժոխոց մատնեց. այժմ ես Աստուծոյ երեսէն ընկած մեղաւոր մի եմ. ինձ փրկութեան ճանապարհ մը ցոյց տուէք, որ սիրտս և հոգիս ու խիղճս հանգարտի։

— Ինչու Վիչէնի չար խորհուրդներու ետեւէն գնացիր. որ եկար այս աստիճան թշուառութեան հասար։

— Ա՜հ քոյր իմ. աղքատութիւն ամէն չարիք և ոճիրներ գործել կուտայ մարդկանց. ի՞նչ ընեմ. հարուստ մը չէի. արհեստ մը չունէի. վաստակի ուրիշ միջոց մը չունէի. ընտանիքը ի՞նչով կրնայի պահել, եթէ ոչ ծառայութեամբս. և գիտէք թէ, եթէ ծառաները իրենց տէրերուն կամակատար կոյր գործիք չ'լինին, եթէ անոնց ամէն մէկ ակնարկները իրենց Աստուծոյ պատգամ չընդունին և չ'կատարեն. միւս օրը կը մերժուին

ժուին առանց հարցաքննութեան և առանց յանցանաց։ Անոնց հրամանները անգիմադրելի են. ինչ որ ըսեն. անպատճառ պէտք է որ կատարուի, եթէ ծառայ մը յանգգնի փոքր դիտողութիւն մը ընել անոնց հրամաններու դէմ, նոցա վճռական խօսքն է. քեզ ի՞նչ փոյթ ինչ որ կըհրամայուի քեզ, այն կատարէ։

Քոյր իմ, ահա Վիչէնի այս երկաթեայ հրամանն էր որ երկու նամակներով ինձ կըհաղորդուեր հանդերձ դժոխային թմրեցուցիչ գեղով մը։ Եւ ես հարկադրեալ խլձիս և զգայմանց հակառակ գիշեր ժամանակ տիկին Սոֆիան իւր անկողնոյն մէջ քնացած տեղը անզգայացուցանելով՝ տիկին Եղիսաբեթի հիւանդանոց փոխադրեցի։ Եւ տիկին Եւային պատուէր տուի Վիչէնի կողմէն որ զայն մեռցուցեն։

— Վիչէն ինչո՞ւ համար Սոֆիայի մահուան հրաման կուտար։

— Վիչէն գիտակաւ Սամուէլի տուն գնացած, և անկէ դուրս ելած ժամանակ տիկին Սոֆիան զինք տեսած էր, և Սամուէլի աղջիկ Կատարինէն Սոֆիայի որդի Արսլանի նշանածն էր. միւսները դու ինքնին կրնաս երևակայել։

— Արսլանի վրիպակաւ մահը ի՞նչպէս տեղի ունեցաւ։

— Վրիպակ չէր, քոյր իմ, նպատակաւոր էր։ այն ալ Վիչէնի հրամայական նամակաւ իմ ձեռքովս կատարուեցաւ. նաև աղքատ կին մը. որ Սամուէլի դուռ ծեծած էր, և թէվիչէնի տան խոհարար կնոջմէն լսած էր որ ես զՍոֆիան հիւանդանոց տարած եմ. նա ալ անխոհեմութեամբ Արսլանին յայտնած էր այս գաղտնիք, Վիչէն իմացածին պէս հրամայեց ինձ՝ և այն կինը գետամոյն ըրի. և Արսլանը որսի անտառի մէջ սպանեցի ի մեծ խայթ խղճիս։

— Վիչէնի քեզ գրած նամակները քո՞վդ են։

— Այո իմ արիւնոտ լաթերուս մէջն է, և կամ թէ գլխանոցիս կապոցի մէջ տեղն է։

Կինը իրեն մոայ մէջէն սկսաւ զգջալ թէ, սխալ գործեցի, պէտք չէր որ արիւնոտ լաթերը առանց խուզարկելու ղրկէինք. ինչ և է, ուրիշ միջոց ձեռք առնել պէտք է գաղտնի կերպով նոյն երկու նամակները ձեռք բերելու համար։

— Այս բաները, որ Վիչէնի վրայ պատմեցիր. եթէ կառավարութեան տանն զքեզ դատաւորներու դէմ ալ կըխաստո-

վանիս, թէ ոչ սեելով ուրացութեան մեղք մը ես կ'աւելցուներս քու մեծամեծ մեղքերուդ վրայ։

— Քոյր իմ, իմ հոգիս կրվառի. ես դժոխոց կոծդ եղած եմ. ի՞նչպէս չեմ խոստովանիր. ամէն բան պիտի ճշմարտութեամբ ըսեմ և քնաւ բան մը չ'պիտի ծածկեմ. երանի՜ թէ գիս կանչէին հարցունէին, և ես ամէն բան ըսէի. խղճիս վրայ ծանրացած բեռները թեթևցունէի, անկէ վերջ թող Աստուած հոգիս առնէր։

— Երբ Վիչէն այդ հրամաններ քեզ կուտար. չէիր յիշեր և չէիր գիտէր որ մարդասպանութիւն մեղք է. ինչո՞ւ գործեցիր։

— Է՞հ, կնկան խօսք հասկցունել շատ դժուար է քոյր իմ, ի՞նչպէս չէի գիտեր. խիստ լաւ գիտէի. բայց կը հարցունեմ քեզ. գիտութիւնը անօթութեան ըրած աւերումը կրնայ դարմանել. հարկաւ պիտի ըսես, ոչ. ուրեմն անօթի մարդ ի՞նչ չարիք չգործեր. վասնզի նորա աչքին այն նեղ ժամանակի մէջ ոչ մեղք կ'երևի և ոչ վարձ, երբ կը տեսնէի կինս և զաւակս անօթի, պարտատէրս իւր իրաւունք կըպահանջէ. տան տէր վարձ կ'ուզէր, ձմեռ կուգար վառելիք չունէինք, ուտելիք չունէինք, հագնելիք չունէինք. այս ամէն նեղութիւնները ինչով պիտի կարողանայի հոգալ, եթէ ոչ՝ հարուստին ձեռք կոյր գործիք և կամքին կամակատար լինելու ստրկական կոյր հնազանդութեամբ։ Քոյր իմ, ցաւերս մի նորոգեր կըխնդրեմ, ինչ որ ըրած եմ բոլորն ալ գիտութեամբ ըրած եմ, ընտանիքս և զաւակներս անօթի չ'մեռցունելու և մերկ չ'շրջեցունելու հարկէն ստիպեալ ըրած եմ. Աստուծոյ ամէն ըրածները ուղիղ են և արդար. բայց մինն զօրաւոր, միւսն տկար, մինն խելացի, միւսն անխելք, մինն հարուստ, միւսն աղքատ. ահա այս բաները ես ուղիղ չեմ տեսնէր։

Ստեփանէ, Ստեփանէ, Աստուծոյ անօրէնութեան խառնուելու չափ առաջ մի՛ երթար. մեր խելք չ'հասնիր նորա գործերուն։ Այն միջոցին Ստեփանէն հանգստութեան պէտք ունէր, իւր խաժակն աչքը գոցեց. և զինք դարմանող կինը սենեկէն դուրս ելաւ։

ԱՐՍԼԱՆ · ԵՒ ՍՏԵՓԱՆԷՆ ԴԱՐՄԱՆՈՂ ԱՆԹԱՌԱՄ ՏԻԿԻՆ

— Ստեփանէի վէրքերն ի՞նչ վիճակ ունին :

— Առողջանալու մեծ յոյս կայ , բայց բաւական ժամանակի կրկարօտի :

— Հոգ չէ · միայն թէ առողջանայ · վասնզի անկէ մեր դատին լոյս տուող գաղտնիքները քաղելու մեծ յոյս ունիմք :

— Զաւակս , ի՞նչ որ կըդուշակուէր անկէ քաղելու , արդէն նա ամէնքն ալ անպատրուակ կերպով ինձ խօսեցաւ ;

— Ի՞նչպէս :

— Նա խօսեցաւ , Վիչէն Սամուէլի տունէն դուրս ելած ժամանակ ձեր մայր զինք տեսնելը · անոր համար Ստեփանէի ձեռքով զայն թմրեցուցելով հիւանդանոց ղրկուիլը , և զայն մահացուցելու հրահանգ տալը · այս լուրը աղքատ կին մը ձեզ իմացուցելոյն համար՝ զայն Ստեփանէի ձեռքով գետամոյն ընել տալը , և զձեզ որսի անտառ հրաւիրելով վրիպակ կեղծելով նպատակաւոր գնտակահար ընել տալը Եայլն :

— Տիկին , ատոնց ամէնք մեր գիտցած և տեսած բաներն են, ուրիշ նոր բան մը եթէ ըսաւ , այն պատմեցէք ։

— Երկու բան ևս կայ որ ձեր դատին զօրաւոր կերպով պիտի օգնեն :

— Ի՞նչ են այդ երկու բաները :

— Առաջին իւր խոստումը , որ կ՚ըսէ · զիս որ ատենին որ հրաւիրեն , ամէն բան ճշմարտութեամբ պիտի խօսիմ և վկայեմ։

— Մայր իմ, այդ խոստումը ոչինչ է , այսօր կ՚ըսէ , բայց վաղը անոնց կողմէն կամ վախնալով կամ հմտողուելով և կամ կաշառուելով կ՚ուրանայ , եթէ չուրանայ իսկ , սակաւ կարևորութիւն ունի · վասնզի ինքը իւր բաներուն վկայ կամ ապացոյց մը չունի իւր ձեռք · այն ատեն Վիչէն պիտի ըսէ թէ տուտ կրխօսի Ստեփանէն , կամ թէ առանց իմ գիտութեանս ըրած լինի · թերևս ուրիշէն թելադրեալ իւր շահոյն համար գործած է այդ բաներ ։

— Ուրիշ երկրորդ բան մը ունի · որ խիստ մեծապէս պիտի նպաստէ եթէ կարողանայք ձեռք բերել ։

— Այն ինչ է ։

— Վիչէնի ստորագրութեան տակ երկու նամակները , որոնց վրայ դրոշմեալ են այն ամէն ոճրագործութեանց հրաման և հրահանգներ · զորս ձեր վրայ ի գործ դրած է ինքը Ստեփանէ իւր ձեռքով ։

— Շատ ճշմարիտ է որ այդ երկու նամակները մեծապէս պիտի նպաստեն մեզ · ուր են այդ նամակները խնդրեմ շուտով ինձ յանձնեցէք · զի մեր դատը այդ նամակներ պիտի կենդանացնեն , և ատոնք միայն պիտի կարողանան զՎիչէն ճանչել և նրկոն ընել ։

— Բայց ցաւալի կէտն հոն է որ՝ այն նամակներ Ստեփանէի արիւնաթաթաւ զգեստներու մէջ իրենց տուն ղրկուեցաւ ։

— Այդ գէշ եղած է ։

— Խուզարկել պէտք է ։

— Անշուշտ պիտի խուզարկեմ, եթէ մինչև ցարդ կորսուած կամ ջուր ընկած վնասուած չեն , անպատճառ ես զանոնք հօրաքրոջս ձեռքով կրնամ ձեռք բերել , հոգ մի ընէք , մնաք բարեաւ՝ ըսելով մեկնեցաւ ։

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԵՒ ԱՐՍԼԱՆ

— Բարի՛ եկար , սիրո՛ւն զաւակս , ուր մնացիր , այսքան ժամանակ սիրտս կըտրոփար , թէ մի գուցէ նոր վտանգի մը հանդիպեցար ։

— Ոչ բան մը չ՚կայ հանդիստ եմ ըսելով՝ Արսլան իւր հօրաքրոջ ձեռք համբուրեց և ըսաւ անոր · հօրաքոյր , մեր դատին նպաստելու համար ձեզնէ անմիջապէս օգնութիւն մը կըխնդրեմ, և չեմ յուսար թէ կըզլանայք ։

— Զաւակս , կեանքս իսկ զոհելու պատրաստ եմ · և սիրով յանձն կառնում կատարելու ինչ որ կըյուսայք թէ կրնամ ընել ։

— Այո կրնաս, Ստեփանէի արիւնաթաթաւ զգեստներու մէջ գրպանի մէջ Վիչէնի տարագրութեան տակ երկու նամակները կան, և յիշեալ զգեստները մենք նպատակի մը համար Ստեփանէի տունը զրկեցինք. եթէ կարողանաս այն նամակները ձեռք բերել, մեծ շնորհ մի՛ եղբօրորդւոյդ համար։

— Ձեռք բերելու համար պիտի աշխատիմ, զաւակս. որչափ որ հնար է. և յուսով եմ թէ պիտի յաջողիմ. վանդի բան մը կը յիշեմ. երէկ մեր դրացի երեցկինը Վիչէնի երկու նամակի նկարագրութիւնն ըրաւ յայտնելով թէ՝ Ստեփանէի լաթերը ժամակոչին տուած են. նա ալ իւր տուն տարած է լուանալ տալու համար. ժամակոչին կինը երկու նամակները գտած է լաթերու մէջ և ժամակոչին տուած է. նա ալ մեր դրացի քահանային յանձնած է կարդալու համար. քահանան կարդալէն վերջ ոչինչ և անպիտան թղթեր են ըսելով նետած է. ժամակոչն գնալէն յետոյ քահանան նամակները առած բերած երեցկնոջ տուած է յայտնելով թէ՝ եթէ այս նամակները դուրս ելլեն Վիչէն օրինօք կը մեռնի, և իրենց ընտանիք կը կործանի։

— Հօրաքոյր, ճիշտ իմ փնտրածս նամակներն են ատոնք. ատոնք ձեռք ձգել խիստ հարկաւոր է։

— Ուրեմն համբերէ երթամ, Աստուած տայ որ յաջողիմ ձեռք բերելու։

Տիկին Մարիամ դուրս կելլէ, կէս ժամէն վերջ, չ'գիտեմ ի՞նչ միջոցաւ երեցկինը գիւթելով երկու նամակները նոքա ձեռքէն կառնէ և անմիջապէս բերելով Արսլանին կը յանձնէ։

Արսլան նամակները կարդալով կը տեսնէ որ իսկ իւր փնտրածն է. ասիկա երկնային պայծառութիւն մը համարելով ի պաշտպանութիւն իրենց զրկեալ դասին՝ Աստուծմէ և իւր հօրաքրոջմէն շնորհակալ լինելով, և հօրաքրոջ ձեռք կրկին համբուրելէն վերջ՝ հրաժարական ողջոյններ տալով մեկնեցաւ։

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԵՒ ՅՈՎՍԷՓ ԻՇԽԱՆԸ.

Մինչ Յովսէփ իշխանը, Վիչէնի տարագրութեան վրայ աղ-

բալով նորա ազատութիւն ձեռք բերելու հնարքներու մէջ կը վարանէր. յուսահատ կերպով իւր տան սպասուհիներէն մին իշխանին ներկայանալով՝ կը յայտնէ թէ՝ անծանօթ կին մը եկած իշխանը տեսնել կուզէ. և իրեն առանձին ըսելիքներ ունի։ Իշխանը յուսալով թէ՝ թերևս բարի լրաբեր մը լինի եկողը. անմիջապէս հրաման տուաւ ներս հրաւիրելու։ Եկողը սիրելի Մարիամն էր, որ ներս մտնելով յարգական խոնարհութենէ մը վերջ իրեն ցոյց տրուած բազմոցի վրայ նստելով, իւր արտասուալի աչերը իշխանի երեսին յառած կը նայէր, յուսալով թէ իշխանը ծանօթի մը պէս պիտի տեսնուի իւր հետ. զի այս կինը իշխանին խիստ ծանօթ էր։ Սակայն այս պարապայթ մէջ իշխանի հաշուոյն չէր գար զայն ճանաչելը. ուստի մեղմ ձայնով ըսաւ։ Տիկին, կարծեմ թէ ինձ ըսելիք մը ունիք։

Որուն ի պատասխանի ըսաւ Մարիամ. այո՛ տէր իշխան, եթէ ըսելիք չունենայի, պատճառ մը չունէի ձերդ մեծութեան ներկայանալու։

— Ուրեմն ազատ էք խօսելու. և ի՞նչ է ձեր խնդիրը։

— Տէր իշխան, ըսելիքս խնդիր մը չէ. այլ ժառանգական իրաւանցս պահանջումն է. զոր յանուն արդարութեան կը յուսամ ստանալ ձերդ մեծապատուութենէն։

— Տիկին կրնամ զձեզ ճանաչելու պատիւն ունենալ։

— Այո՛ տէր իշխան, ես Արշակ իշխանի դուստր և Սմբատ իշխանի քոյր Մարիամն եմ, և խիստ իմաստոյ կը ճանաչէք զիս, ինչպէս որ ես ալ զձեզ կը ճանաչեմ։

— Ուրեմն ի՞նչ կուզէք ինձմէ։

— Իմ եղբայր Սմբատ իշխանի ստացուածքը և հարստութիւնը. որ ցաւալի մահուանէն վերջ։ Նորա կին Սոֆիայի և որդի Արսլանի տրամադրութեան տակ մնաց. և այսօր տիկին Սոֆիայի անյայտ լինելովն և Արսլանի դիպուածական մահուամբ յիշեալ գոյք և ստացուածներն, ձեր տրամադրութեան տակ կը գտնուին որք իմ ժառանգական արդար իրաւունքս են, զոր կը պահանջեմ ձեզմէ իբրև իմ անբռնաբարելի իրաւունքս։

— Տիկին, ներեցէք ինձ ձեզ յայտնել թէ. եթէ դուք Արշակի դուստր և Սմբատի քոյր լինէիք, ստոյգ է որ ժառանգ կը համարուէիք. բայց դուք ոչ Արշակ իշխանի զաւակն էք և ոչ

Սմբատի քոյր. այլ թէ մեր գերդաստանի մէջ պահծու մի էիք և պահծուն չկրնար ժառանգ համարուիլ։

— Իշխան, ճշմարտութիւնը մի ստէք. ես Արշակի դուստր և Սմբատի քոյր Մարիամն եմ։.....

— Սակայն դուք ընկեցիկ մի էիք. քահանայի մը ձեռքը մնա պայք մեր գերդաստանի մէջ, ինչպէս կը լսենի որ բուն ժառանգը կը զրկուի և ընկեցիկն ժառանգ կը համարուի. հետևաբար ուստ կը խօսիք։

— Պարոն, խօսածներս ամէնքն ալ ճշմարտութեան չափ ճշմարիտ են. և ասոր վկայէ նախ Աստուծոյ, երկրորդ ձեր խիղճը, եթէ ձեր ընչաքաղցութեան կիրքերէն ազդեալ հիւանդացած չէ։

— Տիկին, ինձ կը թուի թէ. դուք ձեր խելք կորսնցուցած էք այս պահուս։

— Ոչ իշխան. ես իմ խելքս կորսնցուցած չեմ. այլ դուք ձեր խիղճ մեռցուցած էք։

— Իշխանը այլայլեցաւ. և սկսաւ սարսուռ մը զգալ. յետոյ ինքզինք ամփոփելով խրոխտ ձայնով մը ըսաւ. Տիկին, ձեր խօսքերը չափաւորեցէք. զի դուք թէ զիս կընախատէք և թէ իմ ազնիւ տոհմս կ'անպատուէք։

— Յովսէփ իշխան. ես զքեզ չանպատուեցի, այլ դու և Վիչէն որդիդ զձեզ անպատուեցիք. և մեր ազնիւ գերդաստանի անունն ալ ձեր անպատուութեան մէջ թաղելով արատաւորեցիք։ Յովսէփ, լսէ ճշմարտութեան ձայնին, դուք մեծամեծ սխալներ և ոճիրներ գործեցիք. դուք հարստանալու համար արիւն և արտասուք թափել տուիք. հակառակ խղճի ուղիղ օրինաց. ողջմտութիւն կուսուցանէ մարդկանց հարստանալու համար քրտինք թափել. և ոչ թէ արիւն և արտասուք. ձեր անխղճութէն կատարել տուած սրտաճմլիկ և քսամեալի տեսարանը զչնկարիչ կրնայ վրձինով նկարագրել, ոչ դերասանի սիրտ կը տակայ իւր շարժումներով թատերական բեմին վրայ հանել. և ոչ բանահիւս մը կրնայ առանց հառաչանաց և արտասուաց գրչով նկարագրել։ Շահամոլութիւն և կրից մղումը ձեզ մոռցուցնել տուաւ մարդկութեան այն մեծ յատկութիւնը, որ զզայումներու մէջ ամենապատուականն է. և այն է մարդասիրութիւնը. զոր

դուք մարդատեցութեան արիւնով մկրտեցիք։ Այնպէս չէ՞, տէր իշխան մի՛ վարանիք. պատասխան տուէք։

— Տիկին, բնաւ չեմ վարանիր, այլ կը մերժեմ սուտ զառանցանքներդ։

Իշխան, ըսածներս զառանցանք չեն. ճշմարտութիւններ են. և մեր օրէն պիտի տեսնէք թէ ժամանակի ձեռք այս ամէն գաղանիքներու վրայի քողը պիտի վերցուն է. և ամէն բան իւր իսկական պատկերով մերկապարանոց ցոյց պիտի տայ ինձ, և ձեզ և համայն աշխարհին. այն օրը պիտի զղջայք բայց բան մը չ'պիտի շահիք։

Իշխանը սենեակի մը զգալով, և իւր երեսը դէպի պատուհանը դարձունելով պահ մը լուռ էն վերջ ինքզինք ամփոփելով ըսաւ. տիկին, միտս մի՛ տանջէք. որքան ժամանակս կընարէ ընեցի ձեզ. ասկէ վերջ հրաման կուտամ ձեզ գնալ և ձեր ուզած դատարանին դիմել. և ձեր կարծեցեալ երևակայական ժառանգական խնդիրը յուզել, եթէ յաջողեցաք իրաւունք ստանալ, արդէն կառավարական իշխանութիւն այն ինչ և ստացուածները ինձմէ առնելով ձեզ կը յանձնէ։

— Շատ լաւ, ըսաւ Մարիամ, ինչ որ ես ձեզմէ կ'սպասէի զայն ուրիշ տեղեր փնտրելու կառաջնորդէք զիս, ասոր ըսելիք չունիմ։ Սակայն բան մը կայ որ միշտ մթութեան մէջ կը պահէք չէք ըսեր թէ՝ իրաւունք ունիմ, թէ չունիմ, միայն բռնաւորի մը լեզուաւ ինձ դուրս ելլելու ճանապարհ ցոյց կուտաք. ես ալ առայժմ հնազանդելու հարկի տակ կը գտնուիմ. բայց տայր Աստուած որ վերջէն չզղջայիք։

— Տիկին, չափէն աւելի զիս նեղեցիք. կը խնդրեմ որ հեռանայք այս ժամուս մէջ. և իմ ձեզ տալիք պատասխաններս վերջէն պիտի իմանայք։

— Իշխան, ինչու՞ կը զայրանաք և կը սրտմտիք. մեծ մարդիկ պէտք է որ հասարակ մարդիկներէն, ինչպէս որ ասպիճանաւ և իշխանական զօրութեամբ, այսպէս ալ մտաց վեհ տաղանդով և սրտի ազնուութեամբ նախագահ լինին. և իրենք զիրենք վեհանձնութեան մէջ պահեն։ Զայրոյթ և բարկութիւն չեն որ իրաւանց վճիռ կուտան. այլ ողջմտութենէն բղխած ուղիղ տրամաբանութիւնն է, որ իրրև հատու սուր կրկորդ իրաւանց գա-

տատանը։ Դուք պէտք է այնպէս վարուիք ինձ հետ, ինչպէս որ ուղղամիտ և իրաւասէր դատաւոր մը կը վարուի զրկեալի մը հետը։ Յուզեալ և անիրաւ Յովսէփ. իմ ժառանգական իրաւանց պահանջից համար առ լուրջ Յովսէփդ կը բողոքեմ, ճշմարտութեան վրայ վարագոյր մի քաշեր ուզել դատաստան ըրէ։

Իշխանը ներքին զայրութիւն մը և արտաքին աղնուապետութեամբ մը ըսաւ. բաւ է տիկին, զիս զայրանալու և վրէժխնդիր լինելու չափ առաջ մի տանիր։

— Ներեցէք սխալանաց իշխան, զի պահ մը մոռանալով ձեր ծագումը. կը կարծէի թէ ուղղամիտ վեհանձն և իրաւագէտ ու արդարաւէր մարդումը դիմած իրաւունքս կը պահանջեմ. բայց ընդհակառակն, փոքրոգի մը հանդիպած եմ. յորմէ մեծութիւն յուսալը ինձ համար յիմարութիւն մի է։ Իշխան, իմ արդար իրաւունքս ապագային պահելով կուզեմ աղաչել ձեզ թէ, ձեր անուղղել վարմունք զարմանք և զայրոյթ պատճառած է ձեր պատիւ սիրողներուն և ձեր ի սրտէ բարեկամներուն։ Դուք ձմեռան կաքաւներու պէս ձեր գլուխ (ձեր գործերը ըսել կուզեմ) ձեան մէջ թաղելով զձեզ չէք տեսներ, սակայն ձեր որսորդները զձեզ կը տեսնեն. և դուք նոցա ձեռքի տակն էք. ու քիչ օրէն զձեզ պիտի որսան։

— Տիկին, կը հասկնամ ձեր խօսքերու զօրութիւն. կը հարկադրեմ զձեզ որ ղղուշանայք. և ձեր խօսքերը ձեր անցուկ սահմանի մէջ պարփակեալ պահէք. և պատշաճից օրէնք չ'կոխոտէք, իշխանի մը դէմ այդ տեսակ խիստ լեզուով գործածելը ձեզ համար պատժոյ արժանի մեծ յանցանք մի է։

— Ձեր իշխան, (ձեր մեղքերը ծածկելու համար) չորս անձանց կեանք խորտակելն ալ ձեզ համար մահացու և անիերելի մեղք մի է թէ Աստուծոյ և թէ մարդկանց դատաստանի առջև։

— Տիկին, կ'սպառնայք ինձ։

— Ո՛չ, չեմ սպառնար. գործածդ ոճիրները կը յիշեցունեմ։

— Սահման զրկք ձեր անզուսպ յանդգնութեան։

— Եւ դուք սահման դրէք ձեր ոճրագործութեան և անիրաւութեան, ու զրկեալ իրաւունք ճանաչեցէք և ետ դարձուցէք։ Սոյն միջոցին կարծես թէ իշխանի աչքը Մարիամի սրտի գաղտնեաց խորերը թափանցել կ'ուզէր դիտնալու համար թէ՝

ի՞նչ գաղտնիքներ պահուած էին հոն. և յանկարծակի փայլակի մի պէս որոտախառն ձայնով մը ըսաւ. տիկին, ի՞նչ է մեր յանցանք. յայտնէ՛, ապա թէ ոչ զրպարտութեան օրինաց պատիժը պիտի կրել տամ քեզ։

— Ըսաւ Մարիամ, իշխան. յիշէ այն անմեղ օրիորդ։ Եղբօրս որդւոյն նշանած Կատարինէն. զոր ձեր Վիլէն որդին ստութեամբ պատրեց. բռնութեամբ առեանկեց, դատապրտութեամբ մատնեց. որ այսօր և այս բոպէիս բանտերու խորշերու մէջ կը հալածուի, կը հարուածուի, կը նախատուի, և օր մեռ կը մահանայ։ Խլճով խօսէ, իշխան, այդ պատիժ որ Կատարինէն կը կրէ. իւր յանցանաց պատիժն է. թէ Վիլէնի. այն յանցանք կանխաձիեմ որ ձեր զրպարտութիւն Յիսուսի խաչափայտի պէս խեղճ աղջկան անմեղ ուսերուն վրայ դրաւ. և պիտի կրէ ու տանէ առանց հանգիստ և դադար առնելու մինչև կատարածի վայրը։ Իշխան, ո՞վ անդայայունելով կոստնցուց եղբօրս կին Սոֆիան. ո՞վ գնտակի զոհ տուաւ եղբօրս որդի Աբսալանը. ո՞վ անիրաւաբար դրաւեց նոցա ժառանգութիւն և զիս զրկեց. ո՞վ այն աղքատ կին (որ Վիլէնի գաղտնիք գիտէր) գետամոյն ընել տուաւ. իշխան, կը հարցունեմ ձեզ, ասոնք ոճիրներ են, թէ առաքինութիւններ. գիտեմ որ այս ճշմարտութիւնները՝ զորս կը յայտնեմ, զձեզ կը զայրացնեն. և դուք իմ համարձակութեանս դէմ պատիժներ անօրինել կը խորհիք. սակայն պէտք է որ խօսիմ ինչ որ ճշմարիտ է. զի եթէ չ'խօսիմ. իրողութիւնները իմ սիրտս և հոգիս կ'ապականեն կը մահացունեն եթէ ես չ'խօսիմ անզգայ տարերք լեզու ելլելով պիտի խօսին։

— Տիկին, դուք իմ հանդարտութեանս մէջ մեծարանելու չափազանցութեան սուրը դայք և ինձ դէմ կը գործածէք սպառնական կերպով, չ'գիտեմ թէ ո՞ր աղքատնած էք.

— Տէր իշխան, ես այս աշխարհիս մէջ աղքատ մի եմ. ոչ ոքի ապաւինած չեմ, միայն Աստուած և խղճմ մը ունիմ, անոնց ձայնին կը հետևիմ. երբ խղճս ինձ հրամայէ, հնազանդելով նորա ձայնին աշխարհի մէկ ծայրէն միւս ծայր կերթամ. երբ Աստուած հրամայէ. այս աշխարհէս դուրս ելլելով նորա կամեցած տեղը կերթամ։ Այս երկու ձայները ինձ համար սուրբ են և նուիրական. և ես միշտ հնազանդ եմ անոնց, և պիտի

հնազանդ մնամ։ Մարդիկներէն չեմ վախնար. վասնզի նորա միայն մարմնոյս վրայ կրնան իշխել. մանաւանդ թէ պատանքս և դաղալս հետս կը շրջեցունեմ. և ամէն մէկ քայլափոխիս տեղերը մէկ մէկ դերեզման կը դուշակեմ ինձ համար։

— Գնա երեսդ չ'տեսնամ։

— Եթէ դուք զրկեալիս երես տեսնել չէք ուզեր. կը հաւատայք թէ ողջմտութիւն ինձ պիտի ներէ որ անիրաւ և բռնաւորի մը երես տեսնել կուզեմ,

— Այս խօսքի վրայ իշխան հրափայլ ածխական աչքով սկսաւ նայիլ Մարիամի վրայ, ըսաւ Մարիամ, իշխան, մարդումը հանդարտ աչքով նայէ և կիրքով մի խօսիր. բանականութեամբ քննէ, դատէ և խօսէ. անիրաւութեան և բարկութեան դէնքով մի վերաւորեր, այլ սրտի ազնուութեամբ բժշկէ ձեզմէ վիրաւորեալ սրտերը, իշխան, դու այսօր անիրաւ ես, վաղը ողորմելի պիտի դառնաս, և շատերու սրտի մէջէն ձեր գործերով վերցուցած էք առ ձեզ տածուած յարգանք և համակրանքները. վասնզի դուք առաքինութիւն սպանեցիք, չարեաց յարութիւն տուիք, սուրբերը կը մատնէք, մելիները կը սիրէք. բարեկամները կը հեռացունէք. շողոքորդները կը մօտեցունէք. իմաստունները կը մերժէք. յիմարները ձեր շուրջ կը բոլորէք. մեծ հոգիներու վրայ հաշտ աչք չէք նայիր. գաճաճներու մրմռական հնարքներով կը գործէք, արիւն ձեր ի գլուխ ձեր՝ ըսելով մեկնեցաւ տիկին Մարիամ, հետ տանելով վշտաց և նախատանաց մեծ ծրար մը։

Իշխանն կ'զգար իւր և իւր որդւոյն սխալմունքները. և իմացաւ իւր սրտի անողջանալի խորտակումը. ուստի հառաչանքներով ըսաւ իւր իշխանուհւոյն. տիկին այս, կենաց մէջ այլ ևս ինձ համար յուսալու և սպասելու մխիթարական յոյս մը չմնաց իմ բոլոր վայելածներս երազներու և սուտերներու պէս եկան աչքիս առաջէն անցան գնացին. և իրենց հետևանք եղող մեղքերը միայն մնացին մեր կուրծք կրծելու։ Այս կինը արդարը և քաջարձակ իրաւունք ունէր. սակայն մեր անձը և պատիւ վասնզի տակ չ'դնելէն առաջ, կարելի չէր որ նորա իրաւունքները իրեն վերադարձնէ ինք. վասնզի եթէ ժառանգ լինելը հաստատուն, ուրիշ դատեր պիտի բանայ մեզ դէմ. տիկին,

երկար ժամանակէ ի վեր կ'սպասէի որ Վիչէն մեր ապագայ միխիթարութեան յոյս լիներ. սակայն նա մեր ընտանիք և նորա պատիւը մահացոյց. իւր կեանքն ալ իբրև տուգանք վրայ տուաւ անէծք արտասուք և յաւիտենական դատապարտութիւն մնաց մեր բաժին։

Այս հանրածանօթ դէպք հասարակաց սրտի և մտաց մէջ գայթակղութիւն սփռեց և ամէն ողջամիտ միտքերը զայրոյթ կպան մեզ դէմ, ըսելով թալկացեալ դիմաց թիկնաթոռի մը վրայ կռթնեցաւ և ղլուխը երկու ձեռաց մէջ առնելով սկսաւ մտածել։

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՒԶԱՐԿՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՎԻՉԷՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ոճրագործութիւններն մաղձայոյզ հիւանդութեան պէս առաջ կերթային և ամէն մարդ սրտայուզութեան մէջ էր, արդէն կը յիշեն ընթերցողք Արսլանի մահը, Սոֆիայի կորուստը, աղքատ կնոջ դեռընկեցութիւնը և այս անգամիս ալ Վիչէնի և Յաեփանէի յափշտակուիլը, և Կատարինէի բանտէն անյայտ լինելը։ Քաղաքապետութեան ոստիկանութիւնը յայտնի և գաղտնի կերպով ամէն հնարաւոր միջոցները ձեռք առած կաշխատէր, սակայն չէր յաջողեր ոճրագործներու հետքերը գտնել. վասնզի շատ խորածածուկ կը գործուէին տեղի ունեցած սխալուր անցքերը։

Մինչ Յովսէփ իշխանը զրեթէ Վիչէնի և Յաեփանէի կեանքէն անյոյս՝ հաղարումէկ երազական ցնորքներու մէջ կը թափառէր. և ահա երկու նամակներ կը հասնին իրեն. այն նամակները իշխանն տակաւին չ'բացած արտմութիւն և ուրախութիւն մէկէն զդաց. կ'ուրախանար. վասնզի նամակին հասցէն Վիչէնի գիրն էր, ուրեմն տակաւին կենդանի է կ'ըսէր, և զինք մեռցուցած չեն, և անկէ կը հետևցունէր թէ Վիչէնի յափշտակիչները աւելի աւազակներ են քան թէ թշնամիներ. նամակները բանալէն առաջ կը վախնար զայն բանալու. կասկածելով թէ իւր

ծերութիւն վշտացուցող ազգատալի դիպուածները պիտի տեսնէ ա-
ռանց մէջ. շատ մը վարանումներէն յետոյ նամակները բացաւ։

ՎԻՇԷՆ ԻՇԽԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Սիրելի հայր իմ։

Ճնշման ներքև եմ և չներուիր ինձ ձեզ բացատրել այն անտանելի նեղութիւնը և վայրագ վարմունքները, որոց տակ միայն կցիտուր շունչ մը կ'առնեմ կուտամ. վերջի Ճգնաժամերուս մէջն եմ. եթէ զիս գերի վարողներու նամակի մէջ նշանակուած գումարը մինչև երեք օր անոնց նամակի մէջ նշանակուած տեղը չհասնի, կեանքս վտանգի տակ է. ուրեմն խնայեցէք ձեր որդւոյն կենաց, դրամն կ'ստացուի, բայց կորսուած կեանք այլևս ետ չդառնար։

ՎԻՇԷՆ

Միւս նամակ։

Յովսէփ իշխան. այս վայրկենիս ձեր զաւակի հոգին արդարութեան ձեռքի մէջն է. զայն կարելի է ձեր կողմէն մեծ գումար մը ոսկւոյ փրկանքով դնել և ազատել։ Պահանջուած ոսկիները պէտք է բերել որսի անտառին մէջ դնել այն տեղը, ուր որ Աբսլանի արիւնը թափեցաւ. և այն տեղը ձեր ծառաներէն Սեդրաք գիտէ։

Անոյանց արդարութեան դատին։

Յովսէփ իշխան թէև բարի. բայց բաւական կծծի մարդ մն էր, մեծ գումար մը ոսկի ձեռքէ հանել չէր ուզեր, սակայն կը խորհէր թէ՝ եթէ պահանջուած գումարը չտար, իւր որդւոյն կեանք մահուան վտանգին պիտի մատնուէր։

Սոյն միջոցին Հոլփսիմ մեծ իշխանուհին իւր այրն Յովսէփ

իշխանի դէմքն այլայլութենէն իւր որդւոյն մահուան վտանգը կը գուշակէր. և աչքէն սկսան արտասուաց կաթիլներ հոսել, տխուր դէմքով իշխանին մօտենալով հետաքրքրութեամբ կը հարցունէր տեղեկանալու համար թէ՝ այն երիտասարդին նամակի մէջ ի՞նչ գրուած էր, և ուրիկ կուգային։ Թէև իշխանը ծածկել կուզէր, սակայն իշխանուհին դպաց որ Վիշէնէն եկին այս նամակներն. ուստի ըսաւ. իշխան, կ'երդմնեցնեմ զքեզ մօրդ գերեզմանի և հօրդ ոսկերաց ու քու պատուոյդ վրայ. այն նամակի մէջ իմ որդւոյս նկատմամբ եթէ բան մը կայ, մի՛ ծածկեր, ճշմարիտն խօսէ ինձ. զի սիրտս կը յուզուի և կեանքս կէս ի մահ կերթայ։

— Ա՜հ, տիկին, որդւոյդ կեանքը վտանգի տակ է։

— Ասուած իմ, այս ի՞նչ չարագուշակ ժամու մէջ կը գտնուիմ։ Իշխան, իմ որդւոյս կեանք կորսուցանելէն վերջ, ինձ ուրիշ բան մը չմնար ընելու. եթէ ոչ տան կրակ տալ. և նորա հրավառ գերաններու ներքև ինձ համար կոթմրաղոյն գերեզման մը շինել։ Ո՞վ տէր, այս ի՞նչ սառնագոյն լուրեր են, որ մեզ կը հասնին, ըսելով սկսաւ թալկանալ թիկնաթոռի մը վրայ կնալով զառանցել։

— Տիկին. ողջմտութիւն ունեցիր, և ըսածներուս վերջաբանը լսէ. դեռ ամէն բան չյայտնեցի, մեծ գումար մը ոսկի փրկանք կ'ուզուի Վիշէնի գերի վարողներու կողմէն, ասոր համար ի՞նչ կ'ըսես։

Տալ պէտք է, տէր իշխան, գրամը միշտ կարող եմ ձեռք բերել. բայց զաւակս Վիշէնի կեանք երթալէն վերջ այլևս ետ չդար. և մեր յոյս ու ապաւէն և մխիթարութիւն այն մէկ զաւակն է. յանուն Աստուծոյ և յանուն մարդասիրութեան, զթութիւն ըրէ տառապեալ մօր մը, ազատէ որդիս. ինչոր կուզեն տուր. իմ բոլոր ունեցածս զարդեր յօժարութեամբ որդւոյս փրկանք կուտամ. շուտ ըրէ՛ այսօր զրկէ պահանջուած փրկանքն որպէսզի վաղը զաւակս գայ։

Յովսէփ իշխան Վիշէնի սիրոյն և նորա մօր թախանձանքներէն հարկադրեալ պահանջուած ոսկին կը զրկէ պայմանադրեալ տեղը. և կ'սպասէ իւր որդւոյն վերադարձին։

Յովսէփ իշխան որքան որ սրտի անձկութեամբ կ'սպասէր իւր

որդւոյն վերադարձին, սակայն չպիտի հանէր իւր փափաքանաց-
մանդի ծերութիւն և վիշտ սաստկապէս կը ճնշէին նորա արդէն
վիրաւորեալ սիրտ . և սկսած էին նորա հոգին մարմնէն անջա-
տելու զբաղիլ :

Իշխանը տարիքն առած . ալեզարդ սպիտակամօրուք և վեհ
կերպարան ունեցող պատկառելի ծերունի մարդ մը էր. որ բաց
ի ազահութենէն նախարարի մը վայելուչ, անբասիր , ողջամիտ
կեանք մը վարած էր . և բարի մարդ մը էր . բայց իւր Վիչէն
որդւոյն բարոյական կենաց հսկելու մասին անփոյթ և անտարբեր՝
Հեղի քահանայապետ մի էր . իշխանը այն օրերու մէջ միշտ
մարդկներէն մեկուսի մնալը կը սիրէր . խորհրդով յետադարձ
ընելով, իւր անցեալ փառքերու յիշատակներով կը մխիթարէր
ինքզինք , և իւր իղձերը միշտ գէպ ի Վիչէնի վերադարձն կը-
մղէր : Որքան որ կը ճգնէր միտք հոգնեցունելով հնար գտնել
և Վիչէն ձեռք բերել . այնչափ ալ միջոց և հնարքներ կը սպա-
սէին . թէև փրկանքն վճարած էր . բայց Վիչէնի վերադարձը
կ'ուշանար , և մեծ մտատանջութիւն կը պատճառէր իշխանի և
իշխանուհւոյն : Իշխանուհին իշխանէն աւելի բարեսիրտ և պար-
կեշտ ու ըստ տեղւոյն ողորմած կին մը էր . և աղքատաց խիստ
շատ խնամք կը տանէր : Խոհեմները պատրաստի սպեղանիք մը
ունին իրենց վշտաց վէրքի քով (որ իրենց չուզելով ակամայ
բացուած է) , և այն է համբերութիւնը : Իշխան և իշխանուհին
երկայնմտութեամբ կը համբերէին . ստոյգ խօսելու համար , այս
անցքը սոսկալի որոգայթ մի էր . որու մէջ յանկարծակի դլբեբ-
ցաւ իշխանի տունը , իշխանուհին իւր մայրական գորովանքէն
զգածեալ՝ միշտ թախանձանքներ կ'ընէր իշխանին իւր որդւոյն
վերադարձին համար զարժանն տնօրինելու :

Որուն ի պատասխանի կ'ըսէր իշխանը , տիկին , ձեռնհա-
սութիւն չեղած տեղը լոկ բաղձանաց գրգիռներու վրայ մնացեալ
բանի մը հիմ դնելը անհնար է . զի բաղձանքները հոդմտաց
ամպերու պէս կուգան մարդկանց մտքէն սահելով կ'անցնին կեր-
թան : Ձեռնհասութեան տակ չինկած բանի մը վրայ չափէն
աւելի միտք տանջել՝ յանկարծական մահ հրաւիրել է . ուրեմն
թողունք որ ժամանակն գործէ . ամէն բան Աստուծոյ կամաց
յանձնելու է . Տիկին , յանցանք մերն է Վիչէնին չէ : Մենք

անոր կենաց հսկողութեան մասին անտարբեր մնացինք : Պէտք էր
դիտնայինք թէ հրապոյրներով լի հոգեբանութիւն մը կայ , որ
լի է մաղնիսական զօրութեամբ . և այն է որ կը դիւրէ երիտա-
սարդները երևակայական հեշտութեան ետևէն գնալու : Սիրքե-
րը զմարդիկ բանաւորութեան սահմանէն հանելով կը քաշեն կը-
տանին անասնոց շարքի մէջ կը դասեն . ուրիշ բանականութիւն
չլալով մարդոյն ետևէն կերթայ , զայն ի գուր շարժելու և ետ
դարձուներու յուսով : Սակայն խիստ քիչերն են որ կը դադարին,
կը դղջան և ետ կը դառնան : Ետ դարձողներու կիրքերը կ'սկսին
մարիլ և մեռնիլ . բայց Վիչէն անդադար մնաց բանաւորութեան
թախանձանաց դէմ, և միշտ իւր կրից ձեռք խաղալիք դարձաւ,
բնաւ չուզեց ետ դառնալ իւր խոտոր ընթացքէն . ահա անոր
հետևանքն է որ կը քաշեմք , մեք հոս կը տառապիմք , նա ալ
իւր գտնուած տեղը . և ով գիտէ թէ ի՞նչ վիճակի մէջ է :
Տիկին , այս զզուելի հալածումը մեծ դայթակղութիւն պատճա-
ռեց և անբժշկելի արատ մը դրաւ մեր ընտանեաց վրայ . վրէժ-
խնդիր կուսակցութեան ձեռք մի էր որ այս անակնուելի դեր
խաղաց , և մեր ընտանիքն անպատուեց : Իշխանը հետզհետէ
անձնապէս և մտապէս տկարանալու վրայ էր : Եւ ըսաւ իշխա-
նուհւոյն . Տիկին , ցաւերը գլխս կը պաշարեն , գիտես թէ մահս
մօտ է : Որուն ի պատասխանի կ'ըսէր իշխանուհին . իշխան ,
քու ցաւերդ և իմ վիշտերս , կը կասկածիմ թէ երկուքս ի միա-
սին գէպ ի գերեզման պիտի տանին : Ինչպէս որ երաժշտական
նուագը նուագածուի ձեռքի մէջ ձայներու փոփոխութիւն կ'ստա-
նայ . այսպէս ալ իշխանը բարոյական ցաւէն անձնական հիւան-
դութեան մէջ կը դլորէր . և սրտի յուզմունքէն ձայնը կ'սկսէր
դողդղալ . ու ինքզինք ուժաթափութեան մէջ կը տեսնէր: Կանչել
տուաւ իշխանն զքահանայն , և իւր խոստովանութիւնները ու
ղղջումը կատարելով հաղորդուեցաւ . և ըսաւ իշխանուհւոյն ,
ուրախ եմ որ այս վայրկենիս խղճի հանդարտութիւն կը վայելեմ.
բայց ի Մարիամին ըրած զրկանքէս , և Վիչէնի վրայ չ'հսկելէս և
չ'հսկելոյս համար նորա մէն մի մեղայ կ'ցորդ և բաժանորդ եմ:

Իշխանը սոյն միջոցին քանի մի աղօթքներէն վերջ խոր մտա-
ծութեան մը մէջ ընկղմած կը տեսնուէր :

Ը՞ր հարցուներ իշխանուհին , տէր իշխան , ինչու՞ չես ուզեր

խօսիլ. որուն ի պատասխանի կ'ըսէր նա, ժամեր կան, որու մէջ լուութիւն պահելը խիստ օգտակար է. Ճանապարհորդ եղող հոգւոյ մը համար, տիկին, ամենէն աւելի ուղիղ Ճանապարհ՝ հասարակաց Ճանապարհէն դնալն է։

Այս պահուս, անթափանցելի դաղանիք մը զՅովսէփ իշխանը կը յուզեր. և աչքերը այս կամ այն կողմ կրդարձունէր մարդ մը փնտրողի պէս. օդը անձրևոտ էր և հովէն մղուած անձրևի կաթիլները կուդային իշխանի պառկած անկողնի մօտ եղած ապակիներուն կը զարնէին, և անոնց վրայ զիւրահաղ մարդարիտներու պատկերները կը յօրինէին. իշխանի սիրտն ալ բնութեան սրտի պէս տխուր էր. և Աստուածային երկիւղածութենէն սարսուռներ կ'զգար և բան մը չէր խօսէր. այն գիշերն անցաւ, միւս օրը իր հետ հրաշալի երեկոյ մը բերաւ խիստ զուարթ և պայծառ. բայց իշխանի համար վերջի տխուր և տագնապալի ժամերը կըտեսնուէին այն պայծառ ժամերու մէջ։

Եկաւ հասաւ այն վայրկեանը, յորում Յովսէփ իշխանի վերջին խօսքն եղաւ. ուր է, տակաւին չեկաւ. և հոգին աւանդելով գնաց իր մշանջենաւոր տունը ի մեծ սուգ համակելով իշխանուհին, որ միայն մնաց իշխանի տան մէջ։

Վիչէնի յափշտակիչները տեսնելով որ պահանջուած փրկանք կ'ուշանայ, սկսան զինք աւելի նեղել. կ'ըսէր մինն անոնցմէ։

— Վիչէն, ձեր հայրը ոսկին ձեր կեանքէն նախապատիւ համարած է։ Որուն ի պատասխանի կ'ըսէր Վիչէն. Ներքամտութիւն և ազնուասրտութիւն ի միասին կը նշմարեմ ձեր վեհ շարժումներու վրայ. ուստի երաշխիք ունիմ իմ ազատութեան յոյսս ձեր գթասրտութենէն ակնկալել քան թէ հօրմէս սպասուած փրկանքէն։ Ես կը փափագիմ որ դուք ձեր վեհանձնութեամբ գնէք իմ երախտագիտութիւնս. այն գործ որ ձեր վեհանձնութեան կը պատկանի՝ զայն դնոյ մի վաճառէք. զի վեհանձնութիւն անգին է։

Յափշտակիչներէն մին իրրև կատակ կ'ըսէր. Պարոն, վեհանձնութիւն քաղաքի և քաղաքացիի իշխանաց անկ է և ոչ թէ լեռան մէջ բնակող լեռացի անձանց։

Վիչէն երկար ժամանակ այս անձանց ձեռքի մէջ նախատինքներ և արհամարհանքներ կրեցէն վերջ, եկաւ հասաւ այն փրկանք, զոր զՎիչէն պիտի ազատեր կոշտ վարմունք ունեցող սոսկալի մարդիկներէն և լերան խուռնչներէն։ Երբ հասաւ իր արձակման վայրկեանը և հրաման եկաւ իրեն ազատութեան, ըսաւ Վիչէն զինք դերի վարողներուն. Ձեզ բարեաւ, բարեկամներ, կը յուսամ թէ ձեր զղացումը վիրաւորած չեմ լինիր. եթէ ձեզ համար պատուաւոր պաշտօն մը բարեմաղթեմ։ Իշխանի այս խօսքը դիմակաւորներուն ծանր գալով՝ ըսաւ անոնցմէ մէկը. Պարոն, ասկէ մեծ պատուաւոր պաշտօն մը չլինիր, երբ պատաւ մը սարսափահար ընող Վիչէն իշխանը մեր հրամաններուն հլութեամբ կը հպատակի, երթանք բարեաւ։

Այն միջոցին հրաման տուաւ դիմակաւորներու գլխաւորն միւսներուն ըսելով. Վիչէն ձեր պաշտպանութեան ներքև առնելով առաջնորդեցէք ապահով Ճանապարհներէն, և խաղաղութեամբ հասուցէք զինք քաղաքի դուռը և դուք ետ դարձէք այն տեղը, ուր որ ձեզ արդէն յայտնած եմ։ Եւ Վիչէնին դառնալով ըսաւ. Վիչէն, թէպէտ նեղութիւն կրեցիր, նիւթապէս վնասուեցար, բարոյապէս վնասեցիր. և ծանր հարուածներ կրեցիր. սակայն գիտցիր թէ՝ ըրածներուդ քառորդը չէ կրածներդ։ Վիչէն իր տուն դարձաւ այն պահուն՝ յորում իշխանի տունը սեւ վարագոյրներով ծածկուած սուգ կը պահէր իշխանի մահուան վրայ։

ԿԱՏԱՐԻՆԷ ԵՒ ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱՒԷԹ

Արեգակը իր գլուխ դէպ ի արևմուտք խոնարհած հրաման կուտար լուսնոյ փոխանորդաբար իր աղօտ լուսով մեր գունդ լուսաւորելու. քիչ մը վերջ, բնութեան խոր լռութիւն իր իշխանութեան տակն առաւ ամէն արարածները, բայց իրրև բացառութիւն, երկու վշտաբեկ կանայք տիկին Եղիսաբէթի հիւանդանոցի պարտիզի ձախակողմեան անկիւն դանուղ սենեկի մէջ ազատ թողած էր, իրենց այրած սրտերը փութանց բանալու և դուրս տալու այն ամէն անցքերը, զորս կրած էին այդ ճակա-

ուղղէն հարուածեալ երկու կանայք։ Վիշտերը, մաղձայոյզ հիւանդութեան պէս, այնչափ կը յուզէն վիրաւորեալ սրտերը, մինչև որ իրենց մէջ եղածներն ամէնքն ալ դուրս թափելով ուրիշներուն հաղորդեն, որով քիչ մը կը հանգստանան. զի վերստացեալը իւր վիշտերը ուրիշի մը պատմած ժամանակ, անոր մէկ մասը պատմողէն ելլելով լսողին կը փոխանցուի, որով պատմողը քիչ մը սրտի հանգարտութիւն կը զգայնէ։ Այն գիշերուան իշխանութենէն դուրս մնացող և լուսնոյ լուսոյն տակ լուսաւորուող վշտաբեկ կիներէն մին էր Կատարինէն, որ արդէն, ինչպէս գիտեն ընթերցողները, բանտէն յափշտակուած, հիւանդ ոգի փոխադրուած էր. միւսն ալ տիկին Եղիսաբէթն էր, որ զԿատարինէն կը ճանաչէր. բայց անծանօթ ձևանալով կրփափագէր տեղեկանալ թէ՝ ո՞վ էր Կատարինէն. ի՞նչ անցք կրած էր և ի՞նչ պատճառաւ հիւանդանոցն եկած էր։

Կատարինէն առաջին անգամ իւր վէրքերը և ցաւերը թաղուն պահել կուզէր. բայց ի վերջոյ Պարսից ըսածին պէս, «Եթէ Աստուծոյ ը՞ր. չկարողացաւ ինքզինք բռնել, և սկսաւ լալով պատմել իւր անցք։

Կ՚ըսէր Կատարինէն, մայր Եղիսաբէթ, ես Տ.....քաղաքի բնակիչներէն ժամագործ աղքատիկ Սամուէլի դուստրն եմ Կատարինէ անունով. հայրս իբրև պարզ արհեստաւոր մը իւր աշխատութեամբ հազիւ մեր օրական ապրուստ կը ճարէր. մայրս ճախարակաւ բամպակ մանելով մեր վրան գլուխը կը շինէր խիստ պարզ բայց կոկիկ կերպով, տուն մը ունէինք որ մեր հօր մօրմէն ժառանգ մնացած էր. թէև խիստ փոքր, բայց մեզ համար բաւ էր և շատ խիստ։ Այն տան մէջ կը բնակէինք. մէկը չէր իմանար թէ. մենք անօթի՞ եմք թէ կուշտ. չէին գիտեր թէ աղքատ էինք թէ հարուստ. սակայն Ճշմարիտն այս է որ, եղաւ այնպիսի գիշերներ, յորում անօթի քնացանք. ընդ ամէն չորս հոգի էինք. հայրս մայրս և ես ու փոքր քոյրս. մայրս մեծ խնամք ունէր վրաս միշտ զիս դպրոց կը ղրկէր. ես ալ բաւական աշխոյժ էի և սուր ըմբռնման տէր, զգալի կերպով յառաջադիմութիւն կը ընէի, թէ ուսման և թէ ասեղնագործութեան մէջ. մանաւանդ ասեղնագործութեան մէջ միշտ առաջին վրցանակը կ՚առնէի։

Տասնեչորս տարեկան էի դպրոցէն ելայ, և սկսայ ասեղնագործութեամբ աշխատիլ, և ծնողացս քիչ շատ օգնել. բաւական ժամանակ այսպէս աղքատիկ, բայց անմեղ և երջանիկ ապրեցանք։ Մայր իմ, անբացատրելի իրողութիւններ կան, որք մարդկանց վիճակ յանկարծակի կրփոխեն։ Մենք մեր ձեռքի աշխատութեամբ առաջ գնալու փափագանաց հակառակ, ըսխտն զմեզ ետ մղեց. զի այն օրերու մէջ մայրս ծանր հիւանդութիւն մը ունեցաւ և բաւական ծախսեր ըրինք. ու բժշկական ամէն հնարքներէն բնաւ օգուտ մը չտեսնուեցաւ և հիւանդի վիճակ հետզհետէ ծանրանալու վրայ էր։

— Ի՞նչ էր մօրդ հիւանդութիւնը, որ բժշկական դեղերը անօգուտ դարձան։

— Մայր իմ, անբացատրելի հիւանդութիւն մի էր։ Կ՚ըսէր մայրս. գլուխս կը դառնայ. սիրտս կը խառնուի, մարմնոյս զօրութիւնները կը կարանան. երբեմն ալ վրան մարելիք կուգար. երբեմն ջղային ցնցումներ տեղի կունենային. մեզ ամէնէն մեծ երկիւղ պատճառողն այն էր՝ որ բերնէն արիւն կուգար և շարունակ տխրութեան մէջ էր։ Երբ հիւանդի ծանր վիճակ անպատրաստակ կերպով բժշկին բացատրեցինք, բժիշկ՝ որ անշահասէր և բարի մարդ մի էր, ըսաւ. ի զուր տեղ ծախս մի ընէք. և աղքատութիւն ևս չներէր ձեզ ոչինչ տեղ ծախս ընել միայն ձեզ օգտակար հրահանգ մը պիտի տամ այս հիւանդի համար որ ամէն դեղերէն զօրաւոր է, եթէ ընդունիք տուածս հրահանգ։ Այս հիւանդը բժշկի դեղերէն աւելի օդափոխութեան պէտք ունի զինք բացօթեայ տեղեր օդափոխութեան տարէք. կարելի է որ առողջանայ։ Հայրս որ իւր արհեստէն ի զատ ուրիշ բանի վրայ ուշադրութիւն չէր դարձուներ, պարզմտութեամբ հարցուց բժշկին թէ՝ ի՞նչ է օդափոխութիւն, և ի՞նչ օգուտ ունի։ Որուն ի պատասխանի ըսաւ բժիշկն, օդափոխութիւնն է այս հիւանդը ապականեալ օդ ունող սենեկէն մաքուր տեղ մը փոխանցել։ և աղէկ տեղի օդը լաւ և առողջարար կը լինի. կրնայ մարդուս միտքը զուարճացնել, առարկաներու փոփոխութեան հետ միտք և սիրտ ևս իրենց հաճոյական փոփոխութիւն կ՚ստանան. երբ մարդ մը նորանոր տեղեր կը տեսնէ. այն տեղերու բնութեան տեսարանն, հնութեան պատմական յիշատակները մար-

գուս միտք և սիրտ կուրախայնեն, այն տեղերու քաղցր և աղողջարար օդեր կուգան մարդուս ներս կըմտնեն, և այն գեղեցիկ թախծութիւն պատճառող օդերուն կը յաջորդեն. ու հիւանդի սիրտը Ճնշումներէն կ'ազատեն, վերջապես, Պարոն, օդափոխութիւնն այն լոյս տուող արևն է, որ տաղտկացեալ սրտերու մէջէն վիշտ և ցաւ կըհանէ և կըհալածէ։ Մայրս բժշկի սոյն խորհրդի վրայ այն գիշեր հօրս հետ խորհրդակցելով (ըստորում դրամ չունէինք) իմ ձեռքս պտնուած ամէն ասեղնագործութիւնները միւս օրը շուկան ղրկելով ծախեցինք, և մայրս ըսաւ ինձ՝ աղջիկս, հայրդ և փոքր քոյրդ Թող տուն մնան, դու հետս եկու։ Օդափոխութեան համար փոխանակ գիւղ մը գնալու Մշոյ սուրբ Կարապետ գնացող ուխտաւորաց հետ միանալով այն նուիրական սուրբը վայրը գնալը որոշեցինք, որ թէ օդափոխութիւն և թէ ուխտագնացութիւն կըհամարուէր։ Եւ այն երեկոյ հօրս հաւանութիւն առնելէն վերջ, սկսանք պատրաստութիւնները տեսնել. մեծ բարեպատեհութիւն մը ևս ունեցանք որ մեր դրացիներէն տիկին Սօֆիան՝ որ խիստ բարի և երկիւղած կին մը էր. նաև իւր որդին Արսլան ևս մեզ ընկերացան իբրև ուխտաւոր։

— Ո՞վ էր այդ Սօֆիան և իւր որդի Արսլանը։

— Մայր իմ, տիկին Սօֆիան ազնիւ դերդաստանէ սերեալ խիստ ազնիւ բնաւորութեան տէր բարեսիրտ կին մը էր, օրուան համար, մայրս ինձ պատմած էր թէ իւր ամուսնութեան երրորդ տարուան մէջ նորա երկիկը ձախորդ դէպքի մը զոհ դնացած էր. և Սօֆիան այրի մնալով իւր մէկ ու կէս տարեկան Արսլան տղին առած նստած և զայն խնամած է եղեր։ Շատերը ուզած են այս կնոջ հետ ամուսնանալ. բայց նա ամենու առաջարկութիւնները մերժած է. այս բարի մայրը իւր Արսլան որդիին խիստ խնամօք կընայէր և կըդաստիարակէր որդին ալ միշտ հլու և հնազանդ էր իւր մօր ամէն մէկ ակնարկին և չափէն աւելի կըսիրէր իւր մայրն ու փոխադարձաբար ալ անկէ կըսիրուէր։

Արսլան իւր ստացած ամէն բարեմասնութիւնները և ազնիւ զգացումները իւր բարի մօր աշխատութեան կը պարտէր։ Տիկին Սօֆիան մօր մը յատուկ եղած կատարելութիւններով օժտուած էր։

Ցոյժ կըփափաքէր որ իւր որդին ընկերական դասուն մէջ

պատուաւոր և պարկեշտ տեղ մը բռնէ. և այս նպատակին զայն հասցունելոյն համար մեծամեծ ծախսեր և զոհողութիւններ կ'ընէր. երբ ուրիշները նորա չափազանց հոգատարութեան վրայ կըխօսէին, կ'ըսէր նա. իմ մայրական պարտականութենէս դուրս աւելի բան մը չէ որ կըկատարեմ մէկ հատիկ զաւակիս համար. որ իմ ապագայի յոյսս և միակ մխիթարութիւնս է։ Արսլանի վրայ կըտեսնուէր գեղեցկութիւն և վայելչութիւն, շնորհք և իմաստութիւն, և բնութեան տուած ամէն ձիրքերով օժտեալ էր նա։

Նա բացառիկ բնութիւն մը ունէր, որ իրեն հետ տեսնուողներուն վրայ անմիջական ժողիշ համակրութիւն մը կ'ազդէր, և այս զորութեան յատկութիւնը չ'գիտեմ թէ բնական էր թէ՝ նախախնամութեան մէկ շնորհքն էր. խօսակցութեան մէջ այնպէս Ճարտար ձևեր կըբանեցուներ. որ մեռեալ խնդիրներուն անգամ վերակենդանութիւն կուտար, անդիմադրելի շնորհք մը կը փայլէր նորա լեզ և բնական խօսքերուն մէջ. Արսլանի բնական քաղցրութիւն խիստ հեռի էր անձնական ատելութիւններէ, անոր համար և որու որ մօտենար՝ նորա համակրութիւն կըվառեցնէր։

Ինքնասիրութեան գաղտնի հպարտութիւն մը ունէր. սակայն զայն իւր սրտի մէջ քնացնելու արհեստին խիստ հմուտ էր։ Նորա սիրտը գիւրազգած լինելէ աւելի եռանդոտ էր, անոր ուղեղի զորութենէն առատապէս կըբղխէին այն հանճարաւոր խորհուրդներն և խօսքերն, որոց դիմադրելը խիստ քիչերուն տրուած էր. նորա խօսքերը մեռած սրտերու և միտքերու վերակենդանութիւն կուտար. այս ամէն ձիրքերու հետ ողջախոհութեան մասին անմեղ հրեշտակի մը նմանութիւն ունէր։ Մայր իմ, ահա այս անման յատկութեանց և ձիրքերու տէր Արսլանը և իւր համեստ ու բարի մայրը և ուրիշ շատ մը ուխտաւորներ մեզ հետ ընկերանալով Ճանապարհ ելանք դէպ ի Մշոյ սուրբ Կարապետն վանք ուխտի գնալու։ Ձեմ կրնար բոլոր տակ ծածկել այն նիւթական և բարոյական բարիքները, որք Արսլան և իւր մայրն կըմատուցանէին Ճանապարհին իմ հիւանդ մօրս։ Մուսայայ յիշելու թէ՝ փոքր քոյրս, որ հօրս հետ տուն մնալը որոշած էր չուզեց մօրմէս բաժնուիլ, և լալով մեր եաւէն կըվազեր բոկոտն

ես շատ աշխատեցայ զինք արգիլելու բայց չ՚յաջողեցայ։ Կ՚ըսեր խեղճ աղջիկն, քոյր իմ, ինչու՞ կրխստանաս ինձ դէմ. իրաւ դու ինձմէ զօրաւոր լինելուդ պատճառաւ կրնաս զիս մերժել որ ձեզ հետ չընկերանամ. բայց բնաւ կարող չես զիս արգիլել որ ձեր ետևէն բոկոտն չ՚վազեմ. քոյր իմ, կրխնդրեմ թոյլտուութիւն ըրէ որ ես ալ ձեզ հետ գամ. զի մայրս խիստ շատ հիւանդ է. և թերևս մեռնի ես զինք չ՚տեսնեմ. ու կարօտով մնամ. և դու խղճահար պիտի մնաս. կրխնդրեմ, ըսէ իմ թանձանաց և ազաչանաց. և զիս մի՛ արգելուր ձեզ հետ ընկերանալէ։ Այս պահուս մայրս չ՚կրցաւ անոր ալիոլորմարտաւուաց դէմ տոկալ, արդահատելով քոյրկ հետն առաւ ըսելով, թերևս մեռնիմ և չ՚վերադառնամ. թող փոքր աղջիկս ալ ճանկ մը հող ցանէ գերեզմանիս վրայ։ Արսլանի մայր տիկին Սոֆիան սոյն վայրկենէն սկսեալ, սոյն փոքր աղջիկն իր անմիջական հսկողութեան և խնամոց տակն առաւ ու դնացինք։ Մեր ուխտաւորնացութեան ճանապարհորդութիւն այն հաշուով սկսուեցաւ, որ մեր տէր Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան տօնախմբութենէն հինգ օր առաջ Մշոյ վանքի մէջ պիտի դտնուէինք. որ այն տեղի մեծ հանդիսին շնորհաբաշխութիւն վայելէինք։ Խիստ զուարճալի էր մեր ուխտաղնացութեան ուղևորութիւն թէպէտ ամառուան տաք օրերու մէջն էինք. սակայն այն բարձր սարերու գագաթներէն ձիւներու մէջէն զղղղալով վազած պաղ ջուրերու զովութիւնները հեզասիւք հովերու հետ կրխառնուէին ու մեզ զովացում և հաճոյք կրպատճառէին։

Բժշկի խօսքերը և տուած խորհուրդները իրենց գործնական արդիւնք հետզհետէ ցոյց կուտային. վասնզի մայրս զգալի կերպով դէպ ի առողջութիւն առաջ կերթար և շատ հանդիստ երբով ես ալ իմ ուրախ վիճակս ունէի։ Այնպիսի՞ բնական ծառախիտ անտառներէ կանցնէինք, որոնց մէջ տակաւին գարնան սփոփիչ մեղմ հովերու հետքերը պահուած կրմնային, որք մերթ ընդ մերթ կուգային զմեզ զովացունելու։ Գարնան ծաղիկներու անուշահոտութեան բուրումները տակաւին բոլորովին հրաժեշտ տուած չէին այն կարիաչահոս վտակներու եզերքէն։ Ի՞նչ հիանալի էր և հոգւոյ զմայլումն տուող այն անտառներու մէջ բնութեան տեսարանն, բաղմադարեայ ծերացեալ տերևալի յաղթանդամ ծառերու անման հովանին, փոքր ծառերու խիտ առ խիտ դասակարգութիւն և գրկախառնութիւն, անտառներու բարձրերէն ջուրերու հոսումը և ջրվէժները, վայրի այծերու թռչտիլը, թռչնոց ծառերու ճիւղերու մէջէն ի միս փոխուիլ թռչտիլ և քաղցր եղանակներով երգելը։

Մայր իմ, այս տեսարանները մեզ նոր սիրտ նոր կեանք և բոլորովին նոր զուարճութիւններ կուտային։

Գիշեր մը ծառախիտ անտառի մը մէջէ կ՚անցնէինք. այն պահուս որ արեգակը իր մայր մտած և երկու ժամ վերջ լուսնոյ հրաման տուած էր բարձր սարերու ետևէն իր գլուխ դուրս հանելու և իր լուսով զմեզ լուսաւորելու այն խիտ անտառի ծառերու մէջ, այն պահուն էր՝ որ լուսնի լուսով լուսաւորուած բնական անտառի ծառերը տարուբերող մեղմ զեփիւռներու մէջէն ձայն մը օդի մէջ զօրաւոր շղթի մը պէս բարձրանալով կրտատանէր և կրթրթռար. ու անդրադառնալով մաղնիսի պէս լսողներու սրտերու խորը կրթափանցեր, ու անոնց վրայ դիւթիչ զգայուն և կենդանի տպաւորութիւններ կ՚ընէր, և անոնց մէջ նիրհող բոլոր համակրական զգացումներն կ՚արթնցունէր. նման այն քնարահարի ձեռքին որ քնարի անձայն լարին հպելով անոր հոգի կուտայ և կ՚արթնցունէ, ու կենդանիի պէս խօսել կուտայ։ Մայր իմ, անիկա Արսլանն էր, որ իր նայուածքը երկրի երեսի վրայէն վերցունելով դէպ ի երկինք կ՚ուղղէր. և հրեշտակային եղանակաւ մեր շնորհալի սուրբ Հայրապետի Աստուծոյ լուսոյ երգը կերգէր։ Սոյն հիանալի յափշտակութեան մէջ ամէն զգայուն հոգիներ կ՚զմայլէին և երկնային սիրոյ մէջ կը յափշտակուէին. այն սրտաշարժ ձայնն նուագարանի ձայնի պէս ուղղակի սրտերուն ազդելով՝ նոցա վրայ անմոռանալի խոր տպաւորութիւն մը կ՚ընէր. այն դիշերը իմ բոլոր կենցաղս մէջ տեսած դիշերներուս ամենէն զեղեցիկ և երջանիկ դիշերը համարուեցաւ։

Պէտք չէ որ մեր պատմութեան շարքէն դուրս թողունք դիպուածական պարագայ մը, որ այն դիշեր մեզ բաւական սրտայուզութիւն պատճառեց։ Մեր ճանապարհ ելած ժամանակ ըսած էին մեզ թէ, ճանապարհի վրայ դտնուած անտառներու մէջ երբեմն աւազակներ կը պատահին, որոց նպատակն է ուխտաւորները կողոպտել։ Հասած էր այն ժամը, յորում լուսին

իր գլուխը դէպ ի արևմուտք կը խոնարհէր , և ահա յանկարծակի թուփերու մէջէն շշունչ մը դէպ ի մեզ ՝կուգար : Մենք համոզում գոյացուցինք թէ գողեր են . և այր մարդիկ իրենց զէնքերը պատրաստեցին դիմադրելու համար : Նոյն պահուն ես իմ ակարութիւնս մոռանալով , յանդգնեցայ սուր մը ուզել Արսլանէն ինքզինքս պաշտպանելու համար . նա մեղմ ձայնով մը ըսաւ ինձ օրիորդ , մեր քաջութիւնը մի՛ վիրաւորեր . մարդկանց մեռնելէն վերջ կանայք իրաւունք կ՚ունենան զէնք առնելու : Դուք մեր քաջութեան ետևի կողմը արդէն պաշտպանեալ էք Նախախնամութեան շնորհիւ : Սոյն միջոցին Արսլան ամենէն առաջ ընթանալով գ՚ալ ի ձայնն՝ զօրաւոր գնտակ մի ուղղեց դէպ ի մեզ եկողին . գնտակն պարապ չ՚գնաց , սակայն վիրաւորեալի ահարկու ձայնէն վերահասու եղանք թէ եկողը գող չէր , այլ վայրենի կինՀ մի էր . այս դէպքէն վերջ խաղաղութեամբ շարունակեցինք մեր Ճանապարհ . և արշալուսոյ բարի լուսոյն հետ մենք ևս անտառէն դուրս ելլելով մեր Ճանապարհ շարունակեցինք :

Երբ արեգակը կրծադէր . ամէն երկիրներն ալ անհետացած կը համարուէին . Արսլան հեղնութեան պատրուակի տակ համակրական քաղցր ժպիտով մը մեղմ ձայն մը ուղղեց ինձ ըսելով , օրիորդ , բաւական քաջասրտութիւն ունիք . վտանգներու մէջ իբրև այր մարդ դիմադրա լինելու թշնամւոյն դէմ : Այս խօսքը իմ դիւրազրածութեանս մէկ ուրիշ թելին զարկաւ . ղղայի թէ անզգալի կերպով համեստութիւնս վիրաւորած եմ Արսլանէն սուր ուզելուս համար : Մայր իմ , այս եղանակաւ մեր բարենպատակ ուղևորութիւն առաջ տանելով Ճիշտ ժամանակին հասանք մեր նուիրական նպատակին : Տեղւոյն փոփոխութիւնն չէր իմ բարեպաշտութիւնս աւելցունելու բնական պատՃառ , այլ հոն կատարուած այն բարձր և անօրինական հանդէսները . այն նուիրական սուրբ վայրը , որ մեր կրօնի խանՃարուներէն մինն կը համարուէր . այն էր որ կուգար իւր պատմական վեհ նշանակութեամբ մեր հոգիներուն զմայլումն տալու : Խիստ պայծառ էր այն օրրավայրն և պանծալի . և մեծ շքեղ հանդիսով կը կատարուէր մեր տէր Յիսուսի Պայծառակերպութեան աւուր փառաւոր յիշատակի հանդէսը : Բայց հանդիսատես ժողովուրդն

յանդէպս Վահրևանեան տօնի յիշատակները իւր սրտի մէջ թաղուն պահած՝ կը բերէր կը խառնէր այն սուրբ պաշտաման հետ : Նա Պայծառակերպութեան և Վարդավառի յիշատակները իրարու հետ շփոթած էր , և տակաւին չէին մոռացած մեհենական արարողութիւնները . ինչպէս՝ իրարու վրայ ջուր նետելը , ապաւնի թռուցանելը . միմանց վրայ վարդ նետել : Հոն ասիական ամէն տեսակ երգ և երգիչներ , թմբուկներ և ջութակներ կը հնչէին . սակաւ բացառութեամբ աբբ և կանայք խառն կերպով միմանց ձեռքէն բռնած կը պարէին և կը կաքաւէին՝ թմբուկներու մէն մի եղանակներու հետ նորա ևս իրենց խաղի եղանակները կը փոփոխէին , հոն իրենց արհեստական պեր կը կատարէին ձեռնածուն և լարախաղացը : Այն նուիրական վայրը իբրև վաՃառատեղի և կամ իբրև արուեստահանդէս մը կը ներկայանար քան թէ ուխտատեղի մը . ոգելի ըմպելեաց չափազանց գործածութիւնը տեղ արատ մը կը ձգէր Պայծառակերպութեան անարատ հանդիսին վրայ :

Մեր սոյն ուխտագնացութիւն , չ՚գիտեմ թէ դիպուած էր թէ նախախնամական տնօրէնութիւն . սակայն այս դիտեմ թէ՝ հոն անբացատրելի գաղանիք մը սկսաւ իմ և Արսլանի սիրտ և միաք յուզել . կարծեմ թէ նորա մայրը շուտով հասկցած էր թէ բնութեան ձայնը աղդարարութիւն կընէ Արսլանին իւր մօր սէրէն տարբեր նոր սէր մը ստեղծելու և զայն ուրիշ կողմ մը ուղղելու : Տիկին Սոֆիան մեզ դրացի լինելուն պատՃառաւ մօրս հետ ստէպ կը տեսնուէր և միմանց հետն ալ չափազանց սիրով կապուած էին . և սոյն միջոցներուն մէջ ստէպ գաղանի խօսակցութիւններ կ՚անցնէին նոցա մէջ : Օր մը նոքա երկուքառանձին խօսակցութիւն ըրած ժամանակ ես հեռուէն ունկընդրութիւն կ՚ընէի : Կ՚ըսէր տիկին Սոֆիան մօրս . Տիկին , մինչև ցարդ Արսլան որդւոյս սէրը միայն իմ վրաս կեդրոնացած էր . բայց այժմ կը տեսնեմ թէ՝ նորա սէրը իւր թեւեր պարզած դէպ ի Կատարինէն թռիչ կ՚առնէ : Քոյր իմ , երկուքն ալ հասած են . մենք զձեզ կը Ճանաչեմք , դուք ալ զմեզ . ի՞նչ պէտք է ուրիշ կողմերը գեգերիլ . արդէն մէկտեղ մեծցած և իրարու ընտանութիւն հասկցած են :

Մայրս անոր կը պատասխանէր թէ , պէտք է որ Կատարինէի

կամքը շշոշափեմ այս մասին, քանի մի օր անցաւ, մայրս ինձ քան մը չըսաւ։ Երբեմն դիպուածներ կ'օգնեն մարդկանց. վասն զի օր մը անդդուշարար առանձին կերպով Արսլանի ձայնի գեղեցկութեան վրայ խօսեցայ փոքր քրոջս հետ. մայրս լսած էր։ Մայրս որքան որ բարեմիտ էր. այնքան ալ սրտին բանալին զողնալու և անոր մէջի եղածները կարդալու առանձնաշնորհեալ յատկութիւն մը ունէր։

Ուրիշ օր մը, ամէնքս ի միասին նստած իրիկուն ընթրիք կըճաշէինք. յանկարծակի մայրս ըսաւ տիկին Սոֆիային. քոյր իմ, ի՞նչ բան որ կիտնալ կըփափաքէի. զայն իմացայ. և այս վայրկեանէս սկսեալ Կատարինէն Արսլանին և Արսլան Կատարինէին են։ Արսլանը կայծակի արագութեամբ տեղէն ելլելով եկաւ մօրս ձեռք համբուրեց. սոյն պահուն ամթալի կարմրութիւն մը իմ երեսս ծածկեց։

Մօրս հրամանը զիս հարկադրեց. ես ալ տիկին Սոֆիայի ձեռք համբուրեցի. Արսլանի նշանը, որ շարք մը ոսկի էր. վիզս անցուցին. և Արսլանի հետ մեր մատանիները փոխանակեցինք. այն պահուն որ մատանիները փոխանակուեցան, Արսլանի սիրտը իւր կուրծքի մէջ կըխայտար. պէտք է ճշմարիտն խօսիլ մի և նոյնն էր նաև ինձ համար. վասնզի նորա դէմքի գեղեցկութիւնը կըհամապատասխանէր իւր սրտի ազնուութեան. և երկուքն ի միասին կըհամապատասխանէին իմ համեստութեանս։ Ներեցէք մայր իմ, որ համեստութեան քող վերցունելով յայտնեմ թէ՝ այն վայրկենէն սկսեալ (այժմ ձեր առաջ դտնուող ողորմելի ապրածը), Արսլանի սիրոյ առարկան էր, ինչպէս որ նա ալ իմ սիրոյս առարկան էր. այն օրերու մէջ բնաւ մտքէս չէր անցներ թէ դժբախտ և սեւ օր մը պիտի դայ զիս մերկացունէ իմ համեստութենէս. և այն հրեշտականման անմեղ պատանին իմ ձեռքէս յափշտակելով հեռացունէ։ Հաստատ ունէի թէ՝ Աստուած զԿատարինէն Արսլանի և Արսլանն ալ Կատարինէի հետ միացունելու համար սահմանած է։

— Զաւակս, ըսաւ տիկին Եղիսաբէթ, նշանածները երանութեան հասած չեն նկատուիր, այլ յուսոյ մէջ թափառող երազատեսներ կըհամարուին։

— Այո՛, մայր իմ, ըսաւ Կատարինէն. այդպէս է. բայց ես

այդ չէի գիտեր. և միշտ Արսլան յիշողութեանս մէջ անմոռաց կըմնար. ինչպէս որ Աստուծոյ կողմէն պատգամ բերող հրեշտակաց տեսիլը մարդարէից մտքի մէջ անմոռաց կըմնար։

— Նշանածներու սէրը երևակայական է քան թէ իրական. յուսոյ մէջ կըթափառի քան թէ ստուգութեան. երազ մի է քան թէ իրականութիւն. նշանածները, զուտակս, երևակայութեամբ զիրար կըմբռնեն. ըսաւ Կատարինէն. խիստ ճշմարիտ են ըսածներդ բայց այն ժամանակ չէի գիտեր, այժմ կ'զգամ։

Մայր իմ, երբ տուն դարձանք մայրս կատարեալ առողջութեան հասած էր, և հայրս մեծ մխիթարութիւն մը զգաց մօրս առողջութեան վրայ. նաև յօժարութեամբ ընդունեց մեր նշանադրութեան դաշինքը։

Ապագայ երջանկութեանս արատ մը չ'բերելու և համեստութիւնս չվիրաւորելու համար իրձերուս և զգայմանս հակառակ խիստ շատ կ'զգուշանայի Արսլանի հետ տեսնուելէ. հօրս տան փոքր սենեկիս մէջ վանդակի մէջ փակուած թռչնոյ մը կրնմանէի։

Երբեմն Արսլանի պատուհանիս առաջէն անցնիլը կրտեսնէի. նոքա սերէն կըյափշտակուէի, կըփափագէի հետը խօսելու. բայց համեստութիւն և ամթխածութիւն սրտիս արիւն հանելով կըզրկէին երեսս քողարկելու և լեղուս լռութեան կապով կապելու։ Արսլան ինքն ալ չէր համարձակեր բերանացի բան մը ըսելու. սակայն ես անոր խոնարհ հայեցուածքի և քաղցր ժպիտի տակ ծածկուած սրտին վրայ սիրոյ վերաբերեալ ամէն զգացումները կըկարդայի։

— Այո՛, աղջիկս, համեստութիւն, որ օրիորդներու սրտի յատկանիշն է, նոցա սիրոյ զգայումները միշտ իւր քողի տակ ծածկուած կըպահէ և չ'թողուր որ յայտնեն։

— Մայր իմ, պէտքերու անօրէնութիւնն, չ'գիտեմ թէ Աստուծոյ կողմէն, թէ ինքնաբերաբար յառաջ կուգայ մարդկանց վիճակը շփոթելու։ Այն օրերու մէջ կանխագգացութիւն մը ինձ դուշակել կուտար թէ, անտեսանելի վտանգ մը կայ ինձ համար պատրաստուած, և անոր համար մերթ տրտմութեամբ կըլեցուէի և մերթ ուրախութեամբ։

— Աղջիկս, նախախնամութիւն մասնաւոր վիճակները, մասնաւոր ուրախութեանց հետ բարեխառնած և աշխարհ զրկած է

մարդկանց համար. և մեն մի անհատ իւր անհատական բաժինը ունի այն խառնուրդի մէջ։ Մարդիկներ երբեմն միւն. երբեմն միւսն, և երբեմն երկուքն ի միասին կ'տանան։ Նախագիտութիւնը վշտաց և ուրախութեան պատկերները մէկէն զգացուցած է ձեր սրտին։

— Այն օրերու մէջ Յոհանէսի իշխանի տունէն լուր ղրկուեցաւ մեզ թէ, նորա կրտատալին զիս Վիչէն իշխանին հարսնացուներ. սակայն մեր հողմն մերժողական պատասխան տացան։ Այս մերժումը խիստ բնական է որ անոնց դիրազգածութիւնը վիրաւորեց, քանի որ բարձրաստիճան հարուստ ընտանիք մը կրգիջանին մեզ պէս ազքատ ընտանիքի մը հետ յարաբերութիւն ունենալ և կրմերժուին, բնական է որ առանց ծանր հետևանաց կարելի չէր անցնել այս միջադէպը։

— Ինչո՞ւ մերժեցիք անոնց առաջարկութիւնը։

— Վասնզի ես Արսլանէն ի զատ ուրիշ մարդու սէր տալու համամիտ չէի. Ճշմարիտ խօսելով. Արսլանը շատ կըսիրէի. ոչ թէ սիրելը զգայական հեշտութիւն մի էր. այլ աւելի կրսիրէի նորա հոգւոյն վեհութիւն և բնական յատկութիւնները. զի նորա սիրտ աղնիւ էր, միտք վսեմ, շարժումն վայելուչ, դնայք ուղղղ, հայեցուածք անուշ, մեր սէր թէ սիրողի և թէ սիրուողի ապագայ ամուսնութեան սուրբ յոգակապն էր. զի մեր սիրոյ աթոռը քանականութեան կեդրոնի մէջ զետեղուած էր, անոր համար թէ՛ վեհ էր և թէ՛ իմաստուն։ Այն միջոցին Կատարինէի տխուր աչքերէն քանի մի արտասուաց կաթիլներ սահեցան նորա քնքուշ երեսի վրայ, զորս Եղիսան իւր համբոյրներովը ժողովեց։

Կատարինէն վերատին խօսքի թելն առնելով ըսաւ, մայրս իւր սովորական բարեմտութեամբ, գրեթէ սովորութիւն ըրած էր զիս միայնակ և աղատ թողուլ տան մէջ և ինքը եկեղեցի գնալ։ Պէտք է որ քննադատութիւնն անաչառ լինի. մայրս գրեթէ իմ վրաս հսկելու մասին պարտաղանց էր. այս պարտաղանցութիւնը չգիտեմ թէ անհոգութեան թէ ծայրահեղ վստահութեան արդիւնքն էր։

— Վիչէն ինչէ՞ն հարկադրեալ զձեզ առնելու այնչափ տենչ ցոյց կուտար։

— Մայր իմ, աղէկ չեմ գիտեր. սակայն կրնամ երկու պատճառներ մէջ բերել, որք իսպառ անզօր չեն, առաջին Վիչէնի և Արսլանի ընտանեաց մէջ ի հնոց անտի օխակալութեան առելութիւն մը կար։ Երկրորդ, կըխնդրեմ, մայր իմ, որ անձնամոլութիւն չ'համարիք երբ համարձակիմ ձեզ ըսելու թէ. ըստ ուրիշներու ասութեան՝ շատ դեղեցիկ էի։

Օր մը մայրս եկեղեցի գնացած ժամանակ ես միայն էի տան մէջ. յանկարծակի պատաւ մուրացիկ կնոջ մը առաջնորդութեամբ դիմակաւոր մը իմ կամացս հակառակ ներս մտաւ. որու ժպիտներու քողն տակ թոյն կար պահուած իմ հոգիս վիրաւորելու համար։ Նորա շարժումները վրաս ծանր տպաւորութիւններ կ'ընէին, արիւնը գլուխս կրզարնէր և մարմինս սոսկալի դողերու մէջ կրտագնապէր։ Դիմակաւորը իմ արհամարհական նայուածքիս մէջէն շուտով կրցաւ մերժումն նշմարել. առ այս նախաքինք՝ կուզէր ետ մնալ. սակայն կրից մղումը յաղթելու չափ քաջութիւն չունէր. կուզէի զինք ճանաչել սակայն հաստատ որոշման մը չ'կրցայ գալ, այլ տարակուսութեան մէջ կըվարանէի. չ'գիտէի թէ կասկածներս որ կողմ ուղղել պէտք էր. զի եկողը դիմակաւոր էր, շատ մը վարանելէն յետոյ, պատշաճից օրիորդիմակաւոր էր, շատ մը վարանելէն յետոյ, պատշաճից հակառակ համարձակեցայ հարցունել թէ ո՞վ է նա, սակայն նա. իւր ո՞վ լինելը իւր չարասրտութեան մէջ թաղուն պահեց։ Այս պահուս մեծ շփոթութեան և կասկածանաց մէջ էի և չ'կրցայ հետևանաց մը գալ թէ արդեօք դիմակաւորն պատուոյս թէ կենացս գաւառանն էր. սակայն ի՞նչ ալ լինէր անզգոյ և անզէն օրիորդ մը ի՞նչ կրնար ընել նոյն միջոցին. եթէ ոչ իրրև կիսամեռ ճնճղուկ մը բազէի մագիլներու մէջ տկար ձայնով մը խեղալ երբեմն ճիչ բառնալ կրմոռաբերէի. սակայն հոն ալ կրխորհէի թէ մեր տան բոլորտիք գտնուող դրացիները նոյն պահուն եկեղեցի գնացած էին հանդիսին ներկայ գտնուելու։ Ուստի աւելորդ էր զանոնք օգնութեան կանչել. ուրեմն երկնային հրաշք մը պէտք էր այն վայրկենէն զիս ազատելու, այն ալ Աստուծոյ կողմէն ղրկուեցաւ ինձմէ. չ'գիտեմ թէ իմ մեղքերուս համար, թէ անիմանալի անօրէնութիւն մը կար Աստուծոյ կողմէն այս բանի մէջ. որ զիս փնտրել տալով բերաւ այս ազէտալի հետևանաց հասոյց։ Յոժարութեամբ պիտի տանիմ

մինչև որ աչքս արտասուքները բարեխօսէն Աստուծոյ իմ ծանր մեղքերս ջնջելու։ Այն օրը ինձ համար ամենէն սոսկալի եղեռնագործութեան օրն եղաւ. որ անէծքով ողբով և արտասուքով անցուցի, իմ դիմադրութենէս աւելի զօրաւոր կամքի մը տակ ինքզինքս ճնշեալ տեսայ. այս տարօրինակ և անդթական տեսարանը իմ ամէն երջանկութիւնս և պատիւս կորսնցուցնելէն ետք, սրտիս հանդարտութիւնը, մտացս խաղաղութիւնը, աչացս քունը յափշտակեց և զիս յուսահատութեան անդունդներու մէջ դլորեց։ Սրտիս յուզմունքն, աչքիս արտասուքն, այսերուս չափազանց կարմրութիւնն մօրս շուտով դուշակել տուին այն ապէտալի դէպքը. զոր ես անկէ ծածկել կուզէի։ Այս դէպքէն երեք օր վերջ. երկրիս երեսէն սահելով անցաւ և մարեցաւ այն աստղն, որ իմ յոյսս և լոյսս էր, իրեն հետ տարաւ իմ ամէն երջանկութիւններս և մխիթարութիւններս։ Վերջացաւ այն յոյսը, որու ձեռքէն իմ պատուոյս վրէժխնդրութիւնս կ'ակնկալէի. Արսլանն էր այն ճրագ որ մարեցաւ, գերեզմանն եղաւ Արսլանի հարսանեկան առագաստ։ Վասնզի Վիչէնի անդթութեան զոհ դնաց. սպանուեցաւ Ստեփանէի չարաղոյժ դնտակէն։

Այն պսակ որ նորա փեսայութեան օրը իւր դլուխ պիտի զարդարէր, նորա գերեզմանի զարդն եղաւ։ Կ'ուզէի ես ալ անոր ետևէն դնալ, հաւատալով թէ՝ եթէ աշխարհի սէրը չ'կրցաւ զմեզ միացունել, հարկաւ երկնային սէրը զմեզ կզրկախառնէ յաւիտենականութեան երանական փառաց մէջ։

— Ձեր խօսքերէն կըհասկնամ թէ դուք Արսլանը շատ կըսիրէիք։

— Այո՛, մայր իմ, շատ կըսիրէի և մեր նշանուած օրէն սկսեալ սիրաս Արսլանի սիրոյ հովանւոյն տակը դրած էի, սիրաս անոթ մի էր, յորում ամփոփուած էր Արսլանի սիրոյ բռնութիւնը. բայց երբ Վիչէնի չար խորհուրդը և Ստեփանէի դնտակը Արսլանի սիրտը ծակեցին. իմ սիրաս ալ իւր վէրքն ունեցաւ. անկէ վերջ Արսլանը իւր սէրը վերցուց իմ բեկեալ սրտէս և տարաւ իւր ամիրանի հետ իւր աներևոյթ գերեզմանի մէջ թաղեց։

— Ի հարկէ նորա տեղը ուրիշի մը սէր դրիր։

— Մայր իմ, խորտակուած սիրտ մը կարելի չէ որ ուրիշ օր-

ոյ մը ընդունարան լինի։ Արսլանի մահուան յաջորդեց նաև իմ սրտիս և սիրոյս մահը։ Թէպէտ ձեր առջև կենդանի կենմ մի եմ. բայց հաւատացէք թէ, սիրոյս հետ սիրտս ալ մեռած է, և անսիրտ կ'ապրիմ։

— Ուրեմն պէտք էր որ նորա սիրոյն հաւատարիմ մնայիր. և ուրիշի հետ չամուսնանայիր։

— Իրաւունք ունիք այդպէս ըսելու. և ես պարտաւոր էի ձեր ըսածին համեմատ ապրելու. բայց բռնութիւնն չ'թողուց որ ես Արսլանի յիշատակին հաւատարիմ մնայի և նորա ամիրային պահպան լինէի։ Ոչ թէ Վիչէնի համակրութենէն, այլ բռնական և ակնածային երկիւղներէն հարկադրեալ զիջում ըրի անոր հետ ամուսնանալու։

— Ամուսնանալէդ վերջ Վիչէնի տան մէջ երջանիկ էիր։

— Վիչէնի տան մէջ վարածս կեանք երջանկութիւն մը չէր, այլ միայն քանի մի աւուր համար փոքր հանգստութիւն մի էր. և այն ալ խիստ շուտով կորսնցուցի։ Մայր իմ, ինձ եղածը արկած մը չէր. այլ պարզապէս ոճիր մը էր. ես ինչպէս կրնայի մոռանալ և հաշտ աչօք նայիլ այդ վատութեան հեղինակի վրայ. մանաւանդ երբ զիս կըհարկադրէր՝ որ յղութիւնս վիժեցնեմ. ամէն ոճիրներու վրայ մարդասպանութեան ոճիր մը ևս աւելցունեմ։

— Ինչո՞ւ կուզէր որ դուք ձեր յղութիւն վիժել տայք։

— Մայր իմ, պատճառն խիստ յայտնի է. կ'ուզէրՎիչէն որ մեր մեղապարտ յարաբերութիւն թագուն մնայ, որպէսզի իւր պատիւը չարատաւորի. և իրենց ընտանեաց պատիւ պահպանեալ մնայ։

— Կ'երևի թէ զՎիչէն բնաւ չէիք սիրեր։

— Ոչ, երբ կը յիշէի պատուոյս բռնաբարութիւնը, Արսլանի կորուստը. իմ անպատիւ կեանքս, շարունակ մտքիս մէջ զՎիչէն դաղտնապէս կործանելու խորհուրդներ կը յարուցանէի. և Վիչէնի սէրը բնաւ չ'կարողացաւ սրտիս մէջ մուտ դտնել. և Արսլանի սիրոյ յիշատակը մտքէս ջնջել. միայն ակամայ կամքը կը լսէի. ընտանեկան խաղաղ վիճակ մը չ'թուռնաւորելու համար պէտք է ճշմարիտը խօսիլ, սիրտս միշտ ալէկոծութեան մէջ էր. Վիչէնի տան մէջ ես ուր չէի ակնկալեր, բայց մտօք խա-

զաղութիւն կ'երազէի : սակայն ընդհակառակն հոն մրրիկներով փրփրած ծովու եռացող յորձանքներու պէս գտայ . երբեմն խռովութեան ալիքներէն խորտակուեցայ . երբեմն մատնութեան ժայռերուն զարնուեցայ . անիրաւութեան , խարէութեան , հակառակութեան , և սրտի անհանգստութեան մէջ կը ծփայի . կիրքերս զիս վրէժխնդրութեան մղել կ'ուզէին : Ինչպէս որ երկու հակառակ հողմեր իրարու կը դիմադրեն , այսպէս ալ վրէժխնդրութեան կիրքերս և ողջամիտ բանականութիւն բուռն կերպով իրարու հետ կը մրցէին . մտքիս մէջ երթևեկութիւն ընող հաղարաւոր մտածումներու մէջ շարունակ անհանգիստ էի . Ովկիանոսի մէջ ծփացող ալեկոծեալ նաւի մը պէս որոդայթներ լարելու խորհուրդները մտքիս մէջ յաջորդաբար շրջան կատարելով զերար կը ջնջէին . կը խորհէի թէ խնդրոյն յաջողութեան դաղտնեաց բանալին ուրկէ՞ կրնամ ձեռք ձգել :

Երբ Վիչէնի տղեղ գործոյն յիշատակն կենդանի կերպով աչքիս առաջ կը պատկերանար . տարօրինակ յանդգնութիւն մը զիս վրէժխնդրութեան կը մղէր . յետոյ խորհելով ինքզինքս կը հանդարտեցուցնէի ըսելով թէ դաղտնիքը ծածկելով զիս իրեն կնութեան առաւ . ուրեմն անյիշաչարութեամբ մոռնալու է . պէտք չէ ծածկել որ զինք բնաւ չէի սիրեր և միշտ ակամայ կը հետևէի իրեն . գիտես թէ ներքին ձայն մը ինձ լուր կուտար թէ , դու այս մարդուն երեսէն օր մը մեծ հարուած մը պիտի կրես . զի գիտէի թէ Վիչէնի միտքն ալ իր հաճոյքներու պէս փոփոխական էր :

Վիչէն յեղյեղուկ բնաւորութիւն մը ունէր , շուտ կը փարէր իր սիրած բանին աղայոյ պէս . շուտ ալ կը մոռանար զայն , անհաստատմութեան մասին առաջին տեղը կը բռնէր , շուտ կը յուզուէր , վշտաբեկ սիրտ մը ունէր . խիղճը միշտ հիւանդ էր . և մեծ մասամբ քնոյ մէջ կը խորդար : Նորա բարոյական ոյժը խիստ անդոր էր , ասոր բնական հետևանքն եղաւ . նաև իր ֆիզիկական ուժի կորուստը , որք աստիճանաբար առաջ կերթային : Այս տարտամ վիճակն ունէի իշխանի տան մէջ , և մահը կեանքէն աւելի կարժէր ինձ համար : Գիշեր մը առանձին նստած էինք ես և Վիչէն . յանկարծակի դուռը բացուեցաւ , Վիչէն դուրս կանչուեցաւ . և երեք դիմակաւորներ եկան

ու զիս վերուցին . երբ դիմակաւորներու հետ սենեկէն դուրս կելլէի , ըսաւ Վիչէն . դնա տիկին . թէև զքեզ չուզելով կը զրկեմ , բայց պէտք է որ երթաս . զի մեր ընտանեաց պատուոյ ապահովութիւն քու մահուամբդ պիտի պահպանուի :

Ջերմութեան բռնուող հոգին երբեմն մարդկային յատուկ եղած տսեռութեան սահմանէն աւելի հեռուն կը տեսնէ , արդէն գուշակած էի թէ բանտ պիտի երթամ և գնայի . այն խաւար բանտի մէջ առաջին դիշերը խիստ շատ տառապանքներ կրեցի . առանձնութեանս մէջ կրկանչէի կը պաղատէի , կուլայի . սակայն ձայնս լսող չկար . կիսախաւար ճրագ մը կար , այն ալ մարեցաւ և կենացս կարողութեան կէսը իր հետը տարաւ . ծարաւութենէս կը պաղատակէի , ջուր չունէի . կրկանչէի . բերող չ'կար շղթայակապ չէի , բայց սենեկիս դուռը և պատուհանները վրաս գոցած էին , խաւարը շոշափելով սենեկիս մէջ պտոյտ կը նէի . այն վայրկենին զառանցանքներ սկսան միտքս շփոթել և զիս իրական աշխարհէն երևակայականի մէջ ձգեցին . երբ աչքս կը գոցէի քնանալու համար , այլանդակ երազներու շարք մը կուգար մտքիս առաջէն կ'անցնէր կ'երթար անոր տեղը ուրիշ կը յաջորդէր - այդպիսի երկիւղի սոսկալի սարսուռ մը զգացի բանտին մէջ այն դիշերը , որ ցորեկը բնաւ մտքէս անցած չէր , այլ դիշերուան մութը անոնց ամէնքն իր հետ բերած էր զիս այլանդակ ցնորքներու մէջ ընկղմելու համար :

Սաստիկ վախէս կեցածս տեղ անշարժ մնացի , ոչ աչ և ոչ ահեակ կրնայի նայել աչքիս այլանդակ բաներ կերևնային . այս միտքս և սիրտս վրդովող չարագուշակ ժամը բոլոր կենացս մէջ չ'պիտի կարողանամ մոռնալ :

Զեմ յիշեր թէ որչափ ժամանակ այս ողբմելի վիճակի մէջ դրեթէ կիսով չափ անզգայ մնացի . վրաս մարելիք կուգար . բայց երկիւղս զայն կը ցրէր , քնացած չէի բայց տքնութենէս յոգնած թմրեալ էի :

Բնութիւն կուլար . օդը փոթորկալի էր . բայց իմ սրտիս խռովութեան մրրիկները օդի փոթորիկները կը դերազանցէին :

Մայր իմ , կը տեսնես թէ հալեմաշ կեանքս , խորտակեալ սիրտս , խառամեալ դեղեցկութիւնս դէպ ի դերեզման կը խոնարհին , դերեզմանի դուռը . որ յաւիտենականութեան սեմն է .

կարթը ձգած զիս կը քաշեր նման այն ձկնորսին , որ թակարթ ձգելով ձկան կզակէն կը բռնէ և կը քաշէ ։

Այս յուսահատ ժամերուս մէջ երբեմն սիրտս մտաբս և երևակայութիւնս քաղցը զուարճութիւններով կը լեցուէր , երբ Արսլանի անմեղ և սիրուն յիշատակները հոգմավար ամպի պէս կուգային աչքիս առաջէն անցնելով կերթային , սոյն միջոցներուն մէջ կուգէի հաստատ թէ՝ տեսածներս իրականութիւն են , և երբեմն իրրև իրական կարծելով կ'ըսէի . նոյն իսկ ինքն է . և կ'սկսէի նորա հետ խօսիլ . բայց նա բնաւ ինձ չէր պատասխաներ , և շատ մը անյայտ կը լինէր . հոն վերահասու կը լինէի թէ տեսածս իրական չէր , այլ երևակայական ։ Երբեմն կը պատահէր որ բանտապահ կինը ներս սենեակս մտնելով կը հարցուներ թէ , ո՞ւմ հետ կը խօսէիր . անոր պատասխանը իմ մելամաղձոտ լռութիւնս կը լինէր , և երբեմն արհամարհական սոյն խօսքն կ'արտասանէի. ինչ ի՞նչ փոյթ է իմ ո՞ւմ հետ խօսիլն , և ի՞նչ իրաւունք ունիք իմ սենեակս մտնելու ։ Եւ նա սրդահատելով իմ խեղճ վիճակիս վրայ՝ առանց ձայն հանելու դուրս կելլէր . կ'ուզէի ես զիս այս անպատեհ վիճակէն ազատել . բայց չէի յաջողէր . զի միշտ ուղիղ դատումս երևակայութենէս կը յաղթուէր։ Վերջապէս այս ցաւերուս մէջ ծննդաբերութեանս ժամանակն հասաւ մինչը չ'կար քովս , միայն բանտապահ կինը տեսայ՝ որ սենեկիս առաջէն կ'անցնէր . աղեղորմ ձայնով մը աղաչեցի իրեն որ սենեակս մտնէ ։ Նա՝ որ խիստ բարի կին մի էր , շուտով մը ներս մտնելով՝ դէմքիս սրտիս գալարումներէն , և իրարու ետևէն յաջորդող թանջերէն շուտով իմացաւ հիւանդութեանս ինչ լինելը ։ Երբ լալագին դիմօք ձեռքս իրեն կարկառելով իրմէն օգնութիւն կը խնդրէի , նա ձեռքս բռնելով ըսաւ շատ մի՛ վրդովիր . ատիկա այն վշտագին ցաւն է , որ ամէն ծննդաբեր կանանց կը պատահի . բայց բարերազդաբար զարնան մրրիկներու պէս շուտով կ'անցնի ։ Այս ժամուս մէջ քեզ համար ուրիշ բան մը պէտք չէ , միայն թէ՝ քիչ մը տակալ և քիչ մը ալ համբերել պէտք է ։ Զաւակս , ես եօթն անգամ կլած եմ այդ ցաւը շուտով կ'անցնի . քիչ մը ևս համբերէ ։

Եկաւ ժամը . ու ծննայ այս փոքր Վիչէն . զոր գիրկս կը տեսնես . ծննդաբերութենէս քանի մի օր վերջ բանտապահ

ֆնաջմէն հրաման առնելով դուրս ելայ երեք ժամէն վերադառնալու պայմանաւ ։ Բայց երեք անծանօթ զիմակաւորներ զիս յարձակելով բերին հոս ձգեցին , անոնք զիս այստեղ փոխադրած ժամանակ ճանապարհին երկիւղներով զիս պաշարելով , յաջողեցան իմ ձեռքէս Վիչէնի ինձ տուած ոսկւոյ պարկն առնել , և ինձմէ քանի մի մասնաւոր տեղեկութիւններ քաղել ։ Ահա մայր իմ , ասոնք են իմ կենսագրութիւնս , որը ձեզ պատմեցի . այժմ այս հիւանդանոցիս մէջ խիստ հանդիստ եմ , և ապահով , և չուզեցի իրենց բնակ լինել , լուացարարի պաշտօն ստանձնելով ձեռքիս աշխատութեամբ կ'ուզեմ ապրիլ աստ և ապրեցուցնել զաւակս . եթէ խաւարներու մէջ լարուած նոր ծուղակներու մէջ չ'ղլորիմք ։

— Սոֆիան կը յիշէս տակաւին , և մոռցած չէս ։

— Ո՞հ մայր իմ , բարեկամ և բարերարն ալ մոռնալը տեսակ մը ապերախտութիւն է ։

— Աղջիկս , աշխարհի ամէն գառնութիւնները ճաշակած ես. կարելի է որ Աստուած քեզ ողորմելով բարեբաստիկ օրեր տայ քեզ ։

— Մայր իմ , երազներ են այդ տեսակ յոյսերը , բայց նորէն շնորհակալ եմ ձեր մխիթարական խօսքերէն ։

— Յուսալի չէ՞ արդեօք , որ ձեր նշանած և սիրած Արսլանը տակաւին ողջ լինի ։

— Մայր իմ , կրնամ երազել . բայց չեմ կրնար յուսալ . զանազի մեռելներու յարութիւն առնելու հրաշից դարն անցած է։

— Թերահաւատ մի՛ լինիր , զաւակս յուսա և հաւատա թէ՝ Արսլանը ողջ է . և ես նորա մայրը Սոֆիան եմ Եղիսաբէթ անուան տակ ծածկուած ։

— Սոյն միջոցին Կատարինէն իր ուրախութենէն հինգ վայրկենի չափ ինքզինք կորսնցուց ։ Ըսաւ Սոֆիան ։

— Զաւակս , կը տեսնես , այնչափ կերպարանափոխ եղած եմ որ այսչափ ժամանակ չ'կրցար զիս ճանաչել , հաւատա թէ՝ անաղարութիւն զքեզ պիտի պաշտպանէ ։

— Կատարինէն սկսաւ լալ , և Սոֆիայի ոտքն իյնալով ըսաւ. Տէր Աստուած , հոգիս ինձմէ բաժնուած գնայած մեռելներու կայանքի մէջ կը թափառի , թէ մեռելները յարութիւն առած

եկած են մեզ հետ տեսնուելու։ Արդեօք տեսածս երազ է, թէ իրականութիւն։ Մայր իմ, Հշմարիտ խօսէ դու իմ բարերար Սոֆիան և Արսլանի մայրն ես, թէ զիս պատրելու համար կը-կեղծես. մայր իմ, մայր իմ, յաւիտենականութեան մէջն եմ արդեօք։

—Աղջիկս, այլ ևս պէտք չէ որ լաս. վասնզի երջանկութիւն և ուրախութիւն մօտ է, ոչն միջոցին Կատարինէի արտասուաց մէջէն գառնութեամբ խառնուած ժպիտ մը երևցաւ։

Զատիկս, կը յիշէ՞ս քու պատուոյ բռնաբարութեան այն տուկալի օրուան մէջ Արսլանի խօսած խօսքերը։

— Ո՛չ, մայր իմ, կը խնդրեմ օգնեցէք յիշողութեանս։

— Ուրեմն համբերէ, որ՝ արթնութիւն տամ յիշողութեանս։ Այն օր՝ որ այն աղէտալի դէպք քեզ պատահած էր, մայրդ զմեզ ձեր տունը կանչեց. և ամէն բան պատմեց. հոն Արսլան ըսաւ. Նեղոսի մուկ մը կրնայ կոկորդիլոս մը սպանել։

— Այո՛, մայր իմ. թէև ես հոն ներկայ չէի. բայց առանձնարանիս դրան ետև կանգնած մտիկ կ՚ընէի և լսեցի։

— Ուրեմն համոզուէ թէ՝ Արսլան ողջ է, և թէ՝ Վիչէնի հոգին այսօր Արսլանի ձեռքի մէջն է. և դու այսօր Կրօնական Ժողովոյ պիտի ներկայանաս քննութեան համար. և բնաւ մի երկմտիր, ամէն բան Հշմարտութեամբ և անպատրուակ կերպով խօսէ զքեզ արդարացնելու համար։ Բայց մեր ողջ լինելը մի՛ յայտներ. այդ կէտ առ ժամս թող թագուն մնայ. եթէ Վիչէն ուզէ զքեզ կրկին առնուլ, յօժարութիւն ցոյց մի՛ տար. մի՛ գուցէ կեանքդ նոր վտանգի մը ենթարկես։

— Ո՛չ մայր իմ, ես բնաւ չ՚պիտի զիջանիմ այն ծայրահեղ տարկութեան, և մտայ նուաստութիւն ունեցողանձի հետ կրկին միանալ. զի նորա ուրախութիւն անխորհուրդ՝ և զուարճութիւնն զգայական է. նորա միտք խոհեմութեան մասին իսպառ անմասն է, ես լաւ կ՚ընտրեմ մահուան հետ միանալ քան թէ Վիչէնին։

Այս պահուս արդէն արշալոյս բացուած էր, և յանկարծակի հիւանդանոցի դուռը զարնուեցաւ. ներս մտնողն Արսլանն էր։ Կատարինէն գնայ նորա ոտքին փարեցաւ լալով և աղաչանքներով. և կը խնդրէր որ զինք որևէ դատարանի չ՚ներկայացնէն։ Ինք որոշած է հիւանդանոցի մէկ անկիւն անծանօթ կերպով իւր ձեռքի աշխատութեամբ ապրիլ։

—Արսլանն ալ արտասուեցաւ և յայտնեց թէ. եթէ ինքը կատարինէն դատարանին չ՚ներկայանայ, Վիչէնի ամէն եղեռնագործութիւն և ոճիրները թագուն պիտի մնան. հետևաբար քրոջս Արսլան՝ Կատարինէ. ես իրաւունք չունիմ զքեզ հարկադրելու, միայն թէ, եթէ կուզես Վիչէնի անիրաւութիւնները և ոճիրները երևան գան. եթէ կուզես որ քու անմեղութիւնդ ապացուցուի. վերջապէս եթէ Արսլանի սիրոյ հետքերը տակաւին կը գտնուին մաքուր սրտիդ մէջ պէտք է որ դատարանին դիմես և քու կողմէ արդէն ուրիշները բողոքած են. և քու սուրբ դատդ պաշտպանութիւն ստանձնած են։

— Կատարինէն չ՚կրնաս Արսլանի սիրոյն դէմ դալ, ըսաւ Արսլան, կենացս և պատուոյս պաշտպանութիւն ձեզ կը յանձնեմ։ և պատրաստ եմ ձեր հրամանի ետևէն դալ։ Արդէն Կրօնական Ժողովոյ կողմէն մարդ մը եկած կ՚սպասէր զԿատարինէն տանելու. Կատարինէն ելաւ հիւանդանոցէն գնալ Կրօնական Ժողովոյ ներկայանալու։

ՊԱՏԱՐԻՆԷԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ ՅԱՏԵՆԻ ԿՐՕՆ. ԺՈՂՈՎՈՅ

Դատարանը վեհ պատկառանք ազդող մեծ սրահ մի էր. մարմարեայ սիւներու վրայ կամարաձև շինուած, որու արևելեան կողմը նախագահի և ժողովականաց ոսկեզօծ աթոռները շարուած էին. մէջ տեղը ընդարձակ գրասեղան մը կանանչ սփռոցով ծածկուած և անոր վրայ դրուած էր խաչ մը և աւետարան մը։ Դրասեղանն զարդարուած էր շուշան ծաղիկներով, վարդատունկերով, ըստ արևելեան սովորութեան ժամ վեց էր, երբ ազդարար հնչակ զարնուեցաւ և Կրօնական Ժողովոյ անդամները, որք եկած վեհարանը հաւաքուած էին, մի զինի մոյ ներս մտնելով ֆրենց աթոռներու վրայ բազմեցան. ամենէն վերջ նախագահ Ցրբազան Եպիսկոպոսը դաւազանակիր վարդապետի մը առաջնորդութեամբ խորհրդարանը մտաւ ժամանակ ամենքն երկիւղածութեամբ յոտնկայս և ակնածական խոնարհութեամբ նորին

Սրբազնութեան դալուստը կը բարեւէին. Սրբազան Եպիսկոպոսն Գլխոյ խոնարհութեամբ խորհրդոյ անդամները բարեւելէն վերջ անցաւ իւր նախագահական աթոռը բազմեցաւ. և հրաման արաւ որ Վիչէն իշխան և Կատարինէ իշխանուհին ներս բերուին և եկած նամակը կարդացուելէն վերջ քննութեան սկսուի։

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ ՆԱԽԱԳԱՀ ԿՐՕՆԱՅԻՆ ԱՏԵՆԻ

Քրիստոնեայ եկեղեցին բնաւ չներեր որ մէկ մարդ երկու կին ի միասին ունենայ. քանի որ Վիչէնի ամուսինը Կատարինէն ողջ է, Վիչէն կարող չէ ամուսնանալ, և կըլսեմք թէ՝ Վիչէն կ՚առարկէ թէ՝ Կատարինէն մեռած է. Վիչէնի սոյն առարկութիւն սուտ է։ Սրբազան Տէր, եթէ Վիչէն կըսնդէ Կատարինէի մահուան վրայ, Կատարինէն ինք պատրաստ է Ձեր Սրբազնութեան հրամանաւ դալ և ձեզ ներկայանալ։

Սրբազան Տէր, իբրև Ձեր խոնարհ որդին, և եկեղեցական օրինաց նախանձախնդիր, (զորս Վիչէն իշխան ոտնակոխ ընել կ՚ուզէ), կըհամարձակիմ Ձեր Սրբազնութեան ներողութեան դիմելով պահանջել որ, Վիչէնի ամուսնութիւն յետաձգուի. մինչև որ ասոնց քննութիւն կատարուի. և եկեղեցական իշխանութեան վճիռն արտասանուի, յետ այնորիկ ազատութիւն տրուի անոր ամուսնանալու։ Մնամ խոնարհ ծառայ Ձեր ՄԻՍԱՔ

Սոյն նամակի ընթերցումէն յետոյ իշխանն և իշխանուհին այլևայլ ընդունելութեան սենեակներէն ժողովատեղին հրաւիրուեցան իրենց համար պատրաստուած աթոռակներու վրայ նստելու. յայնժամ նախագահն վեհապետական ձայնով մը ունկնդիր ժողովրդեան լռութեան և հանդարտութեան հրամանին հետ նա և Վիչէն իշխանի բողոքագիրները կարդալու և քննութեան սկսելու ազատութիւն տուաւ։ Նախագահ Սրբազանի ազդու ձայնը. դատարանի պատկառանքն և խնդրոյն հետաքրքրութիւնն մեծ տպաւորութիւն կ՚ընէին ունկնդիր ժողովրդեան վրայ։

Առ Նախագահ Սրբազան դատական Կրօնական Ժողովոյ։

Սրբազան Տէր.

Նախախնամութեան դաղտնեաց մարդ չ՚կրնար խելք հասցուցել. կնճռալի խնդիրներ կան, որք տարիներով ատեաններ կըբնան դաղտնեցունել, և նորէն անլոյծ մնալ. բայց Աստուածային տնօրէնութիւն մէկ ակնարկով կըլուծէ զայն։ Այս կարգին կըվերաբերէր մեր և Կատարինէի ամուսնական խնդիրն, որ տարիներով Կրօնային Ատեանը պիտի դաղտնցընէր. սակայն Աստուածային կամքն ինքնին լուծեց այդ կնճիռը Կատարինէի մահուամբ. ուրեմն ազատութիւն կըխնդրեմ Ձեր ներողամիտ Սրբազնութենէն. շնորհք ընէք ինձ հրաման տալ ուրիշի մը հետ ամուսնանալու։ ՎԻՉԷՆ

Վսեմափայլ Վիչէն իշխան։

Մինչ ձեր դրութիւն Կատարինէի մահ ծանուցանելով՝ ձեր երկրորդ ամուսնութեան հրամանը կըխնդրէր, միւս կողմէն մեզ հասած ուրիշ դրութիւն մը կըյայտնէր թէ Կատարինէն մեռած չէ, այլ ողջ է. և երբոր ուղուի պատրաստ է Կրօնական ատեանին ներկայանալ. և ձեզ հետ դատուիլ. զայսոսիկ ծանուցանելով ձերդ վսեմութեան ի դիտութիւն։

Մնամք յարդանօք Գ. Ե. Կ. Ա.

Գերապատիւ Առաջնորդ սրբազան Հայր, Նախագահ Վիճակային Կրօնական Ժողովոյ։

Իմ ակնածական յարդանքներ և որդիական հպատակութիւնս Ձեր Սրբազնութեան դահոյից տակ դնելէն վերջ. կուզամ խոնարհաբար յայտնել թէ, արդէն Ձեր Սրբազնութիւն քաջ խակդիտէ, որ ժամանակէ մը առաջ Սամուէլեան օրիորդ Կատարինէի հետ ամուսնացանք Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ օրինաց։ Ձեր Սրբազնութեան կողմէն թող ներուի ինձ յայտնել թէ օրիորդ Կատարինէն կոյս չ՚զտայ. ի վերայ այսր ամենայնի, համեստներուն և ողջմտութեան դայթակղութիւն չ՚պատճառելու

նպատակս իմ առանձին դաղտնեաց քաղին տակ ծածկեցի զայն յայտնելու նպատակս։

Սրբազան Տէր, ցաւ է ինձ յայտնել թէ՝ չ'ծածկուելիք պարագայ մը. այն դաղտնիքն հրապարակագոյժ ըրաւ, որով հարկադրուեցայ մեր ընտանեաց պատիւ պահպանելու համար զայն մեր ընտանիքէն հեռացուցանել։

Ուրիշներ ինձ լուր տուին թէ, Կատարինէն իւր ծնողաբերութենէն տասներկինգ օր վերջ վախճանած է. որուն համար խնդրագրով մը ներկայացայ Ձեր Սրբազնութեան և ուրիշի մը հետ ամուսնանալու հրաման խնդրեցի։

Առաջ կը բերեմ Ձեր Սրբազնութեան ինձ ըրած ազգարարութիւն յորում կը յայտնէիք թէ, Կատարինէն ողջ է իւր զաւակով հանդերձ. հետևաբար առանց քննութեան և դատաստանի դուք կարող չէք ուրիշի մը հետ ամուսնանալ։

Արդ Սրբազան Տէր, կարծեմ թէ երբ ինձմէ լսէք թէ՝ Կատարինէն ինձ հետ ամուսնանալէն վեց ամիս վերջ զաւակ մը ծնած է՝ չ'պիտի վարանիք զնա մեղապարտ համարելով ինձ ուրիշի հետ ամուսնանալու հրաման տալ։

Մնամ յարգանօք ձեր հպատակ որդին ՎԻՉԷՆ

Վսեմափայլ Վիչէն իշխան։

Ձեր ամուսնանալու խնդրոյն վերաբերեալ գրութիւնն ստանալով, Կրօնական պատկառելի Ժողովոյ ուշադրութեանը յանձնեցի. նա իմ միջոցաւս կը յայտնէ ձերդ վսեմութեան թէ առանց ղձեզ և Կատարինէն հարցաքննելու որևէ տնօրէնութիւն կարելի չէ ընել։

Ուրեմն յառաջիկայ ուրբաթ պէտք է որ ներկայանաք Կրօնական Ժողովոյ, այսպէս ալ Կատարինէն որ հրաւիրուած է։

Կրօնային ատեան երկու կողմ լսելէն վերջ պիտի արտասանէ իւր վճիռ Հայաստանեայց սուրբ և ուղղափառ եկեղեցւոյ օրինաց համաձայն։

Մնամ աղօթող Գ. Ե. Կ. Ա.

Նամակաց ընթերցումէն յետոյ. դիւանադպիրն հրաւիրեց զԿատարինէն հարցաքննութեան. և Կատարինէն մաքուր խղճի ազդած անվեհերութեամբ ոտք ելլելով ըսաւ, պատրաստ եմ պատասխանելու ինչ որ հարցուն։

Հարցուց քննիչն։

— Տիկին, ի՞նչ է ձեր անուն։

— Կատարինէ.

— Ո՞ւրտեղացի էք։

— Տ.... քաղաքէն։

— Ո՞ւմ դուստր էք։

— Ժամադործ Սամուէլի։

— Ամուսնացեա՞լ էք, թէ ամուրի։

— Ամուսնացեալ եմ.

— Ո՞վ է ձեր այր։

— Վիչէն իշխան։

— Ո՞րքան ժամանակ է ձեր ամուսնութիւն։

— Ութ ամիսէն քիչ մը աւելի.

— Միայն քաղաքական օրինօք կապուած էք միմեանց հետ։

— Ո՛չ տէր, Հայաստանեայց եկեղեցին քաղաքական կապ չճանաչէր՝ եկեղեցական օրինօք և քահանայի օրհնութեամբ հրապարակաւ պսակուած եմք միմեանց հետ Վիչէն իշխանի տան մէջ. և հարիւրաւոր հանդիսական վկայից ներկայութեան։

— Տիկին, նոր ամուսնացեալ կին մը. քանի՞ ամիսէն կրնայ զաւակ մը ունենալ։

— Ընդհանրապէս ինն ամիս և քանի մի օրէն. իսկ բացառիկ կերպով եօթ ամիսէն։

— Դուք այժմ զաւակ ունիք։

— Այո՛, տէր, ինչպէս որ կը տեսնէք դիրկս առած ձեր առաջ կը գտնուիմ։

— Ամուսնանալէդ քանի՞ ամիս վերջ այդ զաւակը ունեցար։

— Վեց ամիս վերջ։

— Սխալ կը խօսիք, տիկին։

— Ամենևին սխալ չէ, ճշմարիտ կը խօսիմ։

— Նոր ամուսնացեալ օրիորդ մը, վեց ամսէն զաւակ մը ծնելը բնականին դէմ է։

— Տէր դատաւոր. ոչ թէ բնականին. այլ ամուսնական հաւատարմութեանց. և պսակի օրինաց դէմ է։

— Տիկին, չեմ հասկնար ձեր լեզուն, դուք քիչ մը առաջ ըսիք թէ բացառիկներ միայն եօթն ամիսէն կը ծնին, և դուք

ձեր խոստովանութեամբ կըհաստատէք թէ (արտաքոյ բնութեան) ամուսնանալէդ վեց ամիս ետքը զաւակ ծնած էք. այս հակասութիւն բնական օրէնք կըջնջէ. և այս մասին բացատրութիւն կըպահանջուի ձեզմէ։

— Տէր դատաւոր, խնդիրը պարզ է. և պատրուակ չվերցուներ։

— Եւ ի՞նչպէս։

— Երբ կին մը իւր ամուսնութենէն վեց ամիս վերջ զաւակ մը ծնի. ասկէ չենթադրուիր թէ յղութիւն վեց ամսուան է. թերևս բնութեան պահանջած ճիշդ օրերու մէջ տեղի ունեցած է այդ յղութիւն։

— Տիկին. էք դիտեր թէ չամուսնացող աղջկան մը հաւատարմութեան առաջին նշանը կուսական կնիքն է։

— Այդ բանը ես գիտէի. բայց Վիչէն չէր գիտէր. կըխնդրեմ որ անկէ հարցունէք։

— Ես բան մը չեմ գիտէր, տիկին, կ'ըսէ. դուք ձեր գիտցածները ըսէք։

— Ես ձեզմէ կըհարցունեմ, տիկին. ինչո՞ւ ձեր կուսական կնիք անարատ չպահեցիք։

— Տէր դատաւոր, պահելու համար խիստ շատ աշխատեցայ, լացի ողբացի, աղաչեցի, պաղատեցի. որ այսօր ինձմէ փընտրուած կուսութիւնս անարատ պահէի. բայց չ'յաջողեցայ։

— Միթէ բռնադատուեցա՞ք։

— Այո՛ բռնադատուեցայ.

— Ինչո՞ւ զձեզ բռնաբարողին չ'դիմադրեցիք։

— Դիմադրեցի, այնչափ, որչափ որ կարողէր կնոջ մը անձնական և բարոյական տկար և անզօր կարողութիւնը դիմադրել։

— Ինչո՞ւ չ'բողոքեցիք։

— Բողոքեցի, բայց ձայնս լսելի չեղաւ։

— Ո՞ր արդարութեան ատենին բողոքեցիք։

— Միայն Աստուծոյ բողոքեցի, չուզեց լսել, թերևս նորա օրհնեալ կամք այսպէս անօրինած էր, որ ես այսպէս հրապարակաւ խայտառակուիմ։

— Ինչո՞ւ քաղաքական դատարաններու չ'դիմեցիք։

— Չ'դիմելուս պատճառները ունէի.

— Կուզէ՞ք այդ պատճառները յայտնել։

— Այո՛, տէր դատաւոր. անոր համար չ'բողոքեցի որ բռնաբարուելոյս վկայ չունէի. և բողոքելով դատս և պատիւս մէկէն պիտի կորսնցունէի՝ երկրորդ զիս բռնաբարելէն վերջ խոստացաւ իրեն կնութեան առնուլ և ոճիրը ծածուկ պահել. թէ և ես չէի ուզեր նորա հետ ամուսնանալ. բայց պատուոյս արատները ծածուկ մնալու համար ակամայ ընդունեցի նորա հետ ամուսնանալը. ահա ասոնք են չ'բողոքելուս պատճառը։

— Տիկին, նորէն պարտաւոր էք ամէն կարելի եղած միջոցները ի գործ դնել և զձեզ անարատ պահել մինչև ձեր ամուսնանալու օրը։

— Պարոն դատաւոր, ձեր ըսածն իրաւունք է. և ես պարտաւոր էի. բայց ես անզօր, շուրջս մէկը չկար որ ինձ օգնէր, ձայնս ուրիշ տեղ չէր հասնիր. այսպիսի նեղ պարագայի մը մէջ ինձ պէս տկար արարած մը զօրաւոր մարդու մը կրից բռնութեան առջևը որքան որ կրնար տոկալ և ինքզինքս պաշտպանել այնչափ դիմացայ. բայց անյաջող մնայի. զի բռնութիւն զիս յաղթահարեց։

— Եթէ Վիչէն էր զքեզ բռնաբարող. և յետոյ զքեզ իրեն կնութեան առնողը. ուրեմն ինչո՞ւ զքեզ բանտարկել տուաւ. և այժմ զքեզ կըմերժէ։

— Տէր դատաւոր, եթէ չ'յաղանայի, Վիչէն զիս չպիտի տարագրէր. եթէ յղութիւնս վիժէի, զիս չպիտի մերժէր. ըստ որում այս մասին, ես իրեն երկաթեայ կամաց չ'հետևեցայ. նա ալ իրենց ընտանեաց իբր իշխանական պատիւը պահպանելու համար այս ամէն չարիքները գործեց։

— Դու այդպէս կ'ըսես, բայց Վիչէն իշխանն արդէն քու զէմդ կըբողոքէ՝ զքեզ իբրև կոյս աղջիկ իրեն կնութեան առած է, բայց զքեզ կոյս չգտնելոյն հետ մէկտեղ, զքեզ յղի վիճակի մէջ գտած է. անոր համար յանուն արդարութեան կըբողոքէ, և զքեզ իւր կնութենէն արձակելէն վերջ օրինաց գրած պատիժն ալ կըպահանջէ անօրինել քեզ համար ի զղջութիւն բարոյական պատուոյ։

— Տէր դատաւոր. Վիչէն իշխանն է զիս հրապուրող. իմ տունս մէջ զիս բռնաբարող և իրեն կնութեան առնելու խոս-

տումն տուողը · ինչպէս որ իւր խոստման հաւատարմութիւն պահելով զիս իրեն կին ընդունեց · ասոր այսպէս լինելոյն ապացոյց՝ մէջ կը բերեմ թէ եթէ իշխանն ինք չէր մեր ամուսնութենէն առաջ իմ կուսութիւնս բարձող՝ ամուսնութենէն յետոյ անմիջապէս ինչու չ՚մերժեց · ինչու չ՚բողոքեց · և ինչու ամուսնի մը առելի ինձ հետ կենակցութիւն ունեցաւ ։

Սոյն միջոցին Կատարինէն ակնպիշ իշխանին երես կընայէր · Նորա դէմքի վրայ արդարութեան նշան մը տեսնելու յաւաստակայն պատուամոլութիւնը մարդասիրութեան ամէն զգացումները նորա սրտէն քաշած առած էր ։

Իշխանը խրոխտ ձայնով մը գոչեց Կատարինէին · անհաւատարիմ կին · որում Կատարինէն քնքուշ ձևի մը տակ պատասխանեց ։

— Տէր իշխան, տակաւին իբր քու կինդ · և դու իմ այրս · կը հանդուրժեմ յուզեալ սրտէդ բղխած նախատական յանդիմանութիւն լսել, պայմանաւ որ հանդարտելէդ վերջ կրկին քեզ վերադարձնեմ։

Տէր իշխան, անհաւատարիմ ես չեմ, այլ իշխանն է որ աղքատ օրիորդ մը հրապուրեց ժամանակէն առաջ · յետոյ իրեն կին առաւ · և այժմ ինքզինք հասարակաց մեղադրանքէն ղերծ ազատելու համար իւր անհաւատարմութեան վրայ զրպարտութեան մեղք մը ևս կ՚աւելցունէ ։

Իշխան · այսօր այս տեղի մէջ պատիւդ փոխանակ զիս անարատութեան մէջ փնտրելու, այն օրը Սամուէլի տան մէջ քաղաքախոհութեանդ մէջ թող որոնէիր · որպէսզի երկուքս ի միասին այս յուսահատ վիճակին չհասնէինք ։

Իշխան, խիղճդ և Աստուածդ ի միասին կը ծախես զիս զրպարտելովդ · և զքեզ չ՚քմեղ հանելով · սակայն հոգ չէ · իշխանի պատիւը եթէ մնայ, թող անարատ մնայ · հոգ չէ որ ես շնացեալ և զաւակս պոռնկորդի համարուինք ։ Թող ես դատապարտուիմ և հալածուիմ · այս հալածանք իմ փառքս պիտի կազմէ Աստուծոյ առաջ · որ սկիզբէն մինչև վերջ ամէն բան կը գիտէ և տեսած է ։

Դասէր իշխան, ի՞նչպէս յանդգնեցար անմեղ հոգի մը խարտակել անպատուութեան և թշուառութեան ծանր լուծի տակ

ես քուկդ էի · եթէ ես քու խղճիդ առջև յանցաւոր էի, թող զիս մեղցունէիր, խղդէիր թունաւորէիր · և այս աստիճան չանպատուէիր ։ Սոյն միջոցին քանի մի արտասուաց կաթիլներ սրբեցան Կատարինէին տխուր աչքերէն ։

Տէր դատաւոր, ժամանակէն առաջ յղութիւնս ստոյգ է · ստոյգ է նաև որ յղութիւնս իշխանէն էր · սակայն ամուսնանալէս առաջ տեղի ունեցած լինելուն համար կատարեալ շնութիւն կը համարուի ։ Ուրեմն կրկին պատիժ սահմանեցէք ինձ, մինչ շնութեան, միւսն իշխանին զէմ անհաւատարիմ գտնուելոյս համար։

Ես կը ներեմ իշխանին, և կաղաչեմ որ Աստուած ալ ներէ իրեն, մինակ թէ կը խնդրեմ իրմէն որ վերջէն զղջայ իւր սխալանաց վրայ ։

— Ի՞նչ ապացոյց ունիք որ ձեր յղութիւն իշխանէն է ։

— Ապացոյց չունիմ, բայց վկայ ունիմ.

— Ո՞վ է վկադ ։

— Աստուած՝ որ ամէն բան կը տեսնէ ։

— Տիկին, երկրաւոր դատաւորն ձեռնհասութիւն չունի երկնից թագաւորը վկայութեան կանչել, զքեզ արդարացնելու ուրիշ փաստեր եթէ ունիս ըսէ ։

— Այո՛, ունիմ։

— Ի՞նչ է ։

— Իշխանի խիղճը ։

— Իշխանն արդէն յայտնած է թէ՝ ես այդ բանէն անպարտ եմ։

— Երդմնեցուցէք զինք ։

Ֆիլէն երդուեցաւ իւր անմեղութեան վրայ ։

— Լաւ ուրեմն, պարոն դատաւոր, քանի որ ձեռնհասութիւն չունիք Աստուծոյ վկայութիւն լսելու · և քանի որ իշխանն իւր խղճին հակառակ կ՚ուրանայ · և երդում ըրաւ · ուրեմն օրինաց առնէն խստագոյն պատիժը տնօրինեցէք ինձ համար, որպէսզի արիշները զգուշանան և ամուսնանալէն առաջ չ՚հաւատան իրենք զիրենք ուրիշներու յանձնել։ Կատարինէն իւր խօսքերը իշխանին ուղղելով ըսաւ ։ Դու մեր մեղապարտ յանցանաց վրայ ճարդասպանութեան մեղք մը ևս ինձ գործել տալ կուզէիր, և ես այս մասին քեզ համամիտ չ՚գտնուելոյս համար զիս այս

աստիճանին հասուցիր, Իշխան, կը հարցունեմ քեզ մարդկանց նախատինք մեծ կը համարիս որ շուտով կը մոռցուի թէ՝ խղճի խայթը, որ մինչև ի գերեզման պիտի տանջէ զքեզ։

— Այն միջոցին Իշխան իւր խօսքերն դատաւորին ուղղելով ըսաւ. Տէր դատաւոր, ես զԿատարինէն աղջիկ չ'գտնելոյս ելքն համար յանցանք կամ սխալմունք մը համարելով, զայն իբրև յաւիտենական գաղտնիք մը մեր առագաստի քողի տակ ծածկեցի. իբրև գերագոյն առաքինութեան գործ մը։ Բայց երբ ժամանակը գաղտնեաց վարագոյրն բանալով՝ ուրիշ այնպիսի իրողութիւն մը ցոյց տուաւ հրապարակին, որու վրայ ամէն ազնիւութիւն և համեստութիւն սրտմտեցաւ. իմ անբռնաբարելի իրաւունքս էր յանցանքը իւր տիրոջ տալ, պատուոյս վրայէն ամբաստ մը սրբելու համար։ Իշխանի խօսք ընդմիջելով ըսաւ Կատարինէն։

— Տէր Իշխան, թող քու պատիւդ անարատ մնայ, ամէն մեղք ինձ յատկացունելով. թող իմս տիղմերու մէջ թաղուի, ինչս չունի. իբրև իմ սխալանացս հետևանք հարկադրուած եմ ընդունելու. բայց ուրիշի մը հետ բնաւ մեղապարտ յարաբերութիւն չունենալուս, և անմեղութեանս վրայ պնդելով կը յայտնեմ թէ զիս դատապարտող, և Իշխանն անպարտ հրատարակող վճիռ մը եթէ արուի, զայն բնաւ արդար չեմ ճանաչեր. ոչ թէ պատժուելոյս համար, որ արդէն խղճիս առջև պատժապարտ մեմ. այլ ամէն մեղքերու վրայ ճշմարտութիւն ստելու մեղք մը ևս չաւելցունելու համար։ Աստուծոյ կը դիմեմ, որ գիտէ և կը տեսնէ, թէ ես միայն յանցաւոր չեմ. այլ դու ևս ինձ հետ յանցաւոր ես. և թերևս ինձմէ աւելի. յիշէ, Իշխան, թախանցանքներս, յիշէ այն խօսքերս, որ քու առաջդ ծունր դրած աղաչելով կը խօսէի, Իշխան, քու մեղքովդ զիս դատապարտելդ զքեզ չարդարացներ, զի երբ քեզ պէս բարձր դիրք ունեցող անձ մը կը ղեկջանի յետին աղքատի մը աղջիկն իրեն կնութեան ուզել, հոն ամենէն ապուշը կրնայ հասկընալ թէ այս սխալը նախնական սիրոյ մեկ արդասիքն է, Իշխան, դու առաջին անգամ իմ սիրտս գողցար. սէրս յափշտակեցիր. և այն մաքուր սէրը սրով վիրաւորեցիր. դնա՛, Կատարինէն զքեզ Աստուծոյ ևս խղճիդ վրէժխնդրութեան կը յանձնէ։ Իշխան, հաւատա թէ

ոճրագործի ձեռայ արիւնը ուրիշ բանով չ'սրբուիր, բայց եթէ իւր սրտէն բղխած աչայ արտասուքով միայն կրնայ լուացուիլ։

Դու կրցար մոռանալ ինձ հետ ունեցածդ ուխտ և դաշինք. սակայն համոզուէ թէ՝ խղճիդ խայթն բնաւ քեզ մոռցունել չ'պիտի տայ ուխտազանցութեանդ ցաւերը։

— Կ'ըսէ Վիչէն, տիկին, առ իս ունեցածդ յանցանք քեզ կրներեմ. բայց ցաւելով յայտնեմ թէ այլևս զքեզ իբրև իմ կինս չեմ կրնար ընդունել։

— Պարոն, շնորհակալ եմ որ կը ներես այն յանցանացս, որ իմս չէ, այլ քուկդ է, բայց դժբախտաբար այսօր իմ վրա՝ կրծանրանայ։

Իշխան, մի կարծեր թէ ես կ'ուզեմ քեզ հետ կենակցութիւն ունենալ. յաւիտեանս կը մերժեմ զքեզ. վանզի դու խայթիչ իժ մի ես. թունաւոր օձ մի ես. և պատառոտիչ ու գիշատիչ գազան մի ես. խնդիրը մեր միութեան վրայ չէ, այլ քու բռնաբարութեանդ ոճիրը ինձ վերադրելդ վրայ է. և իմ պատճառաւս շատ մը անմեղ արիւններ թափել տալդ վրայ է, յաւիտեանս կը մերժեմ զքեզ և քու անպատիւ կեանքդ ու վարմունքդ, եթէ Աստուած արդար է, շուտով կը տեսնէ իմ և քու դատաստանդ. զի նա ամէն բան գիտէ և կը տեսնէ։

— Կ'ըսէ դատաւորն, Տիկին, ձեր և Վիչէնի խնդրոյն նը-կատմամբ ուրիշ ըսելիքներ ունիք։

— Պարոն դատաւոր, շատ բան լսած եմ, շատ բան տեսած եմ, և շատ բան գիտեմ. բայց քանի որ գիտցածներս, տեսածներս և լսածներս հաստատող վկայներ չունիմ, ուրեմն ոչ բան մը գիտեմ, ոչ բան մը տեսած եմ և ոչ բան մը լսած եմ. ամենքն ալ թող մոռացութեան քողի տակը ծածկուած մնան. միայն բան մը կ'ըսեմ. այն է թէ՝ Վիչէն Կատարինէն աւելի մեղապարտ է։ Երկար տրտնջանաց հարկ չ'կայ, իմ անցեալս զիս արդէն վիրաւորած է. և այժմ կը տանջէ և կ'ընկճէ. Վիչէն ևս անպատիւ լինելով՝ իմ պատիւս մի թէ տեղը պիտի դայ ուրեմն թող Աստուած դատէ որ ամէն բան գիտէ և կը տեսնէ։

Մինչ Կրօնական ատեան կը պատրաստուէր Կատարինէի պատժապարտութեան և Վիչէնի ազատութեան վճիռը տալու. ահա յանկարծակի խնդրոյն մէջ քաղաքական միջամտութիւն կը մտնէ։

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՏԵՆԻ ՄԷՋ ՈՃՐԱԴԱՏ ԱՏԵՆԻ ՄԻԱՄՏՈՒԹԻՒՆ

Քաղաքական ոճրադատ ատենի պաշտօնատարը անձամբ Կրօնական ատեանին ներկայանալով կը յայտնէր թէ, Վիչէն իշխանի և Կատարինէի դատի նկատմամբ ոճրագործութեան զօրաւոր կասկածներ պարունակող տեղեկութիւնք հասած են արդարութեան ոճրադատ ատենի պաշտօնատուն. հետևապէս, դատին վերջնական վճիռ տալէն առաջ, օրինաց արտօնութեամբ կը պահանջեմ որ դատը յանձնէք ոճրադատ ատենին և ոճիրը լուսաբանուելէն վերջ ձեզ պիտի վերադառնայ ի պատշաճ տնօրէնութիւն։

— Նախագահ այսօր դեսաւ նոր նշան. այս ի՞նչ հրաշալի առաջարկութիւն է Կրօնական ատենէն խնդիրը վերցուցեալ և ոճրագործ ատենի քննութեան ենթարկել։

— Սրբազան Տէր, ոչ հրաշք է և ոչ նոր նշան. խնդրոյն մէջ այն տեսակ ոճիրներ կան գործուած, զորս ձեր իրաւասութենէն և ձեռնհասութենէն վեր է քննութեան ենթարկել, մանաւանդ թէ պատժել. իսկ քաղաքական ոճրադատ ատեանը ձեռընհաս է խուզարկութիւններ ընել, գաղտնեաց խորերը թափանցել, զանոնք գտնել երևան բերել։ Սրբազան, յանուն խղճի չ'խօսողը՝ յանուն սրոյ խիստ շուտով կը խօսի. կը խնդրեմ որ Կրօնական ատեանը չաճապարէ իւր վճիռն արտասանելու, մի գուցէ անզգուշաբար արդարութեան հակառակ որոշում տալու սխալանաց կողմը գտնուի։

Եթէ գուք այսօր խնդիրը չ'յանձնէք քաղաքական ատենին. և քմածին վճիռ մը տայք, կ'իմացուցեմ ձեզ թէ, իշխանուհի Կատարինէի փոխանորդը ոճրագործ ատենին արդէն դիմած է. ձեր վճիռէն վերջ հոն վերաքննութիւն պիտի սկսուի. և թերևս այնպիսի գաղտնիքներ երևան դայ. որոց դժը կարողանայ Կրօնական ատենիդ տուած վճիռները բեկանել. և այն ժամանակ ձեր արդարութիւնը կասկածանաց պիտի ենթարկի. և եկեղեցական իշխանութեան տուած վճռոյն բեկումը եկեղեցական դատուն

պատուաբեր չ'լինի։ Ես որ ձեր մտերիմ բարեկամութիւն կը վայելեմ. և իբրև եկեղեցոյ հարազատ որդիներէն մին, և նորա սուրբ կանոնաց անվթար պահպանութեան նախանձախնդիր. չեմ ուզեր որ եկեղեցական իշխանութեան տուած վճիռը ոճրագործ ատենի վճռաբեկ ատեան բեկանէ, որ մեծ հարուած մը պիտի լինի եկեղեցական օրինաց վեհութեան. ուստի կաղաչեմ որ յանձն առնուի խնդիրը յանձնել։

— Պարոն պաշտօնեայ, այսօր գնա՛, մենք վաղը եկեղեցական համագումար ժողով կազմելով կը խորհիմք և պատասխան մը կուտամք։

— Շատ լաւ, Սրբազան Տէր, ըսելով պաշտօնեան յարգական խոնարհութիւն մը ընելով դուրս ելաւ։

Հետևեալ օր Առաջնորդ սրբազանն համագումար ժողով գումարելով, խնդիրը անոնց յանձնեց։ Նախապէս ժողովոյ անդամներէն մինն պահանջեց որ Կրօնական ժողովոյ հարցաքննութեան տեղեկագիրն կարդացուի, և անմիջապէս կարդացուեցաւ. և ամէնքն բաց ի միոյն՝ միաձայն հաւանութեամբ որոշեցին յայտնել քաղաքական իշխանութեան, թէ ինչ՝ Կրօնական ժողովոյ գործերուն, մանաւանդ ամուսնական խնդրոյն միջամտելու բնաւ իրաւունք չունի, և Կատարինէի զինք արդարացնելու համար ըրած որևէ դիտողութիւնները ընդունելի չեն կրնար համարուիլ։ Եթէ Կատարինէի յղութիւնը Վիչէն իշխանի գաղտամեստ յարաբերութենէն իսկ տեղի ունեցած լինի, նորէն Կատարինէն արձակեալ կը համարուի Վիչէն իշխանէն. վասնզի Կատարինէն պարտաւոր էր իւր անարատութիւնը պահել մինչև իւր ամուսնութեան օրը։ Համագումար ժողովոյ վճիռը քանի մի վայրկենի մէջ շարադրուեցաւ. նոյն վճռագիրը թէ պարզ էր, թէ համառօտ, և թէ ըստ երևոյթին եկեղեցոյ օրինաց տրամադրութեան համաձայն։

ՎՃԻՌ

Համագումար ժողովս վերահասու եղաւ պատկառելի Կրօնական ժողովոյ կատարած քննութիւններէն թէ՝ Վիչէն իշխանը զԿատարինէն կոյս չ'գտնելոյն և քիչ ժամանակի մէջ զայն յղի վիճակի մէջ տեսնելոյն, և ամուսնանալէն վեց ամիս վերջ զաւակ մը ծնանելոյն համար զայն իւր կնութենէն մերժելն արդար և

օրինաց համաձայն կրգանէ , և զկատարինէն լուծեալ կրհրատարակէ ազատ թողլով զՎիչէն . և կ'որոշէ սոյն վճիռ հաղորդել ոճրագործ ատենին ի դիտութիւն :

Նախագահ
Ն. Ե. Բ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՃՐԱԳՈՏ ԱՏԵԱՆ ԵՒ ԻՒՐ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Մինչ Վիչէն կրօնական և Հանգումար կրկին ժողովոց վճիռները ձեռք բերած կրկին ամուսնանալու կրպատրաստուէր . և ահա յանկարծակի ոստիկանութեան տեսուչը իրեն ներկայանալով կ'ըսէր . պարոն , ոճրագործ ատենի կողմէն պատիւ ունիմ ձեզ յայտնելու յանուն օրինաց թէ՝ այս բոպէիս պարտաւոր էք ինձ հետևելու և ոճրագործ ատենին ներկայանալու :

— Կ'ըսէ Վիչէն , ի՞նչ օրինաք և որո՞ հրամանաւ :

— Օրինաւոր հրամանագրով :

— Պարոն , զձեզ կըյարգեմ , և օրինաց կըհնազանդիմ . սակայն ձեզմէ ներումն խնդրելով կըհամարձակիմ ըսելու թէ , ձեր փնտրած անձը ես չեմ , թերևս ուրիշ Վիչէն մի է . և այս մասին կարելի է որ թիւրիմացութիւն մը տեղի ունեցած է . վասնզի ես բնաւ գործ մը չունիմ որ և է դատարանի հետ :

— Պարոն Վիչէն իշխան , Յովսէփ իշխանի որդին . դո՞ւք էք թէ՝ ուրիշն է :

— Ներեցէք պարոն , ես եմ :

— Ուրեմն հնազանդեցէք օրինաց և հետս եկէք :

— Յանուն արդարութեան օրինաց կըբողոքեմ այս հրաւիրման դէմ , որ թէ անիրաւութիւն և թէ անպատուութիւն է ինձ դէմ :

— Պարոն , ձեր ամէն ըսելիքները և փաստերը դատարանի մէջ դատաւորի առջև կրնաք առաջ բերել և զձեզ անմեղ հրատարակելէն վերջ ձեր պատիւը պահանջել զձեզ ամբաստանողներէն . սակայն այժմ պարտաւոր էք օրինաց հնազանդիլ . եմ՞ մեր եռևէն դալ :

— Ի՞նչ բանի համար ամբաստանուած եմ արդեօք .

— Ա՛յդ մեր պարտք չէ ձեզ յայտնել , դատաւորէն պիտի լսէք ձեր ինչ բանի համար ամբաստանուիլը :

— Հնազանդ եմ օրինաց :

— Ուրեմն հրամայեցէք երթամք :

— Կ'ըսէր Վիչէն ճանապարհին . անմեղ լինելոյս համար խիղճս հանգարտ է , բայց փոքս անհանգիստ է . վասնզի մարդկանց դատաստանի մէջ ստէպ սխալմունքներ տեղի կ'ունենան և շատ անգամ անմեղները իբրև յանցաւոր դատուելով օրինաց պատիժ կրկրեն . վայրկեանները ժամերու չափ երկար կերևնային իրեն . որչա՜փ ժամանակ անցնէր . այնչափ նորա մտատանջութիւն և սրտայուզութիւն կ'աւելնար :

Ծամ վեց էր , դատաւորները եկած էին , և նախագահն յայտարարեց թէ՝ ատեանն բաց է , և Վիչէն ներս հրաւիրուեցաւ . սակայն Վիչէն իւր դէմ դիմակաւոր մարդ մը տեսաւ . Վիչէն դիմակաւորի մը հետ դատի մտնելուն համար դիտողութիւն ըրաւ . որուն ի պատասխանի , նախագահն ամէն կերպով ապահովութիւն տուաւ . որ և է անկարգութիւն մը տեղի չունենալուն պատասխանատուութիւն իւր վրայ առնելով՝ հրամայեցաւ դիմակաւորին որ խօսի :

Դիմակաւորն իւր խօսքեր նախագահին ուղղելով ըսաւ . Արսլանի հայր Սմբատ իշխանի հարստութիւն , որ իւր Արշակ հօրմէն իրեն ժառանգութիւն մնացած էր , երբ Սմբատի կին Սոֆիան անյայտ եղաւ , և նորա որդի Արսլանը դիպուածով Ստեփանէն գնտակահար լինելով մեռաւ , նորա հարստութիւնը օրինաւ Սմբատի քոյր Մարիամին կըմնար . Վիչէն և իւր հայրն՝ Յովսէփ իշխան ի՞նչ օրինաւ և որ իրաւամբ այն մեծ հարստութիւն գրաւեցին , և Մարիամին բնաւ բաժին չ'տուին հակառակ իւր բողոքանաց և թախանձանաց :

— Պարոն դիմակաւոր , ըսաւ նախագահն կը յաւիմ որ դուք տակաւին որոշած չէք իրարմէ իրաւասութեան և ոճրագործ ատեանները :

— Պարոն նախագահ , ձեր ներողութեան դիմելով կըյայտնեմ թէ մեր դատը լի է իրաւունքներով և ոճիրներով , և ես այս ատեանիս մէջ ոչ թէ ժառանգութիւն կըպահանջեմ , այլ ժառանգութիւն մը բռնաբարողի բռնաբարութիւն հաստատելէ վերջ

նորա խարդաւանութեան պատիժը պիտի պահանջեմ. որու տնօրէնութիւն այս դիւանիս ձեռնհասութեան կը պատկանի ։

Առ այս՝ նախագահ զՎիչէն բացատրութիւն տալու հրաւիրեց։

— Ըսաւ Վիչէն . ներեցէք , պարոն նախագահ . որ այս գիմակաւորի սխալն ուղղեմ. Մարիամը ոչ Արշակի աղջիկն է և ոչ ալ Սմբատի քոյր . այլ Արշակի կնոջ քրոջ աղջիկն է . որ իբրև պահածու իրենց տան մէջ առած պահած և հարս ըրած են ։ Հետևաբար նա չկրնար Սմբատին ժառանգ համարուիլ . քանի որ իւր մօրը քրոջ աղջիկն է . և Սմբատ իւր հարստութիւն իւր հօրմէն ժառանգած է , իսկ Յովսէփ իշխան բուն Արշակի որդին և Սմբատի եղբայրն է . թէև միևնոյն մօրէ ծնած չեն . զի Յովսէփ Արշակի առաջին կնոջմէն կրծնի . և անոր մահուանէն վերջ երկրորդ կնոջմէն Սմբատ կրծնի . ուրեմն Յովսէփն է իւր եղբօր Սմբատի օրինաւոր ժառանգ , և ոչ թէ Սմբատի մօրաքրոջ աղջիկ Մարիամը , որ պահածու մի է ։

— Պարոն , ի՞նչ ապացոյց ունիք այդպէս լինելոյն ։

— Վաւերական հաստատագրութիւն ունիմք մեր ձեռք ։

— Ուրեմն յանձնեցէք դատարանին ի քննութիւն ։

— Խիստ լաւ վաղը կը բերեմք ։

Ատեանն վերջացաւ միւս օրը ժամը վեցին կրկին սկսելու պայմանաւ ։

Միւս օրը վաւերագրութիւն , որ Տ. . . . . քաղաքի երեք քահանայից կողմէն ստորագրեալ և վաւերացեալ էր Վիչէնի կողմէն յանձնուեցաւ դատաւորին , և նա սկսաւ կարդալ յատենի ժողովոյ ։

Տիկին Մարիամը Արշակ իշխանի աղջիկը և Սմբատի քոյրը չէ. այլ Արշակի կնոջ քրոջ աղջիկն է . և Արշակի տան մէջ իբրև պահածու մեծցուած և ամուսնացած է . այսպէս դիտեմք և կը վկայեմք ։

	աւագերէց	աթոռակալ
	ԳՐԻԳՈՐ	ԹԱԴԷՈՍ ՍԻՄՈՆ
	քահանայ	քահանայ քահանայ

— Արսլան դիտողութիւն ընելով ըսաւ . քահանայից վկայութիւն սուտ չէ . բայց սխալէ . զի անուններու մէջ շփոթութիւն կայ . վասնզի Արշակի տան մէջ երկու Մարիամներ կային, որոց մէնն Արշակի աղջիկն է . միսն Արշակի կնոջ քրոջ աղջիկն է,

և Արշակի կնոջ քրոջ աղջիկը Արշակի տուն մեծնալով՝ Քերոբեան Գրիգորի հետ ամուսնացած և իրեք տարիէն վերջ մեռած է , իսկ այս Մարիամը Արշակի աղջիկը և Սմբատի քոյրն է , և Աբրահամ աղայի կինն է . և այս Մարիամը այսօր տակաւին ողջ է . հետևաբար Սմբատի ստացուածոց օրինաւոր ժառանգ կը համարուի . որ դժբաղդաբար ալեկուած է իւր ժառանգական իրաւունքէն շնորհիւ Յովսէփի և Վիչէնի կողմէ գործադրուած ապրեցութեանց ։

Գալով Յովսէփ իշխանին , տէր դատաւոր Յովսէփ , իշխանը ոչ Արշակի որդին է , և ոչ Սմբատի եղբայր . ինչպէս որ Վիչէն կը ձգտի հաստատել . այլ ընդհակառակն Յովսէփ ընկեցիկ մի է . որ ժամանակին Փիլիպպոս քահանայի թախանձանաց վրայ Արշակ իշխանի կինը առած պահած մեծցուցած է . յետոյ զայն ամուսնացուցել՝ որոշած է իւր ընտանիքէն ։ Ասոր վաւերական թուղթերը պատրաստ ունիմ ի ձեռին ։ Վիչէն եթէ չուզէր հաւատալ , թող եկեղեցւոյ մկրտութեանց արձանագրութեանց դիմէ. տեղեկանայ և համոզուի թէ Մարիամն է Արշակի աղջիկը և Սմբատի քոյրը . Մարիամն է Սմբատի ժառանգ . և ոչ թէ ընկեցիկ Յովսէփը , որ Արշակ իշխանի անուան տակը իբրև իշխան կը հռչակէր ինքզինք ։

Դատաւորը անմիջապէս եկեղեցւոյ արձանագրութեանց դիմելով՝ Յովսէփի ընկեցիկ լինելը , և Մարիամ Արշակի հարազատ աղջիկ լինելը ստուգելով , զՄարիամը օրինաւոր ժառանգն՝ և Յովսէփը ժառանգաղուրկ վճռեց և իւր վճիռն երկու կողմին հաղորդեց , Վիչէնի ըրած նենգութեան պատիժը վերջէն տնօրինելու պայմանաւ ։

Սոյն պահուն դատաւորն հարցում ուղղեց գիմակաւորին թէ՝ Վիչէնի հետ ուրիշ դատ մը ունի՞ թէ ոչ։

Որուն ի պատասխանի՝ ըսաւ գիմակաւորը . արդէն գրաւոր կերպով յայտնած եմ թէ անմեղի մը դատը ստանձնած եմ պաշտպանելու . այն է Կատարինէի ամուսնական դատը . որու տակը շատ մը ոճիրներ կան պահուած . որոց ամէնքն ալ երևան պիտի գան . այն ոճիրները ակնարկել կուզեմ, զորս ոստիկանութիւնն երկար ժամանակ խուզարկեց և չկրցաւ երևան բերել։

Այս յայտնութիւններէ վերջ, յանուն օրինաց կը պահանջեմ,

որ Վիչէն իբրև ոճրագործ հոկողութեան ներքև առնուի. մինչև որ իւր վրայ եղած մեղադրանութիւնները դատարանն քննէ և որոշումն տայ, կամ արդարացնէ և կամ դատապարտէ։ Առայս՝ դատաւորն յայտարարեց թէ՝ ամէն օր ժամ վեցէն մինչև տասնեմեկ (ըստ ասիացւոց) ատեանն բաց է, և հարցաքննութիւնները հրապարակաւ կըլլին, ուզող ունկնդիրները կրնան դալ ունկնդրութեան սրահը նստել. հարցաքննութիւնները լսել։ Դիմակաւորի առաջարկութեան վրայ Վիչէն բանտարկուեցաւ օրինաց ուժով։

ԱՐՍԼԱՆ ՍՕՖԻԱՆ ԵՒ ԿԱՏԱՐԻՆԷՆ

Սոյն երեկոյ Արսլանի համար հրաշալի երեկոյ մը էր. զի նա յաղթութիւն տարած արի զինուորի պէս, մայր մտնելու մօտ արեգական ճառագայթներու տակէն փոքր անտառի մէջէն անցնելով Կատարինէի հետ հիւանդանոց դնացին տիկին Սօֆիային աւետեաց լուր տալու, թէ դատի մէկ մասը շահած և թէ միւս մասերն ալ շահելու վրայ էին, և թէ՝ իրենց կենաց դաւաճան Վիչէն բանտարկուած է։

Ընթերցողն ինքնին կրնայ երևակայել թէ՝ այն դիշեր ի՞նչ խօսքեր կրնային տեղի ունենալ Արսլանի, Սօֆիայի և Կատարինէի մէջ տեղը, ուրախութեան յաջորդող քունը խիստ շատ քաղցր կը լլինի. հանդիստ քնացան անոնք այն դիշեր։ Առաւօտերը արեգակը իւր ոսկեծղի ճառագայթները ալեաց պէս ծածանելով Կատարինէի պատուհանէն ներս կըմտնէր. և նորա պայծառափայլ դեղեցկութեան վրայ սխրալի շրջան մը կը յորինէր, կրկին Արսլան և Կատարինէն ուրախ և զուարթ պատրաստուելով որոշեալ ժամուն դատարանին ներկայացան. երբ ժամը մօտեցաւ, Արսլան տենդէ մը բռնուեցաւ նման այն զինուորին որ պատերազմի դաշտի վրայ տենդէ մը վերջ՝ կրոգևորի և գիւցազնական արիութեամբ կ'սկսի վտանդն արհամարհել. այս յու-

զումը խիստ բարձր էր և վսեմ, որու մէջ Արսլանի յաղթութիւն և մրցանակ յայտնապէս կը տեսնուէր։

ՎԻՉԷՆ Ի ԲԱՆՏ

Վիչէն չափազանց տխուր էր և յուսահատ այն դիշեր բանտին մէջ. նա այն անձայն և լռին դիշերուան մէջ մերթ Աստուծոյ հետ կը վիճաբանէր թէ ինչո՞ւ զինք այս ձախորդ պարագային մատնեց, մերթ ինք իւր հետ մաքառելով կը կռուէր և ինքզինք կը դատապարտէր իւր անցեալ գործերով։ Իւր ազեղ անցեալ գործերը հիւսուած շղթայի պէս կուդային աչքի առաջէն կ'անցնէին, կերթային։ Երբ նա անոնց վրայ կընայէր, կ'սկսէր ինքնին պժդալ և ըսել. արդարև մահուան և դատապարտութեան արժանի եմ. կ'սկսէր ինք իւր դէմ բարկանալ և ինքզինք նախատել ու արհամարհել, դոյնը կը փոխուէր, դէմքը կերթալիանար, կը հեծկլտար, կուլար և շունչը կը կտրէր, կ'սկսէր նըստաղել։ Յետոյ յանկարծակի իբրև խելացնորն վրան յուսահատ կատաղութիւն մը կուգար, և կ'ըսէր ինքնին, վաղը դատարանին մէջ ամէն բան պիտի ուրանամ, մերժեմ, սուտ է ըսեմ. վասնզի եղածներուն և ոչ մէկին վկայ կայ. Ստեփանէն մեռած է, և նամակներս արդէն Ստեփանէի հետ կորսուած են. ուրեմն ի՞նչ ապացոյցով պիտի կարողանամ իմ վրաս յանցանք հաստատել. ահ. յիմար եմ եղեր. ի՞նչ խելքով ես այն երկու նամակները գրեցի Ստեփանէին. եթէ այն նամակները բռնուած են յաւիտենականապէս պիտի դատապարտուիմ։ Բայց ոչ, ոչ նամակները կորսուած են և այս մասին երկիւղ չկայ։

Բայց այդ անիծեալ դիմակաւոր սատանան ո՞վ էր արդեօք, որ դժոխոց դռնապանի պէս դէմս ելլելով ամէն կերպով զիս կաշկանդեց ու կապեց։ Ես բաւական հեռատեսութեամբ Արսլանը սպանել տուի. որ դէմս հակառակորդ մը չունենամ. Սօֆիան կորսնցուցի, աղքատ կինը դետամոյն ընել տուի, հաւատալով թէ ամէն բան անհետացաւ. բայց այս դժոխոց սուր-

գ՝.

հանդակն ուրկէ՞ եկաւ ։ Ցուսահատելու չէ , ով որ լինի դի-
մակաւորն՝ կարող չ՝պիտի լինի իմ վրաս բան մը հաստատել .
միթէ Կապարինէի խօսածները պիտի կարողանան արժէք ստանալ
քանի որ ոչ վկայ կայ և ոչ ապացոյց ունի ։ Բայց զօրաւոր
կասկած մը կայ մեր խոհարար կնոջմէն , զի նա ամէն բան գի-
տէ . սակայն չեմ յուսար որ նա դայ բան մը ըսէ . վասնզի
զիս շատ կըսիրէ , եթէ դայ իսկ , դարձեալ հոգ չէ , կրնամ
ցրել նորա առարկութիւնները ըսելով թէ՝ մեր տունէն ճանա-
պարհ տրուած է իրեն , անոր համար եկած է տուտ վկայութիւն
գրպարտութիւն ընելու ։ Բանտապահ կինը արդէն բան մը չ՝գի-
տէ . ամ այդ անիծեալ կինը . եթէ զիս չ՝խաբէր թէ՝
Կատարինէն մեռաւ , ես ուրիշ միջոցներ ձեռք կ՝առնէի , և
գործը այս աստիճանին չէի հասցուներ ։

Երբեմն չարիքներու մէջէն մեծամեծ բարիքներ առաջ կու-
գան . ստոյգ է թէ իմ գերեվարութիւնս մեծ անպատուութիւն
և մեծ նիւթական վնաս մի էր մեզ համար . այսու ամենայնիւ
այդ ձախորդ դէպքն էր որ Ստեփանէի մահուան ծնունդ տուաւ
և այդ մահը իմ մեծ բարեկամն և բարերարս կըհամարուի այս-
օր . վասնզի իմ ամէն դաղտնիքներս , որք մէկ մէկ մահուան
պատիժ պիտի լինէին ինձ համար . այն ամէն դաղտնիքները այդ
սուրբ մահ իր հետ տարաւ և յաւիտենականութեան մէջ թա-
ղեց . Ստեփանէի մահը շատ լաւ . բայց կասկածանաց զօրաւոր
կէտ մը ևս կայ , այն է՝ եթէ վաղը Կատարինէն իրեն տուածս
կնքուած ոսկւոյ պարկը (իրենց տուն գնալոյս իբրև ապացոյց)
դուրս հանելով դատաւորին ցոյց տայ , ի՞նչ ընելու է . (թէ-
պէտ Կատարինէն թէ այդ ճարպիկութիւն չունի , և թէ կարելի
է որ նորա կնիք քանդուած և քիչ մը ոսկի ծախս ըրած լինի) .
այն ժամանակ կ՝ուրանամ և կ՝ըսեմ . իմս չէ . և ոչ ալ իրեն
տուած եմ . իսկ եթէ կնքուած ցոյց տայ , հոն ալ ըսելու է թէ
Կատարինէն այդ պարկը ի բանտ փոխադրուած ժամանակ մեր
տունէն և իմ արկղէս գողցած հետը տարած է . շատ լաւ , ա-
մէն բան կարգին է . միայն իմ մտքիս շփոթութիւն տուողը այդ
անիծեալ դիմակաւոր փաստաբանն է , որ խիստ ճարպիկ մէկը
կ՝երևի ։ Ապուշ մեռաւ չէ , եղածները բոլորն ալ նպատակաւոր

գործեր են , իմ յափշտակուիլը Ստեփանէի մահը , Կատարինէի
բանտէն յափշտակուիլը , և այսօր դիմակաւոր մը իմ դէմս
ելլելը ասոնց ամէնքն կանխապատրաստեալ լարուած որոգայթ-
ներ են ինձ համար ։ Ինչպէս որ երէկ ժառանգական խնդիրնե-
րը , զոր մենք երկար ժամանակի մէջ մեծամեծ զոհողութեամբ և
հաղարաւոր հնարքներով հազիւ կարողացանք մեր կողմը շահել ,
բայց չորս ժամու մէջ մեզմէ ելլելով Մարիամի կողմն անցաւ ։
այսպէս ալ Կատարինէի վաղուեան դատի մէջ անպատճառ դաղտ-
նիքներ պիտի երևան դան . զորս մենք անհետացած կը կարծէինք .
Մի դուցէ իժի ծնունդ Արսլան ողջ եղած լինի , ո՛չ , ո՛չ , Արս-
լան մեռած է . բայց նա իրեն պէս ճարպիկ ընկերներ ունէր ,
կարծեմ թէ նոքա են որ կը գործեն , և անոնք էին որ զիս յա-
փշտակեցին , նաև անոնք էին որ Կատարինէն բանտէն յափշտա-
կեցին , և այսօր ինձ դէմ դատի հանելով իրենցմէ մէկը դի-
մակի տակ պահուած փաստաբանութեան պաշտօն կը կատարէ ։
Վերջապէս բախտի անիւը դարձած է . չարագուշակ վասնզի
մը մէջ կը գտնուիմ . բախտը այլ ևս չ՝ժպտիր մեզ համար . պէտք
է որ մեր գործերու հետևանք եղող պատիժը և անպատուութիւ-
նը կրենք . դլուխ խոնարհելու է ճակատագրին տուած հարուա-
ծին . զի անշարժ և անլոյս վիճակի մը մատնուած կը տեսնեմ
ինքզինքս՝ ըսելով ինկաւ թիկնաթոռի մը վրայ , քիչ մը քնացաւ ։
Ոճրագատ ատեանն դաղտնի լրտեսի մը միջոցաւ Վիչէնի ամէն
ըսածները իմացած էր ։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎ ԻՐ ՈՐՈՇՈՒՄՆ ՏԱԼԷՆ ՎԵՐՋ ՈՃՐԱԳԱՏ ԱՏԵՆԻՆ ՀԵՏԵՒԵԱԼԸ ԳՐԱԾ ԷՐ

Տէր Դատաւոր Ոճրագատ ատենի ,

Համագումար Ժողովս պատիւ ունի ձեզ ազդարարելու թէ՝
ըստ եկեղեցական օրինաց Կատարինէն թէ յանցաւոր է , և թէ
Լուսականէս սկսեալ լուծեալ է Վիչէնն իշխանի ամուսին լինելէ ,
Ժողովս սոյն որոշումն ծանուցանելով ձեզ ի գիտութիւն ,

Նախագահ՝
Մնամ յարգանօք
Ն. Ե. Բ-

Ոճրագործ ատեան համագումար ժողովոյ վճիռը կարդալէն յետոյ, ուրիշ նամակ մը ևս կարդացուեցաւ։

ՎՍԵՄ. ԴԱՏԱՒՈՐ ՈՃՐԱԳՈՐԾ ԱՏԵՆԻ

Կը լսուի թէ Վիչէն իշխան իւր Կատարինէ կնոջմէն արձակուիլ կ'ուզուի, և այսօր Կրօնական Ժողովէն այդ վճիռ ձեռք բերելու պիտի յաջողի. սակայն խնդրոյն մէջ շատ մը դաղտնիքներ, ոճիրներ և սպանութիւններ կան Վիչէնի ձեռօք կատարուած. զորս իբրև արդարութեան պարտք մը կ'ստանձնեմ անմոռաց ամէնքն երևան բերելու և անմեղի իրաւունք պաշտպանելու փոխանորդաբար, եթէ Ձերդ Վսեմութիւն լսէ մեր նուաղ ձայն. և ուշադրութեան առնելով Կրօնական Ժողովոյ վճռէն առաջ խնդիրը ձեր բարձր ատեան բերելու շնորհ չ'զլացուի։

Ձեզ ծանօթ

ԴԻՄԱԿԱՒՈՐ ՄԸ

Երկրորդ նամակի ընթերցումէն վերջ, Կատարինէի դատը պաշտպանելու համար նորա փոխանորդութիւն ստանձնող դիմակաւորը նախագահէն հրաման ստացաւ խօսելու. Վիչէն և Կատարինէն ևս ներկայ կը գտնուէին։

Դիմակաւորը իւր խօսք նախագահին ուղղելով ըսաւ. ձեզմէ շնորհ մը պիտի խնդրեմ և կաղաչեմ որ չ'մերժէք։

— Եթէ ձեր առաջարկ օրինաւոր է, կ'ըսէր նախագահն, միշտ ազատ էք խնդրելու և առնելու իրաւունքը։

— Շնորհակալ եմ տէր դատաւոր. կը հաճիք ներել ինձ դաղտնեաց քողը վերցունելով առանց չափազանցութեան պատմել ամէն ճշմարտութիւնները, որք լի են Վիչէնի կողմէն գործուած սոսկալի ոճիրներով։

— Ազատ էք խօսելու և խօսեցէք։ Այս միջոցին Վիչէնի դէմ նետեց. և յուսահատութեան նշաններ տեսնուեցան նորա երեսի վրայ։

Ըսաւ դիմակաւորն, տէր դատաւոր. եկեղեցական հանդիսի

օրը, Վիչէն իշխանն էր որ դիմակ առնելով երեսը ծածկեց, և զգեստները փոխած Սամուէլի տուն կերթար Կատարինէին այցելութիւն տալու. վասնզի լրտեսած էր թէ, նոյն օրը Սամուէլ իւր կին և փոքր աղջիկ եկեղեցի գնացած էին. և Կատարինէն միայնակ մնացած էր տան մէջ. Սամուէլի դուռը զարնողը այն պառաւ մուրացկան կինն էր որ այն դէպքէն երկու օր վերջ անյայտ եղաւ. Վիչէն Սամուէլի տունէն դուրս ելած ժամանակ՝ տիկին Սոֆիան զայն տեսած, և իւր զգեստի նշանէն ճանաչած էր. և իշխանն իւր մատնուած լինելը զգալով Ստեփանէին նամակ մը գրելով զտիկին Սոֆիան անզգայացուցած և հիւանդանոց տարած և տիկին Եւալին յանձնած էր, զայն մէկ կամ երկու աւուր մէջ իւր յաբիսենական տունը զրկելու պայմանաւ. բայց պարոն բժշկի հնարքն զայն փրկեց։

Այս միջոցին Վիչէն ուզեց զդիմակաւորն ընդմիջել. բայց դատաւորը զայն արգիլելով ըսաւ, Պարոն, դատարանի օրէնքը յարգեցէք. և լռութիւն պատուեցէք. երբ ձեզ հարցումներ ուղղուին, այն ժամանակ ձեզ եղած հարցման պատասխանեցէք. ձեր հակառակորդի ըսածները լսեցէք։ Իրաւունք մը ևս ունիք, այն է թէ՝ ազատ էք գրիչ և թուղթի մը կարօտ ձեր ձեռքն ունենալով՝ եթէ ձեզ դէմ դատ վարողը սուտ կամ սխալ խօսի, զանոնք նշանակեցէք. վերջէն երբ խօսքի կարգը ձեզ կուգայ. զանոնք մերժեցէք և ցրուեցէք օրինաւոր փաստերով. և վաւերական ապացոյցներով։ Դատաւորը իւր խօսք դիմակաւորին ուղղելով ըսաւ. ազատ էք խօսելու և խօսեցէք։ Յարեց դիմակաւորը ըսել. տէր դատաւոր, վերը յիշուած պառաւ կինը Արսլանի մօր անյայտ լինելուն վրայ ծանօթութիւն ունենալոյն, և զայն դաղտնի Արսլանին հաղորդելոյն համար միևնոյն գիշերը, սոյն պառաւ կինը Ստեփանէի ձեռքով դեռամոյն եղաւ, և ճիշտ այն գիշերն էր որ Արսլանը որսի անտառի մէջ իբր վրիպակ Ստեփանէի ընդունած հրահանդին համեմատ գնդակահար եղաւ։ Իշխանին տուն ութ օր սուդ պահելէն վերջ, Արսլանի և նորա մօրը ստացուածները Վիչէն իշխանի տուն փոխադրեցան։

Վիչէն իշխան, խօսքս քեզ ուղղելով կ'ըսեմ, կ'ընդունիս ըսածներս, և կը խոստովանիս թէ՝ Արսլանի նշանած Կատարինէն առևանդողը դուն էիր, որ զայն վերջէն քեզ կնութեան տիր,

յետոյ քու յանցանքներդ անոր վրայ դնելով զայն բանտարկել տուիր. յետոյ ձեր խոնարհ կինը դիմակաւորելով բանտ ղրկեցիր, որ կատարինէի յղութիւնը վիժեցուցնել տայ. բայց Կատարինէն յանձն չառաւ այդ ոճիրը գործելու. Վիչէն, կ'ընդունի՞ս արդեօք, թէ աւելի առաջ երթալով մանրամասնութեանց վարագոյրը բանամ.

Վիչէն նախագահէն հրաման ստանալով ըսաւ դիմակաւորին. Պարոն, ըսածներդ միայն իբրև ստութիւն և խանգարեալ երևակայութեան մը արդիւնք կ'ընդունիմ. և ոչ թէ իբրև իրողութիւններ. ստոյգ է թէ Կատարինէն ինձ կնութեան առի Արսլանի մահուանէն վերջ. սակայն զայն կոյս չ'գտայ, և այս դաղտնիքը ծածկեցի. յետոյ նորա ամուսնանալէն երեք ամիս առաջ յղի լինելը հասկնալով՝ զայն բանտ ղրկեցի. և հոն ծնած լինելը, ու տասնեհինգ օր վերջ մեռած լինիլը ինձ իմացուցին, որու վրայ ես Կրօնական իշխանութեան դիմելով ուրիշ մը հետ ամուսնանալու հրաման խնդրեցի. երեք օր վերջ ինձ ազդարարեց Սրբազան Առաջնորդն թէ՝ կըլսուի որ Կատարինէն մեռած չէ, ողջ է, և քննութիւն Կատարուելէն առաջ չէք կրնար ամուսնանալ, մենք ալ հնազանդելով սոյն ազդարար որոշման, և քանի մի օր վերջ կրկին Կրօնային ատենին դիմելով Կատարինէէն իմ արձակուիլը պահանջեցի ըստ եկեղեցական օրինաց:

Մինչ նա մեր արձակման վճիռը արտասանած է, այժմ չ'գիտեմ ի՞նչ օրինօք և իրաւասութեամբ Քաղաքական Ոճրագատ ատեանն միջամտելով խնդիրը հոս կըբերէ, մինչ ես եկեղեցական համագումար ժողովոյ վճիռն ունիմ ի ձեռին թէ՝ Կատարինէն լուծուած է Վիչէնի ամուսնութենէն: Հետևաբար որևէ առարկութիւն չեմ ընդունիր. և յանուն եկեղեցական իրաւասութեան կը պահանջեմ որ Համագումար Ժողովոյն տուած վճիռը յարգուի, և ասկէ ի զատ ըսելիք չունիմ.

Դատաւորն իւր նուրբ խորհուրդները պարզմտութեան տակ ծածկած կը պահէր, խիստ քիչ կը խօսէր, բայց լսելու տրամադիր էր. նորա անաչառ նայուածքները մէկ մէկ հրամայական վճիռներ էին օրինաց պատկառանքն յարգել տալու համար. խիստ խորագէտ էր նա, և թէ բնականէն օժտեալ էր և թէ

փորձառական հմտութեամբ լի էր. Մէկ նայուածքով կրնար ամէն խորածածուկ և կնճռալից խնդիրներու խորը թափանցել, և անոնց թագուն դաղտնիքները ի լոյս բերել. այս անձի սրատես աչքը ամենամշուշ խաւարներու մէջ անգամ թափանցելով, յստակ կերպով կը ըստեսէր ծածուկ պահուածները, նորա նայուածք մարդուս հոգւոյն խորերուն կը թափանցէր. և մագնիսի պէս դաղտնիքները քաշելով դուրս կը հանէր: Նա իւր ակնկալած ճշմարտութիւնները աւելի սրտերու մէջ կը փնտրէր, քան թէ լեզուի: Նա այնպիսի ձևերու տակ հարցումներ կ'ուղղէր Վիչէնին, որ եթէ ընդունէր Վիչէն՝ իւր մահ պիտի վճռուէր. իսկ եթէ մերժէր. մերժման մէջն ալ Արսլանի անհերքելի փաստերուն մեծ ոյժ և զօրութիւն տուած պիտի լինէր:

Վերջապէս ինչպէս որ կատուի աչք գիշեր ժամանակ խաւարի մէջէն կը տեսնէ, այսպէս ալ մեր դատաւորի մտաց սրատեսութիւն Վիչէնի սրտի թագուն խորերու մէջ պահուածները դուրս հանելով, նորա երեսի վրայ կը տարածէր, և ամէն ունկնդիրներուն բացայայտ կերպով կարդալ կուտար. Նա կորեկ կը ցանէր չէ թէ թռչուն կերակրելու, այլ զայն որսալու համար: Այս անձի մտաց զօրաւոր լինելու յատկութիւնները չէ կարելի ճիշտ նկարագրել. այլ պէտք է զայն երևակայել իբր բացառիկ մարդ մը դատաւոր լինելու համար յատուկ սահմանուած:

Ըսաւ դիմակաւորն, Պարոն դատաւոր, որովհետև Վիչէն իշխան կը յամառի իւր սխալմունքն և դործած ու դործել տուած ոճիրները խոստովանելու. յանուն արդարութեան կը պահանջեմ որ ինձ թոյլտուութիւն ընէք խնդրոյն մանրամասնութեանց մտնել ամէն բան բացատրելու և դործնական ապացոյցներով հաստատելու:

Ըսաւ դատաւորն. դատարանի կողմէն արտօնեալ էք ինչ որ ճշմարիտ և արդար է՝ խօսեցէք աներկիւղ կերպով:

Լաւ ուրեմն սկսիմ մանրամասնութեան մտնել վաւերական ապացոյցներով:

Սոյն միջոցին ցանկ մը ներկայացաւ քննիչ դատաւորին, որ հարցաքննուելիք անձանց անունները կը պարունակէր:

Ըսաւ դիմակաւորը,

Պարոն դատաւոր, ներս կանչեցէք, նախ պառաւ մուրաց-

կան կինը և քննեցէք։ Դատաւորի հրամանին վրայ պառաւ կինն ներս կը մտնէ, որուն կը հարցուցնէ քննիչ դատաւորը։

Մայրիկ, Վիչէն իշխանի վրայ ի՞նչ գիտէք, զձեզ կերդմեցուցեմ յանուն Աստուծոյ. ինչ որ գիտէք արդարութեամբ և ճշմարտութեամբ խօսեցէք։

— Պարոն դատաւոր, ես այսչափ միայն գիտեմ թէ՝ եկեղեցական հանդիսի օրը ես Վիչէն իշխանի խոհանոցը խոհարար կնոջ հետ նստած կը խօսէինք. Վիչէն դիս խոհանոցէն դուրս կանչելով ըսաւ. «նա ժամադրած Սամուէլի տուն և լուր տուր Կատարինէի թէ՝ ձեզ այցելու մը պիտի գայ. և գնացի յանձնարարութիւնս կատարեցի. թէև Կատարինէն չուզեց այն անպատեհ ժամանակի մէջ հիւր ընդունել. բայց Վիչէն արդէն հոն դատարատ էր և անմիջապէս ներս մտաւ իմ ետևէս. զիմակաւոր էր այն պահուն Վիչէն. անոր ներս մտնելէն վերջ ես ետ դարձայ և այսչափ գիտեմ։

— Անկէ վերջ ի՞նչ պատահեցաւ։

— Նոյն գիշերը տիկին Սոֆիան իւր տունէն անյայտ եղած է՝ ըսին. և ես միւս առաւօտ կրկին Վիչէնի խոհանոցը մտայ դարձեալ, և խոհարար կինն ինձ պատմեց թէ՝ Վիչէն իշխան այս գիշեր Ստեփանէի ձեռքով տիկին Սոֆիային գեղ տալով մարեցուցած ու հիւանդանոց ղրկած է. ես հարցուցի թէ ինչու ըրաւ, մեղք չէ՞. ինձ ըսաւ խոհարար կինն թէ, երէկուան դաղտնիքը Սոֆիան իմացած է եղեր. և կասկած կար թէ՝ խընդիրը պիտի մեծնար. վասնզի Կատարինէն Սոֆիայի որդի Արսլանի նշանածն էր. ուստի այս գէշութիւնը գործել տուաւ Վիչէն որ բանը ծածուկ մնայ։

— Դու Արսլանին բան մը ըսիր։

— Այո՛, ըսի իրեն դաղտնի թէ, մայրդ հիւանդանոց ղրկուած է, և երանի՛ թէ չըսէի։

— Ինչու չըսէիր։

— Ըսի բայց փորձանքս գտայ։

— Ի՞նչ եղաւ քեզ։

— Ի՞նչ եղաւ. չէս գիտեր ինչ եղաւ. բովանդակ աշխարհ իմացաւ. դուն չիմացար, դու միայն կաս Յերուսաղէմ։

— Ի՞նչ եղաւ, մայրիկ, եղածները պատմէ։

— Այն դաղտնիքն Արսլանին հաղորդելոյս միւս գիշերը Ստեփանէն ինձ ըսաւ. հետս եկու քաղաքէն դուրս Մեսրոպ աղայի պարտիզի դուռը ինձ ցոյց տուր. ես ալ միամտաբար եւևէն ինկայ դնացի. երբ քաղաքէն դուրս գետի եզերքը հասանք, սկսաւ ոտքս քար մը կապել, և կուզէր զիս գետը նետել, ես ալ մեծ ձայնով մը աղաղակեցի. չ'գիտեմ թէ որ տեղէն յանկարծակի գնաւակ մը գալով զմեզ շփոթեց. թէև ֆնաս չ'հասուց. սոյն միջոցին Ստեփանէն շտապեց առանց քար կապելու զիս գետը գլորեց և փախաւ։

— Ուրեմն ի՞նչպէս ազատեցար։

— Երիտասարդ կարմիր աղայ մը ինքզինք գետը նետելով եկաւ զիս ազատեց և տարաւ իւր հօր քրոջ տուն դրաւ մինչև ցայսօր հոն կրխնամուէի, և երկիւղէս բնաւ դուրս չելայ։

— Զքեզ ազատող երիտասարդը կը ճանաչե՞ս։

— Այո՛, կը ճանաչեմ, անիկա տիկին Սոֆիայի որդի Արսլանն էր որոյ շնորհիւ ապրեցայ մինչև այս վայրկեան։

— Արսլան գիշեր ժամանակ ի՞նչ գործ ունէր գետի եզերքը։

— Չեմ գիտեր, թերևս Աստուած ղրկեց զիս ազատելու համար։

— Ասկէ ի զատ այլ ևս ուրիշ ի՞նչ գիտես։

— Ասկէ աւելի ուրիշ բան չեմ գիտեր։

— Ուրեմն ազատ էք դնացէք։ Աղքատ կին՝ դուրս ելլելով, ներս կը մտնէ տիկին Սոֆիան. դատաւորը կը հարցունէ։

Տիկին. Վիչէն իշխանի և Սամուէլեան Կատարինէի նկատմամբ ի՞նչ տեսած էք։

— Բան մը տեսած չեմ։

— Կ'ըսեն թէ դուք զՎիչէն իշխան տեսած էք որ Սամուէլի տունէն ելած է, իրա՞ւ է թէ սուտ։

— Այո՛, պարոն դատաւոր, եկեղեցական հանդիսի օրը և նոյն իսկ հանդիսի ժամանակ, Վիչէն իշխան դիմակաւորեալ Սամուէլի տունէն դուրս ելլելը տեսայ. հանդիսէն վերջ Սամուէլի կինը (որոյ Կատարինէ աղջիկը իմ որդւոյս Արսլանի նշանածն էր) զիս և տղաս ի միասին իւր տուն կանչելով յայտնեց թէ նոյն օր Կատարինէն բռնաբարուած է դիմակաւորէ մը. սակայն Կատարինէն չէ ճանաչած նորա ով լինելը. և ես յայտ-

նեցի իրեն թէ՝ ձեր տունէն դուրս ելլող գիմակաւորը Վիչէնն էր. ամէն ողբ և լալումներէն յետոյ տիկին Սամուէլ մեզ յայտնեց թէ, Կատարինէն այս վայրկենէս սկսեալ լուծեալ կըհամարուի Արսլանի Նշանած լինելէ. և խնդրեցին որ գաղտնիքը մէկի մը չ՚յայտնեմք. այն օրէն վերջ ես դիս մահամերձ վիճակի մէջ տիկին Եղիսաբէթի հիւանդանոցի մէջ պտայ, բժշկական դեղերով և խնամքներով առողջացայ երբեմն խելացնորութիւններ ունեցայ երկու անգամ ծանր հիւանդացայ, և այսօր հիւանդանոցէն դիս այստեղ բերին. ասկէ ի զատ ուրիշ բան չեմ դիտեր։

— Ուրեմն դուք դուրս ելէք. և տիկին Եւան թող ներս բերեն։

— Տիկին Եւա, տիկին Սոֆիան ո՞վ բերաւ հիւանդանոց, և ի՞նչ վիճակի մէջ։

— Ստեփանէն բերաւ, և դրեթէ մեռեալ վիճակի մէջ. վասնզի անզգայ էր։

— Ստեփանէն այս կինը ձեզ յանձնելով բան մը ըսա՞ ձեզ։

— Այո՛, ըսաւ. այս կինը Վիչէն իշխանի մէկ գաղտնիքը տեսած է. և եթէ հրապարակ հանէր՝ Վիչէնի պատիւ և կեանք վտանգի պիտի ենթարկուէր. ուստի հոս ղրկուեցաւ Վիչէնի հրամանաւ և ծածուկ որ՝ քանի մի օրէն ղինք իւր յաւիտենական տունը ղրկէք։

— Դուք ի՞նչ ըրիք։

— Այս գաղտնիքը պարոն բժշկին յայտնեցի. նա ալ ինձ բարկանալով ըսաւ. մենք հիւանդներ բժշկելու կոչումն ունինք, և ոչ թէ ողջերը մեռցուցնելու։

— Անկէ վերջ ի՞նչ ըրիք։

— Բժիշկը գարմանեց և տիկին Սոֆիան առողջացաւ։

— Ստեփանէն ուրիշ անգամ ևս հարցուց իւր բերած կնոջ վիճակը։

— Այո՛, հինգ օր վերջ եկաւ, և բժշկէն առած հրահանգիս համեմատ ըսի թէ՝ մեռաւ, և Սոֆիան մեռած արձանագրեցի ու նորեկ Եղիսաբէթ անունով իրը դեղացի կին մը նշանակեցի տօմարին մէջ։

— Սոֆիան որյեսոյ Եղիսաբէթ, հիւանդանոցէն դուրս ելաւ։

— Բնաւ երբէք դուրս չելաւ։ և միշտ հիւանդութիւն ունի. քանի մի անգամ մահուան դուռը գնաց և ետ դարձաւ։

Այս պահուս ներս կրկանչուի բժիշկը։

— Պարոն բժիշկ, ձեզմէ դարմանեալ տիկին Սոֆիայի վրայ ի՞նչ տեղեկութիւն ունիք։

— Տէր դատաւոր, առաջին անգամ զգայազերկ վիճակի մը մէջ տեսայ տիկին Սոֆիան տիկին Եւայի բով. տիկին Եւա ինձ կըյայտնէր թէ, ինքը Վիչէնի կողմէն Ստեփանէի միջոցաւ պատուէր ունի զՍոֆիան իւր յաւիտենական տունը ղրկել. սակայն ես արգիլեցի զինք այս տեսակ ոճիր մը գործելէ, և հնարագիտութիւն մը սորվեցուցի իրեն որ՝ Սոֆիայի անունը իբրև մեռեալ եղծէ արձանագրութեան տօմարի մէջէն, և ուրիշ նորեկ կին մը Եղիսաբէթ անուան տակ արձանագրէ։

— Կրցա՞ք իմանալ թէ՝ Սոֆիան իւր զգայութիւնն ինչու կորուսած էր։

— Խիստ պարզ կերպով իմացայ որ դեղ տալով զայն անզգայ վիճակի մէջ դրած էին. և խեղճ կինը իրական աշխարհը թողած երկար ժամանակ երևակայական աշխարհներու մէջ կըթափառէր։

Բժիշկը դնալէն վերջ դատաւորն իւր խօսքեր Կատարինէին ուղղելով ըսաւ։

— Տիկին, Կրօնական ժողովոյ տեղեկագրէն քաղելով կիմանամք թէ՝ դուք ըսած էք հոն. եկեղեցական հանդիսի օրը Վիչէն իշխանը դիմակով եկած և զձեզ բռնաբարած է և նոյն օրէն դուք յղացած էք. յետոյ Վիչէն զձեզ իրեն կնութեան առած, և ձեր յղի վիճակ ծանրացած ժամանակ զձեզ բանտ ղրկած և դուք հոն ծնած էք։ Ստոյգ է որ հանդիսի աւուր թուականը ձեր ծննդաբերութեան թուականի հետ համեմատելով՝ կուգայ ճիշտ բնութեան օրինաց պահանջած թիւը կըլրացունէ. սակայն այս փաստ բաւական չէ զձեզ անմեղ հրատարակելու եթէ ուրիշ փաստեր ունիք՝ յայտնեցէք։

— Պարոն դատաւոր, իմ վկաս Աստուած է, և Վիչէնի խիղճը, ու անոր խոստովանութիւնն որ ինձ ըրած է. թէ մեր ամուսնանալէն առաջ նշանագրութեան օրը, և թէ մեր ամուսնանալէն վերջ. Վիչէն ըսած է ինձ թէ՝ ես էի ձեր տուն եկող

դիմակաւորն. իրաւ է որ ես այն օրը զինք չճանաչեցի. վասնզի դիմակաւոր էր. բայց տիկին Սոֆիան մօրս յայտնած էր թէ՝ այն դիմակաւորը Վիչէն իշխանն էր. եթէ ասոնք ապացոյց չեն կրնար համարուիլ, ես պատրաստ եմ օրինաց տուած պատիժը կրելու։

— Տիկին բանտապահ, տիկին Կատարինէն ով բերաւ ձեզ յանձնեց։

— Երեք դիմակաւորներ։

— Կը ճանաչեմ զանոնք։

— Միայն Ստեփանէն կը ճանաչեմ, իսկ միւսները ոչ։

— Ստեփանէն ձեզ յանձնարարութիւն մը ըրաւ։

— Ոչ. միայն ըսաւ թէ՝ Կատարինէն Վիչէն իշխանի հրամանաւ հոս բանտարկեալ պիտի մնայ։

— Կատարինէի բանտարկութեան միջոցին ի՞նչ մարդիկ իրեն այցելութիւն տուին։

— Օր մը միայն գիմակաւոր կին մը եկաւ և Կատարինէի հետ խօսեցաւ և դուրս ելած ժամանակ հետաքրքիր եղայ իմանալու թէ. ով է և ինչու եկած է. իմացայ թէ Վիչէն իշխանի խորհրդովն եկած էր զԿատարինէն համոզելու որ իւր յղութիւն վիժեցունէ, որպէսզի բանտէն ազատի. բայց Կատարինէն ընդունած չէր այս բանը, Կատարինէն ալ պատմեց ինձ այն կնոջ երթալէն քանի մի օր վերջ։ Կատարինէն բանտի մէջ տղայ զաւակ մը ծնաւ, և տասնուհինգ օր վերջ ինձմէ հրաման առաւ երեք ժամու չափ դուրս ելլելու. ելաւ և այլ ևս չդարձաւ, ես ալ իշխանէն վախնալով մեռաւ՝ ըսի. բայց վերջէն սուտ խօսելս յայտնուեցաւ. վասնզի լուր տարածուեցաւ թէ Կատարինէն այն օր յափշտակուած է և մեռած չէ։

Դատաւորն հարցաքննեց զխոհարար կինն՝ ըսելով։

— Տիկին Կատարինէի բանտ եղած ժամանակ դուք իրեն այցելութիւն տուիք։

— Այո պարոն դատաւոր, Վիչէնի հրամանաւ գնացի և իրեն ըսի. թէ Վիչէն իշխան կուզէ որ դուք ձեր յղութիւնը վիժեցնէք, և այս կերպով բանտէն ազատիք. սակայն Կատարինէն չընդունեց, և ըսաւ, ամէն մեղքերուս վրայ մարդասպանութեան մեղքը ևս չեմ կրնար աւելցնել. ես ալ գնացի Վիչէնին առածիս պէս ծախեցի։

— Եկեղեցական հանդիսի օրը մուրացիկ պառաւ կին մը ձեր քովն եկաւ Վիչէնի խոհանոցին մէջ, և դուք անոր ի՞նչ ըսիք. և կամ ուրիշները ի՞նչ ըսին։

— Այո, եկաւ, նախ Վիչէն զինք կանչելով տեղը զրկեց. գնաց և եկաւ ինձ պատմեց թէ՝ Վիչէն գիմակով Սամուէլի տունը գնաց. և զիս զրկեց. նախապէս գնացի դուռը զարկի. թէև Կատարինէն ժամանակն անպատեհ համարելով չէր ուզեր զՎիչէն ընդունել. բայց նա գրեթէ բռնի ներս մտաւ։ Յետոյ միւս օրը կրկին եկաւ և ես իրեն պատմեցի Ստեփանէն ըսածները. այսինքն ըսի իրեն թէ՝ Վիչէն իշխան զտիկին Սոֆիան Ստեփանի ձեռքով այս գիշեր անզգայացունելով տիկին Եղիսաբէթի հիւանդանոցը զրկեց. գնա նորա որդի Արսլանին լուր տուր. նա ալ գնաց ըսաւ, բայց ցաւն ալ քաշեց։

— Ինչէն գիտէիր թէ Վիչէն իշխանն այդ հրամանն տուած է, և Ստեփանէն ալ կատարած է։

— Ստեփանէն ըսաւ ինձ. թէ՝ այս գիշեր գարձեալ մնայոր-ծութիւն կատարեցինք։ Եւ սկսաւ մի առ մի պատմել, ես ալ մեղքնալով խեղճ կնկան՝ մուրացիկ կնոջ միջոցաւ լուր տուի նորա որդի Արսլանին որ երթայ իւր մայրն ազատէ։

— Վիչէնի գիմակով Սամուէլի տուն գնալոյն վրայ ալ բան մը գիտես։

— Այո՛, գիտեմ, ամէն բան գիտեմ. նոյն իսկ Վիչէնի բերանէն լսելով գիտեմ. Վիչէն իբրև իմ զաւակս, գիրկս մեծցուցած եմ. Ամէն բան նա ինձ կ'ըսէր, երբ զինք կը խրատէի կ'ըսէր ինձ. գնա՛ ցնդած պառաւ, խոֆերես, բան մը չես գիտեր. և այդ անցքի ժամանակ իսկ ինձ պատմեց։ Պարոն դատաւոր, ես բան մը չ'տեսայ. բայց իւր բերանի խոստովանութեանէն առնելով երդմամբ կը հաստատեմ թէ՝ Կատարինէի կուսութիւնը բռնաբարողը Վիչէնն էր. և յղութիւնն ևս անկէ է։ Վիչէն անթարթ աչքով սոյն կնոջ երես կը նայէր. և կինը Վիչէնին դառնալով ըսաւ. ինչու երեսս կը նայիս. ես քեզ հազար անգամ չ'խրատեցի՞ թէ՝ խելօք կեցիր կամ թէ՝ բան մը էր եղաւ. չըսի՞ թէ տուր Կատարինէն տանիմ տունս պահեմ մինչև որ ծնի. և հարցունողներուն կ'ըսեմ հիւանդ է. ծնած զաւակն ալ կրնայի գաղտնապէս քահանայի մը միջոցաւ աղքատի մը քով

փոքր ամսաթուշակով մը պահել տալ. ինչու՞ չ'լսեցիր. և խայտառակ եղաք երիւքդ ալ։ Վիչէն, չ'մեծնայիր, և այս անպատիւ վիճակին չ'հասնէիր. ընտանիք մը մեռցուցիր. ըսելով՝ կինը լալով դուրս ելաւ։

ԱՐՇԱԿ, ՎԱՀԱՆ, ՏԻԳՐԱՆ, ՊՕՂՈՍ,

— Կը հարցունէ դատաւորը. Արսլանի որսի անտառին մէջ զարնուելուն վրայ դուք ի՞նչ տեղեկութիւն ունիք։

— Տէր դատաւոր, կ'ըսէ Վահան, այն գիշերը որ Ստեփանէն զԱրսլան որսի անտառ գնալու հրաւիրած էր, և Արսլան որքան որ հրաւէրն ընդունած էր, բայց միւս կողմէն զօրաւոր կասկածներ կար իւր վտանգուելու մասին։ Արսլան զմեզ իբրև իւր անձին պահապան և պաշտպան բարեկամները՝ մեր վրայ վստահութիւն ունենալով, առանձին կերպով զմեզ անտառը ղրկեց իրենցմէ առաջ. և մեզ պատմեց աղքատ կնոջ Ստեփանէի ձեռքը դեռատիպն լինելու ամբաստանութիւնը, և ինք Արսլանը գնտակով մը Ստեփանէն հալածելով, և գետը նետուելով զկինը ազատելը։ Մենք որսի անտառին մէջ ձիով շրջան կատարած միջոցին Ստեփանէն և իւր ընկերները զմեզ չէին տեսնէր. բայց մենք զանոնք կը լրտեսէինք լուսնոյ լոյս լինելուն համար։ Խիստ պարզ կերպով տեսանք Արսլանի վրիպակ կեղծած և նպատակաւոր գնտակը, որ փոխանակ Արսլանի կուրծքին մղուելու, խալմամբ անոր սրունքը վիրաւորեց և Արսլան գետին ինկաւ. մենք իբրև անծանօթ՝ մէկ կողմէ անոնց դիմադրեցինք, միւս կողմէ վիրաւորեալ Արսլանը վերցուցեալով առինք անյայտ եղանք։

— Ստեփանէն սպանող և Վիչէն իշխանը լեռ տանողներու վրայ ի՞նչ տեղեկութիւն ունիք։

— Վիչէն իշխանը մ'նք լեռ տարինք, և փրկանք առնելով ետ դարձուցինք. և ահա թէ փրկանքն և թէ Վիչէնի տունէն գնացած ոսկեղէն և արծաթեղէն ու ամէն գոհարեղէն բաները։ Սակայն դատարանը գիտնալու է թէ, ասոնց ամէնքն ալ տիկին Սոֆիային և Արսլանին կը վերաբերին։

— Ի՞նչ ապացոյց ունիք հաստատելու թէ, ատոնք Սոֆիայի և Արսլանի կը պատկանին։

— Խիստ յայտնի է, և ամէն մարդ գիտէ և կրնայ վկայել, ասոնց ամէնքն ալ անոնց տունէն վերցուածներն են, և տակաւին երեք հազար ոսկիի արժէք ունեցող ստացուածքներ Յովսէփ իշխանի տան մէջ կը գտնուին. որք իրեն չէին վերաբերեր եթէ Սոֆիան և Արսլան մեռած իսկ լինէին, այդ ժառանգութիւնը ոչ թէ Յովսէփին, այլ օրինաւոր Արսլանի հօրաքրոջ կը վերաբերէին. բայց Յովսէփ բռնի գրաւեց։

Տէր դատաւոր, ունկնդրութիւն ընելու չնորհ կը խնդրեմ ձեզմէ պարագայի մը վրայ, զոր խիստ հետաքրքրական պիտի գտնէք։ Երբ Վիչէն զԿատարինէն բանտ ղրկեց իւր պատիւ պահպանել կարծելով յայտարարեց թէ Կատարինէի յղութիւն Արսլանէն է. միւս կողմէն գիւղացի քահանայ մը բանտ ղրկելով կ'ուզէր Կատարինէի ըսել տալ թէ, ինք Արսլանէն յղացած է. բայց Կատարինէն չուզեց սուտ խօսիլ, մերժեց զքահանայն, ոչ խոստովանեցաւ, ոչ հաղորդուեցաւ, և ոչ ալ իւր զաւակ մկրտել տուաւ։ Սակայն Վիչէն քահանային պատուէր տուած էր. որ իբր Կատարինէի յայտնութեան վրայ գիւղի մկրտութեան արձանագրութեան տոմարի մէջ Կատարինէէն ծնած զաւակի հայր Արսլան նշանակէ, և ողորմելի քահանան թէև Կատարինէէն մերժուած, և նորածին զաւակը չ'մկրտած, բայց Վիչէնի հրամանին համեմատ արձանագրած էր նորածին զաւակի հօր անուն, միւս կողմէն Վիչէն տեսնելով թէ, եթէ սոյն զաւակ Արսլանին լինելը արձանագրուած տեսնուի պաշտօնական տոմարներու մէջ, անշուշտ նա մեծնալէն վերջ իրաւունք պիտի ունենայ. թէ եկեղեցւոյ արձանագրութեան և թէ Վիչէնի յայտարարութեան վրայ յենլով իբրև Արսլանի զաւակ պիտի պահանջեր և օրինաւոր պիտի ստանար Յովսէփէն և Վիչէնէն այն ամէն ստացուածներ, որք Սոֆիային և Արսլանին կը վերաբերէին։ Տէր դատաւոր ահա այս Լաբիրինթոսէն ազատելու համար էր որ Վիչէն խոհարար կինը հիւանդանոց ղրկեց Կատարինէի յղութիւն վիժելու խորհուրդ տալու, և ոչ թէ զայն բանտէն ազատելու. Սակայն երբ տեսաւ թէ անյաջող եղաւ, Կատարինէէն մերժեց այդ բան ընել. պարտաւորեցաւ Վիչէն լուր ղրկել քահանային, այդ կեղծ արձանագրութիւնը ջնջել տալ։ Տէր դատաւոր, ահա արձանագրութիւն ձեր դրասեղանի վրայ

կրդնեմ, աչքով տեսէք, և դիւղացի քահանան սրահը կրկենայ, եթէ կամիք ներս կանչեցէք իրեն խոստովանութիւնները լսեցէք, թող պատմէ այն ամէն գործերը՝ զորս Վիչէնի խորհրդով գործած է։ Ահա այս էր Կատարինէի յղութիւնը վիժել ուզելուն պատճառը. դալով Ստեփանէի սպանման, Տէր դատաւոր, մենք Ստեփանէն վերաւորեցինք մեզ դէմ դնելոյն համար, բայց չ՝սպաննեցինք. և միայն սպանած կեղծելով զինքը խիստ ապահով վիճակի մը մէջ պահեցինք. նա ալ այս տեղն է նա ալ կանչեցէք, որ իւր խոստովանութիւններն ունի։

— Քահանայն ներս կրկանչուի։ Կ՚ըսէ դատաւորն, հայր քահանայ, այս արձանագրութիւն ձեր եկեղեցւոյ արձագրութիւնն է։

— Այո՛ մերն է։

— Այս գրութիւնն ձերն է, թէ ուրիշին։

— Իմն է։

— Ինչո՞ւ գրեցիք և ինչո՞ւ եղծեցիք։

— Վիչէն իշխան ինձ հաստատացոյց թէ, ես ստոյգ գիտեմ թէ Կատարինէի յղութիւն Արոլանէն է. դնա՛ և արձանագրութեան մէջ այնպէս նշանակէ. և Կատարինէն ծնանելէն վերջ, ծնածը մկրտէ. ես ալ դնացի արձանագրեցի, բայց Կատարինէն զիս մերժեց և ծնած տղան մկրտել չ՝տուաւ, ես ալ Վիչէնին բան մը չըսի. այնպէս մնաց։

— Շատ լաւ. վերջէն ինչո՞ւ գրածդ եղծեցիր։

— Վիչէն իշխան հրաման ըրաւ եղծեցի։

— Սուտ կրխօսիս Վիչէն քեզ հրաման ըրած չէ։

— Տէր դատաւոր, դրաւոր կերպով իւր ստորագրութեան տակը հրաման ըրած է։

— Ո՞ւր է անոր հրամանագիրը։

— Քովս է։

— Ցանձնէ դիւանին։ Քահանան, իւր փաթթոցաւոր դլխարկն վար առնելով՝ և մէջէն Վիչէնի ստորագրութիւնը կրող նամակը հանելով, դիւանին յանձնեց։ Նախագահն դրութիւնը աչքէ անցնելով ըսաւ կամաց մը. Վիչէն կատարեալ ապուշ մի է եղեր որու վրայ տեղեկութիւն չունիմք։

ՆԱՄԱԿԻ ՊԱՐԱՒՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ։ Արժանապատիւ տէր Մարտիրոս։ Անցեալ օրը ձեր մկրտութեան արձանագրութեան մէջ նշանակուած տղայի և իւր հօր անունը չնչեցէք։

ՄՆԱՄ ՅԱՐԴԱՆՕՔ ՎԻՉԷՆ

— Տէր հայր, գիտես արդեօք թէ Վիչէն ինչու այն անունը արձանագրել տուաւ քեզ և ինչու վերջէն եղծել տուաւ։

— Ոչ, չեմ գիտեր։

— Նախ արձանագրեցիր յետոյ Կատարինէին դնացիր. թէ նախ Կատարինէին դնացիր յետոյ արձանագրեցիր։

— Նախ Վիչէնի խօսքին հաւատալով արձանագրեցի. յետոյ Կատարինէին դնացի։

— Ինչէ՞ն իմացար որ Կատարինէն արու զաւակ մը պիտի ծնանէր. թերևս էգ ծնէր։

— Զաւակի անուան տեղ բաց ձգեցի. վերջէն բանտապահ կնոջմէն ստուգելով անունը գրեցի։

— Ճանի որ տղան դու չ՝մկրտեցիր. ինչէ՞ն իմացար որ նորա անունը Վիչէն է։

— Բանտապահ կինն ըսաւ։

— Դա Վիչէնի քեզ տուած հրահանգին տեղեկութիւն ունէր։

— Ոչ չունէր։

— Քննիչ դատաւորը զՎիչէն բացատրութեան հրաւիրեց. նա իւր ստորագրութիւն լինելը ուրացաւ և քահանան ստախօս անուանեց։

ՍՏԵՓԱՆԷ

— Սկիզբէն մինչև վերջ Վիչէն իշխանի գործոց մէջ մասնակցութիւն ունեցած էք, յանուն Ճշմարտութեան պատմեցէք ձեր ամէն լսածները տեսածները և գործածները։

— Խօսելէս առաջ ես ալ ձեզ հարցում մը ունիմ, և հարցմանս պատասխան առնելէս վերջ պիտի խօսիմ. թէպէտ գիտեմ թէ հարցումը հարցման պատասխան չ՝լինիր։ բայց երբեմն մեր տէր Յիսուս Քրիստոսն ալ հարցման դէմ հարցում ուղղեց։ Արդ՝ կըհարցնեմ թէ՝ ծառայ մը պարտաւոր է իւր տիրոջ հրամանը կատարելու թէ ոչ։

— Այո՛ պարտաւոր է իւր տիրոջ ամէն օրինաւոր հրամանները կատարելու։

— Էֆէնդիմ, այդ Եւրոպայի կանոն է, մենք ի՞նչ գիտէմք, ո՞րն է օրինաւորը, ո՞րն է ծուռը, ի՞նչ որ հրամայեն, մենք գիտեմք թէ շնտակն այն է, եթէ ես ամէն բան ըսեմ ինձ վնաս մը չ՚դար ա՞։

— Ո՛չ, քեզ վնաս չ՚պիտի դայ, գիտցածներդ խօսէ։

— Ես երկար չեմ գիտեր խօսիլ, համառօտ կըսեմ. Վիչէն իշխանի հրամանաւ և անոր ինձ տուած դեղով և հրահանգով տիկին Սօֆիայի խելքն ու միտքն կորսնցուցի և զայն հիւանդանոց տանելով տիկին Եւային ըսի թէ՝ Վիչէն իշխան կըհրամայէ որ այս կին քանի մը օրէն անդիի աշխարհ ղրկես. հինգ օր վերջ նորէն գացի հարցուցի. տիկին Եւան ըսաւ թէ դնայ. ես ալ իշխանին այնպէս լուր տուի, դարձեալ իշխանին հրամանաւ աղքատիկ կինը գետը նետեցի. և գնտակ մը քիչ մնաց գիս պիտի սպաներ այն պահուն։

Արսլանը որսի անտառ տանելով սպաներ ուզեցի, ինչպէս որ իշխանէն ինձ հրամայուած էր, բայց Արսլան փոխանակ գնտակը կուրծքէն ընդունելու ոտքէն ընդունեց. Եւ ուրիշ անծանօթներ եկան մեզ հետ կռուեցան և Արսլանը ուրիշ փախան, և ես իշխանին ըսի թէ՝ Արսլան մեռաւ։ Ութ օր սուգ պահեցին, յետոյ կառավարութեան գիմելով Սօֆիայի և Արսլանի ամէն ունեցածները իրենց տուն փոխադրեցին. անոնց տունն ալ ուրիշի վարձով տուին։ Կատարինէն Վիչէնի հրամանաւ ես և իմ դիմակաւոր ընկերներս երեք հոգւով բանտ տարինք. բանտապահ կնոջ յանձնեցինք։ Երբ դողերն եկան Վիչէն և Յովսէփ իշխանները վախցուցին, տունը կողոպտեցին, Վիչէն իշխանը հետերնին տանել ուզեցին. ես անոնց դիմադրեցի, և նոքա գնտակով մը գիս վիրաւորեցին։ Գիս ու Վիչէն իշխանի տնէն վերցուցելով իշխանը դէպ ի լեռ տարին և գիս ուրիշ դիւղ մը տանելով տան մը մէջ փակեցին։ Սակայն շատ մեծ խնամք տարին և մինչև ցայսօր այն գեղը կըբնակէի։ Իմ արիւնոտ լաթերս իմ տունս ղրկեցին, ըսելով թէ Ստեփանէն մեռած է. և այն լաթերուս մէջ Վիչէնի երկու նամակները կային. եթէ այն նամակները կորսուած չ՚լինէին, այս ըսածներէս և ոչ մինն կրնար ուրանալ Վիչէն իշխան։ Վասնզի ամէն բան անոնց մէջ գրուած էր։ Բարձր ձայնով մը ըսաւ գիմակաւորն,

մի՛ երկմտիր Ստեփանէ, խօսէ. նամակները կորսուած չեն. քովս պատրաստ կըմնան։ Ստեփանէն ըսեց պահ մը։

— Ուրիշ ի՞նչ գիտես, հարցուց դատաւորն Ստեփանէին։

— Պապամ, ֆալաֆալըէ՛ կընեն, չեն թողուր որ մարդ խօսի գիտցածներս կորսնցուցի այլ ուրիշ բան չ՚դար միտս։

Քննութիւնները վերջացան, դատաւորները իրենց առանձնարանը մտնելով. սկսան խորհրդածութիւն ընել, և վճիռը հետեւեալ աւուր թողուցին։

ՈՃՈՒԱԴԱՏ ԱՏԵՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Կատարուած քննութիւններէն ժողովս համոզում կըզգայացնէ թէ, Վիչէն զկատարինէն բռնաբարած է, և Կատարինէն իւր օրինաւոր կինն է. զաւակն ալ իւր հարազատ զաւակն է. և թէ Վիչէն զկատարինէն այնչափ ժամանակ տանջելոյն և հալածելոյն համար յանցաւոր է։ Յանցաւոր է նոյն իսկ Կատարինէի դէմ զայն բռնաբարելոյն համար. յանցաւոր է Արսլանի դէմ նորա նշանածը առևանկելոյն և Արսլանէն զայն բաժնելու պատճառ տուած լինելուն համար։ Յանցաւոր է զտիկին Սօֆիան անզգայացունելուն և անոր մահուան հրաման տալոյն համար։ Յանցաւոր է Ստեփանէին ոճրագործութեան հրամաններ տալուն համար. յանցաւոր է Արսլանը սպաննել տալու հրահանգ տուած լինելուն համար։ Յանցաւոր է խոհարար կինը Կատարինէին ղրկելուն և անոր յղութեան վիժումը պահանջելոյն համար։ Յանցաւոր է, Սօֆիայի և Արսլանի ինչքն ու ստացուածքն ապօրինի գրաւելոյն համար։ Բայց օրինաց տրամադրութեան համաձայն ժողովս իւր վճիռն արտասանելէն առաջ, նախապէս կ՚ուզէ որ Վիչէն իշխանին հաղորդէ իւր տեղեկագրի մէկ օրինակը. եթէ Վիչէն դիտողութիւններ ունի զանոնք ևս լսելէն վերջ, ժողովս պիտի արտասանէ իւր վճիռը։

ՎԻՉԷՆԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կըմերժեմ խոհարար կնոջ տուած տեղեկութիւնները, վասնզի նա մեր տունէն արտաքսուած լինելուն պատճառաւ սուտ կըխօսի, թէ Կատարինէի տուն գնալուս և թէ զինք Կատարինէի յղութիւնը վիժել տալու համար բանտ ղրկած ըլլալուս մասին։

Սուտ կըխօսի տիկին Սօֆիան, որ կ'ըսէ թէ ինքը զիս տեսած լինի գիմակաւ Կատարինէի տունէն ելլելուս ժամանակ, վասնզի ես հոն գնացած չեմ. ինչպէս որ Կատարինէն կըխոստովանէր թէ ես գիմակաւոր չ'ճանաչեցի։ Սուտ կըխօսի Ստեփանէն, երբ կ'ըսէ թէ Վիչէնէն հրահանգներ առի Սօֆիան անզգայացունելու ու հիւանդանոց ղրկելու. և զանի մահացունելու հրաման տուած լինիմ։ Այսպէս ես իրենց զօրութիւնը չունիմ տիկին Եւայի և Պարոն բժշկին խօսքերը Ստեփանէի սատրեան մէջ։ Սուտ կըխօսի Ստեփանէն, երբ կ'ըսէ թէ, ես իրեն հրահանգ տուած լինիմ Արսլան որսի անտառի մէջ սպաննելու։ Սուտ է նաև այն հրահանգ՝ որ ըսած լինիմ թէ՝ մուրացիկ կինը գետամոյն ըրէ, կըմերժեմ թէ ես պարկով ոսկի տուած եմ Կատարինէին։ Ստոյգ է որ ոսկին և պարկ ու կնիք իմն է, բայց Կատարինէն մեր տունէն ի բանտ փոխադրուած ժամանակ նոյն պարկով ոսկին գողցած և հեռու տուած է. ուստի այն ալ ես կրպահանջեմ։

Վերը յիշուածները մերժելէն և ջնջելէն վերջ, կուգամ ընդունել հետևեալները զոր ի գործ դրած եմ, իբր իմ անբռնաբարելի իրաւունքս։

Առաջին՝ Կատարինէն կոյս չ'գտնելոյս և յղի տեսնելուս համար իմ անբռնաբարելի իրաւունքս ի գործ դրի զայն առժամանակեայ կերպով բանտ ղրկելով, որպէսզի ծնանելէն վերջ դատաստանի հրաւիրելի զինք։

Երկրորդ՝ Սօֆիան և Արսլան մեր ընտանեաց հետ մօտ ազգակցութիւն մը ունենալով, երբ երկուքի մահը լսեցինք, բնական հետևութեամբ պէտք էր (օրինաց համաձայն) տունը պարպել, գողութեան վտանգէն և ուրիշ վնասներէն զերծ և ազատ

պահելու համար։ Բայց այսօր Մարիամի ժառանգ լինելը կըհաստատուի մէկ կողմէ. միւս կողմէն ալ ուրախութեամբ սրտի Սօֆիա տիկինը ողջ կըտեսնեմ. կ'ընդունիմ թէ նոքա իրենց բոլոր ստացուածոց տէրն են, և անկորուստ կերպով պատրաստ եմ իրենց վերադարձնելու։

Երրորդ՝ այս պարոնները, զիս կապուած լեռը տարած ժամանակ Ստեփանէն դողերուն գիմագրելով վիրաւորեցաւ. այդ բան բնականաբար տեղի կունենայ ամէն ծառաներուն համար, երբ իրենց տերը վտանգի մէջ տեսնեն. պարտաւոր են իրենք գիրենք վտանգին մատնել իրենց տերոջ պաշտպանութեան համար, Ստեփանէն ալ այս ըրած է ոչ աւելի։

Խօսքերս եզրակացունելով՝ կըմերժեմ այն ամէն ստախօսութիւնները և զրպարտութիւնները ու սուտ վկայութիւնները. և կըպահանջեմ որ կրօնական և համայնամար կրկին ժողովոյ որոշումները յարգուին։ Եւ կըյաւելում յանուն օրինաց բողոքել և պատիժ խնդրել այն չորս ստահակ մարդկանց համար. որք գիշեր ժամանակ մեր ընտանեկան պատիւը և ազգեցութիւնը ոտնակոխ ընելով իբրև գող մեր տան դուռներ և ապակիներ խորտակելով զմեզ կապտեցին տուն կողոպտեցին. ոճիր գործեցին և զիս անպատիւ կերպով իբրև գերի լեռ տարին. և ամենէն աւելի պահելէն վերջ մեծ գումար մը ոսկի փրկանք առնելէն վերջ ազատեցին զիս. այս տեսակ ոճրագործներու պատիժը և իմ բարոյական ու նիւթական վնասս կրպահանջեմ, յանուն օրինաց։

ՎԻՉԷՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Այս գիտողութիւններէն վերջ ատեանը դադարեցաւ. երկրորդ օրը կրկին հրապարակական նիստ լինելու պայմանաւ։ Երկրորդ օրը, գիմակաւորն իր գիմակ վար առած էր. Արսլանն էր առնիկա որ իբրև Կատարինէի դատին փոխանորդ կընթերցանար Վիչէնի գիտողութիւնները ցրելու. առեան բացուեցաւ և ժողովոյ տեղեկագրութեան հետ Վիչէնի գիտողադիրն ալ կարդացուելով հրաւիրուեցաւ Արսլան որ Վիչէնի գիտողութեանց պատասխանէ։

— Ըսաւ Արսլան. Վիչէն իշխան կուզէ ստախօս հրատարակել զՍօֆիան, որ զինք տեսած է, զՍտեփանէն, որ իր հրամանները անթերի գործադրած է, զիւր խոհարար կինը, որ

սկիզբէն մինչև վերջ իւր ամէն գաղտնեայ գիտակէ և որուն իւր բերնով խոստովանած է։ Շատ լաւ, Տէր դատաւոր, Ստեփանէ ինչէն թելադրեալ զՍոֆիան հիւանդանոց փոխադրեց անդրայ վիճակի մէջ. ինչէն հարկադրեալ ինձ մահացու վէրք տուաւ. ինչէն ստիպեալ աղքատ կինը գետամոյն ըրաւ. խոհարար կինն ի՞նչ շահ ունէր Կատարինէի յղութիւն վիժել տալու առաջարկութեան մէջ. ասոնց ամէնքն ալ սուտ են, և Վիչէնի առեղծուած խօսքերը ի՞նչպէս ճշմարիտ կրնան համարուիլ։

Սոյն միջոցին Վիչէն սրտայուղութիւն մը և մինչև աստիճան մը յուսահատութիւն զգայ. երբ Արսլան իւր դէմ կանգնած տեսաւ. որչափ որ Վիչէն կընեղուէր. այնչափ ալ Արսլան իւր մեծ սրտի մէջ մեծ հոգի մը ցոյց կուտար դատաւորներուն, և ունկնդիր ժողովրդեան, որ խիստ հետաքրքիր էին դատին վերջի վճիռն իմանալու։

Արսլան ըսաւ. չեմ ժխտեր կըխոստովանիմ թէ՝ ընթացքիս մէջ հարկէն ստիպեալ զարտուղութիւններ ունեցայ. սակայն նպատակս միշտ դէպ ի ուղիղ կ'ընթանար։

Եթէ ամէնքն սուտ ըսեն, Վիչէն իշխան, ձեր ստորագրութիւնը այժմ ամէնու սուտն պիտի ճշմարտէ. և զձեզ ստախօսու պատժապարտ պիտի հրատարակէ։ Վիչէն գոյն փոխեց և վրան մարելիք մը եկաւ։

— Ըսաւ Արսլան. Վիչէն, զօրացիր, զօրացիր. ճշմարտութեան ձայնէն խոյս մի՛ տար. Վիչէն, իմ նշանածս ինչու անպատուեցիր։ Վիչէն այս միջոցին փաստ կըփնտրէր ճշմարտութիւնը ծածկելու, բայց երեսի գոյն զինք կըմատնէր թէ յանցաւոր է։ Թախծութեան մէջ ընկղմած էր, և չէր գիտեր թէ ինչ խօսէր։ Ըսաւ Արսլան. Վիչէն, ստորագրութիւնդ կըճանաչես։ Այս ստորագրութիւնդ կըճանաչես բառը զՎիչէն խոպաւ շփոթութեան մէջ ձգեց։

Արսլան երկու նամակաց պարունակութիւնը իւր ձեռքի մէջ պահելով, և միւսակ ստորագրութիւնը դուրս թողլով նախագահին աթոռին մօտեցաւ. և խնդրեց որ Վիչէն կանչուի դայ և իւր ստորագրութիւնները տեսնէ. կամ մերժէ. և կամ իւր խոստովանութեամբ հաստատէ։

Վիչէն իւր ստորագրութիւնները տեսնելով, թեև լեզուով

կ'ուզէր ժխտել. բայց ճշմարտութեան զօրութիւնը զինքը կ'ընկճէր. որով իւր գլխուն նշանացի խոնարհմամբ կըհաստատէր թէ իրն է։

Նամակները դիւանին յանձնուեցան և հրապարակաւ կարդացուեցան։

ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿ

Սիրելիդ իմ Ստեփանէ,

Ձեզնէ անմիջական օգնութիւն մը կ'սպասեմ. որ իմ պատուոյս պահպանութեան կըվերաբերի։ Եկեղեցւոյ հանդիսի օրը դիմակաւորեալ Սամուէլի տուն գնացի. դուրս ելած ատենս տիկին Սոֆիան զիս տեսաւ և ճանաչեց, և Կատարինէն նորա որդի Արսլանին նշանածը լինելով. անշուշտ մեր մէկ սխալանայ դաղանիքն երևան պիտի բերէ. Այս պատուոյ վտանգն անհետացնելու համար ձեզ հրաման կուտամ որ այս գիշեր թագուն կերպով և ծպտեալ կերպարանաւ յանկարծ երթաք և ներփակեալ դեղովը զտիկին Սոֆիան անզգայացնէք. և իւր տունէն վերցունելով տիկին Եղիսաբէթի հիւանդանոցը փոխադրէք, պատուիրելով տիկին Եւայի որ մէկի մը չ'յայտնէ թէ տարածդ տիկին Սոֆիան է. այլ այնպէս մը թող ձևացնէ տիկին Եւան թէ նորեկ խելացնոր ֆին մը է և դուք ազդարարեցէք տիկին Եւային որ խիստ զգուշութեամբ և գաղտնի պահելով մէկ կամ երկու օրէն զայն իւր յուլիտենական տունը զրկէ։

ՎԻՉԷՆ ՑՈՎՍԷՓԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Սիրելիդ իմ Ստեփանէ,

Գրութեամբս հետևեալ հրամանները կըհաղորդեմ ձեզ անմիջապէս գործադրելու համար. գիտէք թէ ես զձեզ կըսիրեմ. անոր համար որ միշտ իմ հրամաններս յարգած էք զանոնք կատարելով. և անոր համար որ գաղանիքներս իմանալու փափաք չէք տածեր։

Հրամանս այս է որ դուք չորս անձինք, ու Արսլան ևս ձեր հետ առնելով որսի անտառ երթայք որս ընելու պատրուակաւ

և իբր դիպուած դնտակ մը ուղղէք Արսլանին այնպէս որ տուած վէրքիդ բերնէն դուրս ելլէ անոր հոգին ։

Երկրորդ. այն անպիտան մուրացիկ պառաւ կինը , զոր դուք լաւ կը ճանաչէք . այն ալ այս գիշեր գետամոյն ըրէք . վասնզի նա այսօր Սոֆիայի վերաբերեալ գաղտնիքներու ամէնքն ալ Արսլանին հաղորդած է . եթէ ասոնք չ'կատարուին , ես և դուք մեծ վտանգի տակ կրգտնուինք ։

ՎԻՀԷՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Սոյն նամակայ ընթերցումէն վերջ ատեան դոյուեցաւ . և դատաւորները առանձնարան մտնելով վճիռ պիտի տային։ Մինչ դատաւորները վճիռ տալու դնացին, Վիչէն խիստ ծանր նախատական սպառնալիք մը ըրաւ Արսլանին . և Արսլան նոյնն իրեն փոխանակեց , վատ մակդիր մը ևս յաւելում ընելով. Վիչէնի վիճակն արդէն յուսահատական էր , բարկութիւնն ևս յաջողեցաւ իւր ջահը մոռեցուներ Վիչէնի կիրքերը բորբոքելու . յորմէ այլ յայլմէ եղած մենամարտութեան առաջարկն ուղղեց Արսլանին ։ Արսլան վտանգ փնտրող մը չէր . բայց յանկարծ վտանգի մէջ քաշուած ժամանակ անկէ երես դարձուներլու չափ նրուաստութիւն ընդունողներէն չէր ։ Ուստի ըսաւ Վիչէնին. ամէն յուսահատներ այդ առաջարկութիւն կ'ընեն . ամէն դատապարտեալներ կ'ուզեն որ իրենց դատապարտութեան վճիռն չ'տեսնելով մեռնին ։ Բարեկամ, թէև մեր երկրին մէջ մենամարտելու օրէնք չ'կայ . բայց ըստորում կ'առաջարկէք , օրինաց պատասխանատուութիւնն ձեր վրայ թողլով՝ պատրաստ եմ ձեր կամք կատարելու , հրամայեցէք ։ Սոյն միջոցին խուռն բազմութեամբ հրապարակ դիմացին հոն գտնուող ունկնդիրները Վիչէնի և Արսլանի մենամարտութիւնն տեսնելու համար ։

Անմիջապէս վկաները ներկայացան . և մենամարտելու ասպարէզին շուրջ հետաքրքիրներ ստուար շրջանակ մը կազմեցին. մենամարտութիւնը շատ պարզունակ եղաւ . մենամարտի զէնքերը որոշուած էին երկու զոյգ միօրինակ ատրճանակներ , որք սրոշեալ կէտին վրայ կանգնած , նշան տրուածին պէս պիտի պարպուէին ։ Վիչէն իշխան իւր գծին վրայ ատրճանակ ի ձեռին պատրաստ կը կենար . Արսլանն ալ միևնոյն դիրքն ու պատրաստութիւնն ունէր ։ Ատրճանակ հարուածելէն առաջ, ըսաւ Արսլան Վիչէնին , ես արդարութեան դատի մը համար է որ քու դէմդ կեցած եմ. ուստի հարուածի առաջնութիւնը քեզ պիտի տամ, և կուրծքս պիտի բանամ քու դնտակիդ ։ Եթէ անմեղ ես՝ թող ես քու դնտակիդ ոչ լինիմ. և համարիմ զայն իմ արդար պատիժս . և եթէ անիրաւ ես՝ քու դնտակդ պիտի վրիպի . և յետ այնորիկ իմ դնտակս քեզ կ'ուղղեմ և դու իբր յանցաւոր քու պատիժդ կ'ընդունիս. և եթէ անմեղ ես՝ Աստուած քեզ կ'ազատէ ։ Նոյն միջոցին Կատարինէն ևս այն բազմութեան մէջ կը գտնուէր և իւր զաւակը գիրկն առած , ձեռքերը դէպ ի երկինք տարածած կը պաղատեր ըսելով Աստուած օգնէ անմեղին

Արսլան հրաման տուաւ Վիչէնին ըսելով. բարեկամ. թէ պատրաստ եմ և թէ կեցած տեղս անշարժ , և կ'սպասեմ ձեր դնտակի հարուածն ընդունելու . ծն ուրեմն ազատ էք հարուածեցէ՛ք ։

Վիչէն անմիջապէս ատրճանակը կրակեց , բայց դժբաղդաբար կամ բարեբաղդաբար ատրճանակի երկաթը ճաթեցաւ , հետևաբար դնտակը շուտով իւր տաքութեան ուժը կորսնցուցնելով, ելրեք քայլ ետ մնաց Արսլանին հասնելու , որ իւր խոստման համաձայն սահմանեալ գծին վրայ անխախտ կը մնար ։ Վիչէն իշխան իւր ձախորդութեան վրայ զայրանալով սկսաւ գոռալ և այլագունիլ ։

Ըսաւ Արսլան , Վիչէն , կը հարցունեմ քեզ , Կատարինէն զքեզ հրապուրեց թէ դու դիմակաւ աղքատ պառաւի առաջնորդութեամբ գացիր զայն բռնաբարեցիր . և ինչէն հարկադրեալ զայն քեզ կնութեան առիր. քանի որ դիտէիր թէ նա իմն այսինքն Արսլանի նշանածն էր . յաւիտենականութեան դրան սեմին վրայ ահաւասիկ կուգամ ըսել թէ Կատարինէն իմ նշանածս էր յետոյ քեզ կին եղաւ և Կատարինէէն ծնած փոքր Վիչէն քու զաւակն է . և ասոր համար հաստատուն ապացոյցներ ունիմ ի ձեռին . այժմ նկատելով թէ Կատարինէն իւր կամաց հակառակ քեզմէ բռնաբարուեցաւ . նկատելով թէ այս բռնի ամուսնութենէն եաք քեզմէ անպատուած է . նաև կը յայտնեմ թէ բաց ի Արսլանի և Սոֆիայի ստացուածքներէն որ ձեր քով կը մնայ այժմ, և փոքր Վիչէն քո՝ զաւակն և ժառանգն է . և ես Կատարինէին կը ներեմ. ոչ թէ քեզմէ բռնաբարուելոյն . այլ քեզ

հետ ամուսնանալոյն համար, և այս վայրկենիս կրկին զայն իմ օրինաւոր նշանածս կընկատեմ. մինակ վրէժխնդրութեան պարագ մը ունիմ, զոր պիտի կատարեմ իմ նշանածս անպատուելոյդ համար :

Բարեկամ, պատրաստուէ՛ եթէ անմեղս թող Աստուած փրկէ զքեզ. իսկ եթէ ոճրագործ՝ առ գործոյդ պատիժը, ըսելով ատրճանակը կրակեց, և գունաթափ Վիչէն կուրծքէն վերաւորուելով շնչասպառ դեռին գլորեցաւ. նորա կեանք հոգմաբեկ ծաղկի մը պէս թօշնեցաւ և մահուան սիրեղը գլխէն սկսելով աղիներուն իջաւ, Վիչէն այլ ևս կենդանի չէր :

Զրկուեցաւ նա ծաղիկներու անուշահոտութենէն, բնութեան ձայն լսելէն. կենաց յոյս վայելելէն. նորա աչաց լոյսը քաղուեցաւ, այլ ևս չ'կրցաւ կապուտակ երկնից գեղեցկութիւնը վայելել. տակաւին բազմութիւնն ցրուած չէր : Դատարանն Վիչէնի տասնեհինգ տարուան շղթայակապ բանտարկութեան վճռոյն հետ մէկ տեղ, նաև զինքը յափշտակուած լեռ տանելոյն գաղը Արսլանի և իւր ընկերաց հետ վարելու կամ չ'վարելու ազատութիւնը Վիչէնի կրթողուր :

Բայց Վիչէն արդէն իւր գործերը և իւր խղճի խայթը հետառած գնացած էր դէպ ի յաւիտենականութիւնն՝ համար տալու անաչառ և ծածկադէտ երկնաւոր Դատաւորին :

ՎԵՐՋ

ԱԶԳ. ԳՐԱԴԱՐԱՆ ՊՐԻՍՏՈՍԱՑ ԳԱՂԱՐԱՏՈՒՆ ՀԱՅԿ-ՍՕՐԱ. Ամ. Ա. Մանուկեան Ի. Գրադարանի Ամբ.

ՑԱՆԿ

	Երես
Բնութիւն պիտաքան	5
Ցովսէփ իշխանի գան պիտաքան	6
Կապարինէի ժամանակները	8
Եկեղեցոյ զանգակներ և յիշատակարան	10
Սամուէլի գան անդ	14
Կապարինէի յուսահատ ժամերը	20
Սամուէլի կին, որդին Սօֆիայ և Արսլան	23
Դիմակաւորի ապանին մարդասպանները	25
Սօֆիայի վրայ եղած պարտիզպանութիւն	28
Մուրացկի դոզ և Արսլանի կորուստ	29
Տիկին Սօֆիան որդին Եղիսաբէթի հիւանդանոց	34
Այլասայլ պարտիզպանութիւնները և Սամուէլի ապրիլը	37
Երկու նամակաց փոխանակութիւն	38
Կապարինէի տխուր ժամերը	40
Հարսանեաց հանդէս	42
Սօֆիայի հիւանդութիւն, բժիշկ, և ժիպսիին տեսանայ	44
Իշխանի տունէն Կապարինէի բանտ փոխադրուելը	52
Արսլան և իւր ընկերք	66
Ցովսէփ իշխանի գան ոճրագործութիւն	70
Վիչէն լեռան այրի մը մէջ	73
Կապարինէն բանտէն ի հիւանդանոց	75
Տիկին Եղիսաբէթի հիւանդանոցն	78
Սարկանէն գիւղական գան մը մէջ	81
Արսլան և Սարկանէն դարմանող Անուսամ տիկին	84
Տիկին Մարիամ և Արսլան	85
Տիկին Մարիամ և Ցովսէփ իշխանը	86

Ռոդիկանոս-ԸՆԵԱՆ խոս-ղարկո-ԸՆԿՈՒ և ՎԻՐԳԻՆ նամակներբ . 93
Կապարքինե և տիկին Եղիսաբեթ 99
Կապարքինեի տնոս-ԸՆԿՈՒ յապենի Կրօնական Ժողովոյ . . . 119
Հինգ նամակագրս-ԸՆԿՈՒ 120
Կրօնական ապենի մեջ ոնբարքար ապենի մեկնութիս-ԸՆԿՈՒ . . 130
Քաղաքական ոնբարքար ապեան և ի-ր դատապարտանը . . . 132
Արքան, Սոֆիան, և Կապարքինեն 136
Վիրգին 'ի բանդ 137
Համարս-մար ժողովայ որոշս 139
Ոնբարքար ապենի տնոս-ԸՆԿՈՒ 140
Ոնբարքար ապենի տեղեկագիր 153
Վիրգինի դիպուղ-ԸՆԿ-ՆԵՐԸ 156
Վիրգինի երկու նամակներ 159
Վիրգինի և Արքայի մենամարտս-ԸՆԿՈՒ 160

2016
1906